ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1 – 2 (91 – 92). 2017

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ОРГАНИЗАЦИОННОЕ СОВЕРШЕНСТВОВАНИЕ ОБОРОННОЙ СИСТЕМЫ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

ORGANIZATIONAL IMPROVEMENT OF THE DEFENSE SYSTEM IN TERMS OF IMPLEMENTING THE “NATION–ARMY” CONCEPT

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ»

(ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի
և Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի
հանդիպումը.

Մոսկվա, 2017 թ. մարտի 15

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի
և Եվրոպայի խորհրդի Նախագահ Դոնալդ Տուսկի
մամուլի ասուլիսը.

Բրյուսել, 2017 թ. փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1–2 (91–92). **2017**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտական-փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս. (գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ավետիսյան Վ. Ն.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Զաքարյան Ա. Բ.
Խաչատրյան Կ. Ա.
Խաչատրյան Տ. Վ.
Հակոբյան Մ. Հ.
Ղահրամանյան Ա. Բ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ. (գլխ. խմբագրի տեղակալ)
Յոլչյան Ն. Ի.
Նազարյան Ա. Ս.
Շահնազարյան Թ. Ն.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սարգսյան Վ. Ռ.
Սիմոնյան Ս. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Փախչանյան Դ. Բ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Նախագահ *Սերժ Սարգսյանի* ելույթը «Ազգ–բանակ-2017» համաժողովում 9

Օ. Վ. Գասպարյան, Մարդկային ռեսուրսների կառավարումը «Ազգ–բանակ» համակարգի ներդրման պայմաններում 20

Վ. Բ. Տերտերյան, Համայնք–բանակը՝ «Ազգ–բանակ» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչ մաս 29

Ա. Կ. Հովհաննիսյան, Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն. որոշ նկատառումներ «Ազգ–բանակ» համակարգում ՀՀ պաշտպանության կատարելագործման լույսով 34

Ա. Ռ. Թովմասյան, ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման համար խոչընդոտների և դրանց հաղթահարման ուղիների որոշման հարցի շուրջ. ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն . . . 48

Բ. Պ. Պողոսյան, ՀՀ կիբեռանվտանգության ազգային ռազմավարության մշակումը և ՊԱՀՀ-ի կազմում Կիբեռտարածության ռեսուրսների կառավարման ռազմավարության ինստիտուտի ստեղծումը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայման համատեքստում 57

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարության նախագիծ 61

Ջ. Ս. Հեռլի, Գալիք սերնդի կիբեռմասնագետների ուսուցումը 72

Ջ. Ալեքսանդր Քրաութեր, Պետական – մասնավոր գործակցության ռազմավարական կարևորությունը կիբեռանվտանգության ապահովման համատեքստում 93

Լ. Գ. Այվազյան, «Ազգ–բանակ» հայեցակարգի իրագործման միջազգային փորձը. զորահավաքային ռեսուրսի զարգացում 109
Հ. Կ. Մուրադյան, «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման պայմաններում զինկոմիսարիատների գործունեության վերակառուցման որոշ հարցեր 116
Ա. Հ. Գրիգորյան, Ռիսկերի կառավարումը և անորոշության պայմաններում բազմաչափանիշային որոշումների ընդունումը ռազմավարական նախագծերի կառավարման համատեքստում 125
Մ. Ս. Ավետիսյան, «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման պայմաններում ռազմական կրթության բարեփոխման նորամուծական ուղենիշների մասին 139
Վ. Վ. Մելքոնյան, «Ազգ–բանակ» համակարգի ներդրման պայմաններում ռազմական կրթության արդիականացման հնարավոր ուղիները սպաների բազմաստիճան պատրաստման առաջավոր փորձի հաշվառմամբ 151
Կ. Ա. Կարապետյան, Հ. Ս. Պառաշյան, Նյութատեխնիկական ապահովման խնդիրները որպես «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման պայմաններում ռեսուրսների կառավարման կարևոր տարր 163
Բ. Ն. Հարությունյան, Երկակի նախանշանակման առողջապահության միասնական պետական համակարգի ստեղծումը «ազգ–բանակ» ռազմավարության իրագործման շրջանակներում 171

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Վ. Աղաջանյան, ԱՄՆ-ի նոր վարչակազմի օրոք ԱՄՆ–ՌԴ հարաբերությունների դինամիկայի վերլուծություն և զարգացման կանխատեսում 180
Տ. Մ. Անտոնյան, Իրան–Ռուսաստան հարաբերությունների դինամիկան Վ. Պուտինի ղեկավարության տարիներին 189

ՀՐԵՏԱՆԻ ԵՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ

Ս. Հ. Սիմոնյան, Գ. Գ. Ասրյան, Հ. Գ. Խաչատրյան, Հրաձգության ստոխաստիկ պրոցեսների մաթեմատիկական մոդելավորում 202

ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Բ. Գրիգորյան, Հենապատերի կառուցման, վերականգնման և ուժեղացման աշխատանքների կազմակերպումը ավանդական և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ 210

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հ. Մ. Գրիգորյան, Պատերազմական հանցագործությունների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերը Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրություն ներառելու պրոբլեմները 220

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Գալստյան, Կոտրվածքների սերտաճումն ակտիվացնելու նպատակով թրոմբոցիտներով հարուստ պլազմայի կիրառման որոշ հարցեր 235

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. Գասպարյան, Հայ պատմագրության մեջ Հայրենական մեծ պատերազմին հայկական դիվիզիաների մասնակցության լուսաբանման որոշ հարցեր 244

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 255

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 1–2 (91–92)**. 2017**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Акопян М. Г.*, *Алексанян А. Дж.*, *Алтунян Г. Р.*, *Варданян А. Г.*, *Гаспарян О. В.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Закарян А. Б.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартиросов Л. А.*, *Назарян А. С.*, *Пахчанян Д. Б.*, *Погосян Б. П.*, *Саргсян В. Р.*, *Симонян С. В.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Хачатрян К. А.*, *Хачатрян Т. В.*, *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

ОРГАНИЗАЦИОННОЕ СОВЕРШЕНСТВОВАНИЕ ОБОРОННОЙ СИСТЕМЫ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ—АРМИЯ»

Речь Президента Республики Армения *Сержа Саргсяна* на форуме «Нация–армия-2017» 9 (13)

О. В. Гаспарян. Управление человеческими ресурсами в условиях внедрения системы «Нация–армия» 20 (27)

В. Б. Тертерян. Община–армия как важная составляющая концепции «Нация–армия» 29 (31)

А. К. Оганесян. Стратегический анализ Апрельской войны: некоторые соображения в свете совершенствования обороны РА в системе «Нация–армия» 34 (46)

А. Р. Товмасян. К вопросу выявления препятствий для развития Оборонно-промышленного комплекса РА и определения путей их преодоления: SWOT-анализ 48 (55)

Б. П. Погосян. Разработка национальной стратегии кибербезопасности РА и создание в составе НИУО Института стратегии управления ресурсами киберпространства в контексте пересмотра Стратегии национальной безопасности РА 57 (59)

Проект национальной стратегии кибербезопасности Республики Армения 61

Дж. С. Херли. Обучение киберспециалистов грядущего поколения 72 (91)

Дж. Александр Краутер. Стратегическая значимость взаимодействия государственного и частного секторов в контексте обеспечения кибербезопасности 93 (107)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

Л. Г. Айвазян. Международный опыт осуществления концепции «Нация–армия»: развитие мобилизационного ресурса 109 (115)

Г. К. Мурадян. Некоторые вопросы реорганизации деятельности военкоматов в условиях внедрения концепции «Нация–армия» . . . 116 (123)

А. Г. Григорян. Управление рисками и принятие многокритериальных решений в условиях неопределенности в контексте управления стратегическими проектами 125 (138)

М. С. Аветисян. Об инновационных ориентирах реформирования военного образования в условиях внедрения концепции «Нация–армия» 139 (148)

В. В. Мелконян. Возможные пути модернизации военного образования в условиях внедрения системы «Нация–армия» с учетом передового опыта многоступенчатой подготовки офицеров 151 (161)

К. А. Карапетян, О. С. Парашян. Проблемы материально-технического обеспечения как важный элемент управления ресурсами в условиях внедрения концепции «Нация–армия» 163 (170)

Б. Н. Арутюнян. Создание единой государственной системы здравоохранения двойного назначения в рамках реализации стратегии «Нация–армия» 171 (178)

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Г. В. Агаджанян. Анализ динамики отношений США–РФ при новой администрации США и прогноз их развития 180 (199)

Т. М. Антонян. Динамика отношений Ирана и России в период правления Владимира Путина 189 (199)

АРТИЛЛЕРИЯ И РАКЕТНАЯ ТЕХНИКА

С. О. Симонян, Г. Г. Асрян, Г. Г. Хачатрян. Математическое моделирование стохастических процессов стрельбы 202 (208)

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

А. Б. Григорян. Организация работ по возведению, реконструкции и усилению подпорных стен с применением традиционных и новейших технологий 210 (218)

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

Г. М. Григорян. Проблемы имплементации норм международного права о военных преступлениях в национальное законодательство Республики Армения 220 (233)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

А. С. Галстян. Некоторые вопросы применения богатой тромбоцитами плазмы для активации сращивания переломов 235 (242)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

В. А. Гаспарян. Некоторые вопросы освещения в армянской историографии участия армянских дивизий в Великой Отечественной войне 244 (253)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 255 (257)

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1—2 (91—92)**. 2017**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Altunyan G. R.*, *Avetisyan V. N.*, *Ayvazyan L. G.*, *Davtyan A. M.*, *Gasparyan O. V.*, *Hakobyan M. H.*, *Idinyan R. A.*, *Kaghramanyan A. B.*, *Khachatryan K. A.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*, *Martirossov L. A.*, *Nazaryan A. S.*, *Pakhchanyan D. B.*, *Poghosyan B. P.*, *Sargsyan V. R.*, *Shahnazaryan T. N.*, *Shirinyan M. A.*, *Simonyan S. V.*, *Ter-Grigoryants N. G.*, *Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*, *Zakaryan A. B.*

CONTENTS

ORGANIZATIONAL IMPROVEMENT OF THE DEFENSE SYSTEM IN TERMS OF IMPLEMENTING THE "NATION—ARMY" CONCEPT

Statement of the President of the Republic of Armenia *Serzh Sargsyan* at the Nation–Army-2017 Forum (20.04.2017) 9 (17)

O. V. Gasparyan. Human resource management in the context of the implementation of the "Nation–Army" system 20 (28)

V. B. Terteryan. The community–army as an important component of the "Nation–Army" concept 29 (33)

A. K. Hovhannisyan. April War strategic analysis: a few considerations in light of improving the RA's defense in the "Nation–Army" system 34 (47)

A. R. Tovmasyan. On the issue of revealing impediments to the development of the RA Defense Industry Complex and identification of the ways to overcome them: SWOT analysis 48 (56)

B. P. Poghosyan. Developing the RA National Cybersecurity Strategy and creating an Institute for Cyberspace Resource Management Strategy within the NDRU in the context of the RA National Security Strategy review 57 (60)

Draft National Cybersecurity Strategy of the Republic of Armenia 61

J. S. Hurley. Educating the next generation cyber workforce 72 (83)

G. Alexander Crowther. Strategic importance of public-private collaboration in the context of cybersecurity 93 (101)

L. G. Ayvazyan. The international experience of implementing the "Nation–Army" concept: developing mobilization resources 109 (115)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

H. K. Muradyan. Some issues of reorganizing the military commissariats' activity in terms of the "Nation–Army" concept implementation 116 (124)

A. H. Grigoryan. Risk management and multicriteria decision-making in terms of uncertainty in the context of strategic project management . 125 (138)

M. S. Avetisyan. On the innovative guidelines of reforming the military education in the context of the "Nation–Army" concept's implementation 139 (149)

V. V. Melkonyan. Possible ways of modernizing the military education in terms of implementing the "Nation–Army" system in view of the advanced experience of the officers' multistage training 151 (162)

K. A. Karapetyan, H. S. Parashyan. The problems of material-technical support as an important element of resource management in terms of the "Nation–Army" concept implementation 163 (170)

B. N. Harutyunyan. Building a dual-use integrated state health care system in the framework of the "Nation–Army" strategy implementation 171 (178)

INTERNATIONAL RELATIONS

G. V. Aghajanyan. The analysis of the dynamics of the US–RF relations at the new US administration and the forecast of their development 180 (200)

T. M. Antonyan. The dynamics of Iran and Russia relationship under Vladimir Putin's government 189 (201)

ARTILLERY AND ROCKETRY

S. H. Simonyan, G. G. Asryan, H. G. Khachatryan. Mathematical modeling of the stochastic processes of firing 202 (209)

MILITARY ENGINEERING

A. B. Grigoryan. Organization of works on erecting, reconstructing and reinforcing the retaining walls via traditional and advanced technologies 210 (219)

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

H. M. Grigoryan. The problems of implementing the norms of international law concerning war crimes into the national legislation of the Republic of Armenia 220 (233)

MILITARY MEDICINE

A. S. Galstyan. Some issues of implementing platelet-rich plasma in activation of the fracture healing 235 (243)

MILITARY HISTORY

V. A. Gasparyan. Some questions of covering the participation of Armenian divisions in the Great Patriotic War in the Armenian historiography 244 (254)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 255 (259)

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ОРГАНИЗАЦИОННОЕ СОВЕРШЕНСТВОВАНИЕ ОБОРОННОЙ СИСТЕМЫ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

ORGANIZATIONAL IMPROVEMENT OF THE DEFENSE SYSTEM IN TERMS OF IMPLEMENTING THE “NATION–ARMY” CONCEPT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ-2017» ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ*

Հարգելի՛ գործընկերներ,

Շատ ուրախ եմ այս համաժողովի շրջանակներում մեր հանդիպման համար: Ուրախ եմ, որ այստեղ ներկա են կրթության, պաշտպանության, մեր հասարակական կյանքի կազմակերպման այլ բնագավառների աշխատողներ:

Հանրային կառավարման բնագավառում երկար տարիների մեր փորձը ցույց է տալիս, որ Հայաստանում չկա որևէ համակարգային հարց, որը հնարավոր լինի լուծել առանձին վերցրած ոլորտի շրջանակներում:

Արդի հասարակության պայմաններում այդպիսի հարցերը շաղկապված են, ուստի անհրաժեշտ են համալիր հարցադրումներ, մոտեցումներ և լուծումներ:

Այդպիսին է նաև հայրենասիրական դաստիարակության խնդիրը: Ամենալավ հայրենասիրական դաստիարակությունը օրինակն է:

Պաշտպանության նախարարի առաջարկած «Ազգ–բանակ» հայեցակարգն ուղղված է անվտանգության ոլորտում պահանջատեր քաղաքացու դաստիարակմանը մեր հասարակության մեջ: Այսօրվա համաժողովն էլ մի միջոց է՝ ավելի ամրացնելու մեր հասարակության, հատկապես՝ երիտասարդության կապը մեր Զինված ուժերի հետ:

Առաջիկա օրերին այստեղ տեղակայված ցուցահանդես կայցելեն հազարավոր աշակերտներ, մանկավարժներ, ծնողներ՝ հասկանալու համար, թե այսօր մեր երկիրն ինչ ունի առաջարկելու այն երիտասարդներին, ովքեր ուզում են որակյալ կրթություն ստանալ, ունենալ մրցունակ և շատ հետաքրքիր մասնագիտություն:

Այսօր քննարկվելիք նոր նախաձեռնությունները, ինչպես նաև տարիների կուտակած ներուժը լուրջ հիմք կստեղծեն մեր նոր սերնդի հրամանատարների, մտավորական-սպաների ամուր առանցք ձևավորելու համար: Սեպտեմբերին Դիլիջանում նոր և լայն հնարավորություններով վերաբացվելիք «Մոնթե Մելքոնյան» վարժարանից մինչև մեր բարձրագույն ռազմական հաստատությունների նոր կրթական ծրագրեր, քաղաքացիական բուհերից մինչև առաջնագծում մարտական հերթապահություն իրակա-

* www.president.am/hy/press-release/item/2017/04/20/President-Serzh-Sargsyan-attended-Nation-Army-2017-congress.

նացնող մեր ժամկետային զինծառայողներ՝ մենք պետք է վերանայված քաղաքականությամբ, հետևողական քայլերով շարունակենք ամրապնդել մեր հասարակության հարգանքն ու սերը դեպի Հայոց բանակը:

Պետությունը շարունակելու է գործնական քայլեր ձեռնարկել սպայական մասնագիտությունն ընտրած իր քաղաքացիների նկատմամբ: Ինչպես նաև շարունակելու է Հայրենիքի համար իրենց կյանքը զոհած կամ ծառայության արդյունքում հաշմանդամություն ստացած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների հանդեպ հատուկ հոգատարություն ցուցաբերելու իր քաղաքականությունը:

Ի դեպ, ես արդեն հանձնարարել եմ Պաշտպանության նախարարին, որպեսզի անհապաղ գործուն քայլեր ձեռնարկի զոհված և առաջին կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին բնակարանով ապահովելու համար: Այս խնդիրը վերջնականապես պետք է լուծվի և այս խնդիրը վերջնականապես պետք է լուծվի ամենաուշը մինչև 2019 թվականի ավարտը: Հանձնարարել եմ նաև անհապաղ ուսումնասիրել և լուծում տալ սեփականաշնորհման ենթակա՝ պաշտպանության նախարարության այն բնակարանային ֆոնդի օտարմանը, որը զբաղեցնում են սեփական բնակարանի փոխհատուցման իրավունք ձեռք բերած մեր զինծառայողները:

Հարգելի՛ տիկնայք և պարոնայք,

Հայրենասիրական դաստիարակությունն ամրապնդելու համար առաջին հերթին պետք է ամրապնդել Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու մեջ տիրող զգացումը: Երկրի ամենալավ պաշտպանն այն մարդն է, ով գիտակցում է իր բաժին պատասխանատվությունը հայրենիքի համար:

Պատասխանատվությունը վերացական և վերամբարձ հասկացություն չէ: Պատասխանատու է այն մարդը, ով ունի գոնե իր սեփական անկյունը: Եթե անգամ չունի, վստահ է, որ իր ազնիվ աշխատանքով այդ անկյունը վաստակելու է: Այդ մարդը ոչ միայն ստեղծելու է իր անկյունը, այլև ընդլայնելու է այն, դարձնելու է իր ընտանեկան օջախը: Այդ բնակարանում, այդ միջավայրում նա դաստիարակելու է իր զավակներին, ովքեր տոգորվելու են այդ նույն սեփականատիրոջ զգացումով:

Սա, իմ խորին համոզմամբ, ամենալավ հայրենասիրական դաստիարակությունն է:

Թող ոչ ոք չմոլորեցնի իրեն և ուրիշներին. առանց վճռական տիրոջ, առանց երկրի հայրենի հողին կառչած կանանց և տղամարդկանց հնարավոր չէ որևէ հայրենասիրական դաստիարակություն: Միայն այդպիսի սեփականատիրոջ զգացումով տոգորված կանայք ու տղամարդիկ են ունակ դաստիարակելու զավակներ, ովքեր նվիրված են իրենց հայրենիքին, իրենց հողին ու իրենց ջրին:

Նման մարդկանց հայրենասիրության կոչեր ու քարոզներ կարդալ պետք չէ: Նրանք անմիջապես զգում են վտանգը և անհրաժեշտության դեպքում

ոտքի են կանգնում՝ իրենց տունը, իրենց երկիրը պաշտպանելու նպատակով:

Նման վերաբերմունքի խրախուսման և ամրապնդման նպատակին են ուղղված այն բարեփոխումները, որ իրականացվում են մեր երկրում: Գալիք մի քանի տարիները որոշիչ են լինելու այդ ճանապարհին: Փոփոխություններն արմատական են, և նրանք զգալի ու շոշափելի են լինելու Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու համար:

Հարգելի՛ գործընկերներ,

Կարծում եմ, որ նման տիրոջ զգացումն էր, որ հաջողության ու հաղթանակի ճանապարհ հարթեց Արցախյան ազատամարտում:

Վազգենն ասում էր՝ տեղական հայրենասերների ցավը տանեմ: Ամեն մի գյուղում, ավանում, քաղաքում կան այդպիսի տեղական հայրենասերներ, որ գիտեն իրենց բնակավայրի պատմությունը, այդտեղից դուրս եկած մարդկանց անուններն ու կենսագրությունները: Նրանք միշտ պատրաստ են պատմել իրենց այդ հարազատ տան մասին և հպարտ են դրանով:

Տարիներ շարունակ աշխատանքի բերումով մեր երկրի տարբեր մարզեր ու համայնքներ այցելելով՝ ես ծանոթացել և շփվել եմ նման շատ մարդկանց հետ: Կարծում եմ, որ այդ մարդկանց նվիրումն ու աշխատանքը մենք մշտապես պետք է պահենք մեր ուշադրության և հոգածության կենտրոնում: Դրանից լավ հայրենասիրական դաստիարակություն լինել չի կարող:

Հայաստանը բազմաթիվ փոքր ու մեծ բնակավայրերի հանրագումարն է: Այդ հանրագումարի մեջ երբեք մենք չպիտի կորցնենք անգամ ամենափոքր միավորը: Մենք պետք է սիրենք, գուրգուրենք ու պահպանենք այդ միավորը: Ո՞վ կարող է դա ավելի լավ անել, քան սեփականատերը, իր ազնիվ աշխատանքով իր ընտանիքի հացը վաստակող տղամարդն ու կինը:

Դա է հայրենիքը ճանաչելու և սիրելու միակ ուղին: Այդ արժեքները մենք միշտ պետք է ամրապնդենք և փոխանցենք սերնդեսերունդ՝ առաջին հերթին մեր ընտանիքների միջոցով: Ընտանիքը մեր ազգապահպանության ամենակարևոր և ամենաամուր միավորն է, որտեղ յուրաքանչյուր մարդ ստանում է իր հիմնարար արժեքները:

Մենք պետք է ամրապնդենք մեր դպրոցական համակարգը: Արժանապատիվ քաղաքացի և հասարակության պատասխանատու անդամ դաստիարակելու գործում կարևոր դերակատարություն է, անշուշտ, վերապահված հենց դպրոցին: Հայրենասիրությունը, մարդասիրությունն ու պատվախնդրությունը բոլորիս մեջ ներարկել են մեր ուսուցիչները:

Ո՞վ է խնամում այգին, սիրելի՛ գործընկերներ: Այգին խնամում է տերը: Ո՞վ է, գիշերներ լուսացնելով, փորձում այգին փրկել ցրտահարությունից, ոռոգում, սրսկում, պաշտպանում այգին: Միայն ու միայն տե՛րը:

Մեր հայրենիքը հենց այդ այգին է, որտեղ տերը միաժամանակ մշակ է և ծառա: Հայրենասերը նա է, ով և՛ տեր է, և՛ մշակ՝ միաժամանակ, առանց զատելու:

Տեր լինել սեփական վաստակին, տեր լինել սեփական երկրին, տեր լինել սեփական իրավունքներին՝ նշանակում է լինել ազատ:

Ազատասիրությունը և հայրենասիրությունը նույն մեդալի երկու երեսներն են: Մենք արժանի լինենք այդ մեդալին: Պաշտպանե՛նք մեր ազատությունը, ինչպես կպաշտպանեինք մեր այգին, քանի որ առանց այդ այգու չենք ունենա ո՛չ վաստակ և ո՛չ էլ որևէ այլ բան:

Վերահաս վտանգի առաջ համախմբվում են շատերը: Դա կոչվում է, ինչպես գիտեք, ինքնապաշտպանության բնազդ: Այդ բնազդը հատուկ է նույնիսկ կենդանիներին: Մեր ազգային համախմբումը հիմնված չէ և չպետք է հիմնված լինի ինքնապաշտպանական բնազդների վրա: Այն խորապես գիտակցված ընտրություն է և կոչվում է ազատություն. տիրո՛ջ ազատություն և տիրո՛ջ պատասխանատվություն: Այն մեր ինքնության և ինքնագիտակցության կարևոր բաղադրիչն է եղել հազարամյակներ և լինելու է այսուհետ ևս:

Երբ մենք ասում ենք, որ հարգում ենք և հարգելու ենք մարդու հիմնարար ազատությունները, դա մենք չենք անում ինչ-որ մեկին դուր գալու համար: Մենք դա ասում ենք և անում ենք, քանի որ մարդն առանց հիմնարար ազատությունների լիարժեք չէ:

Մեզ պետք են լիարժեք մարդիկ, մեզ պետք են երկրի տերեր, որ պատրաստ են մշակելու և պաշտպանելու իրենց վաստակը, իրենց այգին՝ մեր Հայաստանը:

Խաղաղ պայմաններում մենք ազգ-այգեպան ենք, իսկ վտանգի պահին դառնում ենք ազգ-բանակ: Ահա սա է մեր երկրի տերերի, երկրի մշակների և երկրի պաշտպանների հայեցակարգը:

Շնորհակալություն:

Հաջողություն եմ մաղթում բոլորին:

РЕЧЬ ПРЕЗИДЕНТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ СЕРЖА САРГСЯНА НА ФОРУМЕ «НАЦИЯ–АРМИЯ-2017»*

Уважаемые коллеги!

Очень рад нашей встрече в рамках этого форума. Рад, что здесь присутствуют работники образования, обороны, других сфер организации нашей общественной жизни.

Наш многолетний опыт в сфере общественного управления показывает, что в Армении нет такого системного вопроса, который можно было бы решить в рамках отдельно взятой отрасли. В условиях современного общества такие вопросы взаимосвязаны, следовательно, необходимы комплексные постановки задач, подходы и решения.

Такова также задача патриотического воспитания. Пример – лучшее патриотическое воспитание.

Предложенная Министром обороны концепция «Нация–армия» направлена на воспитание в нашем обществе требовательного к сфере безопасности гражданина. А сегодняшний форум – средство ещё более укрепить связь нашего общества, в особенности молодёжи, с нашими Вооружёнными силами.

В предстоящие дни расположенную здесь выставку посетят тысячи учеников, педагогов, родителей, чтобы понять, что может предложить наша страна сегодня тем молодым людям, которые хотят получить качественное образование, иметь конкурентную и очень интересную специальность.

Новые инициативы, которые предстоит обсудить сегодня, так же, как накопленный годами потенциал, создадут серьёзную основу для формирования прочного стержня наших командиров нового поколения, офицеров-интеллигентов. От училища «Монте Мелконян», которое заново откроется в сентябре в Дилижане с новыми и широкими возможностями, до новых образовательных программ наших высших военных учреждений, от гражданских вузов до наших военнослужащих срочной службы, которые несут боевое дежурство на передовой, мы должны с пересмотренной политикой, последовательными шагами продолжать укрепление уважения и любви нашего общества к Армянской армии.

Государство продолжит предпринимать практические шаги в отношении своих граждан, избравших офицерскую профессию. Так же, как продолжит свою политику, которая состоит в том, чтобы проявлять особую заботу в

* www.president.am/hy/press-release/item/2017/04/20/President-Serzh-Sargsyan-attended-Nation-Army-2017-congress.

отношении пожертвовавших своей жизнью во имя Родины или получивших инвалидность во время службы наших военнослужащих и их семей.

Кстати, я уже поручил Министру обороны, чтобы он незамедлительно предпринял практические шаги для обеспечения квартирами семей погибших военнослужащих или ставших инвалидами первой группы. Эта проблема должна быть окончательно решена, и эта проблема должна быть окончательно решена самое позднее до конца 2019 года. Поручил также незамедлительно изучить и дать решение вопросу отчуждения подлежащего приватизации того квартирного фонда Министерства обороны, который занимают наши военнослужащие, получившие право компенсации собственной квартиры.

Уважаемые дамы и господа!

Для укрепления патриотического воспитания в первую очередь нужно укрепить в каждом гражданине Армении чувство хозяина. Лучший защитник страны – тот, кто осознаёт свою часть ответственности за Родину.

Ответственность – не абстрактное и высокопарное понятие. Ответственен тот человек, кто имеет хотя бы свой собственный угол. Если даже не имеет, уверен, что своим честным трудом этот угол заработает. Этот человек не только создаст свой угол, но и расширит его, превратит в свой семейный очаг. В этой квартире, в этой среде он будет воспитывать своих детей, которые преисполнятся тем же чувством собственника.

Это, по моему глубокому убеждению, самое лучшее патриотическое воспитание.

Пусть никто не заблуждается и не вводит в заблуждение других: без решительного хозяина, без женщин и мужчин, которые держатся за родную землю страны, невозможно никакого патриотического воспитания. Только преисполненные таким чувством собственника женщины и мужчины способны воспитать детей, которые преданы своей родине, стране, земле и воде.

Таким людям не нужно читать проповеди о патриотизме. Они сразу чувствуют опасность и в случае необходимости встают, чтобы защитить свой дом и свою страну.

На цели поощрения и укрепления подобного отношения направлены те реформы, которые реализуются в нашей стране. Предстоящие несколько лет будут решающими на этом пути. Эти изменения кардинальны, они будут ощутимы и осязаемы для каждого гражданина Республики Армения.

Уважаемые коллеги!

Думаю, что подобное чувство хозяина проторило дорогу успеха и победы в Арцахской освободительной борьбе.

Вазген с большой сердечностью говорил о местных патриотах: в каждом селе, посёлке, городе есть такие местные патриоты, которые знают историю своего населённого пункта, имена и биографии происходящих оттуда людей. Они всегда готовы рассказывать об этом своём родном доме и гордятся им.

На протяжении многих лет, посещая по работе разные марзы и общины нашей страны, я знакомился и общался со многими такими людьми. Думаю, что преданность и труд этих людей мы всегда должны хранить в центре нашего внимания и заботы. Лучше этого патриотического воспитания быть не может.

Армения – сумма многочисленных малых и больших населённых пунктов. В этой сумме мы никогда не должны потерять даже самую маленькую единицу. Мы должны любить, лелеять и оберегать эту единицу. Кто может сделать это лучше, чем собственники, своим честным трудом зарабатывающие хлеб своей семьи мужчина и женщина?!

Это единственный путь познания родины и любви к ней. Мы должны всегда укреплять эти ценности и передавать их из поколения в поколение, в первую очередь, посредством наших семей. Семья является нашей самой важной и самой прочной единицей сохранения нации, в которой каждый человек получает свои основополагающие ценности.

Мы должны укреплять нашу школьную систему. В деле воспитания достойного гражданина и ответственного члена общества, несомненно, важная роль принадлежит именно школе. Патриотизм, гуманизм и чувство собственного достоинства всем нам привили наши учителя.

Кто возделывает сад, дорогие коллеги? Сад возделывает хозяин. Кто ночи напролёт пытается спасти сад от заморозков, поливает, прививает, защищает сад? Только и только хозяин.

Наша родина – и есть этот сад, где хозяин одновременно и садовник, и слуга. Патриот тот, кто и хозяин, и садовник одновременно, не разделяя. Быть хозяином собственным заслугам, быть хозяином собственной страны, быть хозяином собственным правам – означает быть свободным. Свободолюбие и патриотизм – две стороны одной медали. Будем же достойны этой медали! Защитим же нашу свободу так, как защищали бы свой сад, потому что без этого сада у вас не будет ни заработка, ни вообще ничего.

Перед наступающей угрозой сплачиваются многие. Это называется, как вы знаете, инстинктом самосохранения. Этим инстинктом обладают даже животные. Наше национальное единение не основано и не должно быть основано на инстинкте самосохранения. Это глубоко осознанный выбор и называется свободой: свободой хозяина и ответственностью хозяина. Это было важным компонентом нашей идентичности и самосознания на протяжении тысячелетий, и так будет впредь.

Когда мы говорим, что уважаем и будем уважать основополагающие свободы человека, мы говорим это не для того, чтобы кому-то понравиться. Мы говорим это и делаем это, поскольку человек без основополагающих свобод неполноценен.

Нам нужны полноценные люди, нам нужны хозяева страны, которые готовы возделывать и защищать плоды своего труда, свой сад – нашу Армению.

В мирных условиях мы нация-садовник, а в момент опасности превращаемся в нацию–армию. Вот наша концепция хозяев страны, тружеников страны и защитников страны.

Спасибо.

Желаю всем успеха.

STATEMENT OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA SERZH SARGSYAN AT THE NATION–ARMY-2017 FORUM*

Distinguished Colleagues,

I am very glad to meet with you in the framework of this Forum. I am glad that representatives of educational, defense, executives from other areas of our public life are present here.

Our extensive experience in the area of public administration shows that in Armenia structural issue of any kind cannot be solved exclusively in the framework of the particular area it belongs to. In the current society such issues are interconnected which means there should be compound inquiries, approaches, and solutions.

It is also true for the issue of patriotic education. The best education in patriotism is illustration.

The concept of the Nation–Army proposed by the Minister of Defense is aimed at the educating the citizens who will be exacting when it comes to the security area. This Forum is another means to further solidify the link between our society, particularly our young people, and the Armed Forces.

In coming days, the exhibition here will be attended by thousands of students, teachers, and parents. They will strive to understand what our country has to offer today to the young people who want to get high-quality education, to obtain a competitive and very engaging specialty.

Initiatives to be discussed today, as well as potential, which has been accumulated for years, will create a solid base for the creation a stanch axis of commanders, officers-intellectuals of our new generation. From the Monte Melkonian college to be opened in September in Dilijan with its new and wide opportunities to the new educational programs in our military institutions of higher education, from civic educational establishments to our contract servicemen at their combat duty on the frontier – we have to continue to amplify through the renewed policies and consistent steps respect and love of our society towards the Armenian Army.

The state will continue to take practical steps with regard to the citizens who have chosen the occupation of professional officers. We will also continue to display special care towards the families of the fallen servicemen and those who have become handicaps during their term of duty and their families.

By the way, I have already instructed the Minister of Defense to take immediate and practical steps to provide with housing the families of the fallen soldiers and

* www.president.am/hy/press-release/item/2017/04/20/President-Serzh-Sargsyan-attended-Nation-Army-2017-congress.

those who became the first degree handicaps. This problem must be solved and it must be solved before the end of 2019. I have also instructed to review swiftly and give an expeditious solution to the issue of the privatization of the apartments under the jurisdiction of the Ministry of Defense which are occupied by our servicemen who are entitled to reimbursement for housing.

Ladies and Gentlemen,

To strengthen patriotic education, it is necessary first of all to strengthen within each citizen of Armenia the feeling of being the master. The best defenders of the homeland are the people who understand their share of responsibility for Fatherland.

Responsibility is not something abstract or ephemeral: responsible is the person who has at least a private corner to live. Those who don't have it yet, should be sure that through the honest work they will get that corner. Such individuals will not only create their own corner but will expand it, will make it a family place. In that apartment, in that milieu they will raise their kids who will have the same feeling of the owner. This, and I believe it strongly, is the best patriotic education.

Don't delude yourselves or others: without a resolute master, without men and women who cling to their own land, there can be no patriotic education. Only men and women full of the feeling of ownership are able to raise children dedicated to their homeland, to their country, and native land.

Such people do not need patriotic slogans and sermons; they know danger immediately and if necessary will rise to defend their home and their land and water.

The reforms undertaken in our country are aimed at the encouragement and strengthening of such attitude. The next few years will be decisive with this regard. The reforms are fundamental, and they will be visible and tangible for each and every citizen of the Republic of Armenia.

Distinguished Colleagues,

I believe it was that very sense of ownership that paved the way for success and victory in the Artsakh Liberation War.

Vazgen used to say "I love local patriots." You can find such local patriots in every village, community, and town: they know the history of their place, names of all people born there and their biographies. They are always ready to tell you about their native land and are proud with it.

By the virtue of my job, I have been visiting different marzes and communities of our country and have spoken to many people. I believe that we need to keep in the center of our attention and care the dedication and labor of that people. There can be no better patriotic education than that.

Armenia is a totality of many small and large communities. The smallest unit must not be lost in that totality.

We have to love, cherish, and protect that unit. Who can do it better than the owner, men and women who earn their bread through honest work? That's the only way to identify and love the Fatherland. We need to constantly strengthen these values and pass them from generation to generation, first and foremost through our families. Family is the most important and the strongest unit for the preservation of our nation; people get their primary values in the family.

We need to strengthen our school system. In raising a dignified citizen and a responsible member of the society school certainly plays a pivotal role. Patriotism, humanism, and integrity were instilled in us by our teachers.

Distinguished colleagues, who is taking care of a garden? Its owner does. Who is working day and night to protect the garden from frost, who is watering, drenching, and protecting the garden? Only and only its owner.

Our Fatherland is that very garden, whose owner is the laborer and servant at the same time. Patriot is the person who is indiscriminately the owner and the laborer at the same time.

To be the master of one's own earnings, of one's own country, of one's own rights – all this means to be free. Freedom and patriotism are two sides of the same medal. Let's be worthy of that medal. Let's defend our freedoms as we will defend our garden since without that garden we will have no earning or anything else.

Imminent threat unites many. It is called, as you know, the instinct of self-preservation. Even animals have that instinct. Our national unity should not and is not based on the instinct of self-preservation. This is a deeply comprehended choice and is called freedom – master's freedom and master's responsibility. It has been an important element of our identity and self-consciousness for millennia, and will continue to be.

When we say that we respect and will respect fundamental human freedoms, we are not trying to please anyone. We say and do it because without fundamental freedoms no one is a complete human being.

We need complete individuals. We need masters of our land, who are ready to toil and defend their earning, their garden – our Armenia.

In peaceful times, we are nation of gardeners, but in time of trouble we become a nation-army. This is the concept of our land's masters, laborers, and country defenders.

Thank you.

I wish you all every success.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Օ. Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետի առաջին տեղակալ

2016 թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանն իր ելույթում առաջ քաշեց «Ազգ–բանակ» հայեցակարգային գաղափարը[1]: Դրա վերլուծությունը ցույց է տալիս, որ «Ազգ–բանակը» կարելի է դիտել որպես հասարակական հարաբերությունների և, միևնույն ժամանակ, դրանց վերակառուցման մեխանիզմների համակարգ[2], որի հիմնական գործառույթը մեր ամբողջ ազգի անվտանգության ու կայուն զարգացման պահանջմունքի բավարարումն է, ինչի համար արդի ժամանակաշրջանում ավանդական բանակը բավարար չէ: Այլ կերպ ասած՝ «Ազգ–բանակը» մի սոցիալական հաստատություն* է, որը տարբերվում է թե՛ ավանդական բանակից, թե՛ ավանդական պետությունից: Մասնավորապես՝ ավանդական բանակից տարբերվում է պետության պաշտպանության գործին ամբողջ հասարակության մասնակցությամբ, իսկ ավանդական պետությունից՝ հասարակական հարաբերություններում փոխադարձ հոգատարության ու հարգանքի սովորականից մեծ աստիճանով:

Ասվածից բխում է, որ «Ազգ–բանակի» կառավարումը սոցիալական (այսինքն՝ հասարակության) կառավարման տեսության ուսումնասիրության առարկա է: Ցավոք, այդ տեսությունը դեռ լիովին մշակված չէ, և տարակարծություններ կան նույնիսկ այն հարցում, թե ի՛նչ է սոցիալական կառավարումը: Այսպես. դասական տեսանկյունից կառավարումը կազմակերպության նպատակին հասնելու համար անհրաժեշտ պլանավորումը, կազմակեր-

---

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] «Ազգ–բանակ» հայեցակարգի համակողմանի գիտական վերլուծությունը և ռազմավարական ուղենիշները տես ««Ազգ–բանակ» համակարգի կայացման ռազմավարական ուղենիշները. Հայոց աշխարհազորից դեպի ՀՀ ժողովրդավարական համազգային պաշտպանություն (կոլեկտիվ մենագրություն)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

* **Սոցիալական հաստատություն**, կամ **հասարակական հաստատություն**. մարդկանց համատեղ կենսագործունեության՝ պատմականորեն ձևավորված կամ նպատակամղված ջանքերով ստեղծված կազմակերպվածք, որի գոյությունը թելադրվում է ամբողջ հասարակության կամ նրա մի մասի սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային կամ այլ պահանջմունքների բավարարման անհրաժեշտությամբ (տես “The Stanford Encyclopedia of Philosophy” (https://plato.stanford.edu/entries/social-institutions/)):

պումը, շարժառիթավորումը և վերահսկումն է: Համակարգային վերլուծության տեսանկյունից կառավարումը որոշումների ընդունման գիտությունն ու արվեստն է: Կառավարման ընդհանուր տեսության՝ կիբեռնետիկայի տեսանկյունից կառավարումը օբյեկտի վրա այնպիսի նպատակամղված ազդեցության կազմակերպումն է, որի հետևանքով օբյեկտը հայտնվում է պահանջվող վիճակում: Իրավագիտության տեսանկյունից կառավարումը օրենքների միջոցով պետական իրավական կարգավորումն է: Քաղաքագիտության տեսանկյունից կառավարման առարկան հասարակությունը, երկիրը, պետությունն են: Կառավարման սահմանման հարցում կան նաև բազմաթիվ այլ մոտեցումներ[3]:

է՛լ ավելի վատ են մշակված սոցիալական կառավարման գիտական մեթոդները: Դրանք, որպես կանոն, կազմակերպությունների և ընկերությունների կառավարման մեթոդները շատ ավելի բարդ սոցիալական համակարգերի (հասարակության) կառավարման համար կիրառելու չհաջողված փորձեր են[4]:

«Ազգ–բանակը» մի այնպիսի սոցիալական հաստատություն է, որն ունի և՛ ռազմական, և՛ քաղաքացիական (զարգացած ժողովրդավարական) բնույթ, ուստի կարծում ենք, որ այս խնդրի լուծմանը կարելի է մոտենալ, մի կողմից, զորքերի կառավարման (ռազմական կառավարման բաղադրիչ) տեսության մեթոդները[5] հասարակության առանձնահատկություններին հարմարեցնելու, մյուս կողմից՝ ձեռնարկատիրության (քաղաքացիական) ոլորտում մշակված կառավարման մեթոդները ռազմական կառույցի առանձնահատկություններին հարմարեցնելու[6] և այդ երկու մոտեցումները համադրելու միջոցով:

Նախ քննության առնենք առաջին մոտեցումը: Զորքերի (ուժերի) կառավարումը հրամանատարների, շտաբների և կառավարման այլ մարմինների գործունեությունն է՝ ուղղված զորքերի (ուժերի) մշտական մարտական պատրաստության պահպանմանը, օպերացիաների (մարտական գործողությունների) նախապատրաստմանը և զորքերի (ուժերի) ղեկավարմանը նրանց առջև դրված խնդիրների կատարման ընթացքում[7]:

Զորքերի կառավարման ընդհանուր սկզբունքներն են՝

– միանձնյա կառավարումը,

[3] Տես *В. И. Франчук*. Основы общей теории социального управления. М., 2000 (http://socio-org.narod.ru/OTCY.htm):

[4] Տես նույն տեղում:

[5] Տես *В. Ф. Савченко*. Теория военного управления: история и современность. «Военная мысль», 2007, N 11:

[6] Տես "The principles of Military leadership" (www.themilitaryleader.com/principles-military-leadership-day-3/); *Ա. Կ. Աթանեսյան, Ա. Կ. Շաքարյան, Վ. Հ. Ավետիքյան, Ա. Ռ. Ավետիսյան, Դ. Կ. Հարությունյան,* Զինվորական առաջնորդություն: Ձեռնարկ ՀՀ Զինված ուժերի անձնակազմի համար: Ե., 2012, էջ 149–150:

[7] Տես «Управление войсками (силами)». «Военный энциклопедический словарь», т. 2. М., 2001, с. 684:

– ընդունված որոշումների և դրանց կատարման, ենթակա զորքերի (ուժերի) կիրառման և խնդիրների կատարման արդյունքների համար հրամանատարի անձնական պատասխանատվությունը,
– բոլոր մակարդակներում կառավարման կենտրոնացումը՝ իրենց առջև դրված խնդիրների կատարման եղանակների ընտրության հարցում ենթականերին նախաձեռնություն դրսևորելու հնարավորության ընձեռմամբ,
– ենթակա զորքերի (ուժերի) և միջոցների հնարավորինս արդյունավետ օգտագործումը նրանց առջև դրված խնդիրների կատարման համար,
– իրադրության փոփոխությանն օպերատիվ և ճկուն արձագանքումը,
– անընդհատությունը և ծածուկությունը,
– ընդունված որոշումների և պլանների իրականացման գործում հաստատակամությունը և հետևողականությունը,
– կառավարման համակարգի կայունության ապահովումը[8]:

«Ազգ–բանակ» համակարգում կիրառելի են բոլոր այս սկզբունքները: Դրանք կարելի է լրացնել նաև սոցիալական կառավարման այլ սկզբունքներով ևս, ինչպիսիք են՝
– որոշումների քննարկման կոլեգիալությունը,
– ճյուղային և տարածքային կառավարումների համադրումը,
– գործունեության համար շարժառիթների (խթանների) ստեղծումը,
– սոցիալական կառավարման գիտականությունը,
– կադրերի ընտրության, պատրաստման, նշանակման և օգտագործման ռացիոնալությունը,
– խնայողականությունն ու արդյունավետությունը,
– անհրաժեշտ բազմապիսությունը (կառավարող համակարգի բարդության ու անհրաժեշտ բազմապիսության աստիճանը պետք է նվազ չլինի կառավարվող համակարգի աստիճանից[9]),
– կառավարման սուբյեկտի և օբյեկտի միջև հակադարձ կապի պարտադիր գոյությունը,
– լիազորությունների փոխանցումը,
– կառավարման բարոյականությունն ու մարդկայնությունը, և այլն[10]:

Զորքերի կառավարմանը բնորոշ են մի շարք օրինաչափություններ, որոնք որոշակի փոփոխություններով կարելի է տարածել նաև «Ազգ–բանակ» համակարգի վրա:

1) *Կառավարման համակարգի կառուցվածքը կախված է Զինված ուժերի, տարածաշրջանում առկա զորքերի (ուժերի) խմբավորումների կազմակերպվածքից, նրանց օգտագործած մարտական տեխնիկայից,*

[8] Տես նույն տեղում:
[9] Տես *Ու. Ռ. Էշби.* Введение в кибернетику. М., 2006, с. 21:
[10] Տես «Основы социального управления» (http://www.metal-profi.ru/library/osnov_2.htm):

սպառազինությունից և մարտական խնդրից[11]*:* Ի լրացումն դրա՝ «Ազգ–բանակ» համակարգում անձնակազմի կառավարման համակարգի կառուցվածքը պետք է կախված լինի նաև բանակի և հասարակության համագործակցության ձևերից ու բնույթից, ինչպես նաև արտաքին ու ներքին մարտահրավերների (դրանց դիմակայելու խնդրի) բնույթից:

2) *Կառավարման բոլոր մակարդակներում կառավարման կազմակերպամեթոդաբանական սկզբունքները նույնն են*[12]*:*

3) *Կառավարման մարմինների աշխատանքի մեթոդները կախված են կառավարման համակարգում օգտագործվող տեխնիկական միջոցներից*[13]: Մասնավորապես՝ «Ազգ–բանակ» համակարգում անձնակազմի կառավարումը* պետք է հիմնված լինի տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկութային հասարակության առանձնահատկությունների օգտագործման վրա:

4) *Կառավարման խնդիրների լուծման արդյունավետության աստիճանը կախված է ժամանակից և օգտագործվող տեղեկույթի բովանդակությունից ու ծավալից*[14]*:* Մասնավորապես՝ պետք է նկատի ունենալ, որ «Ազգ–բանակ» համակարգում կտրուկ կերպով մեծանալու է կառավարչական տեղեկույթի ծավալը: Շեմային արժեքը գերազանցելուց հետո տեղեկույթի հոսքի հետագա աճումը կսկսի բացասաբար ազդել կառավարչական որոշումների որակի վրա, իսկ որոշումների ընդունման ժամանակը կտրուկ կերպով կմեծանա: Ուստի պետք է մշակել և կիրառել «Ազգ–բանակ» համակարգում անձնակազմի արդյունավետ կառավարման ավտոմատացված համակարգ:

Քննության առնենք երկրորդ մոտեցումը, այսինքն՝ ձեռնարկատիրության ոլորտում մշակված կառավարման մեթոդները «Ազգ–բանակ» ռազմական կառույցի առանձնահատկություններին հարմարեցնելու հարցը: Ձեռնարկատիրության ոլորտում տարբերում են «անձնակազմի կառավարում» և «մարդկային ռեսուրսների կառավարում» հասկացությունները: Մասնագետների մի մասը կարծում է, որ առաջինը ներառում է երկրորդը, մյուս մասը՝ հակառակը, ընդսմին երկրորդ տեսակետի կողմնակիցների թիվը շատ ավելի մեծ է, ուստի մենք այն ընդունենք որպես հիմք:

---

[11] Տես *Վ. Սավչենկո*, Նշ. աշխ.:

[12] Տես նույն տեղում:

[13] Տես նույն տեղում:

* Անձնակազմի կառավարումը այն տեսակի կառավարչական գործունեությունն է, որի օբյեկտը աշխատողների կոլեկտիվն է (անձնակազմը): Վերջին տարիներին գիտական գրականության մեջ և պրակտիկայում որպես դրա հոմանիշներ լայնորեն օգտագործվում են նաև այլ տերմիններ՝ «աշխատանքային ռեսուրսների կառավարում», «կադրերի կառավարում», «մարդկային ռեսուրսների կառավարում» և այլն: Ստորև տարբերակվում են «անձնակազմի կառավարում» և «մարդկային ռեսուրսների կառավարում» տերմինները: Անձնակազմի կառավարման օբյեկտը առանձին աշխատողն է, ինչպես նաև աշխատողների համախումբը՝ աշխատանքային կոլեկտիվը: Անձնակազմի կառավարման սուբյեկտներ են կառավարման մասնագետները՝ կառավարիչները, ինչպես նաև բոլոր մակարդակների ղեկավարները (տես, օրինակ, *И. А. Епишкин*. Управление человеческими ресурсами. М., 2013, с. 12):

[14] Տես նույն տեղում:

Ըստ այդ տեսակետի՝ անձնակազմի կառավարումը և մարդկային ռեսուրսների կառավարումը վերաբերում են կառավարման տարբեր մակարդակների (երկրորդը՝ ավելի բարձր մակարդակի):

Անձնակազմի կառավարման նպատակներն են՝

– կազմակերպության մրցունակության ապահովումը,
– աշխատանքի արտադրողականության և արտադրության արդյունավետության աստիճանի բարձրացումը,
– կոլեկտիվի գործունեության մեծ սոցիալական արդյունավետության՝ բարձր աստիճանների համախմբվածության, փոխօգնության, բարեխղճության ապահովումը[15]:

Մինչդեռ մարդկային ռեսուրսների կառավարման նպատակներն են (փուլերը).

– պլանավորումը՝ մարդկային ռեսուրսների ապագա պահանջմունքների բավարարման պլանի մշակում,
– անձնակազմի հավաքագրումը՝ բոլոր պաշտոնների համար հնարավոր թեկնածուների ռեզերվի ստեղծում,
– ընտրազատումը՝ աշխատատեղերի համար թեկնածուների գնահատում և հավաքագրման ընթացքում ստեղծված ռեզերվից լավագույնների ընտրություն,
– վարձատրության (աշխատավարձի, դրամական բավարարման) չափի և լրացուցիչ արտոնությունների որոշումը (սահմանումը) անհրաժեշտ աշխատողներին ներգրավելու, վարձելու, շարժառիթավորելու և պահելու նպատակով,
– մասնագիտական կողմնորոշումը և սոցիալական հարմարեցումը՝ վարձված աշխատողների ընդգրկում կազմակերպության կազմում (ծանոթացումը), նրանց մեջ այն բանի ընկալման ձևավորում, թե ինչ է իրենցից սպասում կազմակերպությունը, և որ աշխատանքն է կազմակերպությունում գնահատվում[16]:

Այսպիսով՝ անձնակազմի կառավարումը վերաբերում է կոնկրետ անհատին կամ մարդկանց խմբին, իսկ մարդկային ռեսուրսների կառավարումը՝ մարդկանց հնարավորություններին (քանի որ մարդիկ դիտվում են որպես զարգացման համար ռեսուրս)[17]: Ըստ այդմ՝ կարծում ենք, որ «Ազգ–բանակ» համակարգի դեպքում ավելի ճիշտ է խոսել ոչ թե անձնակազմի, այլ մարդկային ռեսուրսների կառավարման մասին:

---

[15] Տես, օրինակ, *Х. Т. Грэхем, Р. Беннетт*. Управление человеческими ресурсами. М., 2003:

[16] Տես *Р. А. Мигуренко*. Современные проблемы управления человеческими ресурсами. Курс лекций. Томск, 2009:

[17] Տես նույն տեղում:

Մարդկային ռեսուրսների կառավարումը սովորաբար կատարվում է երկու եղանակով՝

– *հրահանգային (կազմակերպահրահանգային) մեթոդներ*, որոնք ենթադրում են ենթակաների վրա ղեկավարների կամային ազդեցությունը հրամանների, կարգադրությունների և ցուցումների ձևով. դրանք հիմնվում են իրավական դրույթների և նորմերի վրա,

– *խթանող մեթոդներ*, որոնք հիմնված են բարոյահոգեբանական (սոցիալ-հոգեբանական) և տնտեսական խթանների վրա[18]: Սոցիալ-հոգեբանական մեթոդները առանձին զինծառայողների (աշխատողների) և կոլեկտիվների ձևավորման ու զարգացման վրա ներգործության ձևերն ու եղանակներն են: Դրանք բաժանվում են սոցիալականի և հոգեբանականի: Սոցիալական մեթոդները (պլանավորում, սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ստեղծում և այլն) նախատեսված են ամբողջ կոլեկտիվի, իսկ հոգեբանական մեթոդները՝ առանձին զինծառայողների վրա ներգործելու համար: Ինչ վերաբերում է տնտեսական մեթոդներին, ապա դրանցից են նյութական շահագրգռումը, աշխատանքային ռեսուրսների և աշխատատեղերի հաշվեկշռի որոշումը, պահանջվող հիմնական ու լրացուցիչ անձնակազմի և այդ պահանջի բավարարման աղբյուրների որոշումը և այլն:

«Ազգ–բանակ» համակարգում մարդկային ռեսուրսների կառավարումը նույնպես կարող է կատարվել այս երկու տեսակի մեթոդներով, եթե դրանց ձևափոխումը հնարավորություն տա այդ մեթոդները կիրառելու զանգվածայնորեն, այսինքն՝ ձեռնարկությունների անձնակազմերից շատ ավելի մեծ թվով մարդկանց նկատմամբ:

Ձեռնարկության մարդկային ռեսուրսների կառավարման համակարգում գոյություն ունի մի կարևոր հասկացություն՝ «կազմակերպության փիլիսոփայությունը»: Դա անձնակազմի փոխհարաբերությունների ներկազմակերպական սկզբունքների, բարոյական ու վարչական նորմերի ու կանոնների, արժեքների ու համոզմունքների ամբողջությունն է, որը անձնակազմն ընկալում է կազմակերպության համընդհանուր նպատակին հասնելու լույսով: Այս փիլիսոփայության սկզբունքների պահպանումը կազմակերպությունում ապահովում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և, որպես արդյունք, կազմակերպության արդյունավետ զարգացում: Նշված սկզբունքների խախտումը, ընդհակառակը, հանգեցնում է միջանձնային գժտությունների և աշխատանքի արդյունավետության նվազման[19]:

Սույն եզրակացությունը վերաբերում է նաև «Ազգ–բանակ» համակարգում մարդկային ռեսուրսների կառավարմանը. անհրաժեշտ է մշակել «Ազգ–բանակ» համակարգի փիլիսոփայություն», որով առաջնորդվելը կնպաստի

[18] Տես *Վ. Սավչենկո*, Նշ. աշխ.:

[19] Տես «Управление персоналом организации». Учебник. Под. ред. А. Я. Кибанова. М., 2005, с. 86:

համակարգի գործունեության արդյունավետության ապահովմանը: «Ազգ–բանակի» փիլիսոփայության սկզբունքները նկարագրված են ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի վերոնշյալ ելույթում[20], անհրաժեշտ է միայն դրանք ձևակերպել որպես սկզբունքներ ու համակարգել: Այստեղ կուրվագծենք միայն երկու մոտեցում, որոնք, մեր կարծիքով, հնարավորություն են տալիս լուծելու այդ խնդիրը:

Առաջինը «զինվորական համազգեստով քաղաքացու» հայեցակարգի հայկական տարբերակի ներդրումն է: Այդ հայեցակարգի թերևս լավագույն օրինակը բերված է Բունդեսվերի «Ներքին ղեկավարում» համազորային կանոնադրության մեջ[21]: Այդ հայեցակարգը երաշխավորում է «զինծառայողների պատկանելությունը հասարակությանը՝ որպես նրա մասի, և Զինված ուժերին պարտավորեցնում է հարգելու իրավունքներն ու զինվորական կարգը»[22]:

Մյուսը «քաղաքացիական հագուստով զինվորականի» հայեցակարգի մշակումն ու ներդրումն է: Այս հայեցակարգն էլ պետք է երաշխավորի ՀՀ քաղաքացու պատկանելությունը բանակին՝ որպես նրա մասի, և հասարակությանը պարտավորեցնի հարգելու զինվորական համազգեստն ու հետևելու «Ազգ–բանակի» ստեղծման անհրաժեշտությունից բխող նոր հասարակական կարգին:

Մեր կարծիքով՝ երկու մոտեցումներն էլ «Ազգ–բանակ» համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման անհրաժեշտ պայման են:

«Ազգ–բանակի» ստեղծումը կապված է նոր մարտահրավերներին դիմակայելու, դեռ չլուծված խնդիրների լուծում գտնելու հետ: Ուստի «Ազգ–բանակ» համակարգում առանձնահատուկ կարևորություն է ստանում մարդկային ռեսուրսների կառավարման այնպիսի բաղադրիչը, ինչպիսին ղեկավարումն *(leadership)* է: Ի տարբերություն կառավարումից, որը «գործ ունի ծավալուն, հաճախ՝ վարչարարական, կազմակերպությունների գործընթացների, ընթացակարգերի և գործունեության հետևանքով ստեղծվող բարդությունների հետ», ղեկավարումը «կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես կանխատեսել փոփոխությունը, արձագանքել դրան և հաղթահարել այն: Ղեկավարումն անհրաժեշտ է նոր կազմակերպական ուղղություն ընտրելու և, որպես արդյունք, մարդկանց ու կազմակերպությունը նոր անծանոթ ոլորտներ փոխադրելու համար»[23]: «Ազգ–բանակ» համակարգում ղեկավարումը մարդկային ռեսուրսների կառավարման կարևոր բաղադրիչ է նաև այն

[20] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում»:

[21] Տես «Общевойсковой устав ZDv 10/1. Внутреннее руководство Innere Führung». Федеральное министерство обороны. Бонн, 28.01.2008 (էլեկտրոնային տարբերակ):

[22] Տես նույն տեղում:

[23] Տես *Զ. Մյուկան*, Կառավարման և ղեկավարման դերը բարդ տուրբուլենտ կազմակերպական միջավայրներում: «ՀԲ», 2009, հմ. 4:

պատճառով, որ այստեղ սպային վերապահվում է ավելի մեծ դեր, քան սահմանված է նրա անմիջական ծառայողական պարտականություններով:

Սրա հետ սերտորեն կապված է նաև սպայի մասնագիտական առաջխաղացման կառավարման խնդիրը, ինչը ենթադրում է դրա հաջող ընթացքի վրա ազդող դրական ու բացասական գործոնների հաշվառում և օպտիմալ տարբերակների որոշում, սպայի մասնագիտական առաջխաղացման անհատական պլանի մշակում և այլն[24]:

Այսպիսով՝ «Ազգ–բանակ» համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման խնդրի լուծման համար առաջարկում ենք համադրել երկու մոտեցում. ա) ռազմական կառավարման մեթոդների հարմարեցում հասարակական կյանքի առանձնահատկություններին, բ) ձեռնարկատիրության ոլորտում մշակված կառավարման մեթոդների հարմարեցում ռազմական կառույցի առանձնահատկություններին: Այս առաջարկության համար հիմք է այն ենթադրությունը, որ «Ազգ–բանակը» մի այնպիսի սոցիալական հաստատություն է, որն ունի և՛ ռազմական, և՛ քաղաքացիական (զարգացած ժողովրդավարական) բնույթ: Նշված խնդրի լուծման առաջին քայլերից կարող է լինել «զինվորական համազգեստով քաղաքացու» և «քաղաքացիական հագուստով զինվորականի» հայեցակարգների հայկական տարբերակների մշակումը և ներդրումը:

[24] Տես *С. М. Кулешов*. Управление профессиональной карьерой офицерского корпуса ВС РФ. Автореферат диссертации. М., 2011 (http://cheloveknauka.com/upravlenie-professionalnoy-karieroy-ofitserskogo-korpusa-vs-rf):

УПРАВЛЕНИЕ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ «НАЦИЯ–АРМИЯ»

О. В. ГАСПАРЯН, генерал-майор, Первый заместитель Начальника ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Для эффективного решения задачи управления человеческими ресурсами в рамках системы «Нация–армия» предлагается комбинированно использовать два подхода: а) адаптацию методов военного управления к системе управления общественной жизнью, б) адаптацию сформировавшихся в сфере бизнеса методов управления к системе военного управления.

В основу данного предложения заложена гипотеза о том, что «Нация–армия» является социальным институтом как военного, так и гражданского (с ярко выраженными демократическими параметрами) характера. Одним из первых шагов решения данной задачи могут стать разработка и внедрение армянских версий концепций «гражданина в военной форме» и «военного в гражданской одежде».

HUMAN RESOURCE MANAGEMENT IN THE CONTEXT OF THE IMPLEMENTATION OF THE “NATION–ARMY” SYSTEM

O. V. GASPARYAN, Major General, First Deputy Chief of the Main Staff, RA Armed Forces

SUMMARY

To effectively solve the human resource management problem within the framework of the "Nation–Army" system, two approaches are proposed to jointly apply: a) adapting methods of military administration to the public life management system; b) adapting the management methods developed in business sphere to the military administration system.

The hypothesis that the "Nation–Army" is a social institution of both military and civil (with distinct democratic parameters) character underlies this proposal. The development and implementation of the Armenian versions of the "citizen in military uniform" and "military in civilian clothing" concepts can be one of the first steps to solve this problem.

ՀԱՄԱՅՆՔ–ԲԱՆԱԿԸ՝ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Կ. Բ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ

Դժվար է գերագնահատել բանակի դերը մեր հասարակության կյանքում: Նա, բացի իր ուղիղ նպատակային նշանակությունից ու խնդիրներից, ունի նաև մեծ զգացմունքային ծանրաբեռնվածություն՝ պայմանավորված պատմական հիշողությամբ, ազգային արժանապատվությամբ, ինքնանույնականացման գործում ու հատկապես ժամանակակից պատմության մեջ իր վճռորոշ դերակատարմամբ[1]:

Երրորդ հանրապետության բանակը ձևավորվել է ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսության վրա, զանգվածային ժողովրդական շարժման շնորհիվ, թրծվել պատմական անցքերի պատասխանատու ժամանակաշրջանում, վերակազմակերպվել ազգային կանոնավոր զինվորական կառույցի՝ իր վրա կենտրոնացնելով ու բյուրեղացնելով իսկապես բացառիկ համաժողովրդական հարգանք ու գնահատանք[2]:

Մեր պետությունն իր կայացման դժվարին ու բազում մարտահրավերներով հագեցած ժամանակաշրջանում, նույնիսկ կրիտիկական բարդ հատվածներում բանակին ու բանակաշինությունը պահել է իր անքննարկելի առաջնահերթությունների շարքում՝ ի շահ բանակաշինության հետ կապված խնդիրների լուծումների հաճախ սահմանափակելով շատ ու շատ այլ խնդիրներ, հաստատապես՝ ևս կարևոր, լուծելու հնարավորությունները:

Ցավոք, անկախ պետականության հռչակման առաջին իսկ օրվանից մենք կանգնած ենք եղել ծանրագույն մարտահրավերների առաջ. երկրաշարժի մեծաթիվ զոհեր ու բարդ հոգեվիճակ, մեծ կորուստներ տնտեսությունում՝ երկրաշարժ, այնուհետև նաև տնտեսական, տրանսպորտային ու էներգետիկ շրջափակում, բացահայտ պատերազմական գործողություններ սահմանների գրեթե ամբողջ երկայնքով, և այս ամենը՝ տնտեսության ու հասարակական կացութաձևի արմատական փոխակերպումներին զուգահեռ:

---

[1] Տես «Սերժ Սարգսյանի գլխավորությամբ ՀՀ Պաշտպանության նախարարությունում անցկացվել է ընդլայնված կազմով նիստ», 15.01.2013 (http://www.president.am/hy/press-release / item /2013 /01 /15/ President-Serzh-Sargsyan-participated-at-the-meeting-Ministry-of-Defense/):

[2] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ Զինված ուժերի կազմավորման 10-րդ տարելիցին նվիրված հանդիսավոր նիստում»: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

Շնորհիվ հասարակության ինքնակազմակերպման բացառիկ հատկության, պետական նորաստեղծ հաստատությունների արդյունավետ աշխատանքի՝ հաջողվեց հաղթահարել հասարակության առջև կանգնած մարտահրավերները և հասնել հանրային կյանքի կազմակերպման ավելի նպաստավոր ժամանակաշրջանի: Երբ նաև մեծապես մեր զինուժի պարտադրած հրադադարի պայմաններում մեզ հաջողվեց կազմակերպել մեր հանրային կյանքը, կատարելագործել մեր պետական մեքենան, հանրային կյանքի կազմակերպման նպատակով ձևավորել անհրաժեշտ տնտեսական ու հասարակական բազա: Այս գործում կարևորագույն ձեռքբերում և արժեք է մեր կանոնավոր բանակի ձևավորումը[3]: Մշտական հոգածության և ինքնակատարելագործման ճանապարհ անցած մեր զինուժը այսօր մարտերի բովով անցած ու հաղթանակներով պսակված, նաև այլ երկրների մասնագետների գնահատմամբ՝ ժամանակակից ու մարտունակ կառույց է, ունակ՝ մեր ժողովրդի ու պետության անվտանգության երաշխավորը լինելու ու նաև միանալու վերազգային մարտահրավերների լուծմանն ուղղված միջազգային ջանքերին[4]:

Ինչպես նշվում է «Ազգ–բանակ» հայեցակարգում, «Զինված ուժերը չեն կարող տարանջատվել բնակչությունից: ... Չկա ընտանիք, որի համար բանակն անձնական պատմություն չլինի»[5]:

Բանակաշինության գործում տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ զորակոչի խնդիրներում մարզային կառույցների դերակատարումը ևս տեղափոխվել է շահեկանորեն ավելի բարձր մակարդակի:

Այսպես. նաև շնորհիվ տեղական ինքնակառավարման մարմինների.

- ավանդույթ են դարձել իրենց զավակների ծառայության վայր զինծառայողների ծնողների այցելությունները, որոնք կազմակերպում են համայնքների ղեկավարները,
- ձևավորվել է երիտասարդների աննախադեպ պոռթկումը՝ ծառայելու բանակում: «Զորակոչ» ասվածը վերստին վերականգնում է ոչ վաղ անցյալի ավանդույթը և նմանվում է ոչ թե «բանակ տանելուն», այլ՝ զորակոչի:

Աճել են հանրության՝ համախմբվելու կարողությունը և բանակին սատար կանգնելու ցանկությունը: Դրա վառ ապացույցներն են Ապրիլյան պատերազմի ժամանակ ու հետո ծավալված կամավորական շարժումը և բանա-

[3] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական ուղերձը բանակի օրվա առթիվ», 27.01.2016 (http://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/01/27/President-Serzh-Sargsyan-Army-Day-speech/):

[4] Տես «Армянская армия глазами зарубежных экспертов». «Новости ВПК», 01.02.2011 (https://vpk.name/news/48987_armyanskaya_armiya_glazami_zarubezhnyih_ekspertov.html):

[5] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

կին օգտակար լինելու հանրային ինքնաբուխ ձգտումը: Համայնք–բնակիչ կապն է՛լ ավելի գործնական կդառնա ներկայումս ընթացող վարչատարածքային բարեփոխումների շնորհիվ, երբ համայնքների միավորմամբ կունենանք մարդկային, ֆինանսական, գույքային և այլ ռեսուրսներով օժտված համայնք, որն ունակ կլինի է՛լ ավելի մեծ ուշադրություն դարձնելու կրթական, դաստիարակչական, հայրենասիրական, պաշտպանական ոլորտներին՝ իր կատարած ներդրումներով, խրախուսման միջոցներով, իր անդամ զինվորականներին ու նրանց ընտանիքներին զորավիգ լինելով:

Չէ՞ որ «Ազգ–բանակ» համակարգում համայնքը, բնակավայրը ընտանիքից հետո երկրորդ նույնականացվող հանրային միավորն են, որն ունակ է և կոչված՝ ձևավորելու հայրենասեր, պատրաստված, ոգևորված զինվորների, վերականգնելու ծառայության լավագույն ավանդույթները՝ իր փոքր տարածքում դառնալով համայնք–բանակ մոդելի կրողը:

Չափազանց կարևոր է, որպեսզի համայնքն իր գործադրած գործնական ջանքերի շնորհիվ զինվորի մեջ ձևավորի այն մշտական համոզմունքը, որ իր համայնքում ամեն ինչ կարգին է, և որ իր ընտանիքը գտնվում է բարեկարգ ու հոգատար միջավայրում:

Շատ լավ ավանդույթ է ձևավորվել վերջերս. սահմանամերձ համայնքների բնակիչների՝ որպես պայմանագրային հիմունքներով ծառայելու պրակտիկան: Մի կողմից՝ կայուն եկամուտ, մյուս կողմից՝ նվիրված ծառայություն, քանի որ նա անմիջականորեն կանգնած է իր համայնքի սահմանին: Այսպիսով՝ նույնացվում են պետության սահմանի, համայնքի սահմանի, բնակավայրի սահմանի պաշտպանության հասկացությունները:

Դժվար է թվարկել այն բոլոր առավելությունները, որոնք կարող են գեներացվել համայնք–բանակ հարաբերություններում: Սակայն կասկածից վեր է, որ հարկավոր է առաջ շարժվել միակ արդյունավետ ճանապարհով, այն է՝ կերտել ունակ, ուժեղ, հանրային կյանքով ապրող համայնք, որտեղ կձևավորվի հայրենասեր, իր համայնքի շունչն զգացող երիտասարդը, որի համար հայրենիքը զգացմունքային մակարդակում կնույնականացվի փոքր հայրենիքի՝ համայնքի կամ բնակավայրի հետ:

ОБЩИНА–АРМИЯ КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

В. Б. ТЕРТЕРЯН, кандидат экономических наук, доцент, Первый заместитель Министра территориального управления и развития РА

РЕЗЮМЕ

В общественной жизни Республики Армения армия играет судьбоносную роль. Кроме выполнения основной функции – вооруженной защиты населения и границ государства в условиях постоянных посягательств и угрозы возобновления войны со стороны агрессивного соседа, армии присуща веду-

щая роль в сфере самоидентификации армянского народа в современную эпоху, базирующаяся на эмоционально окрашенной исторической памяти, чувстве национального достоинства.

Сформировавшаяся в результате национально-освободительного движения, окрепшая в ответственную эпоху борьбы за выживание нации, армянская армия реорганизовалась в национальную военную регулярную структуру, сфокусировав на себе и выкристаллизовав действительно исключительные всенародные любовь и уважение.

В период своего становления в сложных условиях насыщенности вызовами и угрозами наше государство в своих заботах всегда отдавало приоритет армии, подчас за счет ограничения ресурсов для решения иных – не менее важных – задач. Благодаря этому, наши Вооруженные силы, пройдя путь самосовершенствования и развития, на сегодняшний день, в том числе и по мнению многих зарубежных экспертов, являются современной и боеспособной организацией, не только успешно обеспечивающей защиту государства от различных военных угроз, но и участвующей в международных усилиях по поддержанию глобальной безопасности.

В условиях внедрения концепции «Нация–армия», одним из базовых положений которой является идея о неотделимости армии от населения, роль территориальных и местных органов самоуправления в строительстве Вооруженных сил, в частности – в связи с организацией призыва, переходит на качественно новый уровень. При непосредственном участии органов местного самоуправления:

- сложилась традиция организации руководителями общин посещения места службы военнослужащих их родителями;
- сформировался порыв юношей служить в национальной армии.

В результате осуществляемых в настоящее время в РА административно-территориальных реформ еще более укрепится связь община–житель, объединение общин наделит их большими человеческими, финансовыми, имущественными и иными ресурсами, что позволит им еще большее внимание уделять сферам образования, патриотического воспитания, обороны.

В последнее время получила распространение практика привлечения жителей приграничных общин к защите границ на договорной основе. Таким образом, понятия «граница государства», «граница общины» и «граница поселения» сливаются в единое целое, что обеспечивает их более эффективную защиту.

THE COMMUNITY–ARMY AS AN IMPORTANT COMPONENT OF THE "NATION–ARMY" CONCEPT

V. B. TERTERYAN, PhD in Economic Sciences, Associate Professor, First Deputy Minister of Territorial Administration and Development, RA

SUMMARY

In the Republic of Armenia's public life the Armed Forces play a crucial role. In addition to performing the basic function – the armed protection of the state population and borders under constant encroachments and threat of war resumption by a belligerent neighbor, in the modern era the army assumes a leading role in the self-identification of the Armenian people, based on the emotionally tinged historical memory, and a sense of national dignity.

Being formed as a result of the national liberation movement, grown stronger in the crucial era of the struggle for the nation's survival, the Armenian army has been reorganized into a national military regular structure, focusing on itself and crystallizing truly exceptional national love and respect.

In the period of its formation under difficult conditions of intenseness with challenges and threats, in its concerns our state has always given priority to the army, at times – at the expense of limiting resources for solving other, no less important tasks. Owing to this, our Armed Forces, having trodden the path of self-improvement and development, today, as many foreign experts assume, are a modern and combat-ready organization that not only successfully protects the state from various military threats but also participates in international efforts to maintain global security.

In the context of the "Nation–Army" concept introduction, one of the basic provisions of which is the idea of the army's inseparability from the populace, the role of territorial and local self-administration bodies in the construction of the Armed Forces, in particular, with regard to the organization of the draft, moves to a qualitatively new level. With the direct participation of local self-administration bodies:

- there's been established a tradition of organizing visits of the servicemen's places of service for their parents by community leaders;
- young men feel impulse to serve in the national army.

As a result of the administrative and territorial reforms currently underway in the RA, the community-resident bond will even more strengthen, the amalgamation of communities will endow them with great human, financial, property and other resources, which will allow them to pay even greater attention to the spheres of education, patriotic education, and defense.

Recently, the practice of attracting residents of border communities to protect borders on a contractual basis has become widespread. Thus, the "state border", "community boundary" and "settlement boundary" concepts merge into a single whole, which does ensure their more effective protection.

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԼՈՒՅՍՈՎ

Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ Պաշտպանության նախարարի մամլո քարտուղար

Ինչպես հայտնի է, «Ազգ–բանակ» հայեցակարգի գերնպատակներից մեկն է մեր պետության պաշտպանունակության ապահովումը այնպիսի մակարդակով, որ պաշտպանական համակարգը երաշխավորված կերպով հետ մղի առկա և հավանական ռազմական սպառնալիքները[1]: Ուստի այդ համակարգի կատարելագործումը ենթադրում է ՀՀ-ի համար հավանական հակառակորդից ներկայումս և մոտ հեռանկարում բխող սպառնալիքների սթափ գնահատում[2], այդ թվում՝ նրա ձեռնարկած մարտական գործողությունների համակողմանի վերլուծություն[*]:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքագետներն այսօր նշում են Ապրիլյան պատերազմի սանձազերծման դրդապատճառների բազմաթիվ քաղաքական կողմեր: Սակայն, մեր կարծիքով, կասկածից վեր է, որ Ադրբեջանը հարձակվելուց առաջ հստակորեն հաշվի էր առել մի քանի հանգամանք:

Անցած տարիներին Ադրբեջանը ձեռք էր բերել մեծ քանակությամբ նորագույն տեսակների զենք, ու թեև հիմնական մատակարարումները դեռ շարունակվում էին, սակայն մեծ մասն արդեն կար, ինչը մեծ վստահություն էր ներշնչել՝ անգամ, որ դա կարող է իր համար հաղթանակ ապահովել: Բացի այդ, հարկ էր շտապել, քանի որ Ադրբեջանին հայտնի էր, որ թեև հայկական կողմը ևս ձեռք է բերում զենք, սակայն դրա մի զգալի մասը դեռ ճանապարհին է: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ ադրբեջանական բանակի ծախսերը շեշտակիորեն կրճատվել էին, ապա կարելի է ենթադրել, որ, ըստ իրավիճակի, ճիշտ ժամանակն էր փորձել սանձազերծել կայծակնային պատերազմ:

Սակայն զուտ ռազմական դրդապատճառները այսքանով չէին սահմանափակվում: Եղանակները Արցախում և Ադրբեջանում չոր էին, գետնի ամրութ-

---

[1] Տես ««Ազգ–բանակ» համակարգի կայացման ռազմավարական ուղենիշները. Հայոց աշխարհազորից դեպի ՀՀ ժողովրդավարական համազգային պաշտպանություն (կոլեկտիվ մենագրություն)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 18:

[*] Նյութի պատրաստման համար օգտագործվել են ՀՀ ՊՆ և ԼՂՀ ՊԲ փաստաթղթեր ու տվյալներ:

յունը զրահատեխնիկայի համար բավարար էր: Ձյուն կար միայն լեռնային հատվածներում, իսկ հատկապես Սոթք-Քարվաճառում մարտական գործողությունների համար կարող էին լինել եղանակով պայմանավորված բարդություններ: Այս, ինչպես նաև Սոթք-Քարվաճառում ադրբեջանական ստորաբաժանումների դիվերսիաների հետևանքով հակամարտող երկու կողմերի համար էլ հնարավոր խոչընդոտների պատճառով այս տարածքը դուրս մնաց Ադրբեջանի ԶՈՒ-ի հարձակման հիմնական ուղղություններից:

Ադրբեջանը վերջին երկու տարվա ընթացքում ձեռնարկել էր դիվերսիոն ներթափանցման առնվազն 180 փորձ՝ խորության ու մասշտաբների հետևողական մեծացմամբ: Միևնույն ժամանակ, աճում էր նաև կրակային միջոցների կիրառման ծավալը: Դիվերսիաները սցենարային առումով ևս ենթարկվում էին փոփոխության: Ադրբեջանը անմիջականորեն առաջագծի մարտական հենակետերի վրա հարձակումներից անցել էր թիկունք ներթափանցման փորձերի, թիկունքային կապուղիների ականապատմանը և այլն: Դիպուկահարները իրենց տեղը զիջել էին հրետանային միջոցներին: Հրետանին ևս սովորական հրետակոծությունից անցել էր արդեն ԱԹԱ-ներով կրակի կառավարմանը:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանական պլաններում հատկապես կարևոր դեր ուներ կենտրոնական հատվածում ստեղծված զորախումբը, որը պիտի գործարկվեր մարտական գործողությունների միայն երկրորդ օրը: Այս ամենը ապացուցվեց նաև խոցված մարտական ուղղաթիռում հայտնաբերված փաստաթղթերով[3]: Կենտրոնական հատվածում օպերատիվ շարվածքին գումարվել էին նաև այլ ուժեր, որոնց առաջքաշումն էլ էր ժամանակ պահանջում:

Բացի այդ, արժանի է հիշատակման նաև մի հետաքրքրական առանձնահատկություն: Տեղեկատվական գործողությունները ևս նախօրոք պլանավորված էին՝ մարտական գործողությունների պլանին համահունչ սցենարով: Սակայն երբ դրանք սկսեցին հաղորդվել, արդեն չէին համընկնում մարտական գործողությունների հետ, քանի որ վերջիններիս ընթացքը ծրագրվածից էապես շեղվել էր:

Ադրբեջանի ուժերը կենտրոնացվել էին երկու հիմնական ուղղություններում, որտեղ տարածքը ընդհանուր առմամբ հարթավայրային էր և տանկային ուժերով հիմնական հարվածների համար բարենպաստ: Օրինակ՝ փորձ արվեց տանկերի ու հետևակի համակցված հարվածներով ճեղքելու մեր պաշտպանությունը: Տեղամասի ընտրությունը պատահական չէր. դա արցախյան ուժերի պաշտպանական շրջանների (ՊՇ) կցատեղին էր[4]: Հարձակման մյուս հիմնական ուղղությունը մերձարաքսյան հովիտն էր:

[3] Տես «Հաղորդագրություն»: «ԼՂՀ պաշտպանության նախարարություն», 23.04.2016 (http://nkrmil.am/main/am/newsMore1304.html):

[4] Տես «Սամվել Կարապետյան. Այս սերունդն ապացուցեց, որ կարող է մեզնից ավելին անել»: Հարցազրույցը՝ էդիկ Բաղդասարյանի: «Հետք», 17.05.2016 (http://hetq.am/arm/news/68007/samvel-karapetyan-ays-serundn-apacucec-or-karox-e-meznic-avelin-anel.html):

Հյուսիսից ու արևելքից հասցվող հարվածների ուղղությունները հուշում են, որ դրանց առաջնային նպատակն էր Արցախի հյուսիսում գրավել Մարտակերտը՝ Սարսանգի ջրամբարով հանդերձ: Ադրբեջանական տվյալներով՝ յուրաքանչյուր հատվածում գործի են դրվել առաջին շարակարգի մեկական մոտոհրաձգային բրիգադի ուժեր ու միջոցներ: Դրանք ուժեղացված են եղել հատուկ նախանշանակման 777-րդ և 191-րդ լեռնահրաձգային բրիգադների ուժերով[5], որոնք հիմնականում գործել են հյուսիսում: Ըստ որոշ տեղեկությունների՝ եղել են նաև ուժեր հատուկ նախանշանակման 101-րդ և 52-րդ բրիգադներից:

Ադրբեջանական զորքերի առաջին շարակարգում հիմնականում գործել են այս պրոֆեսիոնալ ուժերը, և գրեթե չեն ներգրավվել ժամկետային զինծառայողները, որոնք, հավանաբար, պետք է լինեին հաջողությունը զարգացնող շարակարգում: Այս տեսակետը հիմնավորվում է այն բանով, որ զոհերը հիմնականում պրոֆեսիոնալներ էին, մասնավորապես՝ դիրքերում մղված մերձամարտում զոհվածները գրեթե բոլորը դիվերսիոն հետախուզական խմբերի ծառայողներ էին:

Հիմնական ուղղություններից յուրաքանչյուրում կենտրոնացված էին նաև ադրբեջանական կորպուսներից յուրաքանչյուրի ամբողջ տանկային և հրետանային ուժերը: Հիմնական ուղղություններով հարձակվող ուժերին տրվել էր նաև մարտական գործողությունների շրջան ծածուկ կերպով տեղափոխված մեկական հարվածային ուղղաթիռային էսկադրիլիա: Մեր պաշտպանությունը ճեղքելու՝ հակառակորդի մտադրությունն է փաստում նաև նրա վարած հրետանային կրակի ինտենսիվությունը: Չորս օրվա ընթացքում, ըստ որոշ տեղեկությունների, հակառակորդը կիրառել է 120 մմ տրամաչափից մեծ ավելի քան 30000 հրետանային արկ: Համեմատության համար նշենք, որ ըստ ՊԲ հրամանատար գեներալ-լեյտենանտ Լ. Մնացականյանի՝ միայն երեք օրում թշնամին արձակել է ավելի քան 20000 արկ, այն ժամանակ, երբ Արցախյան պատերազմի նախորդ փուլի հինգ տարում՝ ընդամենը 100000 արկ[6]:

Ադրբեջանական ԶՈՒ-ն, գործելով հինգերորդ սերնդի պատերազմների տրամաբանությամբ և կիրառելով նոր օպերատիվ լուծումներ, փորձել է նաև գործի դնել մարտավարական հնարամտություն, որը մի քանի անգամ փայլուն կերպով իրագործվել է ռազմարվեստի պատմության մեջ: Նման մարտավարությամբ ժամանակին հաղթանակի են հասել իսրայելական բանակը՝

[5] Տես *Вячеслав Михайлов.* Вторая Карабахская: боевая ничья с военно-политическими последствиями. «EurAsia Daily», 15 апреля 2016 (https://eadaily.com/ru/news/2016/04/15/vtoraya-karabahskaya-boevaya-nichya-s-voenno-politicheskimi-posledstviyami):

[6] Տես «Սամվել Բաբայանի գործողությունները համարում եմ դիվերսիա մեր հասարակության, ինքնիշխան պետության հանդեպ. Լևոն Մնացականյան»: «panorama.am», 06.06.2016 (http://www.panorama.am/am/ news/2016/06/06/%D4%BC%D6%87%D5%B8%D5%B6-%D5%84%D5%B6%D5%A1%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/1592033):

1973 թ., իրաքյան բանակը՝ 1986–1987 թթ. և ամերիկյան բանակը՝ 2003 թ.: Հարվածող խմբավորումների առաջին շարակարգում կիրառվել են միայն հատուկ նախանշանակման ուժերը, ընդսմին փորձ է արվել մարտավարական խորքում իջեցնելու օդային դեսանտ: Հենց նման փորձի ժամանակ ապրիլի 2-ի առավոտյան խոցվել է մի ուղղաթիռ:

Հատուկ նախանշանակման ադրբեջանական ստորաբաժանումները, 2012–2015 թթ. կատարելով անմիջականորեն դիրքապահների նկատմամբ մարտավարական դիվերսիաներ, 2015 թվականից հետո փորձում էին իրագործել խոր ներթափանցումներ: Ու թեև այդ դիվերսիաների ժամանակ նրանք կրում էին ծանր կորուստներ, սակայն շարունակում էին ձեռնարկել նման գործողություններ՝ դրանց միջոցով հետախուզելով մեր ամբողջ պաշտպանական գոտին: Այսինքն՝ այդ խմբերը խնդիր ունեին գրավելու առջևի բնագծերը կամ դրանցում ստեղծելու ճեղքումներ և միաժամանակ, թիկունքից հարված հասցնելով գումարտակային խորությամբ, առաջացնելու խուճապ:

Հիմնական զրահատանկային ուժերը շարժունակ խմբերի հետ գտնվել են երկրորդ շարակարգում՝ ձգտելով առաջին շարակարգի խմբերի հետ գործել ներդաշնակորեն: Հյուսիսային ուղղությամբ ապրիլի 1-ի ուշ երեկոյան ու գիշերը դիվերսիոն խմբերը հասել են Թալիշ գյուղի մոտակայքը և, դիրքավորվելով բարձունքներում, ապահովել հրետանու կրակը, իսկ վերջինս իր հերթին անհրաժեշտ պահին փորձել է կանխել ՊԲ գումարտակների առաջխաղացումը: Այլ խմբեր փորձել են անել նույնը՝ ճանապարհներին ծուղակներ պատրաստելով: Առաջին իսկ հարվածների հանկարծակիության և սրընթացության շնորհիվ ադրբեջանական հատուկ ստորաբաժանումներին գրեթե հաջողվել է ապահովել այդտեղ գտնվող արցախյան գումարտակների արգելափակումը:

Միևնույն ժամանակ ադրբեջանական զորքերը հարված են հասցրել հարավային ուղղությամբ տեղակայված հայկական ուժերի ՀՕՊ-ի հրամանատարական կետերից մեկին:

Գործելով այս կերպ և հանկարծակիության գործոնը հնարավորինս լավ օգտագործելու նպատակով ձգտելով քողարկելու իրենց հարվածը՝ ադրբեջանական զորքերը նոր ուժեր ու միջոցներ են ներգրավել արդեն հարձակման ընթացքում՝ մարտավարական խորությունում տեղաբաշխելով իրենց երկրորդ շարակարգն ու պահեստային ուժերը:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մի շարք ադրբեջանական խմբեր ձեռնարկել են կարևոր դիրքերի վրա գրոհ և նույնիսկ որոշ տեղերում ձեռնամուխ են եղել ականազերծման աշխատանքներին՝ տանկային ստորաբաժանումների համար անցուղիներ ստեղծելու նպատակով: Մանրակրկիտ կերպով մշակված պլանի համաձայն՝ այն ժամանակ, երբ այս դիվերսիոն խմբերը փորձել են գրավել կարևոր դիրքեր, արդեն թիկունքում գտնվողներն էլ փորձել են խանգարել հայկական ուժերի

համալրմանն ու օգնության կազմակերպմանը, հարվածների ուղղություններում, մասնավորապես մինչև մեկ-երկու դասակների հենակետերի ճակատի լայնքով* սկսվել է ադրբեջանական ԶՈՒ-ի տանկային հարձակումների նախապատրաստումը: Հրետանու կրակի աջակցությամբ առաջագծին մոտեցել են ադրբեջանական ականազերծող մեքենաները և փորձել են տանկերի համար բացել անցուղիներ:

Սակայն հենց առաջին ժամից ադրբեջանցիների պլաններն սկսել են խախտվել:

- Հատուկ նախանշանակման որոշ ադրբեջանական ջոկատներ նույնիսկ մի քանի անգամ գերազանցող ուժերով չեն կարողացել գրավել բոլոր նախանշված դիրքերը, հատկապես՝ բարձունքներում:
- Հայկական ստորաբաժանումների հիմնականում գումարտակային հրետանին ոչ միայն ամբողջովին չի ճնշվել, այլև սկսել է դիպուկ կրակով լրջորեն խանգարել ադրբեջանական ստորաբաժանումների գործողություններին:

Այսինքն՝ ադրբեջանցիներին չի հաջողվել իրականացնել գլխավոր նպատակը, այն է՝ հիմնական հարվածային ուժերի համար ճանապարհ բացել, ինչպես պլանավորել էին առաջին արարում: Ավելին. հարձակումն սկսելուց մի քանի ժամ անց պլաններն ավելի են ձախողվել, երբ հայկական ստորաբաժանումներից շատերին հաջողվել է հակագրոհներ ձեռնարկել նույնիսկ գումարտակային պահեստային ուժերով:

Արդեն ապրիլի 2-ի ցերեկը հակառակորդը, սպառելով իր գրոհող խմբերի առաջին շարակարգի հիմնական ուժերը և կորցնելով անակնկալության առավելությունը, փորձել է ևս մեկ անգամ գրոհ զարգացնել՝ մարտի մեջ նետելով նոր ուժեր: Այսպիսով՝ ապրիլի 2–3-ը հակառակորդը, որոշ տեղերում կորցնելով իր գրաված դիրքերը, այլ տեղերում ենթարկվելով հայկական ստորաբաժանումների համառ հակագրոհներին, ստիպված է եղել դիմել վերախմբավորումների: Երկու հիմնական ուղղություններում էլ հայկական ուժերը, կիրառելով տանկեր ու հրետանի, անցել են հակահարձակման: Դա հակառակորդին ստիպել է հրաժարվել իր հիմնական հարձակողական պլանից և դիմել պաշտպանության:

Չկարողանալով հայկական ստորաբաժանումներին բերել հանկարծակիի՝ հակառակորդը ձեռնամուխ է եղել «Բ» պլանի իրագործմանը՝ հրետանային ինտենսիվ կրակով ճնշմամբ գոնե առջևի դիրքերի գրավմանը: Թեև մի քանի տեղում նրան հաջողվել է նման ինտենսիվ կրակով ճեղքել առաջագծի դիրքերը, սակայն դրանով ձախողել է ամբողջ օպերացիան, քանի որ հիմնական ուժերը, չհասնելով ոչ մի նշանակալի հաջողության, անգամ չգրավելով որևէ մարտավարական խորություն, ստիպված են եղել անցնել դիրքային մարտե-

* Դասակի հենակետի ճակատը լայնքով կազմում է մինչև 400 մ, խորությամբ՝ մինչև 300 մ: *– Խմբ.:*

րի: Չկարողանալով եղած ուժերով ու միջոցներով ճեղքել պաշտպանական գիծը՝ հակառակորդը կիրառել է ավելի բարձր մակարդակի միջոցներ՝ ծանր հրետանի, մարտական ԱԹԱ-ներ և այլն: Սակայն անգամ այդ միջոցների կիրառմամբ նրան չի հաջողվել ավարտին հասցնել ճեղքման գործը և նույնիսկ ամրանալ առանձին գրավված դիրքերում, քանի որ հայկական զորքերի մշտական հակագրոհները նրան զրկել են ամրանալու հնարավորությունից:

Հարավային ուղղությամբ ապրիլի 2-ին ժամը 12:30-ի սահմաններում խոցվել են հակառակորդի մեկ ռազմական ուղղաթիռ և 2 տանկ, մինչդեռ հյուսիսային հատվածում խոցվել էին մի քանի ԱԹԱ-ներ:

Ապրիլի 3–4-ը ադրբեջանական ՋՈՒ-ն փորձել է հաջողության հասնել հատկապես մարտական ԱԹԱ-ների կիրառությամբ՝ գործելով հոգեբանական ազդեցություն: Սակայն իրականում մի քանի տասնյակ կիրառության դեպքերից միայն մեկում է հակառակորդին հաջողվել նման ԱԹԱ-ով հարված հասցնել քաղաքացիական ավտոբուսին:

Չկարողանալով կոտրել հայկական ստորաբաժանումների դիմադրությունը՝ ադրբեջանցիները ապրիլի 3–4-ը նորանոր ուժեր ու միջոցներ են նետել մարտի, սակայն կրկին ու կրկին անհաջողության մատնվել: Հատկապես ուշագրավ է ուժերի կուտակումը կենտրոնական հատվածում: Ապրիլի 2-ից սկսած ադրբեջանական զորամիավորումները ձեռնարկել են նոր կուտակումներ ու վերախմբավորումներ, մասնավորապես՝ մարտական գործողությունների շրջան են բերվել երեք հրետանային բրիգադներ և այլ մեծ համազորային ուժեր: Կենտրոնական ճակատի ուղղությամբ տանկային գումարտակին հավասար ուժերը ամբողջ օրը տարաշարժ են կատարել և, միևնույն կրակային դիրքերում երկար ժամանակ չմնալով, փոխել են դիրքերը: Դա արվել է հիմնական հարվածի ուղղությունը քողարկելու նպատակով: Ապրիլի 4-ին այդ կուտակումները հասել են իրենց գագաթնակետին: Արդեն կեսօրին, չհաշված նախորդ օրերին կատարված կուտակումները, կենտրոնացվել էին երկու լրացուցիչ համազորային բրիգադների ուժեր ու միջոցներ:

Ըստ որոշ տվյալների՝ մի քանի ժամվա տարբերությամբ զոհվել են ադրբեջանական բրիգադի մի հրամանատար և շտաբի պետը: Ժամը 18:55-ի սահմաններում հայկական բրիգադի հետախուզական միջոցները հեռվում հայտնաբերել են մի նշանակետ, որը հեռահար հրթիռային համազարկային կայանք էր: Նշանակետը գտնվել է Սուլթանբուտյան անտառ-արգելոցի հարավային հատվածում: Այն արձակել է երկու հրթիռ դեպի Արցախի կենտրոնական պաշտպանական դիրքերը: Անմիջապես բրիգադի հրանոթներից մեկը այդ նշանակետի ուղղությամբ կրակ է բացել և, շտկումներ կատարելով, ևս երկու արկ է արձակել, ինչից հետո ադրբեջանական կայանքն անմիջապես լքել է կրակային դիրքը: Ըստ էության, հայկական կողմին հաջողվել է ձախողել կենտրոնական ուղղությամբ հարձակմանը ադրբեջանցիների նա-

խապատրաստությունը: Կենտրոնացման շրջանում գրեթե երկու բրիգադի հավասար ադրբեջանական ուժերը պարզապես կորցրել են իրենց մարտունակությունը:

Նույն երեկոյան Ադրբեջանի պաշտպանության նախարարը ջղաձգված հայտարարել է, թե իրենք կարող են հարված հասցնել Ստեփանակերտին[7]: Սակայն հենց այդ օրը Մոսկվայից ստացվել է առաջարկություն, ըստ որի էլ ադրբեջանական կողմը դիմել է զինադադարի հարցով: Սա արդեն հստակ վկայությունն էր այն բանի, որ ամբողջ օպերացիան ձախողվել է, իսկ հիմնական զորախմբերը ծանր կորուստներ են կրել: Դրան հետևել է հայկական կողմի չոր պատասխանը[8]:

Հայկական հրետանային բրիգադը երկրորդ անգամ կիրառվել է ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը և կրկին փոքր համազարկով գերազանցորեն է կատարել իր մարտական խնդիրը:

Արցախի հարավային հատվածում հարձակմանը մասնակցել է նաև «Տ-90Ս» տանկերի մի վաշտ: Ապրիլի 2–3-ը այս ստորաբաժանումն ակտիվորեն կիրառվել է ինչպես ամբողջական կազմով, այնպես էլ առանձին տանկերի ու դասակների ձևով: Հայկական հակատանկային միջոցները դրանց դեմ պայքարը վարել են առաջին իսկ րոպեից, և ապրիլի 4-ին արձանագրվել է մեկ տանկի հաստատված ու ևս երկուսի հավանական խոցում (հակառակորդը հասցրել է մարտադաշտից դուրս բերել այդ տանկերը, ինչի պատճառով հնարավոր չէ հաստատել դրանց խոցումը): Խոցումը կատարվել է շնորհիվ համակարգված ու գրագետ կրակի:

Ապրիլի 5-ին, ըստ էության սպառելով թևերում հաջողության հասնելու բոլոր հնարավորությունները և կենտրոնում տապալելով հիմնական հարված հասցնելու նախապատրաստությունները, ադրբեջանական կողմը դիմել է զինադադար կնքելու առաջարկությամբ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԻՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրակը դադարեցնելու պայմանավորվածության ձեռքբերման պահի դրությամբ ադրբեջանական կողմը կորցրել էր 24 տանկ, 1 ՀՄՄ, 6 զրահապատ մեքենա, 1 ինժեներական մեքենա, 1 «Գրադ» ՀԿՌՀ, 2 ուղղաթիռ և 12 անօդաչու թռչող ապարատ[9]: Հատուկ նշենք, որ հայկական կողմը կորցրել է մեկ ԱԹԱ: Արցախյան կողմի տեխնիկական զինվածությունը այնքան էր, որ գործնականում անհնար էր առաջ շարժվել առանց մեծ կորուստների, ինչն էլ ապացուցվել է կորուստների մեծ թվաքանակով, այն էլ՝ պրոֆեսիոնալ զորքերի կիրառման դեպքում:

---

[7] Տես «Боевые действия в Карабахе». «MEYDAN TV», 04.04.2016 (https://www.meydan.tv/ru/site/news/13274/):

[8] Տես «Հաղորդագրություն (թարմացված)»: «ԼՂՀ պաշտպանության նախարարություն», 04.04.2016 (http://nkrmil.am/main/am/newsMore1254.html):

[9] Տես «Հայկական կողմն ունի 29 զոհ, 101 վիրավոր, 28 անհետ կորած. ԼՂՀ ՊԲ»: «Առաջին լրատվական», 05.04.2016 (http://www.1in.am/1883791.html):

Չորսօրյա մարտական գործողությունները փաստեցին, որ ադրբեջանական ԶՈՒ-ն բրիգադային ուժեղացված զորախմբերով, ներառյալ՝ վերադասի հատկացրած ուժերն ու միջոցները, հարձակում ձեռնարկելով ըստ էության վաշտային հենակետի վրա, չի կարողացել հընթացս գրավել այն, անգամ չի հաղթահարել վաշտի պաշտպանության հենակետի ամբողջ խորքը:

Մարտական գործողությունների երկրորդ օրը ադրբեջանական կողմը ներգրավել է նաև օպերատիվ ենթակայության ուժեր: Ծանր հրանետները, մարտական ԱԹԱ-ները և «Սմերչ» համակարգերը գտնվում են անգամ բրիգադի հրամանատարության վերադասի ենթակայությունից դուրս, այսինքն՝ կիրառվել են բրիգադից երկու-երեք աստիճանով բարձր կազմավորման հրամանատարության հատկացրած ուժերն ու միջոցները:

Փաստորեն, ապրիլի 5-ին ադրբեջանական ԶՈՒ-ն, արցախյան բանակի երկու վաշտային ոչ լիարժեք հենակետ գրավելու համար կիրառելով 2-3 անգամ բարձր մակարդակի և մինչև 10 անգամ գերազանցող ուժեր, չի կարողացել լուծել իր մարտավարական խնդիրը և ստիպված է եղել դիմակայել հայկական ուժերի հակագրոհներին: Կրակի դադարեցումը այդ ուժերը համալրելու փորձ էր: Զինադադարն ուղղակիորեն օգտագործելով գրավված դիրքերն ամրապնդելու համար՝ ադրբեջանական կողմը մի քանի օր անց սկսել է հրետանային հակամարտկոցային պայքարը: Դրանով փաստորեն պատերազմը շարունակվել է՝ դառնալով *ապրիլյան*:

Ըստ էության՝ դա հյուծման նպատակով մղված հիբրիդային պատերազմ էր, քանի որ շեշտը դրվել էր միայն կրակային ներգործության, հետախուզության և ՌԷՊ-ի վրա: Հիմնական գործողությունները վարվել են գիշերը, ցերեկը համեմատական լռություն էր, կատարվել են հետախուզություն, ակտիվ տարաշարժեր ու համալրումներ: Մասնավորապես՝ ապրիլի վերջին օրերին ադրբեջանական հրետանին հարվածներ է հասցրել արցախյան հյուսիսային բնակավայրերին՝ կիրառելով մի քանի հարյուր հրետանային արկ: Դրանից հետո նա ստացել է հուժկու հակահարված՝ ուղղված մոտակա բնակավայրերին, որոնց շրջանում թաքցրել էր հրետանային մարտկոցները:

Կորցնելով նաև այս գործողություններում որոշակի հաջողության հասնելու հույսերը՝ ադրբեջանական բանակը դիմել է արդեն ավանդական դարձած մարտավարությանը. ժամանակավոր հանգիստ՝ հաջորդ փուլի նախապատրաստման համար: Հյուծման պատերազմը, որը շարունակվել է առաջին փուլից հետո կնքված հրադադարի ամբողջ շրջանում, ըստ էության իրականացվել է միայն այս ռազմավարությամբ. փուլային գործողություններ, ապա՝ նախապատրաստություններ, որոնք մենք անվանում ենք լռություն:

Կարելի է նշել ադրբեջանական բանակի գործողությունների հետևյալ առանձնահատկությունները:

1. Ադրբեջանական բանակը փորձեց ձեռնարկել նոր սերնդի պատերազմներին բնորոշ գործողություններ: Մասնավորապես՝ շեշտը դնելով հատուկ նախանշանակման ուժերի վրա, կիրառել հիբրիդային պատերազմի տար-

րեր, հաջողության հասնել հանկարծակի գործողություններով, բարդ ու դինամիկ համագործակցությամբ, թվային կառավարմամբ և գերճշգրիտ հարվածային միջոցների կիրառմամբ: Ու թեև այս ամենը թվում էր շատ գեղեցիկ ու խոստումնալից, սակայն այդպես էլ մնաց թղթի վրա:

2. Ադրբեջանական բանակը, զինված լինելով որոշակի ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, ի վիճակի չեղավ դրանք կիրառելու ճիշտ ու նպատակային կերպով: Դա հատկապես վերաբերում է մարտական ԱԹԱ-ներին և ռադիոտեխնիկական միջոցներին, ինչպես նաև տանկային, հակատանկային, հեռահար հրետանու և այլ սպառազինությունների գծով տեխնիկական առավելությանը: Արդեն ապրիլի 20-ին ադրբեջանական պաշտպանական գերատեսչությունը խոստովանեց, որ մեծ գումարներ է պատրաստում նոր զենքերի լրացուցիչ խմբաքանակ ձեռք բերելու և միջոցներ պահեստավորելու համար[10]: Սա ինքնին խոստովանություն է, որ ծախսվել են մեծ միջոցներ, որ դրանք հարկավոր է վերականգնել, և որ եղածով չի հաջողվել հաղթանակ տանել:

3. Մարտավարական մակարդակում ադրբեջանական բանակը դրսևորեց դասական ու առավել ևս նորամուծական մոտեցումների իրագործման տեսակետից իր անպատրաստությունը:

4. Հատուկ ստորաբաժանումների շարքերում զոհերի թիվը մեծ էր, թեև դա ամեն կերպ թաքցվում էր[11]: Նրանց մեջ կային գնդապետ, փոխգնդապետներ, մայորներ և հնարավոր է անգամ գեներալ[12]: Փաստացի հաստատվել է հատուկ նախանշանակման 52-րդ բրիգադի հրամանատար փոխգնդապետ Մուրադ Միրզաևի մահը: Նույնիսկ մեկ տարի անց, երբ Ի. Ալիևը խրախուսում էր ադրբեջանական բանակի ամբողջ բարձր հրամկազմին, նրանց շարքերում չկար հատուկ նախանշանակման ուժերի հրամանատարությունը[13]: Սակայն դա հիմնականում այն պատճառով էր, որ ադրբեջանական հրամանատարությունը, հայկական ուժերի ակտիվ հակագրոհների պայմաններում չվստահելով յուրային զորքերի մարտունակությանը, չէր համարձակվել դիմել նման քայլի: Միայն հայտնի Վարազաթմբի (Լելե Թեփե) գրավման

[10] Տես «Минобороны Азербайджана: в ближайшие дни будут выделены крупные средства на создание дополнительных военных резервов, приобретение современного оружия и техники». «apa», 19 апреля 2016 (http://ru.apa.az/news/314633):

[11] Տես «Ականի պայթյունից մահացել է Ադրբեջանի ԶՈՒ-ի մեկ փոխգնդապետ (թարմացված)»: «ՈԱԶՄ.info», 19.04.2016 (http://razm.info/82788), «Погибшие пилоты и полковник-лейтенант Мурад Мирзоев похоронены во II Аллее почетного захоронения». «apa», 11 апреля 2016 (http://ru.apa.az/news/313989):

[12] Տես «Командир сил спецназа МО Азербайджана: отстранен, ранен или убит?». «RAZM.info», 22.04.2016 (http://razm.info/ru/8420): Այս գեներալը հնարավոր է, որ մահացել է, իսկ ավելի հավանական է, որ վիրավորվել է:

[13] Տես «Ильхам Алиев встретился с группой военнослужащих в связи с годовщиной апрельских побед Азербайджанской армии», 31 марта 2017 (http://ru.president.az/articles/23230/images):

համար անգամ ադրբեջանական պաշտոնական տվյալներով իրենց բանակը կորցրել է 22 զինծառայող, որից 4-5-ը՝ սպա[14]:

5. Ադրբեջանական բանակն ի սկզբանե սխալ օգտագործեց իր որոշակի տեխնիկական առավելությունը, հետախուզահարվածային հնարավորությունները, ապա՝ ապավինեց մարդկային ռեսուրսների հաշվին հաջողության հասնելու ռազմավարությանը, սակայն տալով մեծ թվով զոհեր՝ ոչնչի չհասավ:

6. Ադրբեջանական հասարակությունը պատրաստ չէ հյուծիչ պատերազմի, քանի որ դա իրականում իր համար հայրենական պատերազմ չէ: Ադրբեջանական մամուլը և հասարակությունը լիովին փակ են, չկա ինքնաքննադատություն և սխալների ընդունում, գործում են կաղապարային մեթոդները: Հասարակությունից գաղտնի են պահվում զոհերի իրական թվաքանակը և անունները[15]:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այս տարիներին Ադրբեջանն իր հիմնական ուժեղ կողմերը ավելի է ուժեղացրել, սակայն թերությունները ևս ավելի են մեծացել:

Հայկական բանակի գործողություններում կարելի է նշել հետևյալ առանձնահատկությունները:

1. Հայկական ստորաբաժանումները հատկապես արագ և ճկուն են գործում տարաշարժման և ծավալման ժամանակ, այնքան արագ ու ճշգրիտ, որ, օրինակ, առաջին օրը հակառակորդի «Սմերչ» համակարգերը խոցման համար թիրախներ չեն գտել: Հայկական զորքերը ավելորդ կուտակումների չեն դիմել, իսկ մարտակարգերի դեմ այդ տեսակի կրակային համակարգերի կիրառությունը չի կարող արդյունավետ լինել: Ոչնչի և կատարվել է ընդամենը 1-2 համազարկ:

2. Հայկական պահեստային ուժերի գործողությունների համակարգը հղկված է և բանում է անխափան կերպով: Բանակը իր համալրման խնդիրը կատարում է բարձր մակարդակով:

3. Հայկական բանակի ստորաբաժանումները ցուցաբերել են զանգվածային քաջություն: Եղել են դիրքեր, որոնց պաշտպանները մինչև վերջ կռվել են բազմապատիկ ուժերի դեմ՝ չխնայելով իրենց կյանքը, ՊԲ զինվորները խոցել են երկու ուղղաթիռ, կան զինվորներ, որոնք խոցել են մի քանի տանկ:

Կան որոշակի թերություններ, հատկապես՝ տեխնիկական բնույթի, որոնց վերացման ուղղությամբ կատարվում են համապատասխան աշխատանքներ:

[14] Տես «В Горадизе воздвигнут памятник военнослужащим, павшим в боях за Лелетепе». «apa», 6 апреля 2017 (http://ru.apa.az/politika-azerbaydjana/nagornyj_ karabakh/v-goradize-vozdvignut-pamyatnik-voennosluzhashim-pavshim-shekhidami-v-boyakh-za-leletepe.html):

[15] Տես «Ադրբեջանի Նախագահը «ազգային հերոսի» կոչում է տվել անանուն զինվորականների»: «ՌԱԶՄ.info», 19.04.2016 (http://razm.info/82799):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական բանակը, որոշ տեխնիկական հարցերում զիջելով ադրբեջանական կողմին, գերազանցում է հաղթանակ ապահովող առավել կարևոր երեք գործոններով. զորքերի և ռեզերվների գործողությունների ավելի մեծ արագություն, մարտական բարձր ոգի և բարձր մակարդակի կառավարում՝ շնորհիվ լավ պատրաստված, հմուտ ու վճռական հրամանատարների և լավ ուսումնավարժվածության: Պատերազմների առաջին ժամերը մշտապես բնութագրվում են սրընթացությամբ, ինչն էլ սկզբնական արդյունքների համար դառնում է որոշիչ:

Հատկապես բանակային ռեզերվները ներգրավելու ու զորահավաքի առումով արագ գործող բանակները մշտապես ունեն առավելություն: Այս տեսակետից ևս ադրբեջանական բանակը նախապես կատարել էր ուժերի կենտրոնացում և ուներ օպերատիվ շարվածքի ավելի մեծ խտություն, սակայն հայկական բանակը գործեց ավելի արագ ու նպատակասլաց:

Բնականաբար, Ադրբեջանի ղեկավարությունը այս գործողություններից արեց կարևոր հետևություններ: Դժվար է ասել, թե նա իրենց ո՛ր սխալներն է համարում ավելի վճռորոշ, սակայն ակնհայտ է, որ ձեռնամուխ է եղել նոր զինատեսակների գնմանը, հիմնականում՝ հարձակողական, և, ամենակարևորը, մշակել է երկրի ռազմական դրության մասին նոր օրենք[16]:

Ադրբեջանի Նախագահի և ռուսաստանցի հեռուստալրագրող Վ. Սոլովյովի հանդիպումից[17] պարզ է դառնում, որ Ադրբեջանն ապրիլյան պատերազմից արել է մի շարք եզրակացություններ, որոնցից մի քանիսը մեզ համար հույժ կարևոր են: Ընդհանուր առմամբ ադրբեջանական ռազմաքաղաքական ղեկավարությունը համարում է, որ բանակի զարգացման համար ընտրել է ճիշտ ուղի, քանի որ ապրիլյան մարտական գործողությունները վկայում են, որ՝

- առաջագիծը ամեն դեպքում հնարավոր է ճեղքել՝ թեկուզ մեծ զոհերի գնով, բայց հնարավոր է, ինչում իրենց վստահություն տվեց հատկապես Վարազաթմբի գրավումը,
- որոշ զինատեսակների, հատկապես՝ նորագույն տեսակների կիրառումը, և դրանց ցանցային կառավարումը կարող են տալ ցանկալի արդյունք,
- զենքն է հիմնական գրավականը, և արդի զինատեսակներով հնարավոր է լուծել ամեն խնդիր, անգամ՝ անմիջականորեն Բաքվից:

Մասնավորապես՝ այդ վերջին միտքն է հայտնել Ադրբեջանի Նախագահ Ալիևը ռուսաստանցի լրագրող Սոլովյովի հետ հանդիպման ժամանակ[18]:

---

[16] Տես «Президент Ильхам Алиев утвердил закон «О военном положении»». «Day.Az», 5 апреля 2017 (http://news.day.az/politics/884163.html):

[17] Տես «Владимир Соловьев: Алиев не высказал осуждения по поводу моего посещения Арцаха». «РОССИЙСКО-АРМЯНСКОЕ ИНФОРМАЦИОННОЕ АГЕНТСТВО», 11.04.2017 (https://rusarminfo.ru/2017/04/11/vladimir-solovev-aliev-ne-vyskazal-osuzhdeniya-po-povodu-moego-poseshheniya-arcaxa/):

[18] Տես նույն տեղում:

Եթե անգամ այս ամենը որոշակի չափազանցում է, միևնույն է, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը հաջորդական քայլեր է ձեռնարկում ԶՈՒ-ն տեխնոլոգիապես հագեցնելու ուղղությամբ: Կառուցվածքային առումով ադրբեջանական բանակը ձգտում է դառնալու ավելի շարժունակ և հագեցած արդիական զինատեսակներով, այդ թվում՝ տարատեսակ ԱԹԱ-ներով, հրթիռահրետանային միջոցներով և այլ ՍՈՏ-ով:

Ապրիլյան պատերազմից հետո ադրբեջանական ԶՈՒ-ի հիմնական զորավարժությունները կազմակերպվում են նույն սցենարով՝ հայկական պաշտպանական դիրքերի ճեղքում մեծ կրակային ներգործությամբ, արագաշարժ զրահախմբերով և հատուկ նախանշանակման ստորաբաժանումներով: Ճեղքման համար կիրառվում են մեծ խտությամբ հրետանի ու զրահամիջոցներ և հատկապես մեծ ինտենսիվությամբ կրակ, ճեղքման առանձնահատուկ գործիքներ, ինչպիսիք են ծանր հրանետները, հրթիռահրետանային միջոցները և հակատանկային հրթիռները: Առանձնակի ուշադրություն է դարձվում հատուկ նախանշանակման ստորաբաժանումներին, որոնցից կազմվում են ճեղքման հատուկ գրոհիչ խմբեր:

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադրբեջանական ԶՈՒ-ի կիրառած մեթոդներն ու բավական արդիական տեխնիկական հնարավորությունները չեզոքացնելու համար անհրաժեշտ է լավագույնս պատրաստվել նոր սերնդի պատերազմների, ինչպիսիք են «Ցանցակայանքակենտրոն» պատերազմներն իրենց հիբրիդային լուծումներով: Արդիական համազորային մարտը արդեն դասական մարտը չէ, այն այսօր ավելի շատ էլեկտրոնակրակային մարտ է, որտեղ բոլոր զորատեսակները իրար հետ սերտորեն համագործակցում են էլեկտրոնաթվայնային հենքի վրա, իսկ զորատեսակներից հատկապես մեծ դեր ունեն հատուկ նախանշանակման ստորաբաժանումները, ԱԹԱ-ները և հրթիռահրետանային միջոցները: Այսօր իրենց բանակներն այդպես են պատրաստում առաջատար պետությունները: Այս ամենը, զուգակցված լինելով կառավարման արագագործ և ինտերակտիվ ավտոմատացված համակարգերի հետ, ձևավորում է «Հիբրիդային պատերազմների» զուտ ռազմական բաղադրիչը:

Արդի ժամանակաշրջանում պատերազմում հաջողության հասնելու համար առանձնահատուկ նշանակություն ունեն ԶՈՒ-ի հետ քաղաքացիական բնակչության սերտ կապվածությունը, պահեստազորի պատրաստության աստիճանն ու նրա ճկունությունը, ինչի լավագույն գրավականն է այսօր ՀՀ-ում առաջ քաշվող «Ազգ–բանակ» հայեցակարգը: Այն բանակին օգնելու, սատարելու, նրա մի մասնիկը դառնալու, ինչպես նաև վերահսկելու, տարբեր բացասական բարքերից մաքրելու արդյունավետ և պատմականորեն արդարացված միջոց է:

«Ազգ–բանակ» հայեցակարգով բարեփոխված բանակը իր ավելի կուռ կազ-

մակերպված, շարժունակ ստորաբաժանումներով, կրակի հզոր ու ճշգրիտ հարվածային միջոցներով և թվայնացված կառավարմամբ հանդերձ ապագա հաղթանակների և ռազմական գերազանցության հիմնական գրավականն է:

СТРАТЕГИЧЕСКИЙ АНАЛИЗ АПРЕЛЬСКОЙ ВОЙНЫ: НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ В СВЕТЕ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ОБОРОНЫ РА В СИСТЕМЕ «НАЦИЯ–АРМИЯ»

А. К. ОГАНЕСЯН, кандидат исторических наук,
Пресс-секретарь Министра Обороны РА

РЕЗЮМЕ

Внедрение концепции «Нация–армия» преследует цель повышения обороноспособности РА путем повышения эффективности оборонной системы государства. Это предполагает трезвую оценку настоящих и потенциальных военных угроз, исходящих от вероятного противника, и анализ осуществляемых им боевых действий.

В ночь с первого на второе апреля 2016 г. азербайджанские подразделения специального назначения внезапно предприняли широкомасштабные боевые действия против армянских позиций. В дальнейшем к ним присоединились общевойсковые подразделения с массированным использованием дальнобойной артиллерии и танков «Т-90С», а также вертолетов и дронов. Стратегический анализ Апрельской войны позволяет выделить ряд особенностей, присущих действиям азербайджанских и армянских войск, предопределивших провал тщательно спланированного нападения азербайджанских сил с одновременной информационной поддержкой со стороны азербайджанских и турецких СМИ.

Действия азербайджанских сил по плану должны были характеризоваться применением элементов гибридной войны: сопровождение огневого воздействия на цели разведкой огнем и РЭБ; применение сверхточных ударных средств, использование сил специального назначения в качестве основной составляющей мощи ударных группировок, хотя практически все это осталось на бумаге.

Армянские силы в ходе оборонительных и контрнаступательных боевых действий продемонстрировали: высокий уровень управления войсками, точность и быстроту действий при развертывании и маневрах; слаженность действий артиллерии и ПВО; умелую организацию доукомплектования и подтягивания резервов; высокую степень боевой выучки и боевого духа. Вместе с тем был выявлен ряд технических недостатков, устранение которых является актуальной задачей для ВС РА.

APRIL WAR STRATEGIC ANALYSIS: A FEW CONSIDERATIONS IN LIGHT OF IMPROVING THE RA'S DEFENSE IN THE "NATION–ARMY" SYSTEM

A. K. HOVHANNISYAN, PhD in History,
Press Secretary of the RA Defense Minister

SUMMARY

The "Nation–Army" concept implementation is targeted at the RA defense capability enhancement via the state defense system efficiency increase. This implies the sober assessment of present and potential military threats, coming from the probable opponent, and the analysis of combat actions taken by the latter.

At the night from 1 April to 2 April, 2016, the Azerbaijani special purpose units took sudden large-scale military actions against the Armenian positions, later general army units with massive use of long-range artillery and «T-90C» tanks, as well as helicopters and drones to join. The strategic analysis of the April War enables us to bring out a number of features distinctive of Azerbaijani and Armenian troops, which predetermined the failure of the minutely planned attack by the Azerbaijani Armed Forces with simultaneous informational support by both Azerbaijani and Turkish mass media.

The Azerbaijani forces' actions were planned to be distinguished by the use of elements of hybrid warfare: fire impact support by reconnaissance in force and EW, use of precision-guided weapons, use of Special Forces as the main power component of the battle groups, though almost all remained on paper.

In the course of defensive and counter-offensive actions the Armenian forces demonstrated: the high level of troops management, precision and speed in deployment and maneuvering; synergy between the Artillery and the Air Defense; proficiency in organizing the pre-manning and moving up the reserves, high level of combat training and morale. In the meanwhile, a number of technical shortcomings were revealed, the elimination of which is the prime task for the RA Armed Forces.

ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ, ՀՀ ՊՆ ՌԱՊԿ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

«Ազգ–բանակ» հայեցակարգի կարևոր դրույթներից է ռազմաարդյունաբերության ոլորտի՝ որպես ՀՀ տնտեսության լոկոմոտիվի զարգացումը: Այսպես. ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ձևակերպմամբ՝ «Ազգ–բանակը այն հասարակությունն ու Զինված ուժերն է, որոնց միջև շարժն անկատ է, որտեղ նորարար գիտությունից դեպի ռազմաարդյունաբերական համալիր մեկ քայլ է, որտեղ տնտեսությունը աճում և ամրապնդվում է իր բանակի պատվերներով, ներդրումներով, ստեղծագործ կարողություններով»[1]: Ըստ այդմ «Ազգ–բանակ» հայեցակարգի կենսագործման տեսակետից անհրաժեշտություն կա մշակելու այդ ուղղությամբ համապետական ռազմավարություն, ինչը ենթադրում է ռազմաարդյունաբերական ոլորտի զարգացման հնարավորությունների պարզում ու գնահատում, ուղենիշների ուրվագծում:

ՀՀ-ում ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) զարգացումը հույժ կարևոր է ազգային անվտանգության մեծ թվով խնդիրների լուծման համար: Դրա շնորհիվ առաջին հերթին հնարավոր կլինի մեղմացնել սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) ձեռքբերման գործում արտերկրից կախվածությունը, հատկապես՝ ռազմական գործողությունների ժամանակ շրջափակման կամ ոչ բարենպաստ ռազմաքաղաքական վերադասավորումների պարագայում:

Թեև այժմ Հայաստանի Հանրապետությունում արտադրվում, նորոգվում և արդիականացվում է ՍՌՏ-ն, մշակվում են նոր նմուշներ, սակայն կան նաև ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման համար խոչընդոտներ: Այդ խոչընդոտները պարզելու և ՌԱՀ-ի զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման համար հիմքային տվյալներ ստանալու նպատակով առա-

[1] «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

ջարկում ենք օգտագործել ռազմավարական կառավարման ոլորտում լայն կիրառություն ունեցող ՈՒԹՀՍ* *(SWOT)* մեթոդը, ինչը հնարավորություն կտա գնահատելու Հայաստանում ռազմաարդյունաբերական համալիրի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորություններն ու դրա դեմ ուղղված սպառնալիքները և ըստ այդմ մշակելու համապատասխան ռազմավարական քայլերի համակարգ:

ՈՒԹՀՍ վերլուծությունը** կատարենք հետևյալ սկզբունքով. նախ առանձնացնենք ՀՀ ՌԱՀ-ի զարգացման վրա ազդող ներքին և արտաքին գործոնները ու դրանք խմբավորենք, համապատասխանաբար, որպես ուժեղ ու թույլ կողմեր և հնարավորություններ ու սպառնալիքներ:

Ներքին գործոններ ենք համարում ռազմաարդյունաբերական համալիրի կառավարման մարմնի՝ ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերության պետական կոմիտեի (ՌԱՊԿ) վերահսկողության ներքո գտնվող գործոնները***, այսինքն՝ այն գործոնները, որոնց ազդեցության չափը կարող է փոփոխվել կառավարման մարմնի համապատասխան որոշումներով, թեև դրանք, իհարկե, հիմնվում են վերադաս մարմնի որոշումների վրա:

Արտաքին գործոններ ենք համարում ռազմաարդյունաբերական համալիրի կառավարման մարմնի վերահսկողությունից դուրս գտնվող գործոնները, այսինքն՝ այն գործոնները, որոնց ազդեցության չափի փոփոխությունը պայմանավորված չէ կառավարման մարմնի որոշումներով:

Այնուհետև տվյալ գործոններից յուրաքանչյուրը գնահատենք 1–5 բալային սանդղակով՝ ըստ ազդեցության չափի (5-ը՝ առավել բարձր, 4-ը՝ միջինից բարձր, 3-ը՝ միջին, 2-ը՝ միջինից ցածր, 1-ը՝ թույլ ազդեցություն) և հաշվարկենք մասնակի (հարաբերական) ցուցանիշները՝ բալային գնահատականը հարաբերելով բալային սանդղակում եղած առավել բարձր արժեքին՝ 5-ին[2]: Առանձին սյունակում նշենք նաև գնահատականների վերաբերյալ պարզաբանումները և նկատառումները, որոնք ավելի հասկանալի են դարձնում գնահատականները:

---

* ՈՒԹՀՍ վերլուծություն (անգլ. *SWOT – Strengths* (ուժեղ կողմեր), *Weaknesses* (թույլ կողմեր), *Opportunities* (հնարավորություններ), *Threats* (սպառնալիքներ))՝ ռազմավարական պլանավորման մեթոդ, որի դեպքում որոշվում և չորս կարգախմբի են բաժանվում ներքին ու արտաքին միջավայրների ազդեցությունները՝ գործոնները:

** Տվյալ վերլուծությունը կատարվել է փորձագիտական մեթոդով՝ հեղինակի և ԽՍՀՄ ու ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրում աշխատանքային գործունեության փորձ ունեցող մի խումբ մասնագետների ընդհանրական գնահատումների հիման վրա:

*** Հարկ է նշել, որ ՌԱՊԿ-ի գործառույթներից է նաև գների պետական կարգավորումը:

[2] Տվյալ մեթոդաբանությունը ավելի հանգամանորեն տես «Ձեռնարկության արդյունավետ կառավարում: Գործարար խաղի մեթոդիկա»: Խմբ. Յու. Մ. Սուվարյան: Ե., 2001, էջ 30:

ՌԱՀ-Ի ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հ/Հ	Ներքին գործոններ	Ուժեղ կողմ		Թույլ կողմ		Գնահատականի հիմնավորում
		գնահատական	մասնակի ցուցանիշ	գնահատական	մասնակի ցուցանիշ	
1	2	3	4	5	6	7
1.	Հայրենական արտադրանքի ցածր գներ միջազգային գների համեմատությամբ	5	1			Ցածր գինը մեծապես նպաստում է արտադրանքի իրացմանը
2.	Պետության վարած գնային քաղաքականություն	5	1			Կառավարության որոշմամբ ՌԱՊԿ-ը գների մեջ ներառում է տնտեսապես հիմնավորված բոլոր ծախսերը, ինչն ստեղծում է ոլորտի զարգացման հնարավորություն
3.	Առաջադրանքների բարձր մակարդակի կատարում և վերահսկողություն	5	1			Նպաստում է արտադրության կազմակերպման մակարդակի բարձրացմանը
4.	Որակի բարձր մակարդակի վերահսկողություն	4	0,8			Նպաստում է արտադրանքի որակի ապահովմանը
5.	ՌԱՀ-ի կադրերի ինժեներական միտք (բարձր մակարդակի գիտելիքներ և ստեղծագործ ունակություններ)	4	0,8			Ինժեներական մտքի շնորհիվ են նախագծվում և կատարելագործվում ՍՈՏ նմուշները
6.	Երկարաժամկետ նպատակային ծրագրեր չլինելը			5	1	Առանց այդ ծրագրերի հնարավոր չէ ոլորտի երկարաժամկետ կայուն զարգացումը
7.	ՌԱՀ-ի կազմակերպություններում միջազգային չափանիշներին բավարարող կառավարիչներ չլինելը			5	1	Առանց պրոֆեսիոնալ կառավարիչների ՌԱՀ-ը չի կարող զարգանալ
8.	Հիմնարար երկարաժամկետ գիտահետազոտական աշխատանքների (ԳՀԱ) պայմանագրերի կնքման մեխանիզմներ չլինելը			5	1	Գործոնի խիստ բացասական ազդեցությունն զգացվում է հատկապես հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման և կիրառման ժամանակ
9.	Ցածր մակարդակի արտադրական կոոպերացիա			4	0,8	Ազդում է աշխատանքների վրա՝ աշխարհագրական բաժանման առումով
10.	Կադրային քաղաքականության խիստ անբավարարություն			4	0,8	Ազդում է հեռանկարային զարգացման վրա, չկա նեղ մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման համակարգ
11.	Արտադրանքի տեսականու սակավություն			4	0,8	Ռնի միջինից բարձր ազդեցություն, քանի որ քիչ տեսականիով այլ շուկաներ գրավելը դժվար է

1	2	3	4	5	6	7
12.	Տեխնիկական փաստաթղթերով ցածր մակարդակի ապահովվածություն			4	0,8	Ազդում է արտադրատեսակների թողարկման կազմակերպման արդյունավետության վրա
13.	Կադրերի հոսունություն			4	0,8	Մասնագետները բարձր որակավորման են հասնում երկարամյա աշխատանքի շնորհիվ, սակայն շատերը մինչ այդ հեռանում են համակարգից
14.	Մեծ թվով կազմակերպությունների վատ ֆինանսական դրություն			4	0,8	Ազդում է կազմակերպությունների կայուն ֆինանսական գործունեության անընդհատության վրա
15.	Կազմակերպություններում տեխնոլոգիական բաժիններ չլինելը			4	0,8	Ազդում է որակի ապահովման վրա
16.	Կառավարման ավտոմատացված համակարգ (ԿԱՀ) չլինելը			4	0,8	ԿԱՀ-ը կարևոր նշանակություն ունի օպերատիվ կառավարման և արդյունավետ վերահսկողության համար
17.	Կազմակերպությունների գործունեության մեջ շրջանառության միջոցների դրամական բաղադրիչի անբավարարություն			3	0,6	Խոչընդոտում է անընդհատ կայուն գործունեությանը
18.	Կազմակերպություններում քաղաքացիական նախանշանակման արտադրանքի սակավաքանակություն			3	0,6	Այդ արտադրանքը կարևոր է հարակից արտադրությունների ներդրման և կազմակերպության գործունեության բազմազանեցման առումով
19.	Կազմակերպությունների արտադրական թերբեռնվածություն			3	0,6	Պատվերների ծավալը փոքր է և փոփոխվում է ըստ իրավիճակային պահանջարկի
20.	Կազմակերպությունների տեխնիկապես անբավարար վիճակ			3	0,6	Շենք-շինությունների, սարքավորանքի, գործիքների և այլ պարագաների վիճակը միջին մակարդակի է
21.	Արտաքին շուկաներում ցածր մակարդակի մարկետինգ			3	0,6	ՍՈՏ առևտրում կարևոր նշանակություն ունեն մարկետինգն ու գովազդումը
22.	Արտադրանքի արտահանման փոքր ծավալներ			2	0,4	Արտահանման ծավալի վրա ազդում են և՛ ՌԱՊԿ-ի, և՛ պետական այլ մարմինների որոշումները, ուստի տվյալ գործոնը մասամբ ներքին է, մասամբ՝ արտաքին
23.	Հատուկ համալրող մասերի մատակարարման ժամկետների խախտումներ			2	0,4	Խանգարում է պայմանագրային պարտավորությունների ժամանակին կատարմանը

Ուժեղ կողմերի հանրագումարային ցուցանիշը (մասնակի ցուցանիշների հանրագումարի հարաբերությունը համապատասխան մասնակի ցուցանիշների թվին) 4,6/5=0,92 է, իսկ թույլ կողմերի դեպքում՝ 13,2/18≈0,733:

ՌԱՀ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հ/Հ	Արտաքին գործոններ	Հնարավորություն		Սպառնալիք		Գնահատականի հիմնավորում
		գնահատական	մասնակի ցուցանիշ	գնահատական	մասնակի ցուցանիշ	
1	2	3	4	5	6	7
1.	Ռազմաքաղաքական ղեկավարության ցանկությունը՝ զարգացնելու ոլորտը	5	1			Ոլորտի զարգացման անհրաժեշտ պայման է
2.	Պատերազմի սպառնալիք	5	1			Փորձը ցույց է տալիս, որ պատերազմական կամ պատերազմի սպասման դրությունը դրական կերպով է ազդում ՌԱՀ-ի զարգացման վրա, քանի որ այն ռազմական խնդիրների կատարման գործիքների մատակարարն է
3.	Հիմնարար երկարաժամկետ ԳՀԱ-ների պայմանագրերի կնքման մեխանիզմների մշակման և կիրառման հնարավորություն	5	1			Կունենա մեծ դրական ազդեցություն
4.	Սփյուռքի պատրաստակամությունը՝ օժանդակելու ոլորտի զարգացմանը	4	0.8			Կարևոր գործոն է ֆինանսների ներդրման և կադրերի ներգրավման առումով
5.	Պետության ինժեներական կադրերի մտավոր ներուժ	4	0.8			Առկա ինժեներական կադրերը կարող են ներգրավվել ՌԱՀ-ում
6.	Պետության կադրային քաղաքականության բարելավում	4	0.8			Կնպաստի ոլորտի ներուժի պահպանմանը և զարգացմանը
7.	Միջազգային համագործակցության ընդլայնում	4	0.8			Կարևոր է տեխնոլոգիաների, տեխնիկական փաստաթղթերի, այլ երկրների ընկերությունների հետ համատեղ արտադրությունների կազմակերպման տեսակետից
8.	Օրենսդրական դաշտի բարելավում	4	0.8			Հատկապես քաղաքացիական օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը կբարելավի ոլորտի վիճակը

1	2	3	4	5	6	7
9.	Ռազմական արտադրանքի պահանջարկ	4	0.8			Լարված աշխարհաքաղաքական իրավիճակում ռազմական արտադրանքի պահանջարկը մեծ է
10.	Արտադրանքի արտահանման ծավալների աճում	3	0.6			Ծավալների աճումը կստեղծի լրացուցիչ պատվերներ և գումարներ ներգրավելու հնարավորություն
11.	ՀՀ-ում գործարարության պայմանների բարելավում	3	0.6			Ազդում է նոր ներդրումների ներգրավման առումով
12.	Գործող հարկային քաղաքականություն			4	0.8	Ոլորտին աջակցության ծրագրերում հարկային արտոնություններ նախատեսված չեն
13.	Բնակչության արտագաղթ			4	0.8	Սպառնալիք է հատկապես ՌԱՀ-ի առաջատար մասնագետների թվի նվազման և կադրային քաղաքականության վրա բացասական ազդեցության պատճառով
14.	Նյութական միջոցների ներմուծման համար խոչընդոտներ			4	0.8	Ազդում է հատկապես ռազմական նախանշանակման համալրող դետալների ներմուծման վրա
15.	Որոշ զինատեսակների արտադրության վրա դրված միջազգային արգելքներ ու սահմանափակումներ			2	0.4	Ներկայումս ունի միջինից ցածր նշանակություն

Արտաքին գործոններում հնարավորությունների հանրագումարային ցուցանիշը (մասնակի ցուցանիշների հանրագումարի հարաբերությունը համապատասխան մասնակի ցուցանիշների թվին) 9/11=0,8182 է, իսկ սպառնալիքների հանրագումարային ցուցանիշը՝ 2,8/4=0,7:

Հաշվարկենք ընդհանրացնող գործակիցը:

$$\frac{0{,}92\ (\text{ուժեղ կողմ}) + 0{,}8182\ (\text{հնարավորություններ})}{0{,}7333\ (\text{թույլ կողմ}) + 0{,}7\ (\text{սպառնալիքներ})} \approx 1{,}2127$$

Բանաձևից պարզ երևում է, որ այս գործակիցը տեսականորեն կարող է ընդունել 0,2-ից մինչև 5 արժեքները: Նշենք, որ 1-ի դեպքում այն հավասարակշռության գործակիցն է, երբ ռազմական արդյունաբերության ոլորտում դրական ու բացասական իրողությունները թվային արտահայտությամբ հավասարակշռված են:

Մեր հաշվարկած գործակիցը 1,2-ից մեծ է, ուստի ոլորտի ուժեղ կողմերն ու հնարավորությունները իրացնելու պարագայում հնարավոր կլինի հաղթահարել առկա թույլ կողմերն ու սպառնալիքները, ինչի շնորհիվ էլ կապահովվի ՀՀ ՌԱՀ-ի զարգացումը:

ՌԱՀ-ի զարգացման հնարավորությունների որոշման համար կարևոր է նաև ՈՒԹՀՍ մատրիցի կառուցումը:

ՌԱՀ-Ի ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒԹՀՍ ՄԱՏՐԻՑ*

	Հնարավորություններ	Սպառնալիքներ
	1. Ռազմաքաղաքական ղեկավարության ցանկությունը՝ զարգացնելու ոլորտը 2. Հիմնարար երկարաժամկետ ԳՀԱ պայմանագրերի կնքման մեխանիզմների մշակման և կիրառման հնարավորությունը 3. Սփյուռքի պատրաստակամությունը՝ օժանդակելու ոլորտի զարգացմանը 4. Պետության ինժեներական կադրերի մտավոր ներուժը 5. Պետության կադրային քաղաքականության բարելավումը 6. Միջազգային համագործակցության ընդլայնումը 7. Օրենսդրական դաշտի բարելավումը 8. Արտադրանքի արտահանման ծավալների աճումը	1. Բնակչության արտագաղթ 2. Նյութական միջոցների ներմուծման համար խոչընդոտներ 3. Որոշ զինատեսակների արտադրության վրա դրված միջազգային արգելքներ ու սահմանափակումներ
Ուժեղ կողմեր 1. Հայրենական արտադրանքի ցածր գներ նույն արտադրատեսակների միջազգային գների համեմատությամբ 2. Պետության վարած գնային քաղաքականություն 3. ՌԱՀ-ի կադրերի ինժեներական միտք	Քանի որ մեր արտադրանքի գները արտասահմանյան գներից ցածր են, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել արտադրանքի արտահանման ծավալները մեծացնելու ուղղությամբ: Նաև քայլեր ձեռնարկել Սփյուռքից ֆինանսական ներդրումների և համապատասխան կադրերի ներգրավման, միջազգային համագործակցությամբ հնարավորությունների ընդլայնման ուղղությամբ	Հայրենական արտադրության հաշվին կարելի է նվազեցնել ներմուծման միջազգային սահմանափակումների սպառնալիքը
Թույլ կողմեր 1. Երկարաժամկետ նպատակային ծրագրեր չլինելը 2. ՌԱՀ-ի կազմակերպություններում միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարիչներ չլինելը 3. Հիմնարար երկարաժամկետ ԳՀԱ պայմանագրերի կնքման մեխանիզմներ չլինելը 4. Ցածր մակարդակի արտադրա-	Մշակել և իրականացնել կադրերի պատրաստման արդյունավետ ծրագիր, միջազգային համագործակցությամբ ձեռք բերել հնարավորինս շատ տեխնիկական փաստաթղթեր, օրենսդրական դաշտի բարելավմամբ ստեղծել երկարաժամկետ պայմանագրերի կնքման և ֆինանսավորման հնարավորություններ, պրոֆեսիոնալ կառավարիչների շնորհիվ հնարավորինս ապահովել կազմակերպությունե-	Կադրային քաղաքականության բարելավմամբ հնարավորինս կրճատել ոլորտից կադրերի հեռանալը և չեզոքացնել արտագաղթի բացասական ազդեցությունը Արտադրական կոոպերացիայի հիմքերի ստեղծմամբ հասնել նյութական միջոցների մատակարարումների հետ կապված

* Սույն մատրիցում ներկայացնում ենք ՀՀ ռազմաարդյունաբերական ոլորտի զարգացման նպատակով թույլ կողմերի հաղթահարման հնարավոր ուղիները:

կան կոոպերացիա 5. Կադրային քաղաքականության խիստ անբավարարություն 6. Տեխնիկական փաստաթղթերով ցածր մակարդակի ապահովվածություն 7. Մեծ թվով կազմակերպությունների վատ ֆինանսական դրությունը 8. ԿԱՀ-ի չլինելը 9. Քաղաքացիական նախանշանակման արտադրանքի սակավաքանակություն 10. Արտադրանքի արտահանման փոքր ծավալներ	րի ֆինանսական կայուն վիճակը, կազմակերպել քաղաքացիական նախանշանակման արտադրատեսակների թողարկում Ներդրել կառավարման ավտոմատացված համակարգ Որպես կառուցվածքային փոփոխությունների արգասիք՝ ստեղծել արդյունավետ կերպով աշխատող կոնստրուկտորական բաժիններ	հիմնախնդրի մեղմմանը

Ամփոփելով՝ նշենք, որ ՈՒԹՀՍ վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատելու ռազմաարդյունաբերական համալիրի առկա վիճակի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները, որոշելու ուժեղ կողմերի և հնարավորությունների օգտագործմամբ թույլ կողմերի և սպառնալիքների հաղթահարման ուղիները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում դա հնարավոր է անել, ինչով էլ կապահովվի ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը: Ընդսմին ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերության պետական կոմիտեի ընթացիկ ծրագրերում արդեն նախատեսված են քայլեր առկա թույլ կողմերի վերացման և սպառնալիքների հնարավորինս մեղմման ուղղությամբ, ինչի հաջող կատարումը պահանջում է անընդհատ գնահատումների ու վերլուծությունների վրա խարսխվող հետևողական աշխատանք:

К ВОПРОСУ ВЫЯВЛЕНИЯ ПРЕПЯТСТВИЙ ДЛЯ РАЗВИТИЯ ОБОРОННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА РА И ОПРЕДЕЛЕНИЯ ПУТЕЙ ИХ ПРЕОДОЛЕНИЯ: SWOT-АНАЛИЗ

А. Р. ТОВМАСЯН, советник 1-го класса СГС, соискатель Академии государственного управления РА, начальник финансово-экономического отдела ГВПК МО РА

РЕЗЮМЕ

Одним из основных положений концепции «Нация–армия» является развитие оборонно-промышленной сферы как локомотива подъема экономики РА. В связи с этим насущной задачей является оценка условий и возможностей для развития Оборонно-промышленного комплекса (ОПК) с выявлением негативных факторов и определением путей их преодоления.

В качестве метода оценки настоящего состояния ОПК РА и перспектив его развития выбран SWOT-анализ, получивший широкое применение в сфере стратегического управления.

Экспертные оценки сильных и слабых сторон (воздействий внутренней среды), возможностей и угроз (внешних факторов) позволяют сделать вывод, что существуют объективные предпосылки для развития ОПК РА.

ON THE ISSUE OF REVEALING IMPEDIMENTS TO THE DEVELOPMENT OF THE RA DEFENSE INDUSTRY COMPLEX AND IDENTIFICATION OF THE WAYS TO OVERCOME THEM: SWOT ANALYSIS

A. R. TOVMASYAN, 1st Degree Advisor, SCS, Applicant, Public Administration Academy of the Republic of Armenia, Head, Financial and Economic Department, State Military-Industrial Commission, MOD, RA

SUMMARY

One of the main provisions of the "Nation–Army" concept is the development of the defense-industrial sphere as an incentive of the economic recovery of the Republic of Armenia. In these terms, the urgent task is to assess the frameworks and opportunities for the development of the Defense Industry Complex (DIC), identifying negative factors and the ways to overcome them.

SWOT analysis has been chosen as a method of assessing the current state of the RA DIC and outlook for its development. It has been widely used in the sphere of strategic management.

Expert assessments of strengths and weaknesses (impacts of the internal environment), opportunities and threats (external factors) lead to the conclusion that there are objective prerequisites for the development of the RA DIC.

ՀՀ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՀ-Ի ԿԱԶՄՈՒՄ ԿԻԲԵՌՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի գիտության գծով տեղակալ – ԱՈՀԻ-ի պետ

Համընդհանուր տեղեկութացումը և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) արագ զարգացումը ՏՀՏ ոլորտը դարձրել են ՀՀ տնտեսության զարգացման համար գերակա ուղղություն[1]: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին ՀՀ պետական համակարգի և հանրային կյանքի բոլոր ոլորտներում աշխարհի զարգացումներին համահունչ ծավալված թվայնացումը էապես մեծացրել է ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործում կիբեռտարածության արդյունավետ կազմակերպվածքի ու ռեսուրսների կառավարման դերը: Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագ զարգացման և ՀՀ պետական ու հանրային կյանքի բոլոր ոլորտներում դրանց ինտենսիվ կիրառման շնորհիվ ի հայտ են եկել ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ միանգամայն նոր սպառնալիքներ ու մարտահրավերներ՝ ՀՀ ազգային անվտանգության գերակայությունների շարքում շեշտադրելով կիբեռանվտանգության ապահովման կարևորությունը: Ըստ այդմ տվյալ ոլորտում համակարգված պետական քաղաքականություն վարելու համար կենսական անհրաժեշտություն է դարձել կիբեռանվտանգության ազգային ռազմավարության մշակումը:

ՀՀ ՏՀՏ և կիբեռանվտանգության ոլորտներում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ գոյություն ունեն հրատապ լուծում պահանջող մի շարք հեռամետ և ընթացիկ, այդ թվում՝ ներգերատեսչական և միջգերատեսչական մասշտաբների, կառավարային խնդիրներ: Բացի այդ, թույլ են զարգացած պետական ու մասնավոր հատվածների միջև համագործակցային կապերը, ինչը խաթարում է տվյալ ոլորտի անվտանգ ու կայուն զարգացումը: Թեև ՀՀ առանձին գերատեսչություններում ու կազմակերպություններում կան տվյալ ոլորտում կառավարման համար առանձնացված կոնկրետ ստորաբաժանումներ և պատասխանատուներ, սակայն ոլորտի արդյունավետ միջգերատեսչական կառավարման համար հարկ է ինչպես ներգերատեսչական ու միջգերատեսչական

[1] Տես «Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի հմ. 442-Ն որոշման հավելված (http://www.gov.am/files/docs/1322.pdf):

մակարդակներում, այնպես էլ պետական ու մասնավոր հատվածների միջև ստեղծել համակողմանի սիներգիկ համագործակցության միջավայր:

Հարկ է նաև նշել, որ վերջին տասը տարիներին միջազգային ու տարածաշրջանային անվտանգային համակարգում տեղի են ունեցել էական փոփոխություններ, ինչի հետևանքով 2007 թ. հաստատված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության[2] (ԱԱՌ) որոշ հատվածներ ունեն լրամշակման կարիք: Սակայն 2014 թ. սկսված ռուս-ամերիկյան ռազմավարական հակասությունների աճման պայմաններում ԱԱՌ-ի ամբողջական վերանայումը կարող է որոշակիորեն դժվարացնել ՀՀ արտաքին անվտանգային հարաբերություններում ձևավորված հաշվեկշռի պահպանումը:

Քանի որ ներկայիս ԱԱՌ-ում կիբեռանվտանգության ապահովմանն առնչվող հատված չկա, նպատակահարմար է կիբեռանվտանգության ազգային ռազմավարության ընդունումից հետո ԱԱՌ-ում կիբեռանվտանգության հատվածի ստեղծման նպատակով կատարել ռազմավարության լրամշակում: Նման եղանակով ԱԱՌ-ի լրամշակումը հնարավորություն է տալիս խուսափելու ռազմավարության ընդհանուր վերանայումից բխող ռիսկերից և, միևնույն ժամանակ, լրամշակման ժամանակ ԱԱՌ-ում կատարելու այլ անհրաժեշտ փոփոխություններ:

Ըստ այդմ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների (ԱԱՔՏՀՏ) կենտրոնը կիբեռանվտանգության ոլորտում միջազգային փորձի վերլուծության հիման վրա կենտրոնի պետ Ա. Գրիգորյանի ղեկավարությամբ մշակել և ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջի, նույն համալսարանի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի, ինչպես նաև Հարվարդի և «Գործընկերություն հանուն խաղաղության» կոնսորցիումի կիբեռանվտանգության ոլորտի փորձագետների հետ սերտ համագործակցությամբ փորձաքննել է ՀՀ կիբեռանվտանգության ազգային ռազմավարության նախագիծը: ՀՀ կիբեռանվտանգության ազգային ռազմավարության նախագծի մշակման տարբեր փուլերում քննարկումներ են եղել նաև ՀՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովում:

ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի գործընկերների հետ հաստատված սերտ գիտական համագործակցության արգասիք են ԱԱՔՏՀՏ կենտրոնի հատուկ պատվերով ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջի պրոֆեսոր *Ջ. Հեռլիի* և նույն համալսարանի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի կիբեռքաղաքականության գծով

[2] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

մասնագետ, գիտությունների թեկնածու *Ա. Քրաութերի գրած հեղինակային հոդվածները*:

Ներկայումս ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի (ՏԱԱՔԿ) քույր կազմակերպություն հանդիսացող ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱԱՔՏՀՏ կենտրոնում մշակվում է նաև ՏՀՏ և կիբեռանվտանգության ոլորտների արդյունավետ կառավարման համակարգի ներդրման նախագիծը: Այս համակարգի ներդրումը ենթադրում է տվյալ ոլորտները կառավարող բարձրաստիճան պաշտոնյաների պատրաստում, ինչի համար կենտրոնում զուգահեռաբար ստեղծվում է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագիրը, որը նախատեսվում է գործարկել 2018 թ. աշնանը:

Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագ զարգացման և ՀՀ պետական ու հանրային կյանքի բոլոր ոլորտներում դրանց ինտենսիվ կիրառման պայմաններում էական նշանակություն է ստանում ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնի կերպափոխմամբ ՊԱՀՀ-ում Կիբեռտարածության ռեսուրսների կառավարման ռազմավարության ինստիտուտի ստեղծման ծրագրի մշակումն ու իրականացումը: Ինստիտուտի ստեղծումը հնարավորություն կտա պաշտպանության առանցքի շուրջ համախմբելու կիբեռոլորտում ՀՀ պետական և մասնավոր հատվածների ներուժը և արդյունավետ կերպով լուծելու այս ոլորտում պետության առջև ծագող մարտահրավերները:

РАЗРАБОТКА НАЦИОНАЛЬНОЙ СТРАТЕГИИ КИБЕРБЕЗОПАСНОСТИ РА И СОЗДАНИЕ В СОСТАВЕ НИУО ИНСТИТУТА СТРАТЕГИИ УПРАВЛЕНИЯ РЕСУРСАМИ КИБЕРПРОСТРАНСТВА В КОНТЕКСТЕ ПЕРЕСМОТРА СТРАТЕГИИ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Б. П. ПОГОСЯН, кандидат исторических наук, заместитель Начальника НИУО МО РА по научной работе – начальник ИНСИ

РЕЗЮМЕ

В сложившейся международной обстановке для РА в условиях продолжающегося обострения противоречий между стратегическим союзником РФ и стратегическим партнером США пересмотр стратегии национальной безопасности в плане сохранения баланса в безопасностных отношениях с ними представляется нецелесообразным. В то же время, с учетом непрерывного возрастания роли информационно-коммуникационных технологий во всех сферах жизнедеятельности государства, общества и личности насущной становится задача системного обеспечения кибербезопасности, что диктует необходимость разработки стратегии ее обеспечения.

В Центре политики национальной безопасности и информационно-коммуникационных технологий ИНСИ НИУО МО РА разработан, обсужден в комиссии НС РА и апробирован в ведущих мировых центрах проект национальной стратегии кибербезопасности РА. Дополнение ее основными положениями СНБ РА с одновременным пересмотром отдельных ее положений позволит отложить окончательный пересмотр СНБ РА до начала процесса урегулирования отношений РФ – США.

В результате тесного научного сотрудничества ИНСИ НИУО МО РА с одним из ведущих мировых безопасностных научно-образовательных центров – Национальным университетом обороны США, ведущие сотрудники НУО в сфере кибербезопасности представили две авторские статьи, публикуемые ниже.

DEVELOPING THE RA NATIONAL CYBERSECURITY STRATEGY AND CREATING AN INSTITUTE FOR CYBERSPACE RESOURCE MANAGEMENT STRATEGY WITHIN THE NDRU IN THE CONTEXT OF THE RA NATIONAL SECURITY STRATEGY REVIEW

B. P. POGHOSYAN, PhD in History, Deputy Head for Research, NDRU, MOD, RA – Head, INSS

SUMMARY

In the current international situation for the RA in terms of the continuing aggravation of contradictions between its strategic ally – the Russian Federation, and strategic partner – the United States, the review of the national security strategy in terms of maintaining a balance in security relations with them appears undesirable.

At the same time, given the continuous increase in the role of information and communication technologies in all the spheres of the vital activity of the state, society and the individual, the task of systemically ensuring cybersecurity is imperative, which dictates the need to develop a strategy for its provision.

The Draft National Cybersecurity Strategy of the Republic of Armenia has been developed in the Center for National Security Policy and Information and Communication Technologies, INSS, NDRU, MOD, RA, discussed in the Commission of the RA National Assembly and reviewed in the leading world centers. Supplementing the RA NSS with its principal provisions with simultaneous review of NSS certain provisions will allow deferring the final review of the RA NSS before the RF – US relations settlement process.

Owing to the close academic cooperation between the INSS, NDRU, MOD, RA and one of the world leading security, research and educational centers – the US National Defense University, key cybersecurity researchers from the NDU presented their papers published below.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

* Սույն նախագիծը քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Ս. Քոթանջյանի գիտական ղեկավարությամբ մշակել են ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կիբեռանվտանգության խումբը, իսկ ԱՌՀԻ-ի կերպափոխմամբ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ստեղծումից հետո՝ համալսարանի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնը: Մշակումը գիտականորեն փորձաքննել են ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջի, Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի, Միջազգային անվտանգության հարցերով քոլեջի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի պաշտպանական ակադեմիաների և անվտանգության հետազոտությունների ինստիտուտների «Գործընկերություն հանուն խաղաղության» խորհրդաժողովի կազմակերպած՝ կիբեռանվտանգության գծով կրթական ծրագրի մշակմամբ զբաղվող աշխատանքային խմբի փորձագետները:

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարությունը այն համապետական քաղաքական փաստաթուղթն է, որում համակարգված ձևով ներկայացվում են կիբեռոլորտում պետության, հասարակության և անհատի շահերի պաշտպանության հիմնական սկզբունքները:

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարությունը իրականացվում է պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում կիբեռանվտանգության ապահովման համար միասնական պետական քաղաքականության շարակարգված պլանավորման և իրացման միջոցով: Այդ քաղաքականությունը իշխանությունները մշակում են՝ համագործակցելով քաղաքացիական հասարակության հետ և հաշվի առնելով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար դրույթներն ու պահանջները, ինչպես նաև գերատեսչական և սուբյեկտային առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարության հիմքում դրված են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ ամրագրված ժողովրդավարական արժեքների համակարգը, ՀՀ ազգային շահերի, կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, կենսական նշանակություն ունեցող էլեկտրոնային ծառայությունների պաշտպանության և ազգային կիբեռկարողությունների կայուն զարգացման ապահովման հիմնական սկզբունքները:

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների համակարգի և ազգային շահերի գերակայությունների փոփոխման, ինչպես նաև սույն փաստաթղթում նշված նպատակների իրականացման:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կիբեռոլորտում Հայաստանի Հանրապետության ներկայիս վիճակը գնահատելու և անվտանգ ապագա կառուցելու համար հիմնարար նշանակություն ունեն կիբեռանվտանգության հետևյալ սկզբունքները.

- *Կիբեռանվտանգությունը ՀՀ ազգային անվտանգության կարևոր և անքակտելի բաղադրիչն է.* այն ապահովում է կիբեռսպառնալիքներից պետության, հասարակության և անհատի շահերի երաշխավորված պաշտպանվածությունը, բխում է ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից և նպատակաուղղված է կենսագործունեության բոլոր ոլորտներում Հայաստանի Հանրապետության, հասարակության ու անհատի անվտանգ ու կայուն զարգացման ապահովմանը,

- *ՀՀ կիբեռանվտանգության հիմնական օբյեկտներն են.* կիբեռտարածությունը, կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքները, էլեկտրոնային ծառայությունները, այդ թվում՝ էլեկտրոնային կառավարությունը, ընդսմին կիբեռսպառնալիքներից դրանց պաշտպանությունը իրագործվում է հավանական ռիսկերի հայտնաբերման, գնահատման ու նվազեցման կամ չեզոքացման եղանակով,
- *ՀՀ կիբեռանվտանգության հիմնական սուբյեկտներն են.* պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, արդյունաբերական, կրթական և գիտահետազոտական կազմակերպությունները ու հաստատությունները, հասարակական կազմակերպությունները, ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունները, ինչպես նաև տվյալ ոլորտում գործող պետական և մասնավոր այլ կազմակերպություններ, անհատներ,
- *ՀՀ կիբեռանվտանգության հիմնական երաշխիքն է* համընդհանուր ժողովրդավարական արժեքների՝ պետության, հասարակության, անհատի հիմնարար իրավունքների և ազատությունների երաշխավորվածության ու պաշտպանության, ինչպես նաև ՀՀ քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանության գործուն համակարգը:

III. ԿԻԲԵՌՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը որպես կիբեռոլորտում իր հիմնարար շահերն է դիտում պետության, հասարակության և անհատի պաշտպանվածության ապահովումը և կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների, համակարգչային տեխնիկայի ու տեղեկատվական-էլեկտրոնային միջոցների կիրառմամբ նրանց կայուն զարգացման համար երաշխավորված նախադրյալների ստեղծումը: Այդ շահերով պայմանավորված նպատակների իրագործումը Հայաստանի Հանրապետությունը խարսխում է իրավական, հաստատութենական, տեխնիկատեխնոլոգիական, ենթակառուցվածքների զարգացման ու պաշտպանության ոլորտներում մշտապես զարգացող իր կիբեռկարողությունների վրա:

Կիբեռոլորտում Հայաստանի Հանրապետության ազգային շահերն արտահայտող նպատակներն ու խնդիրներն են.

➢ *Կիբեռոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի համապարփակ համակարգի ստեղծումը.*

- կիբեռանվտանգության ապահովման և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտները կարգավորող իրավական դաշտի լրացումը անհրաժեշտ ակտերով և կատարելագործումը՝ միջազգային իրավական նորմերին ու կոնվենցիաների պահանջներին համապատասխանեցմամբ,
- բազմակողմ և երկկողմ միջազգային համագործակցությամբ կիբեռհանցագործությունների դեմ պայքարին մասնակցության արդյունավետութ-

յան մեծացման նպատակով նորմատիվ իրավական բազայի կատարելագործումը,

- ՀՀ կիբեռանվտանգության ոլորտում միջազգային անվտանգային ստանդարտների և հավաստագրման համակարգի ներդրումը, ինչպես նաև ոլորտային ազգային ստանդարտների մշակումը,
- տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտներում հեղինակային իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործումը՝ արդյունավետ մեխանիզմների ներդրմամբ:

➢ *ՀՀ կիբեռոլորտի հաստատութենական ապահովումը (արդյունավետ համակարգված կառավարումն ապահովող ռազմավարական քաղաքական փաստաթղթերի և մարմինների համալիրի ստեղծում).*

➢ *կիբեռոլորտում* միասնական համապետական քաղաքականության ուղենիշները սահմանող, սուբյեկտների գործունեությունն ուղղորդող, նրանց միջև համագործակցությունը կարգավորող ռազմավարական քաղաքական փաստաթղթերի համակարգի ստեղծումը՝ նոր փաստաթղթերի մշակմամբ և եղած փաստաթղթերի կատարելագործմամբ,

- ՀՀ կիբեռանվտանգության ապահովմանն ուղղված համապետական ձեռնարկումների համակարգված ծրագրի մշակումը,
- ՀՀ կիբեռոլորտում պետական ու մասնավոր հատվածների միջև, միջգերատեսչական ու ներգերատեսչական մակարդակներով, ինչպես նաև միջազգային ասպարեզում համակարգված ու արդյունավետ համագործակցությունն ապահովող և գործունեությունը համադասող մարմինների, այդ թվում՝ համակարգչային պատահարներին արձագանքման խմբերի *(CERT/CIRT/CSIRT)*, ստեղծումը և հավաստագրումը,
- ՀՀ կիբեռանվտանգության ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման գործում պետական և մասնավոր հատվածների սուբյեկտների միջև կառավարչական դերերի և գործառույթների բաշխումը,
- կիբեռսպառնալիքների և կիբեռռիսկերի մշտազննման, վերլուծության ու հաշվետվությունների ձևավորման համար համալիր գործիքակազմի մշակումը և ներդրումը, տեղեկատվական ու կիբեռանվտանգային ռիսկերի գնահատման համապետական մեխանիզմների մշակումը և գործարկումը,
- կիբեռանվտանգության ոլորտում անհրաժեշտ որակավորված մասնագիտական ներուժի ձևավորման համար ուսուցման, վերապատրաստման ու հավաստագրման համապատասխան ծրագրերի մշակումը և ներդրումը,
- ՀՀ-ում անհատի սոցիալականացման բոլոր փուլերում կիբեռանվտանգության ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը՝ ըստ մշակված հատուկ ծրագրերի,

- կիբեռանվտանգության ոլորտում գիտակիրառական հետազոտություններ կատարող և կրթական ծրագրեր իրականացնող հայրենական հաստատությունների ցանցի զարգացումը՝ առաջատար միջազգային կազմակերպությունների ու գերազանցության կենտրոնների հետ ակտիվ համագործակցությամբ,
- տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտում արևմտյան ու ռուսաստանյան հասկացութային համակարգի տեղայնացման, հայ մասնագետների համար նրանց ոլորտային մշակույթի մատչելիության ապահովման համար հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարանի ստեղծումը:

➢ *ՀՀ կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական-էլեկտրոնային ծառայությունների մատուցման համակարգերի պաշտպանության և անխափան աշխատանքի ապահովումը.*

- տեղեկութային ակտիվների և կիբեռանվտանգության օբյեկտների ամբողջական անվանացանկի (ռեեստր) կազմումը,
- ՀՀ կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների ու տեղեկատվական համակարգերի սահմանումը և դասակարգումը՝ անհրաժեշտ չափանիշների մշակմամբ,
- ՀՀ կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական համակարգերի և էլեկտրոնային ծառայությունների պաշտպանության կազմակերպման միջոցառումների ու գիտական հետազոտությունների հիմքի վրա ուղենիշային հայեցակարգային փաստաթղթերի մշակումը,
- ՀՀ կարևոր տեղեկատվական համակարգերի գործունեության անընդհատության, էլեկտրոնային ծառայությունների մատչելիության, վստահելի և արտոնագրված տեղեկատվական համակարգերի ու դրանց պաշտպանության միջոցների, հեռահաղորդակցության ու կապի միջոցների օգտագործման արդյունավետության ապահովման համալիր քաղաքականության մշակումը:

IV. ԿԻԲԵՌՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Արդի աշխարհում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արագ զարգացումն ու պետության, հասարակության և անհատի կենսագործունեության բոլոր ոլորտներ ներթափանցումը համընդհանրացման պայմաններում էապես մեծացնում են հասարակական կյանքում թվային տեխնոլոգիաների ունեցած դերը: Դա Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար ստեղծում է ինչպես նոր հնարավորություններ, այնպես էլ սպառնալիքներ ու մարտահրավերներ:

Կիբեռսպառնալիքներն ըստ իրենց աղբյուրների լինում են արտաքին և ներքին, կանխամտածված և ինքնաբերական:

ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության և կիբեռենթակառուցվածքների ձևավորմամբ պայմանավորված հիմնական սպառնալիքներն են.

արտաքին սպառնալիքներ

- կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական համակարգերի, էլեկտրոնային ծառայությունների վրա հավանական հակառակորդի կիբեռհարձակումները՝ դրանք շարքից հանելու, բնականոն աշխատանքը խաթարելու և/կամ հասանելիությունը էապես նվազեցնելու նպատակով,
- տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և ազգային կիբեռկարողությունների զարգացմանը հնարավոր խոչընդոտումը, միջազգային համագործակցային կապի լրիվ կամ մասնակի խզումը,
- արտասահմանյան արտադրության տեխնիկատեխնոլոգիական սարքավորանքի ու ծրագրային ապահովման միջոցների օգտագործումը,
- այլընտրանքային կապ չունենալու պայմաններում բնական աղետների հետևանքով կամ դիտավորությամբ կապի, մասնավորապես՝ համացանցի ֆիզիկական ընդհատումը,

ներքին սպառնալիքներ

- կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող իրավական դաշտում առկա բացթողումները (ներառյալ՝ ծառայողական գաղտնիքի, անձնական տվյալների և հեղինակային իրավունքների պաշտպանության իրավակարգավորումներում),
- կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող համապարփակ պետական քաղաքականություն չլինելը և/կամ չհամակարգված կիրառումը,
- կիբեռանվտանգության ոլորտի համակարգված կառավարումն ապահովող հավաստագրված մարմիններ, այդ թվում՝ համակարգչային պատահարներին արագ արձագանքման խմբեր, չլինելը և/կամ դրանց գործունեության անբավարար արդյունավետությունը,
- ՀՀ կիբեռանվտանգության ապահովման ոլորտում միջազգային ստանդարտների և հավաստագրման համակարգի կիրառման անբավարարությունը կամ աղավաղվածությունը,
- ՀՀ-ում կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական համակարգերի և էլեկտրոնային ծառայությունների պաշտպանության համալիր ծրագիր չլինելը և/կամ դրա իրագործման արդյունավետության անբավարարությունը,
- տեղեկատվական և կիբեռանվտանգային ռիսկերի գնահատման համակարգված և միասնական պետական մեխանիզմներ չլինելը և/կամ դրանց չհամակարգված կիրառումը,
- ՀՀ-ում կիբեռանվտանգության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի անբավարարությունը,

- պատշաճ մակարդակով կիբեռանվտանգության ապահովման համար անհրաժեշտ որակավորված մասնագիտական ներուժի սակավությունը, ուղեղների արտահոսքը,
- ՀՀ կիբեռանվտանգության ապահովման համար անհրաժեշտ մասնագիտական ներուժի պատրաստման և հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված համապատասխան կրթական, վերապատրաստական և հավաստագրային ծրագրերի մշակման ու ներդրման համապետական քաղաքականություն չլինելը և/կամ դրա անարդյունավետությունը,
- ՀՀ-ում չարտոնագրված տեղեկատվական համակարգերի, տեղեկատվության պաշտպանության միջոցների, հեռահաղորդակցության ու կապի միջոցների օգտագործումը և դրանով պայմանավորված՝ հեղինակային իրավունքների խախտման դեպքերի աճումը,
- կիբեռանվտանգության ոլորտի արդյունավետ կառավարման համար պետական ու մասնավոր հատվածների միջև, միջգերատեսչական ու ներգերատեսչական մակարդակներում համագործակցության համակարգվածության և արդյունավետության անբավարարությունը,
- ՀՀ-ում համացանցից օգտվողների թվաքանակի և թվային տեղեկույթի ծավալների էական աճմամբ պայմանավորված բացասական երևույթները:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը սույն Ռազմավարության նպատակների ու խնդիրների իրագործման՝ իր կիբեռանվտանգության ապահովման համար որպես հիմնական միջոցներ է դիտում՝ իրավական ապահովումը, հաստատութենական ապահովումը, տեխնիկատեխնոլոգիական ապահովումը, համակողմանի համագործակցությունը: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, հիմնվելով առաջավոր միջազգային փորձի վերլուծության և համապատասխան հայրենական գիտահետազոտական աշխատանքների արգասիքների վրա, համարում է, որ տվյալ ապահովումների արդյունավետությունը գերազանցապես պայմանավորված է համապատասխան կիբեռկարողությունների զարգացածության մակարդակով:

5.1. Իրավական ապահովում

Հայաստանի Հանրապետությունը որպես կիբեռանվտանգության ոլորտում գործունեության արդյունավետության ապահովման և կիբեռոլորտի կայուն զարգացման անհրաժեշտ նախապայման դիտում է այդ ոլորտների իրավակարգավորումը և լավ կառավարումը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի համապարփակ համակարգի ստեղծումը՝ եղածի կատարելագործմամբ և նորերի մշակմամբ: Դրա հետ մեկտեղ Հայաստանի Հանրապետությունը համարում է, որ այդ համակարգը, լինելով միջազգային

իրավական նորմերին ու սկզբունքներին համահունչ, պետք է ապահովի տվյալ ոլորտներում Հայաստանի Հանրապետության անկախությունն ու ինքնիշխանությունը:

5.2. Հաստատութենական ապահովում

Հայաստանի Հանրապետությունը կիբեռանվտանգության ու կիբեռոլորտի կայուն զարգացման ապահովման համար կարևորում է հետևյալ հաստատութենական նախաձեռնությունները.

- կիբեռանվտանգության համակարգի ու կիբեռոլորտի զարգացման հեռանկարային գիտութենահենք ծրագրերի, օրենսդրական ակտերի և ռազմավարական ուղեցույց քաղաքական փաստաթղթերի միջգերատեսչական մշակումը համադասելու, կիբեռտարածությունում ՀՀ պետական և մասնավոր հատվածների սուբյեկտների գործունեությունը համակարգելու և ուղղորդելու, նրանց միջև համակողմանի համագործակցություն զարգացնելու և դերերն ու գործառույթները բաշխելու, միջազգային սուբյեկտների հետ նրանց հարաբերությունները կարգավորելու, կիբեռանվտանգության ոլորտում կատարվելիք գիտահետազոտական աշխատանքները կազմակերպելու, ոլորտում կրթական ծրագրերը միասնականացնելու, պահանջարկին համապատասխանեցնելու և դրանց բարձր որակն ապահովելու նպատակով համապատասխան մարմնի (մարմինների) ստեղծումը,
- ոլորտի ստանդարտավորման ու ստանդարտացման, ռիսկերի կառավարման, գործող սուբյեկտների ու մասնագետների հավաստագրման, ոլորտային կրթական ծրագրերի համար պահանջների համակարգի ու մասնագիտությունների վկայագրերի մշակման միասնական համապետական ընթացակարգերի ու մեխանիզմների ստեղծումը և բոլոր պետական գերատեսչություններում ու սուբյեկտներում ներդրումը:

5.3. Տեխնիկատեխնոլոգիական ապահովում

Կիբեռանվտանգության համակարգի և կիբեռոլորտի կայուն զարգացման գործում Հայաստանի Հանրապետությունը կարևորում է նորագույն սարքավորանքով ու ծրագրային փաթեթներով և նորամուծական տեխնոլոգիաներով դրանց տեխնիկատեխնոլոգիական ապահովումը: Իր անվտանգության մակարդակը էապես բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը նախատեսում է կիբեռանվտանգության համակարգի առավել զգայուն և խոցելի հանգուցային տարրերը հնարավորինս փոխարինել հայրենական արտադրության տարրերով:

5.4. Համակողմանի համագործակցություն

Հաշվի առնելով այն փաստը, որ ներկայումս ոչ մի պետություն ի զորու չէ միայնակ՝ ապավինելով զուտ իր ուժերին, ապահովել կիբեռանվտանգությունը, Հայաստանի Հանրապետությունը որպես իր կիբեռանվտանգության մակարդակի երաշխավորված բարձրացումն ապահովող արդյունավետ

միջոց կարևորում է համակողմանի համագործակցության զարգացումն ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական ասպարեզում:

ՀՀ-ն միջազգային համագործակցություն է ծավալում այն պետությունների ու դրանց պետական և մասնավոր կիբեռսուբյեկտների ու միջազգային կազմակերպությունների հետ, որոնք ՀՀ-ի հետ հարաբերությունները կառուցում են փոխադարձ հարգանքի ու փոխշահավետության հիմքի վրա: Համագործակցությունն ընդգրկում է կիբեռհանցագործությունների դեմ համատեղ պայքարը, տեխնիկատեխնոլոգիական համատեղ մշակումներն ու արտադրության կազմակերպումը, համատեղ գիտահետազոտական աշխատանքները, կրթական ծրագրերի համատեղ իրականացումը և ուսանողների փոխանակումը, միասնական միջզերատեսչական ռազմավարությունների, զարգացման ծրագրերի և ընթացակարգերի մշակումը, այլ նախաձեռնություններ:

Ներպետական բնագավառում Հայաստանը համագործակցությունը զարգացնում է հայրենական պետական ու մասնավոր հատվածների սուբյեկտների միջև, միջզերատեսչական ու ներգերատեսչական մակարդակներում:

VI. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը, առաջնորդվելով կիբեռոլորտում իր անվտանգության և կայուն զարգացման շահերով, իր ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներով և առաջնահերթություններով, նկատի ունենալով այն իրողությունը, որ ներկայումս ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները, համակարգչային տեխնիկան ու տեղեկատվական համակարգերը ներթափանցել են պետության, հասարակության և անհատի կենսագործունեության բոլոր ոլորտներ՝ մեծապես պայմանավորելով դրանց անվտանգությունն ու կայուն զարգացման հնարավորությունները, գերակա է համարում իր նպատակային գործունեությունը հետևյալ ուղղություններով.

– ***իրավական ոլորտում***՝ միջազգային իրավական նորմերին ու կոնվենցիաների պահանջներին համապատասխան կատարելագործել և անհրաժեշտ ակտերով լրացնել կիբեռանվտանգության ապահովման և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ոլորտները կարգավորող իրավական դաշտը, կիբեռհանցագործությունների դեմ պայքարին ՀՀ մասնակցության արդյունավետությունը մեծացնելու նպատակով կատարելագործել բազմակողմ ու երկկողմ համագործակցության նորմատիվ իրավական բազան, ՀՀ կիբեռանվտանգության ոլորտում ներդրել միջազգային անվտանգային ստանդարտներն ու հավաստագրման համակարգը և մշակել ոլորտային ազգային ստանդարտները, կատարելագործել տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտներում հեղինակային իրավունքների պաշտպանության համակարգը և ներդրել դրա արդյունավետ մեխանիզմները,

– ***կիբեռոլորտի հաստատութենական ապահովման բնագավառում***՝ նոր փաստաթղթերի մշակմամբ և եղած փաստաթղթերի կատարելագործմամբ ստեղծել կիբեռոլորտում միասնական համապետական քաղաքականության ուղենիշները սահմանող, սուբյեկտների գործունեությունն ուղղորդող, նրանց միջև համագործակցությունը կարգավորող ռազմավարական քաղաքական փաստաթղթերի համակարգ, մշակել կիբեռանվտանգության ապահովմանն ուղղված համապետական ձեռնարկումների համակարգված ծրագիր, ստեղծել և հավաստագրել ՀՀ կիբեռոլորտում գործունեությունը համադասող մարմիններ, այդ թվում՝ համակարգչային պատահարներին արձագանքման խմբեր *(CERT/CIRT/CSIRT)*, կատարել ՀՀ կիբեռանվտանգության ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման գործում պետական և մասնավոր հատվածների սուբյեկտների միջև կառավարչական դերերի և գործառույթների բաշխում, մշակել և ներդրել կիբեռսպառնալիքների և կիբեռռիսկերի մշտազննման, վերլուծության ու հաշվետվությունների ձևավորման համալիր գործիքակազմ, մշակել տեղեկատվական և կիբեռանվտանգային ռիսկերի գնահատման համապետական մեխանիզմներ, կիբեռանվտանգության ոլորտում անհրաժեշտ որակավորված մասնագիտական ներուժի ձևավորման համար մշակել և ներդրել ուսուցման, վերապատրաստման ու հավաստագրման համապատասխան ծրագրեր, անհատի սոցիալականացման բոլոր փուլերում ըստ մշակված հատուկ ծրագրերի բարձրացնել կիբեռանվտանգության ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության աստիճանը, առաջատար միջազգային կազմակերպությունների ու գերազանցության կենտրոնների հետ ակտիվ համագործակցությամբ զարգացնել կիբեռանվտանգության ոլորտում գիտակիրառական հետազոտություններ կատարող և կրթական ծրագրեր իրականացնող հայրենական հաստատությունների ցանցը, տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության ոլորտում արևմտյան ու ռուսաստանյան հասկացութային համակարգի տեղայնացման, հայ մասնագետների համար նրանց ոլորտային մշակույթի մատչելիության ապահովման համար ստեղծել հայերեն–ռուսերեն–անգլերեն բացատրական բառարան,

– ***ՀՀ կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական-էլեկտրոնային ծառայությունների մատուցման համակարգերի պաշտպանության և անխափան աշխատանքի ապահովման ոլորտում***՝ կազմել տեղեկութային ակտիվների և կիբեռանվտանգության օբյեկտների ամբողջական անվանացանկ (ռեեստր), անհրաժեշտ չափանիշների մշակմամբ սահմանել և դասակարգել ՀՀ կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքներն ու տեղեկատվական համակարգերը, մշակել ՀՀ կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների, տեղեկատվական համակարգերի ու էլեկտրոնային ծառայությունների պաշտպանության կազմակերպման միջոցառումներն ու գիտահետազոտական հիմքի վրա խարսխվող հայեցակարգային փաստաթղթերը, մշակել ՀՀ կարևոր տեղե-

կատվական համակարգերի գործունեության անընդհատության, էլեկտրոնային ծառայությունների մատչելիության, վստահելի և արտոնագրված տեղեկատվական համակարգերի ու դրանց պաշտպանության միջոցների, հեռահաղորդակցության ու կապի միջոցների օգտագործման արդյունավետության ապահովման համալիր քաղաքականություն:

ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարությունն ընդունվում է որպես կիբեռոլորտում Հայաստանի անվտանգության ու կայուն զարգացման ապահովմանը նպատակաուղղված պետական քաղաքականության ու նախաձեռնությունների հեռանկարային ծրագրերի մշակման, տվյալ ոլորտում սպառնալիքների, մարտահրավերների ու ռիսկերի գնահատման համար ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներին համահունչ ուղեցույց ռազմավարական քաղաքական փաստաթուղթ:

Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարության հիմնադրույթների վրա են խարսխվում այն բոլոր ուղղորդող քաղաքական-իրավական փաստաթղթերը և ակտերը, որոնք ընդունվում են կիբեռոլորտում Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ու կայուն զարգացումը կարգավորելու և ուրվագծելու, ոլորտի լավ կառավարումն ապահովելու նպատակով:

ԳԱԼԻՔ ՍԵՐՆԴԻ ԿԻԲԵՌՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ջ. Ս. ՀԵՌԼԻ, գիտությունների թեկնածու, Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջ

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆ

Մեր տեղեկութային ակտիվների դեմ ուղղված կիբեռսպառնալիքների անընդհատ աճումը ավելի ու ավելի մեծ չափով է մեր ուշադրությունը սևեռում այն ակտիվությանն ու հետևողականությանը, որոնք ծրագրահեները ցուցաբերում են մեր միջավայր ներխուժելու ձգտումներում: Վերջին շրջանում լուրջ մտահոգություն է պատճառում կազմակերպությունների վրա ձեռնարկված հարձակումների բարդության և բազմապիսության մակարդակը: Այդ հարձակումների բարդ համակցային բնույթը ավելի դժվարացրեց ու պրոբլեմային դարձրեց դրանցից պաշտպանությունը և դրանց մեղմացումը: Եվ քանի որ համակարգչային ու տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացը շարունակվելու է, անշուշտ, չի կարելի ակնկալել, թե ապագայում ի հայտ կգա պայքարի ավելի հեշտ ուղի: Հետևաբար կենսականորեն անհրաժեշտ է ավելի լավ կրթել մեր մասնագետներին, որպեսզի նրանք ձեռք բերեն համապատասխան համախումբ հմտություններ, որոնք նրանց կօգնեն դիմակայելու մեր առջև ծառացող կիբեռմարտահրավերներին:

Սույն ուսումնասիրության մեջ առաջարկվում է մասնագետներին անհրաժեշտ գիտելիքներով օժտելու համար կիրառել ավելի ընդգրկուն ու հաշվեկշռված մոտեցում: Հույժ կարևոր է, որ կազմակերպության աստիճանակարգության բոլոր մակարդակներում մարդիկ լինեն ուսուցանված, թե ինչպես պետք է կազմակերպության բոլոր ջանքերը միահամուռ կերպով ուղղվեն կիբեռհարձակումների ակտիվացման դինամիկայի և ազդեցությունների դեմ: Եթե անգամ հաստատության բոլոր տարրերը չեն կարողանում գործել միասին՝ որպես մեկ ամբողջություն, այնուամենայնիվ նրանք պետք է տեղեկացվեն կիբեռհարձակումների հետևանքների մասին: Առաջարկվում է կիրառել մեկ համընդգրկուն մոտեցում, որը համապիտանի լինի հանրության բոլոր երեք հատվածների համար (պետական հատված, մասնավոր հատված և պետական կառավարման տարբեր մակարդակներ):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համակարգչային ու տեղեկատվական տեխնոլոգիաներում տեղի ունեցող առաջընթացը և, մասնավորապես, համացանցի դերի աճումը մեծապես պայմանավորում են մեր անձնական կյանքում և գործունեությունում համակարգչային տեխնոլոգիաների լայն տարածումը: Էլեկտրոնային միջոցների կիրառման ծավալների այն հսկայական աճումը, որին ականատես ենք եղել վերջին հարյուրամյակում, շարունակաբար ազդել և ազդում է մեր հասարակության և այն բանի վրա, թե ինչպես է նա զարգացել և զարգանալու:

Կիբեռհարձակումները սովորաբար քննարկվում են ռազմական ոլորտի և խոշոր արդյունաբերության առնչությամբ, քանի որ ռազմական ոլորտի հիմնական գործառույթն է պաշտպանել քաղաքացիներին, գործընկերներին և նրանց շահերը: Սակայն ցանկացած պահի և ցանկացած տեղում կիբեռտարածություն մուտք գործելու անհրաժեշտությունը առկա է բոլոր ոլորտներում: Որպես արդյունք՝ կիբեռմատչելիության անհրաժեշտությունը այդ քննարկումները տեղափոխում է հանրության այլ ոլորտներ ևս, ինչը շատ կարևոր է, քանի որ դրա պատճառով երբեմն կարիք է լինում կիբեռտարածությամբ մեզ համար ստեղծվող մարտահրավերներն ու հնարավորությունները դիտելու մի այնպիսի տեսանկյունից, որը տարբեր է ռազմականից: Քննարկումները պետք է զուտ ռազմական ոլորտից տեղափոխվեն ամբողջ հանրության ու բոլոր ոլորտների համար ավելի բաց և լայն ընդգրկմամբ դաշտ: Համակարգչային սարքերի (հատկապես՝ այսպես կոչված «խելացի» *(«smart»)* սարքերի) գործառույթներով ու կառուցվածքով պայմանավորված օգուտների հետ մեկտեղ ավելի ու ավելի մեծ ուշադրության առարկա է դառնում մեր տեղեկութային ակտիվների անվտանգությունը:

Սպասվում է, որ շարժական սարքերի թիվը ներկայումս աշխարհում եղած ավելի քան յոթ միլիարդից կշարունակի աճել մոտավորապես 15 %-ով: Սակայն կա և այն մարտահրավերը, որ սարքերի թվի աճումը և տեխնոլոգիական զարգացումը առաջ կբերեն կիբեռոլորտում ակնկալվելիք կենսականորեն կարևոր պահանջմունքներին ու մարտահրավերներին ի պատասխան տարբեր ուղղություններով մասնագիտացած որակավոր աշխատողների նոր հոսքերի պատրաստման անհրաժեշտություն: Ներկայումս, ցավոք, մենք ունենք որակավոր մասնագետների կարիք, իսկ ապագայում իրավիճակի բարելավում չի սպասվում [9]:

ՆՈՐ ՄԱՐՏԱՀԱՇՏ

Սովորական զինված հակամարտություններում լայնորեն կիրառվող փամփուշտների, հրթիռների, ռումբերի և մյուս ավանդական զենքերի զինանոցը ներկայումս սկսել է տագնապահարույց արագությամբ լրացվել կարևոր ենթակառուցվածքների վրա կիբեռհարձակումներով, մտավոր սեփականության յուրացմամբ, բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում պահվող ակտիվների հափշտակմամբ: Ինչպես արդեն նշել ենք, մեր հասարակությունում շարժական սարքերի թվաքանակի հսկայական աճումը և համակարգչային տեխնիկայի տարածումը հանգեցրել են ռազմական գործողությունների մի նոր ասպարեզի առաջացմանը, այնպիսի ասպարեզի, որում տեղեկույթն օգտագործվում է որպես այլընտրանքային զինատեսակ: «Տեղեկութային պատերազմ» հասկացությունը, իհարկե, նոր չէ, սակայն դրա ձևակերպումը դժվար գործ է, քանի որ մեր հասարակության տարբեր հատվածների համար այն նշանակում է տարբեր բաներ: Զինվորականության համար այն մեծ մասամբ վերաբերում է ներքին և անլար ցանցերի պաշտպանությանը: Այնուհանդերձ, ԶԼՄ-ներով տեղեկույթ տարածելու միջոցով

ահաբեկիչները հաջողությամբ իրագործում են հոգեբանական հարձակումներ, ինչպես, օրինակ, դա անում են որոշ ահաբեկչական խմբավորումներ Մերձավոր Արևելքում: Հակառակորդի խաբեության դասական ձևերը առայժմ մնում են որպես արժեքավոր գործիք, որը պատերազմող կողմը կիրառում է հանգամանորեն կազմակերպված տեղեկատվական արշավների ժամանակ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կեղծ և նենգափոխված տեղեկույթին: Այնուամենայնիվ կարևոր է հաշվի առնել, թե ինչպես են ավանդական և նոր տեղեկատվական գործիքարանները* դարձել այս նոր համաշխարհային ռազմարշավների կարևոր բաղկացուցիչ մաս:

Այսպիսով, պարզ ասած, առավելության հասնելու նպատակով ԶԼՄ-ների օգտագործումը նորություն չէ: Սակայն ներկայումս որոշումների ընդունման հարցում զինվորականների վրա դրանց գործած ազդեցությունը ավելի ակնառու է, քան անցյալում, որովհետև տեղեկատվությունը հնարավոր է սոցիալական տեղեկատվական գործիքարանի միջոցով օգտագործել ռեալ ժամանակում: Խոսքը վերաբերում է ոչ միայն զինվորական ղեկավարությանը, որը տեղեկույթը արագ հասցնում է զորքերին և բաշխում նրանց միջև: Զանազան տեղեկատվական գործիքարաններ ակնթարթորեն որսում են աշխարհի տարբեր վայրերում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումները և ցուցադրում ամբողջ աշխարհին: Այս «նոր նորմը» կտրուկ կերպով փոխել է հակամարտությունների ընթացքը, ընկալումն ու լուծումը: Սոցիալական և ավանդական (ռադիո, հեռուստատեսություն, թերթեր) տեղեկատվական աղբյուրները ռեալ կամ ռեալին մոտ ժամանակային մասշտաբով 24x7 (շուրջօրյա) հասանելիությամբ հետևողականորեն օգտագործվում են հասարակության առանձին հատվածների հիմնարար գաղափարներն ու սկզբունքները ամեն գնով տարածելու համար: Միշտ չէ, որ դա արվում է արդար, ազնիվ կամ փաստերի վրա հիմնվող ճանապարհով: Կարծում ենք, որ ավելի ողջամիտ կլինի կենտրոնանալ տեխնոլոգիայի՝ որպես տեղեկույթի տարածման միջնորդի վրա և այն դիտարկել որպես կիբեռոլորտում մեր նոր «սպառազինությունների մրցավազքի» կարևոր գործիքի: Ուստի հոդվածի սկզբում ներկայացնենք պատերազմական գործողությունների մակարդակներն ու ավանդական ռազմարշավներում դրանց հարաբերակցությունը, և թե ինչպես դրանք կարող են նպաստել կիբեռոլորտ փոխադրված հակամարտությունների էության ըմբռնմանը:

Քննարկումն սկսենք անվանի պատերազմական ռազմավարագետ Կլաուզևիցով, որը մարտավարությունը սահմանում է որպես զինված ուժերի կիրառում մարտում, իսկ ռազմավարությունը՝ մարտի կիրառում ըստ պա-

* Տեղեկատվական գործիքարան *(media platform)* է այն գործիքարանը (միջոցներ, կրիչներ, հաղորդիչներ, եղանակներ, տեխնոլոգիաներ, կազմակերպման տրամաբանություն և այլն), որն անհրաժեշտ է տեղեկատվության (իրազեկման) նպատակով մշակված տեղեկույթը տարածության և ժամանակի մեջ զետեղելու, տարածելու, փոխանակելու համար: – *Խմբ.:*

տերազմի նպատակների [3]: Այս բնութագրումները հույժ կարևոր են դրանց տարբերակման համար, որովհետև հաճախ պատրաստման և իրագործման մակարդակն է պայմանավորում միջոցներն ու շահերը պաշտպանելու և պահպանելու կարողությունը: Ըստ Կլաուզևիցի՝ հաճախ ուշադրության առավել արժանի բաները տեղի են ունենում հենց մարտավարական մակարդակում: Ու թեև դա կարևոր է, սակայն նախ ուշադրության կենտրոնում պահենք ռազմավարությունը, որպեսզի բոլորի համար տեսանելի դառնան միևնույն գերակայությունները և ավելի մեծ պատկերը՝ Առաքելությունը: Այստեղ մենք ուշադրություն կդարձնենք պատերազմի վարման մակարդակների միջև (ռազմավարական, մարտավարական և օպերատիվ) եղած տարբերություններին և դրանց հետևանքներին: Բացի այդ, ըստ Կլաուզևիցի՝ պատերազմի ռազմավարական մակարդակը կենտրոնանում է պետության հզորության կիրառման արվեստի և գիտության վրա: Մինչդեռ պատերազմի վարման մարտավարական մակարդակում նա կարևորում է նպատակին հասնելու համար կենտրոնացված ուժի կիրառմամբ ու հարձակողական գործողությամբ բնորոշվող մարտի պլանավորումն ու վարումը: Պատերազմի վարման օպերատիվ մակարդակում ռազմավարությունն իրականացվում է մարտավարական օպերացիաների համար առաքելությունների, հանձնարարությունների և ռեսուրսների բաշխման միջոցով [5]:

Ռազմավարության և մարտավարության միջև իսկապես կա մի համակեցական կապ, որի դեպքում մարտավարության բնույթի ցանկացած փոփոխություն ինքնաբերաբար անդրադառնում է ռազմավարության վրա: Ըստ այդմ հարկ է նշել, թե ինչպես է «ավանդական» գլխավոր ճակատամարտը վերածվում իր արդիական տեսակի՝ կիբեռպատերազմի: Կլաուզևիցը պատերազմը սահմանում է որպես «ավելի մեծ մասշտաբով մենամարտ», ուժի գործադրում հակառակորդին իր կամքի կատարումը պարտադրելու նպատակով [3]: Այսուհետև մենք մարտադաշտի ոլորտները (օդային, ցամաքային, ծովային կամ տիեզերական) կորոշարկենք որպես ավանդական ոլորտներ: Ուստի կրկնում ենք Կլաուզևիցի այն հիմնարար պնդումը, թե պատերազմը ուժի գործադրում է՝ առանց այդ ուժի կիրառման համար որևէ տրամաբանական սահմանափակում մտցնելու: Այս դրույթի ամենակարևոր իմաստն այն է, որ յուրաքանչյուր կողմ այդ կերպ հարկադրում է մյուսին գործել իր նման: Այս միտքը հույժ կարևոր է, քանի որ տեսնում ենք, թե որքան է աճել կիբեռհակամարտություններում հարձակողական, ինչպես նաև պաշտպանական կարողությունները ղեկավարելու անհրաժեշտությունը:

ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

Աշխարհը փոխվել է, փոխվել են նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների շահերն ու տնտեսական համագործակցությունը: Այս նոր իրականությունը խարսխվում է միանգամայն այլ հենքի վրա, որը բնութագրվում է քաղաքականության, նյութական ռեսուրսների և իշխանության ոլորտներում կատարվող փոփոխություններով: Տեղական և ավելի նպատակային տարածաշրջանային տնտեսական փաթեթի վրա կենտրոնացումից անցումը դեպի համաշ-

խարհային տնտեսության կարևորում և աշխարհի՝ որպես ձեռներեցության ու ներդրումների իրական շուկայի դիտում հատուկ են ոչ միայն ԱՄՆ-ին (նաև զարգացած արդյունաբերություն ունեցող պետությունների մեծ մասին):

Ներկայումս ԱՄՆ-ը ներգրավված է աշխարհով մեկ տարածված գործընկերային կապերի ու դաշինքների մեջ, ինչը ոչ վաղ անցյալում հնարավոր չէր նույնիսկ պատկերացնել: Ցավոք, մեծ թվով երկրների հետ ԱՄՆ-ի հարաբերությունները նրա շահերը տեղափոխում են այնպիսի տարածաշրջաններ, որոնք անկայուն են: ԱՄՆ-ի համար սա ակնհայտորեն ճշմարիտ է այն առումով, որ շատ դեպքերում այնտեղ տարածված են հակաամերիկյան տրամադրություններ: Որպես արդյունք՝ այդ տարածաշրջաններում իրենց շահերն ունեցող գործընկերներին պաշտպանելիս անհրաժեշտ է այն հարևանների հետ հարաբերություններում, որոնց հետ նրանք պետք է գոյակցեն, ապավինել ոչ այնքան ռազմական ուժին, որքան դիվանագիտությանը և համաձայնությանը: Դա նպաստել է բարդ և փխրուն հարաբերությունների զարգացմանը, թեև որոշ դեպքերում հակաամերիկյան տրամադրությունները եղել են շատ ուժեղ:

Ռազմավարական, օպերատիվ և մարտավարական պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնվեն այնպիսի ծայրահեղական խմբավորումները, ինչպիսիք են «Ալ Կաիդան», Իրաքի Իսլամական Պետությունը և Ալ Շամը (ԻԻՊՇ), կամ Իրաքի և Լևանտի Իսլամական Պետությունը (ԻԼԻՊ), որոնք թշնամաբար են վերաբերվում ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներից շատերին: Սոցիալական և ավանդական (ռադիո, հեռուստատեսություն, թերթեր) տեղեկատվական աղբյուրները ռեալ կամ ռեալին մոտ ժամանակային մասշտաբով 24x7 հասանելիությամբ մշտապես հաղորդում են իրենց արմատական դավանաբանությամբ և ուսմունքներով ուղղորդվող ծայրահեղականների նպատակները և մտադրությունները: Ուստի խելամիտ կլինի ուշադրության կիզակետում պահել տեխնոլոգիայի սակավ բարենպաստ ներուժի կիրառումը, այսինքն՝ սպառազինությունների մրցավազքում դրա հնարավոր օգտագործումը: Անհերքելի է պատմության հոլովույթում հրազենի և այլ զինատեսակների ստեղծման ու զարգացման վրա տեխնոլոգիաների ազդեցությունը: Ցավոք, տեխնոլոգիաները հեշտ և արագ կերպով նման զենքերը դարձրին բոլորին մատչելի, ինչը հնարավոր վտանգների գոյության պատճառով պահանջում է սպառնալիքների նկատմամբ լուրջ վերաբերմունք:

Չի կարելի թերագնահատել մեր աշխարհի ձևավորման գործում տեխնոլոգիայի դերն ու ազդեցությունը: Վերջին հինգ-վեց տասնամյակներում հասարակությունը ականատես է եղել զգալի առաջընթացի, որն ուղեկցվել է զանազան տեխնոլոգիաների ստեղծմամբ ու զարգացմամբ և պատերազմական գործողություններում դրանց կիրառմամբ: Այդ առաջընթացը ներառում է՝ մարտադաշտում կիրառվող ցուցասարքերի և այլ հանդերձանքի սնուցման համար կրովի արեգակնային թանթիկները, զինվորականներին ավելի մեծ արդյունավետությամբ ավելի հեռու և ավելի արագ թռչելու հնարավորություն տվող միասնական բազմագործառութային մեքենայի տեխնոլոգիա-

կան նմուշը *(joint multirole technology demonstrator),* օդային հետախուզության ավիացիայի նոր նավատորմը, զինվորներին էներգիա փոխանցող մի շարք նոր սարքերի ստեղծումը, ինչպես նաև լրացված իրականությամբ* տեղանքի մանրակերտը, որը կարող է ավելի ճշգրիտ կերպով մոդելել ռելիեֆը [4]: Ուստի կարևոր է հասկանալ, թե ինչպես կիբեռմիջոցների կիրառմամբ մենք պետք է ավելի լավ արձագանքենք ներկայիս և ապագա տեխնոլոգիաներով ստեղծվող մարտահրավերներին և հնարավորություններին:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Ինչպես արդեն նշեցինք, կիբեռհակամարտություններին վերաբերող քննարկումները սովորաբար սկսում են զինվորականները: Պաշտպանության և պահպանության համար զինվորականների պատասխանատվությունը նրանց ակնհայտորեն դարձնում է առաջավար այն իրավիճակներում, երբ պահանջվում է հակամարտության լուծում, հատկապես՝ եթե դա ունի համազգային նշանակություն: Սակայն մենք պետք է հասկանանք, թե ինչ ազդեցություն է գործում կիբեռոլորտը մասնավոր և պետական հատվածների վրա, և այն մտահոգությունը, որն արտահայտում են այդ հանրույթները՝ կապված իրենց տեղեկութային ակտիվների պաշտպանության հետ: Ըստ այդմ՝ տվյալ մտահոգությունը պետք է հասցեագրված լինի միայն ցանցերի սահմաններից դուրս և ներառի ազդեցությունը մտավոր սեփականության վրա, մասնավորապես՝ արտադրության ոլորտում, և անձնական բնույթի կարևոր տեղեկույթի վրա՝ հանրային ոլորտում: Ընդսմին այդ հանրությունները պետք է ներգրավվեն քննարկման մեջ, քանի որ դա բխում է իրենց իսկ շահերից:

Տվյալ զարգացումները մեծ ազդեցություն են գործում կիբեռհակամարտությունների լուծման եղանակների վերաբերյալ տարբեր հանրությունների կարծիքների միջև եղած հակասությունների վրա: Ժամանակ առ ժամանակ հատկապես մեծ հակասություններ են ծագում պետական կառավարման մարմինների ձեռնարկած արշավների վերաբերյալ պետական և մասնավոր հատվածների հայացքների միջև: Այս հանրությունները, որոնք երկուսն էլ ծրագրահենների թիրախ են, նման հակամարտությունների լուծումը պատկերացնում են միանգամայն տարբեր եղանակներով, որոնք էապես զանազանվում են մեզ հայտնի ավանդական ռազմարշավներում կիրառվողներից:

Մասնավորապես՝ կիբեռհարձակումների դեմ պայքարում ցանկացած մակարդակի հաջողության հասնելու համար համընդհանուր պահանջ է տեղեկույթի հավաքումն ու պետությունների, կազմակերպությունների, հանրութ-

* Լրացված իրականություն *(augmented reality – AR).* ընկալվող խառը իրականություն *(mixed reality)*, որն ստեղծվում է ընկալվող իրականության՝ համակարգչով ստեղծվող «լրացուցիչ» տարրերի կիրառմամբ (օրինակ՝ ֆուտբոլի խաղի հաղորդման ժամանակ դիմային գծին զուգահեռաբար տարված գունավոր գիծը, որը ցույց է տալիս դարպասին ամենամոտ գտնվող դաշտային խաղացողի դիրքը, տուգանային հարվածի տեղից մինչև դարպասը եղած հեռավորությունը ցույց տվող սլաքը և այլն): – *Խմբ.*:

յունների և անհատների միջև փոխանակումը: Դրա կարևորությունը չի կարող նվազեցվել, անգամ եթե անարդար և աչառու կատարման պատճառով ունեցել է բացասական կամ որպես այդպիսին ընկալվող հետևանքներ: Անձնական տեղեկույթի գաղտնիության պահպանումը մեծ խնդիր է, քանի որ վերաբերում է տեղեկույթի փոխանակմանը, և դրան պետք է մոտենալ շատ լուրջ կերպով: Եթե դրան լուրջ չեն վերաբերվում, ապա համագործակցության համար հետևանքները կարող են լինել աղետալի և իրենց ազդեցությամբ ու նշանակությամբ ընդգրկուն [12]:

Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) պատմությունից քաղված կարևոր դասերից մեկն էլ այն է, որ պետական կառավարման մարմինները պետք է ավելի մեծ չափով վստահեն այն ժողովրդին ու կազմակերպություններին, որոնց ծառայում են: Սովորաբար հանրությունն ակնկալում է, որ իրեն պաշտպանելու համար պետությունը պետք է ձեռնարկի որոշակի քայլեր: Սակայն եթե կառավարության համակարգում եղած գործակալությունը կարծում է, թե այդպիսի տեղեկույթի հաղորդումը (դրա կոնկրետ մանրամասները պարտադիր չեն) ավելորդ և վնասաբեր է, իսկ հասարակությունը պետք է պարզապես հավատա դրան, ապա կարող են ծագել պրոբլեմներ: Ընդհանուր առմամբ, ամեն ինչ չէ, որ մարդիկ ցանկանում են իմանալ, ուստի կոնկրետ մանրամասները բոլորովին էլ անհրաժեշտ չեն: Այդուհանդերձ մարդիկ ցանկանում են վստահ լինել, որ իրենց կարևորում և հաշվի են առնում այն գործողություններում, որոնք ձեռնարկում են գործակալությունները, և որոնք անմիջականորեն ազդում են իրենց վրա:

Մարդիկ համարում են, որ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խիստ անձնական և մասնավոր իրավունք է, սակայն նրանք ավելի մեծ չափով շահագրգռված են ապահով և պաշտպանված լինելու մեջ: Երբ միևնույն հարթության վրա են դրվում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը և մեծ աղետներն ու այլ մարտահրավերներ, իրավունքները զիջում են ապահովությանն ու անվտանգությանը: Վառ օրինակ է Բոստոնի մարաթոնի ժամանակ կատարված հարձակումը, երբ ոչ միայն տեղեկություն հավաքվեց, այլև հանրությունը մեծ մասնակցություն ունեցավ կամավոր վկաների զանգվածային հարցման միջոցով հանցագործներին բռնելու գործում [2]: Այնուամենայնիվ մենք պետք է անկեղծորեն ասենք, որ չկան բոլոր իրավիճակների վերջնազարգացումների որոշման համապիտանի եղանակներ, այլ դրանք պետք է դիտարկվեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: Մենք դեռ ավելի հանգամանորեն կխոսենք անձնական կյանքի անձեռնմխելիության հարցի մասին և այն մասին, թե ինչպես լավագույնս այն կարող ենք լուծել մեր անհրաժեշտ հմտությունների շնորհիվ:

ՈՐԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԺ

Մեկ այլ առիթով մենք քննարկել էինք այն հարցը, թե ԱՄՆ-ում ինչ կարևորություն է տրվում այնպիսի համընդգրկուն ծրագրերի իրագործմանը, որոնց կիզակետում կրթության պրոբլեմին պատասխանելու կարևորությունն

է [8]: Ինչպես նշում է Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնը (ՌՄՀԿ), եթե մենք ուզում ենք ունենալ կիբեռանվտանգության հուսալի և պատշաճ ռազմավարություն, ապա, շատերի կարծիքով, խիստ անհրաժեշտ է ունենալ որակավոր աշխատուժ, այսինքն՝ «ճիշտ» մարդիկ բոլոր մակարդակներում: ԱԱԳ-ից Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոն հրավիրված գիտնական և ԿՀԳ Գաղտնի տեղեկատվական տեխնոլոգիաների գրասենյակի հիմնադիր տնօրեն Ջիմ Գոսլերը նշել է, որ ԱՄՆ-ում կան կիբեռանվտանգության գծով միայն մոտ 1000 որակավոր մասնագետներ, որոնք իրենց պահանջվող հմտություններով ի վիճակի են արդյունավետ կերպով աշխատելու կիբեռտարածությունում [6]: Մինչդեռ ԱՄՆ-ին իր պահանջարկը բավարարելու համար փաստացի անհրաժեշտ է 10000-ից մինչև 30000 կադր [7]:

Էվանսը և Ռիդերը նաև նշում են ցանկացած ռազմավարության այն չորս տարրերը, որոնք անհրաժեշտ են պահանջվող հմտություններով «ճիշտ» մարդիկ ունենալու համար: Դրանք են՝

- խթանել և ֆինանսավորել մեր դպրոցներում ավելի ճշգրիտ ուսումնական ծրագրերի մշակումը,
- աջակցել մասնագետների այնպիսի տեխնիկապես խստապահանջ հավաստագրման մշակմանը և ընդունմանը, որը ներառի հաստատուն կրթական և վերահսկելի գործնական բաղադրատարրեր,
- պետական համակարգեր կառուցող, գործարկող և պաշտպանող մարդկանց տեխնիկական պատրաստականության մակարդակը բարձրացնելու համար կիրառել աշխատանքի ընդունման գործընթացի, գիտելիքների ձեռքբերման պրոցեսի և ուսումնավարժեցման ռեսուրսների համակցությունը,
- բարձր մակարդակի տեխնիկական հմտություններ ունեցողներին խրախուսելու և պահելու նպատակով երաշխավորել նրանց պաշտոնական առաջխաղացումը, ինչպես այլ բնագավառներում է, օրինակ՝ քաղաքացիական շինարարության կամ բժշկության ոլորտներում [6]:

Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի՝ Կիբեռանվտանգության գծով հանձնաժողովը, որն ստեղծվել է 44-րդ Նախագահի համար, նշում է, որ մասնագիտական հավաստագրման նկատմամբ գերվստահությունը սխալ է ու նաև ստեղծում է անվտանգության կեղծ զգացում հետևյալ պատճառներով.

- անհատներն ու գործատուները իրենց սուղ ռեսուրսները ծախսում են հավաստագրեր ձեռք բերելու վրա, մինչդեռ դրանք ակնհայտորեն չեն մեծացնում անվտանգային ռիսկերին դիմակայելու նրանց կարողությունները,
- ներկայումս կիրառվող հավաստագրերը ցուցադրում են ոչ այնքան ռիսկերը մեղմելու, հարձակումները կանխելու և դրանց արձագանքելու,

որքան փաստաթղթերը քաղաքականությանն ու օրենսդրական ակտերին համապատասխանեցնելու վարպետությունը:

Պարզ ասած՝ պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ է որակավոր աշխատողների անընդհատ որակավոր հոսքն ապահովելու նկատմամբ նոր համընդգրկուն մոտեցում: Իրողություններին համարժեք կերպով արձագանքելու համար այդ մոտեցումը, գոնե ԱՄՆ-ում, պետք է լինի ստեղծարար և նորամուծական, ինչն այդ պետությունը իր ներկայիս գործելակերպի պարագայում չի կարող ապահովել: Քանի որ դա, ըստ էության, անվտանգության հարց է, ապա արտաքին օգնությամբ տվյալ կարիքների բավարարումը կապված է լուրջ բարդությունների հետ, ինչը եղել և մնալու է բուռն քննարկումների մշտական թեմա: Եվ կրկին մենք առաջարկում ենք շնորհալի կադրերի առկա և ակնկալվող պակասի լրացման նկատմամբ համընդգրկուն մոտեցում, այն է՝ թե ինչպես մենք զարգացնենք որակավոր աշխատուժը: ԱՄՆ-ում մի շարք հաստատություններ, ինչպիսիք են Պաշտպանական ազգային համալսարանը, Հետբուհական կրթության ռազմածովային դպրոցը, Ռազմաօդային ուժերի տեխնոլոգիական ինստիտուտը, ջանադրաբար աշխատում են որակավոր շնորհալի կադրերի պակասը լրացնելու ուղղությամբ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԱԽՈՒՄԲ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարևոր է քննարկել այն հարցերը, թե ի՛նչ համախումբ հմտություններ են անհրաժեշտ, թե հասարակության գործունեության ո՛ր ոլորտների վրա է անդրադառնում այդ հմտությունների պակասը, և ինչպե՛ս պետք է այդ ոլորտներն արձագանքեն տվյալ անհրաժեշտությանը: Տեխնոլոգիաների ոլորտում ակնհայտ է գիտական, տեխնոլոգիական, ինժեներական և մաթեմատիկական կրթության կարիքը: Հարձակումների բարդ բնույթը, հարձակվողների հնարամտությունը և ակտիվությունը անհրաժեշտ են դարձնում սարքերի, համակարգերի, ցանցերի և տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ենթակառուցվածքների տեխնիկական կողմերի լավ իմացությունը:

Այդուհանդերձ հույժ կարևոր է դիտարկել նաև կենսագործունեության այլ ոլորտներ, հատկապես՝ հաղորդակցությունը: Դրա կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դյուրահաղորդությունը այն կարևոր հմտությունն է, որը պահանջվում է «նոր սերնդի կիբեռմասնագետներից»: Հասարակական կապերը և, մասնավորապես, սոցիալական տեղեկատվական միջոցների օգտագործումը կարևոր դեր են խաղում այն բանում, որ պետական, մասնավոր ու պետական կառավարման հատվածները գտնվեն իրենց գերակայությունները հաղորդելու համար հավասար պայմաններում: Դա միշտ էլ եղել է մեծ պրոբլեմ ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ, իհարկե, աշխարհի այլ մասերում: Խոր իրավաբանական ու լեզվական գիտելիքներ ունեցողները ևս կարևոր դեր ունեն այն ջանքերում, որոնք նպատակաուղղված են ապագա կարիքներին ու մարտահրավերներին արձագանքելուն «նոր տեղեկութային հասարակության» պատրաստմանը:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ-2017» ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը
«Ազգ–բանակ-2017» համաժողովում.
Երևան, ապրիլի 20

«Ազգ–բանակ-2017» համաժողովի ցուցահանդեսում.
ձախից՝ աջ. Արցախյան ազատամարտի հերոս Արկադի Տեր-Թադևոսյան,
Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյան,
ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյան

Դրվագ «Ազգ–բանակ-2017» համաժողովից

«Ազգ–բանակ-2017» համաժողովի ցուցահանդեսում

Հույժ կարևոր է իրավունքի նորմերի իմացությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է ազգային և միջազգային դեպքերին, եթե հաշվի առնենք, որ չկա համընդհանուր համաձայնություն այն բանի վերաբերյալ, թե հարձակումների ժամանակ ի՛նչ վճիռ պետք է կայացվի պետության սահմաններում և դրանցից դուրս, որպեսզի պաշտպանվեն անհատների, խմբերի, հանրությունների և պետությունների շահերը:

Չի կարելի թերագնահատել լեզվաբանների դերը, եթե նկատի ունենանք, որ հասարակության մեջ մենք դարձել ենք տարբեր մշակույթների, էթնիկությունների և կրոնադավանանքների բազմապիսի ծուլամաններ, ինչը պահանջում է որոշակի ըմբռնում, թե ինչպես պետք է բոլորին հավաքել միասին՝ հակասական կարիքներ ու տեսակետներ արտահայտելու և փոխանակելու համար: Լուրջ պրոբլեմ է դարձել այն, որ պետությունները, կազմակերպությունները և գործարար շրջանները ավելի շատ ապավինում են տեխնոլոգիաներին՝ անտեսելով մարդուն, ինչը կարող է բառացիորեն քայքայել կամ կերտել հասարակությունը:

Այս պրոբլեմը բնորոշ է ոչ միայն Միացյալ Նահանգներին, ինչպես երևում է նման կարիքների առնչությամբ նաև Եվրոպական Միությունում (ԵՄ) գործադրվող ջանքերից [10]: Սա հույժ կարևոր է, քանի որ մեր հանրությունները, կառավարությունները, գործարար շրջանները և զինվորականները պետք է որոշեն, թե ինչ հմտությունների կարիք ունեն: ԵՄ-ի դեպքում կարևոր է դիտարկել ինչպես հմտությունները, այնպես էլ այն մեծ ազդեցությունը, որը կարող է հասարակության վրա գործել պաշտոնը: ԵՄ-ում, օրինակ, քննարկվում է տվյալների պաշտպանության գծով պատասխանատուի (ՏՊՊ) պաշտոնի ստեղծման հարցը: Նա անհրաժեշտ կլինի այն բոլոր ձեռնարկություններին, որոնք ԵՄ-ի մշտական բնակիչներին մատակարարում են ապրանքներ կամ մատուցում ծառայություններ, կոնկրետ մակարդակներում դրանց համար մշակի հաճախորդների տվյալները կամ պարբերաբար կատարի Եվրոպայի բնակիչների մշտազննում: Տվյալների պաշտպանության գծով պատասխանատուն պետք է ունենա համապատասխան հմտություններ և բավարարի հետևյալ պահանջներին.

- ունենա տվյալների պաշտպանության իրավունքի և պրակտիկայի ոլորտին վերաբերող մասնագիտական գիտելիքներ, կատարի տվյալների գաղտնիության ապահովման գնահատումներ և վերահսկի ապահովագրերի առկայությունը,
- տվյալ ձեռնարկությունում նշանակվի առնվազն չորս տարի ժամկետով, լինի անկախ և ձեռնարկության վերին օղակներին ներկայացնի տվյալների պաշտպանության կանոնադրությունների կատարման վերաբերյալ հաշվետվություն,
- հայտնի լինի համապատասխան տվյալները կարգավորող եվրոպական մարմիններին և հասարակությանը, հատկապես՝ որևէ տվյալի խախտման դեպքում կապ հաստատելու համար, իսկ ՏՊՊ չնշանակելու ցանկացած որոշում պետք է հայտնի դառնա հանրությանը [10]:

Գոյություն ունի տվյալների գաղտնիության կանոնակարգման գծով փորձագետների աճող պահանջարկ: Ըստ «Փրայսուոտերհաուսքուպերսի»՝ «Ֆորչուն» պարբերականի առաջատար 100 ընկերությունների* քիչ ավելի քան 50 տոկոսի կազմում այսօր կա տվյալների պահպանման գծով որակավոր մասնագետ: Նշվում է, որ, այդուհանդերձ, հիմնական մարտահրավերներից մեկն այն է, որ նման պարտականություններ կատարողի լիազորությունը կարող է տարբեր երկրներում էապես տարբեր լինել: Միացյալ Նահանգներում նման պարտականություններ կատարողը կարող է լինել կազմակերպության տարբեր բաժինների կազմում: Օրինակ՝ որոշ դեպքերում տվյալների գաղտնիությունն ապահովում է իրավաբանական կամ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի որևէ աշխատող, մի բաժնի, որը կազմակերպության մաս է և պաշտոնապես գտնվում է կազմակերպության բաղադրատարրի կառավարման ներքո: Սակայն, ինչպես նշվեց վերևում, ԵՄ-ում անձը կամ գրասենյակը պետք է լինի անկախ և կազմակերպության բարձրաստիճան ղեկավարությանը հաշվետու:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության մեջ մենք փորձել ենք դիտարկել որոշ կարևոր հմտություններ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի կազմակերպությունները և պետությունները ավելի լավ նախապատրաստվեն ներկա և ապագա կիբեռմարտահրավերներին ու ստեղծվելիք հնարավորություններին լավագույնս արձագանքելուն: Պարզ ասած՝ չկան հեշտ գտնվող պատասխաններ, և չկան բոլոր կազմավորումների համար համապիտանի առաջարկություններ: Յուրաքանչյուր դեպքի համար պետք է կիրառել տարբերակված կշռադատված և զգուշավոր մոտեցում: Սակայն չի կարելի նաև չասել, որ եթե մեզ համար՝ որպես հասարակության, ստեղծվում է մեր տեղեկութային ակտիվները ավելի լավ պաշտպանելու, անվտանգությունն ապահովելու և դրանց կարողություններն օգտագործելու ինչ-որ շանս, ապա մենք պետք է առաջին հերթին ավելի մեծ ներդրումներ կատարենք մեր կրթությունը և սպառնալիքների մասին իրազեկվածությունը բարելավելու, այդ սպառնալիքների մեղմացման համար անհրաժեշտ համախումբ հմտություններ զարգացնելու նպատակով: Կարևոր էր նաև դիտարկել հասարակության և գործարար շրջանների՝ կիբեռոլորտին առնչվող կարիքների ու պահանջների ազդեցության ու կարևորության հարցը:

---

* «Փրայսուոտերհաուսքուպերսը» *(PricewaterhouseCoopers, PwC)* խոշոր ընկերություն է, որն զբաղվում է ապահովագրությամբ, խորհրդատվությամբ (հաշվապահություն, մարդկային ռեսուրսների և ճգնաժամային կառավարում, աուդիտ և այլն), հարկերի պլանավորմամբ, հարկային օրենսդրության մշակմամբ և այլ մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:

«Ֆորչունը» *(Fortune)* բիզնեսի թեման լուսաբանող միջազգային ամսագիր է, որը 1995 թվականից հրատարակում է *Ֆորչուն-500* ամենամյա հավելվածը, որում ներկայացվում են ամերիկյան 500 խոշորագույն ձեռնարկությունները՝ ըստ ընդհանուր հասույթի մեծության: *Ֆորչուն-100-ը* այդ ցանկի համառոտ տարբերակն է:–*Խմբ.:*

Միևնույն ժամանակ, կարևոր է հասկանալ, որ կիբեռոլորտին առնչվող հարցերն իրենց բնույթով առաջին հերթին վերաբերում են զինվորականության իրավասությանը: Դա տրամաբանական է, քանի որ զինվորականների առաջնային դերը ազգային և միջազգային ասպարեզներում իրենց պետության քաղաքացիների, դաշնակիցների ու գործընկերների միջոցների և շահերի պահպանումն ու պաշտպանությունն է: Կրկին շեշտենք, որ դա բնական է: Ըստ էության, թեև մենք զինվորականների մասին խոսում ենք որպես ռազմիկների, սակայն կիբեռոլորտում եղած պայքարը հաղորդվել է պետական, մասնավոր և պետական կառավարման հատվածներին: Եվ ակնհայտ է, որ պետական ու մասնավոր հատվածները, ելնելով իրենց շահերից, պետք է ոչ միայն ներգրավվեն այդ բանավեճերում, այլև իրենց պարտքը համարեն ներբերել ունեցած պատկերացումներն ու տեսակետները, քանի որ տվյալ պրոբլեմը միայն ռազմական չէ, այլ ընդհանուր է ամբողջ հասարակության համար:

EDUCATING THE NEXT GENERATION CYBER WORKFORCE

J. S. HURLEY, PhD, National Defense University iCollege, Ft. Lesley J. McNair

ABSTRACT

The increasing number of cyber threats against our information assets has put us on notice of the commitment and advancements that hackers are willing to make to get into our environments. There is real concern recently in terms of the levels of sophistication observed of the attack vectors being levied against organizations. The attacks have revealed levels of complexity that are very difficult and challenging to defend against and to mitigate. The expectation is surely not that the future will reveal an easier way forward because the advancements in computing and information technologies are going to continue. Hence, it is critical that we better educate our workforce to impart on them the appropriate skillsets to meet the cyber challenges that we will likely face. In this study, the recommendation is made that a more comprehensive and balanced approach be utilized to impart the necessary background to the workforce. It is critical that the entire hierarchy of the organization be educated on how all of the organization's efforts must collectively be employed to deal with the dynamics and impact of a cyber-attack. The consequences of cyber-attacks, if all components of the entity fail to act together as a unit, must also be conveyed. The recommendations are made for a holistic approach that is relevant to all three of the communities (the public sector, the private sector, and the different levels of government).

Keywords: cyber, workforce, threats and vulnerabilities, education, skillsets

INTRODUCTION

The advancements in computing and information technologies and the role of the Internet, in particular, are largely responsible for the pervasiveness of computing within our personal and professional lives. The enormous growth that we have seen

over the last century in the explosion of electronic devices has continued to have an impact on our society and how it has and will continue to evolve.

Cyber-attacks are usually discussed in the context of the military and big industry, because the military's role is to protect and defend citizens, partners and their interests. However, the demand for anytime, anywhere access transcends all of the sectors. As a result, cyber's reach extends the discussion to the other sectors in society which is very important because it demands at times a perspective that is different from the military in the way of looking at the challenges and opportunities that cyberspace affords us. The topic must transition from a military-only conversation to one that is more open and inclusive to all communities and sectors. With the benefits that we have seen in the functionality and design of computing devices (especially with respect to "smart" devices) the security of our information assets has become a necessary and essential point of focus.

Mobile devices are expected to continue to grow from the current level of over seven (7) billion devices worldwide at a growth rate of about 15%. There is however the challenge that the increase of devices and the advancement in technologies will require a new pipeline of qualified workers in various fields to address the critical demands and challenges anticipated in the cyber domain. Currently, we are woefully understaffed with qualified persons to handle the needs and the situation is not expected to get much better in the future (McGarvey, 2014).

THE NEW BATTLEFIELD

Bullets, missiles, bombs, and other traditional weapons that are so present in conventional military conflicts are now being supplemented by cyber-attacks on the critical infrastructure, theft of intellectual property, and pilfering of assets in banks and other financial institutions at an alarming rate. As we noted earlier, the enormous growth of mobile devices and the pervasiveness of computing throughout our society have led to a new realm of warfare – one in which information is used as the weapon of choice. The concept of information warfare is surely not a new one, but is difficult to frame because it means different things to different segments of our society. To the military, it has largely been about protecting its intranet and wireless networks. Terrorists, however, have successfully waged a psychological assault via the media through the use of information, as we have seen in the Middle East by some terrorist groups. The classic forms of deception are still valuable tools that are used as combatants wage carefully crafted information campaigns, especially as it relates to false and planted information. However, it is very important to consider how traditional and new media platforms have become such a vital part of these new warfare campaigns waged around the world.

Again, to be clear, the use of the media to an advantage is certainly not a new concept. However, the impact of the mass media is now a much larger factor in terms of how the military makes its decisions, far more than in the past, because

of the real time availability of information through the use of social media platforms. It is not only about military leadership getting information to and between troops quickly. Political, economic, social, and cultural dynamics around the world have been captured and on display over various media platforms for the world to see. This "new norm" has dramatically changed how conflicts are waged, perceived, and resolved. Social media and traditional media sources (radio, television, newspapers) through their real-time or near real-time 24x7 access, are consistently used to advance the fundamental beliefs and doctrines of segments of society at any costs. Sometimes these ways are not fair, honest, or facts-based. We believe that it is prudent to focus on technology as a facilitator of information as an essential tool in our new "arms" race in the cyber domain. Hence, the paper begins with a focus on the levels of engagement of war and their relevance in conventional campaigns and how they might provide significant insight into conflicts that carry over into the cyber domain.

We begin the discussion with the renowned military strategist, Clausewitz, who defined tactics as the use of armed forces in the engagement and strategy as the use of engagement for the objective of the war (Clausewitz, 1976). The distinctions are extremely important to discern because the level of preparation and commitment will often determine the capability to defend and preserve assets and interests. For Clausewitz, most of the emphasis takes place at the tactical level. However, though it is important, emphasis must begin with the strategy to ensure that all see the same priorities and bigger picture – the Mission. At this time, we will emphasize the distinctions between the levels of war, i. e., strategic, tactical, and operational, and what they entail. Again, for Clausewitz, the strategic level of war focused on the art and science of employing national power. While at the tactical level of war his focus was on planning and conducting the battle, which was characterized by the application of concentrated force and offensive action to gain objectives. At the operational level of war, military strategy is implemented by assigning missions, tasks and resources to tactical operations (Dunn, 1996).

There is indeed a symbiotic relationship between strategy and tactics, wherein a change in the nature of tactics will automatically react on strategy. As such, it is worth noting how a major "conventional" battle unravels into its contemporary form – cyber warfare. Clausewitz defines war as "a duel on a larger scale"; an act of force to compel an enemy to do the will of the adversary or target (Clausewitz, 1976). We will henceforth identify the battlefield domains (air, land, sea, and space) as conventional domains. Hence, the fundamental premise of Clausewitz is repeated, i. e., war is an act of force with no logical limit to the application of that force. Most important in the thesis is that each side, thusly, compels the other to follow suit. This point is extremely important as we look at the increasing urge to direct offensive, as well as, defensive capabilities in cyber conflicts.

A CHANGING WORLD

The world has changed and so have the United States' (U. S.') interests and business partnerships. This new reality is based on a different landscape characterized by shifts in politics, wealth, and power. The transition is not unique to the United States (and most of the industrialized nations) from a focus on a local and more targeted regional economy portfolio to an emphasis on a global economy and the world as the true marketplace for business and investments. The United States sees itself now in partnerships and alliances across the world that, not that long ago, would have been far-fetched at best to conceive. Unfortunately, the relationships with many countries carry the U. S. interests in regions that are very volatile. For the United States, this is expressly true given that in many cases there are large anti-American sentiments. As a result, regions require reliance much more on diplomacy and consensus rather than on the exercise of military strength because the partners have their own interests to protect relative to neighbors with whom they must co-exist. This has made at times for very uneasy and fragile relations moving forward for in some cases the anti-American sentiment is very high. Extremist groups, like Al-Qaeda, Islamic State of Iraq and al-Sham (*ISIS*), Islamic State of the Iraq and the Levant (ISIL), who adversely see the U. S. and many of its allies must be a part of the strategy, operational and tactical planning. Social media and traditional media sources (radio, television, newspapers) through their real-time or near real-time 24x7 access, consistently report on the goals and intentions of extremists, driven by fundamental beliefs and doctrines. Hence, it is prudent to focus on the less favorable potential of technology, i. e., its possible use within an arms race. For the impact of technology on the invention and advancement of firearms and weapons is undeniable through history. Unfortunately, the technologies have so quickly and easily made available such weapons that the threats must be taken very seriously because of the potential dangers that exist.

The role and impact of technology cannot be underscored in terms of how it is now shaping the world in which we live. Society has surely witnessed a lot of advancements over the past five or six decades with the advent and progress of several different technologies and their applicability in warfighting. Some of the advancements include: wearable solar panels to power battlefield displays and other equipment; a joint multirole technology demonstrator to enable soldiers to fly farther and faster with greater efficiency; a new fleet of aerial reconnaissance aircraft; the development of a new set of devices that can transfer energy to the soldier; and an augmented reality (AR) sand table that can more accurately model terrains (Curthoys, 2015). As a result, it is important to understand through cyber how we must better address the challenges and opportunities presented by current and future technologies.

CHALLENGES

As noted earlier, discussions with respect to cyber conflicts generally begin with the military. The military's responsibility to protect and defend makes it an obvious leader in situations that require resolution of conflict, especially when it is relevant on a national scale. However, we must understand the impact that cyber has presented in the private and public sectors and the concerns that these communities have expressed as they have their own information assets to protect. Hence, concern must be addressed beyond simply networks, to include: the impact on intellectual property, in particular, for industry, and personally identifiable information (PII) for the public. These communities now must be engaged into the discussion because of their own self-interests. These dynamics have had a large impact on the disparity in terms of how the different communities believe that cyber conflicts should be resolved. There is especially a strong contrast between the public and private sectors views at times on the campaigns conducted by the government. These communities, who are also targeted by hackers see a completely different way in which such conflicts should be resolved in a method that is very different than we see in traditional military campaigns.

In particular, a universal need that is germane to any level of success that should be expected in terms battling cyber-attacks is the gathering and sharing of information between nations, organizations, communities, and individuals. The importance cannot be understated in terms of the fallout when it is not done in a fair and equitable way – at least the perception thereof. Privacy is a huge issue as it relates to information sharing and one that must be taken very seriously. When it is not taken seriously, the fallout can be catastrophic and broad in its impact and relevance to cooperation (NSA Surveillance Exposed, 2015). One of the important lessons learned from the NSA is that governments must have more trust in the people and organizations that they serve. There is generally an expectation by the public that the government has to do certain things to protect it. However, if an agency within the government believes that the communication of such (not necessarily the specific details) information is an unnecessary evil and the public should just trust it, then problems can occur. People, in general, do not want to know everything, so specific details are not necessarily desired. However, people do want to make sure that they are felt valued and are a part of the consideration in actions that are taken by agencies that directly affect and impact them. Privacy is a very personal and private right that people feel that they have, but people are more interested in being safe and protected. When there are major disasters and other challenges on par, rights tend to take a back seat to safety and security. The Boston Marathon assault presents a good example, in which not only was information gathered, but the public took a huge part in the crowdsourcing effort to catch the perpetrators (Boston Marathon Attack Fast Facts, 2015). We must, however, be candid that there are no "silver bullets" in

terms of how certain situations play out–all must be viewed and considered on an individual basis. We will talk more about the privacy issue and how we might better address it as a part of the desired skillsets.

THE QUALIFIED WORKFORCE

We have discussed in other cases the importance of comprehensive program efforts within the U. S. that have focused on the importance of addressing the education issue (Hurley & al, 2016). As noted by Center for Strategic and International Studies (CSIS), the area of greatest need is, by many accounts, a qualified workforce, i. e., the right people at all levels, if we are to attain a robust and competent cybersecurity strategy. As noted by Jim Gosler, NSA Visiting Scientist at CSIS and Founding Director of the CIA's Clandestine Information Technology Office, there were only approximately 1,000 qualified cybersecurity specialists in the United States with the required skillsets to operate effectively in cyberspace (Evans & Reeder, 2010). Unfortunately, the United States actually needs about 10,000 to 30,000 individuals to satisfy the demand (Gosler, 2010). Evans and Reeder also note four elements of any strategy to deal with the challenge of getting the "right" people with the requisite skillsets, i. e.:

- promote and fund the development of more rigorous curriculums in our schools;
- support the development and adoption of technically rigorous professional certifications that include tough educational and monitored practical components;
- use a combination of the hiring process, the acquisition process, and training resources to raise the level of technical competence of those who build, operate, and defend governmental systems; and
- ensure there is a career path, as with other disciplines like civil engineering or medicine, to reward and retain those with high-level technical skills (Evans & Reeder, 2010).

The CSIS Commission on Cybersecurity for the 44th Presidency note that an over-reliance on professional certification is the wrong course of action to take and also creates a false sense of security for the following reasons, i. e.:

- individuals and employers are spending scarce resources on credentials that do not demonstrably improve their ability to address security-related risks; and
- credentials, as currently available, are focused on demonstrating expertise in documenting compliance with policy and statutes rather than expertise in mitigating risks and preventing and responding to attacks.

In simple terms, a comprehensive new approach to developing a qualified continuous pipeline of qualified workers to meet the demand is needed. The approach, at least in this nation, must be creative and innovative to adequately address the realities that the U. S. under its present course of action (COA) will

not meet the demand. As such because it is indeed a security issue, there is a major quandary of bringing in outside help to address the needs. It has and will continue to be an ongoing topic of intense discussion. Again, we propose a comprehensive approach to address the current and anticipated shortfall of talent to address how we develop a qualified workforce. A number of institutions within the United States such as the National Defense University, Naval Postgraduate School, and Air Force Institute of Technology (to name a few) are working very hard to address the shortfall of qualified talent.

SKILLSETS NEEDED

The issue of what skillsets are needed and what areas of society are affected and how they should address the needs is important to discuss. There is an obvious need in terms of Science, Technology, Engineering and Mathematics (STEM) education to address the technology areas. The complexity of the attacks and the sophistication and commitment of the attackers draw strongly on an understanding of the technical aspects of devices, systems, networks, and information technology (IT) infrastructures. However, it is also very important to look at other areas of need, especially communication. It is important that communication is a strong skillset that is required for the "new cyber workforce". Public relations and the use of social media in particular are critical to ensure that the public, private and government sectors are on the same page in terms of communicating their priorities. This has been consistently a major problem in the U. S. and indeed in other parts of the world. Those who have strong legal and linguistic backgrounds are also very important in efforts to prepare the new information society to address future needs and challenges. An understanding of the law, especially as it relates to national and international events is extremely important given that there is no universal agreement in terms of how attacks must be adjudicated within and outside of a nation's borders to protect the interests of its individual, groups, communities, and nations. The role of the linguists cannot be understated given how we have in society become a diverse melting pot of different cultures, ethnicities, and religious demographics that require a special understanding of how to bring all together to express and communicate disparate needs and views. This has been a major problem in terms of how nations, organizations, and businesses have calculated so much on the technology aspects that they have ignored the people's perspectives that can literally break or make a society.

The problem is not unique to the United States, as we see the nature of the efforts in the European Union (EU) to address a similar need (Messmer, 2014). This is extremely important because our communities, governments, businesses and militaries must determine the kinds of skillsets they need. For the example of the EU, the skillsets are important to consider, as well as, the broad impact and affect that the positions may have on society. In the EU, there is discussion of a Data Privacy Officer (DPO), who will be required for any business that provides goods or services to EU residents, process customer data on them at certain levels, or

regularly monitor Europeans. The DPO is required to have the following skills and requirements, including:

- have expert knowledge of data protection law and practices and conduct data-privacy assessments and assure that the appropriate policies are in place;
- must be appointed for at least four years at the business, be independent, and report to the upper hierarch of the business on topics such as compliance with data-privacy regulations;
- be known to the appropriate data regulation agencies in Europe and the public, especially for communication in the event of any data breach; and any decision to not appoint a DPO, must be communicated to the public (Messmer, 2014).

There is a rising demand in the need for experts in data-privacy regulation. PricewaterhouseCoopers (PwC) estimates that slightly more than 50 % of the Fortune 100 companies today have a qualified person on staff to have data privacy. It has been noted that one of the major challenges, however, is the authority of such a role can vary significantly depending on the country. In the United States, such a role can be found in a number of different places within an organization. For example, in some cases the data-privacy role is handled by a person in a legal or information technology (IT) department – a part of the organization and officially under the governance of a component of the organization. In the EU, however, as noted above, the person or office must be independent and report to the highest level of management within the organization.

SUMMARY AND CONCLUSION

In this study, we have attempted to discuss some of the necessary skillsets needed to better prepare organizations and governments to best address the present and future cyber challenges and opportunities ahead. To be clear, there are no easy answers and no recommendation works the same for all entities. One must use a very deliberate and cautious approach on a case-by-case basis. However, it cannot be understated that if we, as a society, have any chance in addressing how to better protect, secure, and take advantage of the opportunities afforded us by our information assets, we better invest in ways to improve our education and awareness of the threats and the skillsets needed to mitigate them. It was important to include a discussion on the impact and relevance of the needs and requirements of the public and the business world as they relate to cyber. However, it is important to understand that by its nature, the issues with respect to the cyberspace domain, have primarily been under the authority of the military. This makes sense given that the primary role of the military is to defend and protect the assets and interests of its citizens, allies, and partners, especially on a national and international platform. Again, this is a natural fit. As such, though we talk of the military in the context of a warrior, the battle within the cyber domain has translated across public, private and government sectors.

Unquestionably the public and private sectors, by virtue of their own self-interest, not only should be engaged, but deem it their responsibility to provide insight and perspective into the discussion because the problem is not just a military problem or issue. It is one for the entire society.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *B. M. Blechman, S. S. Kaplan.* Force without War. Washington: The Brookings Institution, 1978.
2. "Boston Marathon Terror Attack Fast Facts". "CNN", 20 July 2015 (http://www.cnn.com/2013/06/03/us/boston-marathon-terror-attack-fast-facts/index.html).
3. *C. V. Clausewitz.* On War. Princeton: Princeton University Press, 1976.
4. *K. Curthoys.* 5 new technologies for the Army warfighter. "Army Times", 2 April 2015 (http://www.armytimes.com/story/military/tech/2015/04/01/army-ausa-technology-via/70774660/).
5. *M. Dunn.* Levels of War: Just a Set of Labels? "The Clausewitz Homepage", October 1996 (http://www.clausewitz.com/readings/Dunn.htm).
6. *K. Evans, F. Reeder.* A Human Capital Crisis in Cybersecurity: Technical Proficiency Matters. Washington: CSIS, 2010.
7. *J. Gosler.* Cyberwarrior Shortage Threatens U. S. Security. Interviewer M. L. Kelly, 19 July 2010.
8. *J. S. Hurley et al.* Quantifying Decision Making in the Critical Infrastructure. Boston: ICCWS, 2016.
9. *J. McGarvey.* Emergency: Shortage of Qualified Cybersecurity Professionals now Critical. "Inside Blackberry Business Blog", 15 August 2014 (http://bizblog.blackberry.com/2014/08/qualified-cybersecurity-professionals/).
10. *E. Messmer.* Does your business need a "Data Privacy Officer?". "Network World", 8 August 2014 (http://www.networkworld.com/article/2462855/security0/does-your-business-need-a-data-protection-officer.html).
11. *E. Morris (Director).* The Fog of War (Motion Picture), 2003.
12. "NSA surveillance exposed". "CBS News", November 2015 (http://www.cbsnews.com/feature/nsa-surveillance-exposed/).
13. "The Aftermath of War" (Motion Picture). "PBS", 2015 (http://www.pbs.org/kera/usmexicanwar/aftermath/war.html).

ОБУЧЕНИЕ КИБЕРСПЕЦИАЛИСТОВ ГРЯДУЩЕГО ПОКОЛЕНИЯ

ДЖ. С. ХЕРЛИ, кандидат наук, Колледж Управления информационными ресурсами Национального университета обороны

РЕЗЮМЕ

В условиях роста числа мобильных компьютерных устройств, распространения вычислительной техники и развития информационных технологий (ИТ) проблема кибератак затрагивает не только военную, но и другие сферы жизнедеятельности государства, общества и личности. Для обеспечения адекватного реагирования на жизненно важные потребности и вызовы в киберсфере необходима подготовка достаточного числа квалифицированных кадров.

Специалистов, которые должны удовлетворять ряду требований, в том числе: иметь применительное в сферах высоких технологий научное,

технологическое, инженерное или математическое образование, хорошо знать технические стороны устройств, компьютеров, сетей и подструктур ИТ, обладать навыком поддержания связей с общественностью (коммуникабельностью), иметь глубокие знания в области права, владеть языками, а также обладать профессиональными знаниями из практики защиты данных.

В США специалисты выделяют те основные элементы любой стратегии, которые необходимы, чтобы иметь «правильных» людей с требуемыми качествами и навыками; стимулирование и финансирование разработки в школах более точных учебных программ; способствование разработке и принятию такой системы строго требовательной технической сертификации, в которой бы содержались стабильная образовательная и контролируемая практическая компоненты; для повышения уровня технической выучки людей, занимающихся строительством, задействованием и защитой государственной системы, применять комбинацию процесса принятия на работу, процесса усвоения знаний и ресурсов обучения и тренинга; в целях привлечения и удержания кадров с высоким уровнем технических навыков гарантировать их карьерный рост.

В то же время нет легкого и универсального решения проблемы подготовки необходимых киберспециалистов. Поскольку данная проблема касается не только военной сферы, но и всего общества в целом, то в интересах государственного и частного секторов не только вовлечение в дискуссии по выработке соответствующих оптимальных решений, но и привнесение в эти дискуссии своих представлений и идей.

ՊԵՏԱԿԱՆ – ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Զ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔՐԱՈՒԹԵՐ, գիտությունների թեկնածու,
ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի կիբեռքաղաքականության գծով մասնագետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կիբեռանվտանգության ապահովումը բավարար աստիճանի հասցնելու համար էական նշանակություն ունի ազգային և միջազգային մակարդակներում իրագործվող պետական–մասնավոր գործակցությունը: Քանի որ օրենքներ և քաղաքականություն մշակելու իրավասություններով օժտված դերակատարներից շատերը պետական ոլորտից են, նրանք պետք է ներգրավված լինեն պրոբլեմների համընդգրկուն լուծման գործում: Իսկ քանի որ համացանցից օգտվողների մեծ մասը մասնավոր հատվածի ներկայացուցիչներ են, նրանք պետք է մասնակցեն այդ գործին: Պետական և մասնավոր հատվածները միասին կազմում են «համահասարակության», կամ «ամբողջական հասարակության», այն մասը, որն անհրաժեշտ է ազգային բարեկեցության, ուստի և անվտանգության ապահովման համար:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ապահովել ազգի անվտանգությունը՝ նշանակում է մշակել և կիրառել պետության հզորության տարրերը: Դրանց համառոտ ցանկը ներառում է դիվանագիտական, տեղեկատվական, ռազմական և տնտեսական տարրերը: Այս տարրերից ամենակարևորը կարող է համարվել տնտեսականը, քանի որ դրամական միջոցների հաշվին է հնարավոր ապահովել մնացած տարրերի ձևավորումը, պահպանումը, զարգացումն ու կայունությունը: Ազգային անվտանգության համընդգրկուն տեսլականը պետք է հանուն ժողովրդի և պետության միավորի ազգային հզորության բոլոր չորս տարրերը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՔԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԸ

Նախքան հեռագրության հայտնագործումը տեղեկույթը փոխանցվում էր միայն այն արագությամբ, որն ապահովում էին քամին կամ ձին: Հեռագրության, ռադիոյի, հեռուստատեսության և այժմ համացանցի հայտնագործությունների շնորհիվ տեղեկույթն արագորեն տարածվում է ամբողջ աշխարհով մեկ: Կապի այս միջոցներից յուրաքանչյուրը մեծացրել է աշխարհով մեկ տարածված և մարդկանց յուրացրած տեղեկույթի քանակությունը:

Մինչև 19-րդ դարը ազգային անվտանգությունը նույնպես «շարժվում էր» քամու և ձիու արագությամբ: Պատահում էր, որ աշխարհի մի կետից մյուսը տեղեկույթի փոխանցումը տևում էր մեկ կամ ավելի տարի: Դիվանագիտությունը ենթադրում էր այլ երկրներում գտնվող դիվանագետներ, որոնք գործում էին ըստ նախապես մշակված հրահանգների՝ հիմնված ամենևին էլ ոչ ներկայումս տեղի ունեցող, այլ հին տեղեկույթի և անցյալում կատարված իրադարձությունների վրա: Ռազմական գործողություններում կենտրոնական տեղ էր զբաղեցնում հետևակի, հեծելազորի և հրետանու ավանդական կիրառումը: Նույնիսկ Կեսարին էլ հասկանալի կլինեին Նապոլեոնի վարած ռազմական գործողությունները: Երկրների տնտեսությունները խարսխվում էին իրենց ազգային ռեսուրսների, ինչպես նաև արտադրական կարողությունների վրա: Թեև առևտուր տեղի էր ունենում, սակայն այն էապես չէր մեծացնում պետությունների հզորությունը՝ մինչև 1500-ական թվականները, երբ պորտուգալացիների և հոլանդացիների նախաձեռնությամբ ծնունդ առավ համաշխարհային առևտուրը: Համընդհանրացման առաջին ալիքը տարածվեց 19-րդ դարում՝ պայմանավորված հեռագրության և շոգեշարժիչի հայտնագործությամբ: Համընդհանրացման տարատեսակ ալիքների աճող ազդեցությունն զգալիորեն վերափոխել է պետությունների հզորության բնութագրերը՝ այդուհանդերձ պահպանելով դրանց բուն էությունը:

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍ

Կիբեռանվտանգությունն ըստ էության պետության հզորության տարր չէ, այդուհանդերձ, նա այդ հզորության բոլոր չորս տարրերի գործունեությունը խթանող արդյունավետ միջոց է: Ինչպես հեռագրության, ռադիոյի և հեռուստատեսության հայտնագործությունը փոխեց ազգային անվտանգության բնութագրերը, այնպես էլ դա արեց համացանցը՝ առաջ բերելով նոր հնարավորություններ և մարտահրավերներ:

- Տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաները (ՏՀՏ) ապահովում են դիվանագիտական ազդեցությունը՝ ստեղծելով պետության ու նրա դիվանագետների միջև արագ և գաղտնիացված կապ: Եթե դիվանագիտության ոլորտում անվտանգությունը չի ապահովվում, ապա դա նվազեցնում է դիվանագիտական կարողությունները՝ դրա հետ մեկտեղ զորացնելով ցանկացած այն պետության կամ կազմակերպության դիվանագիտական լծակները, որի հետ գործ ունեն տվյալ դիվանագետները: Իսկ երբ կան երկու հակադիր կողմեր, որոնցից միայն մեկը կարող է վերահսկել հաղորդակցությունը (մինչդեռ մյուսը չի կարողանում), ապա նրանք գործում են ուժի դիրքերից:
- ՏՀՏ-ներն ապահովում են ամեն տեսակի տեղեկատվություն, ներառյալ՝ կապը, հետախուզությունը և գիտելիքի ձևավորմանը նպատակաուղղված գործողությունները: Ներկայումս աշխարհում ձեռնարկվող կիբեռօպերացիաները ցույց են տալիս տեղեկատվության և զանգվածային լրատվության այն տարաբնույթ միջոցների ուժը, որոնցով դա արվում է:

- Ամբողջ աշխարհում ՏՀՏ-ները նպաստում են ռազմական հզորության մեծացմանը: ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի նման պետությունները, ինչպես նաև Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) շատ անդամներ ներդրումներ են կատարել կիբեռկարողությունների զարգացման ոլորտում և ամեն օր օգտագործում են դրանք:
- Կիբեռկարողությունները, հատկապես՝ համացանցը, փոխել են տնտեսական գործունեության բնութագրերից շատերը: Ընկերությունները մեծ շահույթ են ապահովում, մինչդեռ պետությունները ենթարկվում են դրանց ամբողջ տնտեսական գործունեության հետևանքների ազդեցությանը:

Թեև կիբեռգործունեությունն ստեղծում է որոշակի հնարավորություններ, սակայն առաջացնում է նաև ազգային անվտանգության համար սպառնալիքներ և մարտահրավերներ: Այսօր յուրաքանչյուր երկիր պետք է կարողանա հաջողությամբ գործ ունենալ կիբեռտարածությունում մեծ ակտիվություն ցուցաբերող ենթապետական, պետական, վերպետական և ոչ պետական դերակատարների հետ: Այդ կիբեռգործունեության տեսակներից շատերը սպառնալիք են պետությունների և դրանց բնակիչների համար:

ԱԶԳԱՅԻՆ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Այսօր կիբեռգործունեության ամենուրեքության պատճառով կարող են վտանգվել պետության բոլոր բաղադրիչները: Պետությունը, կառավարությունը, գործարար միջավայրը, անհատները կրում են որոշ կիբեռգործողությունների բացասական ազդեցությունը: Ազգային կիբեռանվտանգության ապահովման համար պետությունը պետք է որդեգրի համընդգրկուն մոտեցում, որում ներառված լինեն հասարակության բոլոր բաղադրիչները, և, միևնույն ժամանակ, ներգրավվի այն տարածաշրջանային և համաշխարհային կազմակերպությունների մեջ, որոնք կարող են ցուցաբերել օգնություն: Դա պահանջում է ինտեգրում տարբեր մակարդակներում:

Պետությունն առաջին հերթին պետք է համադասի պետական կառավարման գործադիր իշխանության շրջանակում կատարվող գործողությունները: Այս մոտեցումը հաճախ անվանում են «միջգերատեսչական» *(interagency)*, կամ «միջնախարարութենական» *(interministerial)*: Այնուհետև միջգերատեսչական կազմակերպությունը պետք է սովորի «համակառավարային» մոտեցման շրջանակներում համագործակցել իշխանության մյուս (հատկապես՝ օրենսդիր և դատական) ճյուղերի հետ: Դրանից հետո համակառավարային խմբավորումը պետք է սովորի հաջողությամբ գոյակցել երկրի այլ դերակատարների հետ, ինչպիսիք են, օրինակ, գործարար և գիտական շրջանները: Թերևս ներգրավվելիք դերակատարներից ամենակարևորն են մարդիկ: Բոլոր ազգային դերակատարների գործունեությունը համակենտրոնացնող մոտեցումը երբեմն անվանում են «համահասարակական» մոտեցում: Բացի այն, որ պետությունը հետամտում է հասնելու ներքին ներդաշնակության, նա նաև պետք է ձգտի համագործակցելու արտաքին դերակատարների հետ,

ինչպիսիք են Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) նման միջազգային կազմակերպությունները և հնդկական Հակածրագրահեռնային կանխարգելիչ կազմակերպության նման հասարակական կազմակերպությունները: Աշխարհը լիովին ընդգրկող մոտեցումը կարող է կոչվել «համաշխարհային հասարակութենական» մոտեցում: Համաշխարհային հասարակության ենթադրյալ կիբեռհանրույթի անդամ լինելը կարող է էապես մեծացնել պետության կարողությունները:

ԱՄԵՆԱԲԱՐԴ ՄԱՍԸ՝ «ՀԱՄԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ» ՄՈՏԵՑՈՒՄԸ

Գործադիր իշխանության ճյուղում համակարգումը կարող է կատարվել հեշտությամբ և կառավարական կարգադրության տեսքով: Կառավարությունների մեծ մասն արդեն ձևավորել են պետական գերատեսչությունների միջև տարբեր տեսակի համագործակցություն: Նույնակարծիք հեռահաղորդակցային խմբերը 1865 թ. Միջազգային հեռագրային միության ստեղծումից ի վեր գործում են վերազգային մակարդակում: Որպես կանոն՝ ազգային կիբեռանվտանգության նկատմամբ կիրառվող համընդգրկուն մոտեցման ամենաթերի զարգացած մասը «համահասարակական» մոտեցումն է, որի գլխավոր կառուցվածքային միավորը պետական–մասնավոր գործակցությունն է:

Պետական–մասնավոր գործընկերության հաստատման դժվարությունը պայմանավորված է հնարավոր ներգրավված դերակատարների մեծաքանակությամբ և դրանց շահերի լայն բազմազանությամբ: Այդ շահերը հաճախ բախվում են միմյանց, ինչը կարող է իմաստազրկել «համահասարակական» մոտեցումը:



Գծապատկեր 1. Խմբավորումներ

ՊԵՏԱԿԱՆ–ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Քլիմբերգը իր խմբագրած «Ազգային կիբեռանվտանգության ղեկավար ձեռնարկ»[1] աշխատության մեջ մասնավոր և պետական հատվածների առնչությունները որակում է որպես պետության համար հինգ գլխավոր պրոբլեմներից մեկը: Նա համոզիչ կերպով ներկայացնում է, թե ինչու է պետական–մասնավոր գործընկերությունը կարևոր, երբ նշում է, որ «ժամանակակից ազգային կիբեռանվտանգության առավել կարևոր առանձնահատկություններից մեկը մասնավոր հատվածի դերն է: Նա է պատասխանատու ՏՀՏ ոլորտում օգտագործվող ծրագրակազմերի և սարքակազմերի մեծ մասի հետազոտության, նախագծման, մշակման և արտադրության համար: Ըստ էության, նա դարձավ ծառայություններ մատուցող, համա-

ցանցի կարգադրիչ, որը պլանավորում ու կառավարում է ռեսուրսները, տրամադրում հուսալի կապ և ապահովում տեղեկատվական հոսքերի ու ծառայությունների մատակարարում»[2]:

Շատ պետություններ գիտակցել են կիբեռռազմավարության և պետական–մասնավոր գործընկերության կարևորությունները: Էստոնիայի Տալլին քաղաքում գտնվող ՆԱՏՕ-ի Կիբեռպաշտպանության առաջավոր տեխնոլոգիաների միացյալ կենտրոնում (ԿՊԱՏՄԿ) հավաքվել են ՆԱՏՕ-ի անդամների, ինչպես նաև այլ պետությունների տարատեսակ ռազմավարություններ[3]: Այս ռազմավարությունների բովանդակության վերլուծությունը ակնհայտ է դարձնում, որ դրանցից յուրաքանչյուրի մեջ արտացոլված է պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցության անհրաժեշտությունը:

Աղյուսակ 1

ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԲԵՌՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Պետական–մասնավոր գործակցություն	Միջազգային գործակցություն	Բաշխված ծախսեր	Ընդհանուր պատասխանատվություն	Ընդհանուր ռիսկեր	Գործակցության մեխանիզմներ	Տեղեկության փոխանակում	Հինգնակաց ստանդարտներ	Մասնավոր հատվածի ներգրավումը	Կարևոր ենթակառուցվածք	Գիտական հանրության ուսումնասիրությունը	Վստահության անհրաժեշտություն	Կրթություն	Կայունություն	Օրենսդրություն ու իրավական	Հանձնարարություն
ԱՄՆ	x	x	x	x		x	x	x	x		x					
Բելգիա	x	x														
Բուլղարիա	x		x		x											
Գերմանիա	x	x			x	x	x			x		x			x	x
Էստոնիա	x	x				x	x			x			x			
Թուրքիա	x	x					x			x	x					
Իսլանդիա	x					x		x								
Իտալիա	x			x			x	x	x		x		x			
Լեհաստան	x					x	x			x			x			
Լիտվա	x			x							x					
Կանադա	x	x		x	x	x	x			x						
Հունգարիա	x	x														
Մեծ Բրիտանիա	x	x			x	x	x					x				
Նիդեռլանդներ	x	x		x		x		x			x		x			
Նորվեգիա	x			x		x	x	x								
Չեխիա	x	x		x					x		x	x				
Սլովակիա	x		x				x			x	x		x		x	
Ֆրանսիա	x	x				x							x	x		

Այս ռազմավարություններում արծարծվող մյուս գլխավոր թեմաներն են՝ միջազգային համագործակցությունը, համագործակցության խթանման մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը, տեղեկույթի փոխանակման կարևորությունը*:

Կիբեռխնդիրները, առանձին պետությունների ռազմավարություններում զետեղված լինելուց բացի, նաև միջազգային կազմակերպությունների քննարկումների առարկա են: Այդ միջազգային կազմակերպությունների շարքում առաջատար են ՆԱՏՕ-ն և ԵՄ-ը, որոնք կարող են ապահովել տվյալ հիմնախնդիրների համար հետաքրքրական հեռանկարներ:

Քանի որ ՆԱՏՕ-ն բացառապես պաշտպանական ռազմական կազմակերպություն է, տրամաբանական է, որ այն պետք է զբաղվի տեղեկույթի փոխանակման և միջազգային գործընկերության հարցերով: Սակայն անգամ այս պարագայում ՆԱՏՕ-ն նպաստում է պետական–մասնավոր գործակցության կայացմանը: Կիբեռսպառնալիքների աճման պատճառով ՆԱՏՕ-ն 2014 թ. նոյեմբերին Ուելսի գագաթնաժողովում ընդունեց նոր կիբեռքաղաքականություն: Որպես գագաթնաժողովի հայտարարություն ասվում էր, որ «…մենք հավատարիմ ենք մեր ազգային կիբեռպաշտպանական կարողությունների հետագա զարգացմանը … Սերտ երկկողմ և բազմազգ համագործակցությունը առանցքային դեր է խաղում Դաշինքի կիբեռպաշտպանական կարողությունների զարգացման գործում: …Սերտ ընկերակցությունը կարևոր դեր է կատարում կիբեռսպառնալիքներին և կիբեռռիսկերին հակազդեցություն գործելու առումով: Ուստի մենք կշարունակենք համապատասխան գործընկեր պետությունների … և այլ միջազգային կազմակերպությունների … հետ ակտիվորեն ներգրավվել կիբեռխնդիրների լուծման գործում… և կինտենսիվացնենք արտադրության հետ մեր համագործակցությունը «Արդյունաբերության հետ ՆԱՏՕ-ի կիբեռգործընկերություն» նախաձեռնության միջոցով»[4]:

ԵՄ-ը նույնպես կենտրոնացած է կիբեռխնդիրների վրա՝ պետական–մասնավոր համագործակցության շեշտադրմամբ: 2009 թ. մարտին Եվրոպական հանձնաժողովն ընդունեց Կարևոր տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանության (ԿՏԵՊ) նախաձեռնությունը, որին հաջորդեց «Եվրոպայում կայունության ապահովման համար պետական–մասնավոր գործընկերության» (ԵԿԱՊՄԳ) մեկնարկը: ԵԿԱՊՄԳ նպատակներն են[5].

- ընդհանուր ըմբռնում ձևավորելու համար տեղեկույթի փոխանակման և լավ քաղաքականության ու արդյունաբերական պրակտիկայի քննադատական վերլուծության խրախուսումը,
- պետական քաղաքականության գերակայությունների, նպատակների և միջոցների քննարկումը,

* Աղյուսակում ներկայացված խնդիրներից բացի, առանձին պետությունների ռազմավարություններում նաև նշվում են մարդու իրավունքները, վարքականոնները, անձնական կյանքի անձեռնմխելիությունը և մտավոր սեփականությունը:

- Եվրոպայում անվտանգության և կայունության համար անհրաժեշտ ելակետային պահանջների մշակումը,
- անվտանգության և կայունության ապահովման համար հիմնական լավ մեթոդների որոշարկումը և ընդունման խրախուսումը:

Եվրոպական հանձնաժողովը շարունակեց իր ջանքերը՝ առաջնորդվելով 2013 թ. Կիբեռանվտանգության ռազմավարությամբ[6]: Այս ռազմավարության մեջ ևս կարևորվում է պետական–մասնավոր գործընկերությունը: Ռազմավարության չորս գերակայություններից մեկը «կիբեռանվտանգության ոլորտում կարողությունների հարաճուն զարգացումն է. ԵՄ-ը համագործակցում է միջազգային գործընկերների ու կազմակերպությունների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ՝ երրորդ երկրներում համընդգրկուն կարողությունների զարգացմանն աջակցելու համար: Դա ներառում է տեղեկույթի և բաց համացանցի մատչելիության մեծացումը և կիբեռսպառնալիքների կանխումը»[7]:

Կիբեռռազմավարության մշակումից շատ առաջ ԵՄ-ն ստեղծեց «ԵՄ-ի համացանցային և տեղեկատվական անվտանգության գործակալություն» (ԵՀՏԱԳ՝ *ENISA*): «Համացանցային և տեղեկատվական անվտանգության պրոբլեմների կանխման, միջոցների ձեռնարկման և արձագանքման գծով ...Եվրոպական Միության, ԵՄ-ի անդամ պետությունների և գործարար շրջանների կարողությունների զարգացման նպատակով» 2004 թ. ստեղծված «ԵՀՏԱԳ-ը ցանցային և տեղեկատվական անվտանգության հարցերով զբաղվող փորձագիտական կենտրոն է և խթանում է պետական ու մասնավոր հատվածների միջև համագործակցությունը: Որպես այդպիսին՝ Գործակալությունը «տոն տվող» է»[8]:

Թեև ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի կարծիքով պետական և մասնավոր հատվածների միջև հարաբերությունները կարևոր են, սակայն ԵՀՏԱԳ-ն անգամ ավելի հեռու գնաց և հրապարակեց «Լավ մեթոդական ղեկավար ձեռնարկ. համագործակցային մոդելներ արդյունավետ պետական–մասնավոր գործակցության համար»[9]: Այդ ձեռնարկում պետական–մասնավոր համագործակցությունը սահմանվում է որպես «պետական և մասնավոր կազմակերպությունների միջև կազմակերպված հարաբերություններ, որոնցով հաստատվում են ընդհանուր գաղափարն ու նպատակները, իսկ սահմանված դերերն ու աշխատանքի մեթոդաբանությունն օգտագործվում են նրանց ընդհանուր նպատակներին հասնելու համար»: Ձեռնարկում քննարկվում է նաև այն շրջանակը, որի սահմաններում պետք է իրացվի տվյալ գործընկերությունը, և որոշարկվում են այն հարցերը, որոնց պետք է պատասխանել համագործակցությունն իմաստավորելիս. «Ինչո՞ւ է դա անհրաժեշտ, ո՞վ պետք է ներգրավվի, ինչպե՞ս դա պետք է կառավարվի, ինչպիսի՞ ծառայություններ և խթաններ պետք է առաջարկվեն, և ե՞րբ պետք է գործողություններ ձեռնարկվեն դա սկսելու և կայուն դարձնելու համար»[10]: Գործակցությունը կարող է նաև ուղղված լինել պետության կարիքներից բխող հետևյալ նպատակ-

ների՝ զսպիչ պաշտպանության, հայտնաբերման, արձագանքման և վերականգնման իրագործմանը[11] և վերաբերել բազմապիսի վտանգների, ներառյալ՝ բնական վտանգները, համակարգային խաթարումները, կիբեռհանցագործությունները, ազգային պետության ձեռնարկած ահաբեկչությունը կամ բոլոր վտանգները[12]:

ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ

Թեև պետական և միջազգային ռազմավարությունների մեծ մասում պետական–մասնավոր գործակցության առավելությունները բարձր են գնահատվում, սակայն իրական գործակցությունը հազվադեպ է: Առաջին հիմնական պրոբլեմն այն է, որ կառավարությունները և գործարար շրջանները ղեկավարվում են տարբեր շարժառիթներով: Պետություններն իրենց բաղադրատարրերին մատուցում են ծառայություններ (ինչպիսին պաշտպանությունն է), մինչդեռ գործարար շրջաններն իրենց շահույթներն են հետապնդում: Այդ իսկ պատճառով պետական պաշտոնյաները դժվարանում են ասել, թե կիբեռանվտանգության ոլորտում որքան ներդրումներ պետք է կատարեն գործարար շրջանները: Պետությունները կիբեռանվտանգության ոլորտի համար սահմանում են կանոններ, մինչդեռ գործարար շրջանները դրանք դիտում են անգամ որպես կառավարության կողմից իրենց ներկայացվող՝ մեկ այլ չֆինանսավորված պահանջ:

Լարվածության երկրորդ աղբյուրը տեղեկույթի փոխանակումն է: Պետությունները հակված են պահպանելու իրենց տեղեկույթը՝ միևնույն ժամանակ մասնավոր հատվածից պահանջելով իրենց հասանելի դարձնել նրա ունեցած տեղեկույթը: Գործարար շրջանները պետությունների գործողությունները որակում են որպես ոչ թե տեղեկույթի փոխանակում, այլ հավաքում: Պետությունները ցանկանում են վստահեցնել մասնավոր հատվածին, որ իրենց հետախուզական մարմինները նրա հետ կփոխանակեն համապատասխան տեղեկույթը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համընդհանուր կարծիք է, որ պետական–մասնավոր գործակցությունը կիբեռանվտանգության ոլորտի համար ունի կենսական նշանակություն: Ամբողջ աշխարհում կառավարությունները այն դիտում են որպես գերակայություն, իսկ կիբեռենթակառուցվածքների մեծ մասը տնօրինող և դրանք աշխատեցնող մասնավոր հատվածը հետամուտ է պետությունների աջակցությանը: Թեև տարբեր երկրներում պահանջները տարբեր են, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի պետական–մասնավոր հարաբերությունները քարոզելու կարիք: Չնայած, որ տարբեր երկրների ու ԵՀՏԱԳ-ի նման կազմակերպությունների հրապարակումներում կան այնպիսիք, որոնցում կարող են բովանդակվել այս համագործակցության ձեռնարկման եղանակների մասին գաղափարներ, այդուհանդերձ պետություններն իրենց փորձերում մինչ այժմ էլ հանդիպում են մարտահրավերների: Միայն առկա իրավի-

ճակի բարելավմանն ուղղված շարունակական ջանքերի շնորհիվ երկրները կկարողանան լուծել պետական–մասնավոր հատվածների գործակցությունը լավագույնս ապահովելու խնդիրը:

STRATEGIC IMPORTANCE OF PUBLIC-PRIVATE COLLABORATION IN THE CONTEXT OF CYBERSECURITY

G. Alexander Crowther, PhD, Cyber Policy Specialist, Center for Technology and National Security Policy, National Defense University

INTRODUCTION

Public-private collaboration is essential at the national and international levels in order to achieve an acceptable level of cybersecurity. Because many of the actors who have the capacity to build laws and policies are in the public sphere, they must be part of a holistic solution. Because the vast majority of the users of the Internet are in the private sector, they must participate. Together, the public and private sectors form a part of the "whole of society" that is necessary for national prosperity, and therefore security.

NATIONAL SECURITY

Creating and maintaining security for the nation means developing and deploying the elements of national power. One shortlist of the elements of national power include diplomatic, informational, military, and economic. Of all of these, the economic element can be said to be the most important because it costs money to build, maintain, deploy, and sustain the other elements. A holistic view of national security must integrate all four elements of national power on behalf of the people and the state.

NATIONAL SECURITY BEFORE THE INTERNET

Prior to the telegraph, information only traveled as fast as the wind or a horse could take it. With the advent of the telegraph, radio, television, and now the Internet, information careens globally. Each one of these means of communications increased the amount of information traveling around the world and the amount of information captured by humans.

Before the 19th century, national security also moved at the speed of the wind and horse. Information would take a year or more to travel to the other side of the globe. Diplomacy meant diplomats located in other countries operating from previously-developed instruction based on information and events that had happened in the past, not necessarily what was happening now. Military operations centered on traditional segments of infantry, cavalry, and artillery. Caesar would have understood Napoleon's operations. Economics were based on inherent national resources as well as manufacturing capabilities. Trade occurred,

but did not significantly improve national power until the Portuguese and Dutch initiated global trade in the 1500s. The first wave of globalization occurred in the 19th century with the advent of the telegraph and steam engine. The enriching effects of the various waves of globalization have significantly changed the characteristics of national power while retaining their nature.

CYBERSECURITY AS PART OF NATIONAL SECURITY

Cybersecurity is not an element of national power in and of itself, however it is a powerful enabler for all four elements of national power. Just as the advent of the telegraph, radio, and television changed the characteristics of national security, so has the Internet, introducing new capabilities and challenges.

- Cyber supports diplomatic power by allowing for rapid and secure communications between the state and their diplomats. Missing security in the diplomatic realm weakens diplomatic capability while simultaneously strengthening the diplomatic hand of any other state or organization that diplomats are dealing with. When dealing with two opposing parties and only one can monitor communication (while the other cannot), they are operating from a position of strength.
- Cyber supports all aspects of information, including communications, intelligence, and operations to shape cognition. Current cyber operations around the world demonstrate the strength of information and the various media that it works through.
- Cyber enables military power around the world. Major countries such as the United States, Russia, and China, as well as many members of the North Atlantic Treaty Organization (NATO) and the Organization for Economic Cooperation and Development (OECD) have invested in cyber capabilities and deploy them on a daily basis.
- Cyber capabilities, especially the Internet, have changed many of the characteristics of economic activity. Companies make huge amounts of money while states enjoy follow-on effects of all of that economic activity. While cyber activity provides opportunities, it also provides threats and challenges to national security. Each country must now contend with sub-state, state, supra-state, and non-state actors who are very active in cyberspace. Many of these activities threaten the state and its denizens.

ACHIEVING NATIONAL CYBERSECURITY

Because of the ubiquity of cyber activity, all aspects of a state may be threatened today. The state, government, businesses, and individuals are all negatively affected by some cyber activities. In order to achieve national cybersecurity, a state must adopt a holistic approach that involves all aspects of a society while also integrating into regional and global organizations that can provide assistance. This requires integration at a variety of levels.

First, a state must coordinate operations within the executive branch of the national government. This approach is sometimes referred to as *interagency* or *interministerial*. The interministerial organization must then learn to cooperate with the other portions of the government (typically the legislative and judicial portions of government) in a "whole of government" approach. Then, the whole-of-government grouping must learn to get along with the other actors within their country, such as business and academia. Perhaps the most important of all actors to be integrated are the people. The approach of aligning the activities of all national actors is sometimes called the "Whole of Society" approach. While a country seeks internal coordination, it should also be seeking cooperation with external actors, both international organizations such as the International Telecommunications Union (ITU) and non-governmental organizations such as the Indian Anti-Hacking Anticipation Society. A global holistic approach can be called a "Whole of Global Society" approach. Membership in a putative cyber whole of global society community could provide a very strong capability to a country.

THE MOST DIFFICULT PART: WHOLE OF SOCIETY

Coordination within the executive can be as easy and as executive order. Most governments already have some sort of cooperation among government agencies. Like-minded telecommunications groups have been operating at the supra-national level since the formation of the International Telegraph Union in 1865. Typically the most underdeveloped aspect of a holistic approach to national cybersecurity is the whole of society approach. The major building block of that approach is public-private cooperation.

These public-private partnerships are the most difficult to achieve because of the potentially vast number of actors involved and the wide variety of interests of those different actors. These interests will often compete with each other, which can defeat the purpose of a whole of society approach.



Chart #1: Groupings

PUBLIC-PRIVATE PARTNERSHIPS

In his edited volume National Cyber Security (NCS) Framework Manual[1], Alexander Klimburg identifies the private sector and the public sector as one of the five major dilemmas facing a state. He cogently captures why private-public partnerships are important when he says that:

A critical feature of modern NCS is the role of the private sector. It is responsible for the research, design, development and manufacturing of the vast majority of

software and hardware used in ICT. It has, in effect, become "the" service provider; the steward of the Internet that plans and manages resources, provides reliable connectivity, and ensures delivery for traffic and services[2].

Many states have realized the importance of a cyber strategy, and of private-public partnerships. The NATO Cooperative Cyberdefense Centre of Excellence (CCDCoE) in Tallinn, Estonia, has gathered a variety of strategies by NATO Allies as well as other countries[3]. When the contents of these strategies are analyzed, one thing that is obvious is that every strategy articulates the need for cooperation between the public and private sectors.

International cooperation, the need for mechanisms to promote cooperation and the importance of information sharing are the other major topics that flow through these strategies[*].

In addition to individual state strategies, international organizations also discuss cyber issues. NATO and the European Union are at the forefront of these international organizations, and can provide interesting perspectives on this topic.

Chart #2: NATO Ally Cyber Strategy Content Analysis

	Public-Private Partnerships	International Partnerships	Shared Costs	Shared Responsibility	Shared Risks	Mechanisms for partnership	Information sharing	Common Standards	Private Sector owns infrastructure	Critical Infrastructure	Need to build in academia	Trust is necessary	Education	Resilience	Legislation & Regulation	Prevention
Belgium	x	x														
Bulgaria	x		x		x											
Canada	x	x		x	x	x	x			x						
Czech Republic	x	x		x					x		x	x				
Estonia	x	x				x	x			x			x			
France	x	x				x							x	x		
Germany	x	x			x	x	x			x		x			x	x
Hungary	x	x														
Iceland	x					x		x								
Italy	x			x			x	x	x		x		x			
Lithuania	x			x							x					
Netherlands	x	x		x		x		x			x		x			
Norway	x			x		x	x	x								
Poland	x					x	x			x			x			
Slovakia	x		x				x			x	x		x		x	
Turkey	x	x					x			x	x					
UK	x	x			x	x	x					x				
US	x	x	x	x		x	x	x	x		x					

[*] In addition to the topics displayed in this chart, individual strategies also mention human rights, ethics, privacy and intellectual property.

As NATO is strictly a defensive military organization, it is logical that it would address information sharing and international partnerships.

Even so, NATO still promotes public-private partnerships. Due to the increasing cyber threats, NATO issued a new cyber policy at the Wales Summit in November 2014. As part of the Summit Declaration, NATO said that they "...are committed to developing further our national cyber defense capabilities… Close bilateral and multinational cooperation plays a key role in enhancing the cyber defense capabilities of the Alliance. … Strong partnerships play a key role in addressing cyber threats and risks. We will therefore continue to engage actively on cyber issues with relevant partner nations… and with other international organisations… and will intensify our cooperation with industry through a NATO Industry Cyber Partnership"[4].

The EU has also been focusing on cyber issues, with an emphasis on public-private partnerships. In March 2009, the European Commission adopted an initiative on Critical Information Infrastructure Protection (CIIP), followed by the European Public-private Partnership for Resilience (EP3R). The objectives of EP3R are[5]:

- encourage information sharing and stock-taking of good policy and industrial practices to foster common understanding;
- discuss public policy priorities, objectives and measures;
- baseline requirements for the security and resilience in Europe;
- identify and promote the adoption of good baseline practices for security and resilience.

The European Commission continued their efforts with a Cyber Security Strategy in 2013[6]. This strategy emphasizes public-private partnerships as well. One of four priorities in this strategy is "Developing cyber security capacity building: the EU engages with international partners and organisations, the private sector and civil society to support global capacity building in third countries. This includes improving access to information and to an open internet, and preventing cyber threats"[7].

Long before building a cyber strategy, the EU created the European Union Agency for Network and Information Security (ENISA). Created in 2004 "...to enhance the capability of the European Union, the EU Member States and the business community to prevent, address and respond to network and information security problems. …ENISA is a Centre of Expertise in Network and Information Security and is stimulating the cooperation between the public and private sectors. As such, the Agency is a «pace-setter»"[8].

Although NATO and the EU think public-private relations are important, ENISA has gone even farther and has published the "Cooperative Models for Effective Public Private Partnerships: Good Practice Guide"[9]. This guide defines public-

private partnerships as "An organised relationship between public and private organisations, which establishes common scope and objectives, and uses defined roles and work methodology to achieve shared goals." The guide also discusses the framework within which these partnerships must operate, identifying what questions should be answered when conceptualizing a partnership: "Why is it needed, who will it involve, how will it be governed, what services and incentives will be offered and when will action be taken to start it and make it sustainable?"[10]. A partnership can also address any of the following based on the needs of a state: deterrence protection, detection, response and recovery[11], and address multiple hazards, including Natural Hazards, Systems Failure, Cybercrime, Terrorism/Nation State or All Hazards[12].

DIFFICULTIES REMAIN

Although most countries and international strategies extol the virtues of public-private partnerships, true partnerships are rare. The first major problem is that governments and businesses exist for different reasons. Governments provide services (such as protection) to their constituents while businesses make money. This makes it difficult for government officials to articulate how much cybersecurity businesses should invest in. Governments make rules regarding cybersecurity, whereas businesses see these rules as yet another unfunded requirement imposed upon them by government.

The second source of tension is information sharing. Governments tend to protect information while at the same time demanding access to information that the private sector has. Businesses see government activities as information gathering, not information sharing. Governments want the private sector to trust that their intelligence arms will share the appropriate information with the private sector.

CONCLUSION

Everyone agrees that public-private cooperation is vital in cybersecurity. Governments around the world see this as a priority while the private sector, who owns and operates the vast majority of cyber infrastructure seeks assistance from governments. Although the individual requirements for each country are different, each shares the need to promulgate public-private relations. Although there are publications by various countries and organizations like ENISA that can provide ideas on how to engender this cooperation, states are still challenged by this endeavor. Only by continuing efforts to improve the situation can countries solve the problem of how to best provide for public-private collaboration.

---

[1] "National Cyber Security Framework Manual". Ed. by Alexander Klimburg. NATO Cooperative Cyber Defense Centre of Excellence. Tallinn, 2012, P. 34.

[2] Ibid., P. 37.

[3] "Cyber Security Strategy Documents" (https://ccdcoe.org/cyber-security-strategy-documents.html).

[4] "NATO Wales Summit Declaration", 5 September 2014, Para. 72–73 (http://www.nato.int/cps/en/natohq/official_texts_112964.htm#cyber).

[5] "European Public Private Partnership for Resilience (EP3R)" (https://www.enisa.europa.eu/activities/Resilience-and-CIIP/public-private-partnership/european-public-private-partnership-for-resilience-ep3r).

[6] "Cyber Security Strategy of the European Union: An Open, Safe and Secure Cyberspace", 7 February 2013 (http://ec.europa.eu/digital-agenda/en/news/eu-cyber-security-plan-protect-open-internet-and-online-freedom-and-opportunity-cyber-security).

[7] "EU International Cyberspace Policy" (http://www.eeas.europa.eu/ policies/eu-cyber-security/index_en.htm).

[8] "What does ENISA do?" (https://www.enisa.europa.eu/about-enisa/activities).

[9] "Cooperative Models for Effective Public Private Partnerships: Good Practice Guide". ENISA, 2011 (https://www.enisa.europa.eu/activities/Resilience-and-CIIP/public-private-partnership/national-public-private-partnerships-ppps/good-practice-guide-on-cooperatve-models-for-effective-ppps).

[10] Ibid., P. 17.

[11] Ibid., P. 19.

[12] Ibid., P. 21.

СТРАТЕГИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ВЗАИМОДЕЙСТВИЯ ГОСУДАРСТВЕННОГО И ЧАСТНОГО СЕКТОРОВ В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ КИБЕРБЕЗОПАСНОСТИ

ДЖ. АЛЕКСАНДР КРАУТЕР, кандидат наук, специалист по политике кибербезопасности Центра технологий и политики национальной безопасности Национального университета обороны США

РЕЗЮМЕ

Для эффективного обеспечения кибербезопасности государство должно осуществлять целенаправленную деятельность на различных уровнях. Первый уровень определяется рамками исполнительной власти, причем такой подход часто именуется «межведомственным» *(interagency)*, или «межминистерским» *(interministerial)*. После этого межведомственная организация должна в рамках «общеуправленческого» подхода суметь сотрудничать с другими ветвями власти, а затем общеуправленческая группировка должна научиться контактировать с иными отечественными акторами, в первую очередь – деловыми и научными кругами («всеобщественный подход»). Кроме того, государство должно стремиться к сотрудничеству с внешними акторами, такими, как Международный союз по электросвязи и индийская общественная антихакерская организация. Последний подход может быть назван «всемирно общественным».

Из данных процессов наиболее сложным в плане организации является налаживание сотрудничества на уровне «всеобщественного подхода», по-

скольку на этом уровне число вовлеченных в деятельностные процессы акторов очень велико и они преследуют самые различные интересы, которые подчас противоречат друг другу. При этом обеспечению эффективного взаимодействия между государственным и частным секторами в сфере кибербезопасности могут способствовать организация межведомственного взаимодействия в правительстве, формирование общего взгляда на проблему, уточнение приоритетов, целей и средств государственной политики в сфере кибербезопасности, разработка исходных требований к кибербезопасности и т. д.

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Լ. Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի պետական խորհրդական,
ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության պետ

«Ազգ–բանակ» գաղափարի մասին խոսելիս նախ անհրաժեշտ է փաստել, որ այն ուղղված է բացառիկ սերտ զինվորա-քաղաքացիական հարաբերություններ ունեցող հասարակության ձևավորմանը կամ արդեն գոյություն ունեցող այդպիսի հասարակության զարգացման խթանմանը[1]:

Ավանդաբար բանակը համարվել է պետականության հիմնական բաղադրիչներից և նրա գոյության գլխավոր գրավականներից մեկը: Սակայն տարբեր պատմական հոլովույթներում բանակի և հասարակության հարաբերությունները կրել են տվյալ պատմական ժամանակահատվածին հատուկ բնույթ: Եթե միապետական քաղաքական համակարգերից հանրապետական կարգերի անցման փուլում հասարակությունից լիովին մեկուսացված բանակի նկատմամբ քաղաքական վերահսկողության հաստատումը նպատակ է հետապնդել ապահովագրելու գործող քաղաքական կարգը, ապա ժողովրդավարության և հասարակական հաստատությունների զարգացմանը զուգընթաց այն առավելապես վերափոխվել է քաղաքացիական վերահսկողության: Մասնավորապես՝ Ս. Հանտինգտոնն իր «Զինվորը և պետությունը» աշխատության մեջ գրում է, որ «Այն ազգերը, որոնք զարգացնում են հավասարակշռված զինվորա-քաղաքացիական հարաբերություններ, անվտանգության ապահովման գործում ունեն մեծ առավելություն: Այն ազգերը, որոնք դա չեն անում, վատնում են իրենց ռեսուրսները և մեծացնում անվերահսկելի ռիսկերը»: Միևնույն ժամանակ, հատկապես արդի դարաշրջանում զինվորա-քաղաքացիական համագործակցությունը դարձել է սահուն ռազմավարություն մշակելու և իրագործելու, ռազմական արդյունավետությունը առավելագույնի հասցնելու հրատապ անհրաժեշտություն[2]:

---

[1] Տես ««Ազգ–բանակ» համակարգի կայացման ռազմավարական ուղենիշները. Հայոց աշխարհազորից դեպի ՀՀ ժողովրդավարական համազգային պաշտպանություն (կոլեկտիվ մենագրություն)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] Տես *Marybeth P. Ulrich.* A Primer on Civil-Military Relations for Senior Leaders. “U.S. Army War College Guide to National Security Issues”, Vol. II: National Security Policy and Strategy. Ed. 3. Ed. by J. Boone Bartholomees, Jr. Carlisle Barracks, PA: U.S. Army War College, June 2008, Chap. 18, PP. 241–251:

Իր մեջ արտացոլելով զինվորա-քաղաքացիական հարաբերությունների վերոնշյալ առանցքային «պատվիրանները»՝ Հայոց պետութենաշինության և բանակաշինության մեջ 2016 թ. ներդրված «Ազգ–բանակ» հայեցակարգը ենթադրում է ոչ միայն Զինված ուժերի հետագա ժողովրդավարացում և քաղաքացիական վերահսկողության ամրապնդում, այլև մեկ քայլ առաջ կատարում՝ բանակի լիարժեք ինտեգրում երկրի տնտեսության, մշակույթի, կրթության և գիտության, բնապահպանության, սպորտի և այլ ոլորտներ[3]:

«Ազգ–բանակի» համապարփակ կիրառման օրինակ կարելի է համարել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայում բանակաշինության հիմքում դրված «Ներքին ղեկավարում» հայեցակարգը[4], որի առանցքային գաղափարն այն է, որ ժողովրդավարությունը կարելի է ներդաշնակեցնել ռազմական անհրաժեշտության հետ: Բունդեսվերի ստեղծման պահից ի վեր «Ներքին ղեկավարման» հայեցակարգը նպատակաուղղված է եղել պահպանելու պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, զինված ուժերի գործառութային արդյունավետության և, մյուս կողմից, հասարակության ժողովրդավարական արժեհամակարգի միջև: Ըստ այդմ տվյալ հայեցակարգը ինչպես հաստատութենական, այնպես էլ անհատական մակարդակում միտված է բանակին հանձնարարվող առաջադրանքների, խնդիրների կատարմանը, ինչպես նաև առօրյայում ինտեգրման, օրինավորության, շարժառիթավորման և ներքին կարգուկանոնի երաշխավորմանը[5]:

«Ազգ–բանակ» հայեցակարգն իր արտացոլումը կարող է ստանալ և «հավելյալ արժեք» ապահովել պաշտպանության ոլորտի ու Զինված ուժերի գործունեության գրեթե ամբողջ սպեկտրում, մասնավորապես՝ ռազմական ներուժի ձևավորման, պատրաստման, կիրառման ու հրամանատվության ասպարեզներում, ինչպես նաև գիտության, կրթության և տնտեսության բնագավառներում: Սակայն, ըստ մեզ, ՀՀ պաշտպանունակության ապահովման գործում այս հայեցակարգն առաջնահերթ պետք է ծառայեցվի պաշտպանության համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների ապահովմանը (ներառյալ՝ Զինված ուժերի համալրմանը), տնտեսապես հասանելի մոդելների ստեղծմանը, մի կողմից, ՀՀ մարդկային ռեսուրսների և տնտեսական հնարավորությունների, մյուս կողմից՝ ՀՀ առջև ծառացած մարտահրավերների ակնհայտ անհամարժեքության հաշվառմամբ:

Ուստի սույն հոդվածի շարունակությունը մտասևեռված է «Ազգ–բանակի»՝ Զինված ուժեր–հասարակություն կապի բաղադրիչի վրա: Փորձ է արվում վեր հանելու և ընդհանրացնելու համանման խնդիրների առջև կանգնած և

[3] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[4] Տես “Innere Führung Selbstverständnis und Führungskultur” (A-2600/1). Zentrale Dienstvorschrift:

[5] Տես *Petra McGregor.* The Role of Innere Führung in German Civil-Military Relations. “Strategic Insights”, April 2006, Vol. V, Issue 4 (http://calhoun.nps.edu/bitstream/handle/10945/11304/mcgregorApr06.pdf?sequence=1):

նմանատիպ սկզբունքով զորագրման ու պահեստազորային ծառայության կազմակերպման Ֆինլանդիայի, Շվեյցարիայի, Իսրայելի և Թայվանի փորձը:

Նախ, պետք է նշել, որ բանակ–հասարակություն հետագա ինտեգրման միջոցով Զինված ուժերի, հատկապես՝ որակական առումով, զարգացման հիմնախնդիրներին լուծում տալու անհրաժեշտությանը հանգել են գրեթե բոլոր պետությունները: Մասնավորապես՝ ՌԴ Գերագույն շտաբի մասնագետները գտնում են, որ Զինված ուժերի պահեստազորի ձևավորման հիմքում պետք է դրվի զորահավաքային ռեսուրսներով համալրման համալիր եղանակը, որի շրջանակներում առաջին հերթին պետք է հենվել առավել պատրաստված կամավոր պահեստազորի վրա[6]:

Ինչ վերաբերում է արևմտյան պետություններին, ապա «Ազգ–բանակի» կենսագործման տեսանկյունից առաջին հերթին ուսանելի է Ֆինլանդիայի օրինակը, որի հասարակության մեջ Պաշտպանական ուժերի վայելած մեծ հեղինակությունը և բարձր վարկը պայմանավորված են տղամարդկանց պարտադիր և կանանց կամավոր զինվորական ծառայությամբ, ինչպես նաև պահեստազորում բնակչության մի ստվար զանգվածի երկարամյա ծառայության հանձնառությամբ, ինչի շնորհիվ հասարակությունը մեծապես շահագրգռված է զինված ուժերի արդյունավետության և անձնակազմի բարեկեցության մեջ[7]:

Ընդսմին Ֆինլանդիան որդեգրել է պաշտպանության վրա կատարվող ծախսերի համար արդյունավետ լուծում, ինչը շնորհիվ Զինված ուժերի մեծաթիվ և լավ պատրաստված ռեզերվի ապահովում է տարածքային սկզբունքով պաշտպանության հնարավորություն, պետության պաշտպանությանը հաղորդում է դիմակայելու ունակություն և երկարատև կամ մեծ ճգնաժամների դեպքում կայունություն[8]:

Բացի այդ, պարտադիր ժամկետային զինծառայությունն ընկալվում է որպես Ֆինլանդիայի հասարակության համախմբման կարևոր գործոն, որը երկրի պատմության և անվտանգային քաղաքականությունների ըմբռնման միջոցով զորակոչիկներին ապահովում է «քաղաքացիական դաստիարակություն» ստանալու հնարավորությամբ՝ դրանով հանդերձ բարելավելով նրանց՝ որպես օրինակելի քաղաքացիների վարքը[9]:

---

[6] Տես *В. Г. Тарараев.* Особенности комплектования ВС РФ мобилизационными людскими ресурсами в современных социально-экономических условиях. «Военная мысль», январь 2005, № 1:

[7] Տես "Finland: A Country Study". Ed. by Eric Solsten and Sandra W. Meditz. Federal Research Division, 1990, Chap. 5: National Security, P. 325 (http://www.marines.mil/Portals/59/Publications/Finland%20Study_5.pdf):

[8] Տես "Government's Defence Report". Prime Ministers's Office. Helsinki, 2017, P. 19 (https://www.defmin.fi/files/3688/J07_2017_Governments_Defence_Report_Eng_PLM_160217.pdf):

[9] Տես "Finland: A Country Study", Chap. 5: National Security, P. 325 (http://www.marines.mil/Portals/59/Publications/Finland%20Study_5.pdf):

Պահեստազորի պատրաստման համակարգը բաղկացած է որակավորման բարձրացման զորավարժություններից, կամավոր մասնակցություն ենթադրող վարժանքներից, ինչպես նաև Ֆինլանդիայի ազգային պաշտպանական ուսումնական ասոցիացիայի կազմակերպած դասընթացներից[10]:

Որպես այս ամենի արդյունք՝ ներկայումս Ֆինլանդիան, որի ԶՈՒ-ի թվաքանակը խաղաղ ժամանակահատվածում կազմում է ընդամենը 31 000 զինծառայող (որից 23 000-ը պարտադիր ժամկետային զինծառայող, 8 000-ը՝ պրոֆեսիոնալ սպա ու ենթասպա), ունի 900 000-անոց պատրաստի պահեստազոր, ինչի շնորհիվ պատերազմական շրջանի Զինված ուժերի հաստիքային կազմը 230 000 զինծառայող է[11]:

«Ազգ–բանակի» պրակտիկ իրագործման մեկ այլ ցայտուն օրինակ է Շվեյցարիան, որի Զինված ուժերը մի առանձնահատուկ հաստատություն են շնորհիվ այն բանի, որ ըստ էության կազմակերպված աշխարհազոր են: Զինված ուժերի միայն 5 %-ն է պրոֆեսիոնալ անձնակազմ, մնացածը պարտադիր զինծառայողներ են, իսկ յուրօրինակությունը նաև այն է, որ զինծառայողներն իրենց ամբողջ սպառազինությունն ու հանդերձանքը, ներառյալ՝ զենքն ու զինամթերքը, պահում են տանը: Դրա հետևանքով առաջ է եկել մի ասացվածք, թե՝ «Շվեյցարիան չունի բանակ, Շվեյցարիան ինքը բանակ է»[12]:

Չնայած գնալով ավելանում է այն երկրների թիվը, որոնք հրաժարվում են զինապարտությունից, Շվեյցարիան շարունակում է պահպանել արական սեռի բոլոր տղամարդկանց համար պարտադիր զինվորական ծառայությունը: Զինված ուժերը հանդես են գալիս ապակենտրոնացված աշխարհազորի ձևով, որը զորակոչվում է միայն ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով: Աշխարհազորի համակարգը ձևավորում է «զինված բնակչության» զանգվածային պահեստազորի կորպուսը, որին սատարում է պրոֆեսիոնալ բաղադրիչը: Այս համակարգը, ըստ իրենց իսկ՝ Զինված ուժերի ներկայացուցիչների, հնարավորություն է տալիս ձևավորելու «լիարժեք» զինվորների, որոնք Զինված ուժեր են բերում իրենց քաղաքացիական մասնագիտություններով փորձառությունն ու խորագիտակությունը: Միևնույն ժամանակ, այս համակարգը երաշխավորում է բանակի և հասարակության միջև ամուր կապը: Բացի այդ, համակարգը հնարավորություն է տալիս պահելու բավական մեծ բանակ՝ համեմատաբար փոքր ծախսերով[13]:

---

[10] Տես "Government's Defence Report", P. 28 (https://www.defmin.fi/files/3688/J07_2017_Governments_Defence_Report_Eng_PLM_160217.pdf):

[11] Տես "Finnish Reserve Concept". Ministry of Defence, 2016, P. 9 (http://www.ft.dk/samling/20151/ almdel/fou/spm/321/svar/1345997/1670318.pdf):

[12] Տես *Ágnes Juhász.* The Recruitment System of the Swiss Armed Forces. "Academic and Applied Research in Military Science (AARMS)", 2007, Vol. 6, N 4 (http://www.zmne.hu/aarms/docs/Volume6/Issue4/pdf/14juha.pdf):

[13] Տես *Sabine Mannitz, Rabea Haß.* The Swiss Concept of Soldiering in Practice: The Swiss Case. Peace Research Institute Frankfurt (PRIF), 2009, PP. 2–3 (https://www.hsfk.de/fileadmin/HSFK/hsfk_downloads/Switzerland_III_01.pdf):

ԱԶԳ–ԲԱՆԱԿ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Հաղթողների ոգեկոչում

Երևան, «Մայր Հայաստան» հուշահամալիր

Արմավիր, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր

Ապարան, «Վերածնունդ» հուշահամալիր

Արցախյան ազատամարտի հերոս նվիրյալներ



Դավիթ Էդուարդի Սարաայան
(1966 – 1991)



Մոնթե Զառլզի Մելքոնյան
(1957 – 1993)

Վլադիմիր Ալեքսեյի Բալայան
(1958 – 1992)

Լեոնիդ Ռուբենի Ազգալդյան
(1942 – 1992)

Վարդան Ռոբերտի Ստեփանյան
(1966 – 1992)



Պետրոս Արշալույսի Ղևոնդյան
(1964 – 1994)

Դրվագ Ապրիլյան պատերազմի կամավորական ջոկատների կազմավորումից

2016 թ. ապրիլ. օգնություն ռազմաճակատին

ՀՀ ԶՈՒ-ի զինծառայողների երդման արարողությունը.
«Եռաբլուր պանթեոն»

ՀՀ ՊՆ Կենտրոնական հավաքակայանում.
2017 թ. առաջին զորակոչը

Դրվագ Նախնական զինվորական պատրաստման դասընթացի
հանրապետական օլիմպիադայից.
2015 թ. մայիս

Գալով Իսրայելի օրինակին՝ տեսնում ենք, որ ի տարբերություն այլ արևմտյան մոդելի ժողովրդավարական պետություններից, նա որդեգրել է մի այնպիսի համակարգ, որով կառավարությունը, Զինված ուժերը և հասարակությունն իրարից բաժանող սահմանները ուրվագծված են զգալիորեն աղոտ կերպով[14]:

Իսրայելի պաշտպանության մոդելը ծնվել է ի պատասխան այդ պետությանն առերեսվող հակամարտությունների տևողության և ինտենսիվության: Իսրայելի «անվտանգային կերպափոխումը», որը բնորոշվում էր ռազմական և քաղաքացիական ոլորտների «փոխթափանցմամբ», արագորեն զարգացավ՝ դառնալով հրեական պետության կենտրոնական սկզբունքը և հատկապես ակնառու կերպով արտահայտվեց ընդհանուր զորահավաքի տեսքով՝ «զինված ազգ» հայեցակարգի հունով, մի հայեցակարգի, ըստ որի պետության պաշտպանության ծանրությունը կրում է ամբողջ հասարակությունը[15]:

Ընդսմին հասարակությունն ու զինված ուժերը մեկ միասնական նպատակի շուրջ միավորող «զինված ազգ» հայեցակարգը, որն առաջին անգամ կիրառվել է 1793 թ. Ֆրանսիայում բնակչության համընդհանուր զորահավաքի *(levée en masse)* սկզբունքով, հիմնվում է արական սեռի ամբողջ բնակչության պարտադիր զինծառայության և թիկունքում քաղաքացիական անձանց կատարած ներդրման վրա[16]: Սակայն ռազմական սպառնալիքներին դիմադարձելու համար բանակին անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ ունենալու հրամայականի հաշվառմամբ Իսրայելը գնացել է ավելի հեռուն և պարտադիր ժամկետային զինծառայություն է սահմանել նաև իգական սեռի ներկայացուցչուհիների համար:

Եվ, վերջապես, դիտարկենք Թայվանի օրինակը: Այս պետությունն ստիպված է հավասարակշռել, մի կողմից, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ճնշումների դեմ համեմատաբար համարժեք ռազմական ներուժ ունենալու և, մյուս կողմից, Զինված ուժերը արդիականացնելու նպատակով դրանք կամավոր սկզբունքով համալրելու և, հետևապես, քանակապես կրճատելու (275000-ից մինչև 175000 զինծառայող) հրամայականները: Այն ոլորտներից մեկը, որտեղ Թայվանը կարող է ավելացված ներդրումների միջոցով մեծացնել իր ներուժն ընդդեմ առկա ռազմական սպառնալիքների՝ պահեստազորային ուժերն են, որոնք կարող են ցանկացած պահի զորահավաքի ենթարկվել՝ ավելացնելով մշտական Զինված ուժերի մարտական ներուժը[17]: Այս նպատակով ԱՄՆ-ի գիտահետազոտական «ՌԷՆԴ» կորպորացիան մշակել է առաջարկություններ Թայվանի պահեստազորային ուժերի

[14] Տես *Alan Weinraub.* The Evolution of Israeli Civil-Military Relations: Domestic Enablers and the Quest for Security. Monterey, 2009, P. v (http://www.dtic.mil/dtic/tr/fulltext/u2/a514332.pdf):

[15] Տես նույն տեղում, էջ 29:

[16] Տես նույն տեղում, էջ 14:

[17] Տես *Ian Easton, Mark Stokes, Cortez A. Cooper, Arthur Chan.* Transformation of Taiwan's Reserve Force. Santa Monica, 2017, P. viii (http://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR1700/RR1757/RAND_RR1757.pdf):

ընդլայնված ռազմավարական դերակատարման համար, որոնք հանգում են հետևյալին.

պահեստազորային ուժերի՝ որպես պետական կառավարման գործիքի կիրառման ոլորտ. առաջարկվում է պետության ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարություններում, ղեկավար փաստաթղթերում և ՁԼՄ-ներում հրապարակայնորեն շեշտել դրանց դերն ու նշանակությունը, զորավարժությունների ժամանակ ակտիվորեն ապահովել գործող բանակի և պահեստազորի զորամասերի ու զորամիավորումների փոխգործելիությունը, ինչպես նաև ԱՄՆ-ի Զինված ուժերի տարատեսակ կառույցների հետ ծավալել պահեստազորի զարգացմանը միտված ռազմական համագործակցություն[18],

պահեստազորի ապագա դերերի, առաջադրանքների և կարողությունների զարգացման ոլորտ. առաջարկվում է պահեստազորում ձևավորել հատուկ ստորաբաժանումներ, որոնք կազմված լինեն տեղեկատվության ու հեռահաղորդակցության ոլորտի մասնագետներից (էլեկտրամագնիսական ու կիբեռտիրույթներում վարվող պայքարում ներգրավվելու համար), ՀՕՊ-ի մեծ թվով միջոցներ կիրառելու ունակ անձնակազմից (հակառակորդին օդային տարածքն անարգել կերպով օգտագործելու հնարավորությունից զրկելու համար), ինչպես նաև հատուկ հականավային, ծովային ականային, հակասուզանավային և դիտման ավտոմատ կառավարվող համակարգեր գործարկելու ունակ անձնակազմից (ծովային տարածքը հակառակորդի համար արգելափակելու նպատակով)[19]:

Դիտարկված բոլոր պետությունները աչքի են ընկնում մեկ ընդհանրությամբ, այն է՝ ունենանալով համեմատաբար քիչ մարդկային ռեսուրսներ, նրանք գտնվել կամ գտնվում են շատ ավելի հզոր ախոյանների հետ հակամարտության մեջ: Ասվածը վերաբերում է ինչպես Ֆինլանդիային՝ 1940 թ. խորհրդա-ֆիննական պատերազմի և դրանից անդին ռազմական բլոկների միջև զինված չեզոքությունը պահպանելու համատեքստում, Իսրայելին՝ պարբերաբար բռնկվող իսրայելա-արաբական հակամարտությունների բերումով, այնպես էլ Թայվանին՝ ՉԺՀ-ի հետ դիմակայության առումով: Առաջին հայացքից բացառություն կարող է կազմել միայն Շվեյցարիան, սակայն փաստերը վկայում են, որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ աշխարհամարտերի ժամանակ, համապատասխանաբար, Կենտրոնական տերությունները և Առանցքի պետությունները զերծ մնացին այդ երկիր ներխուժելուց ոչ միայն նրա չեզոք կարգավիճակի ու ֆինանսատնտեսական նշանակության, այլև (ոչ պակաս չափով) նրա մոբիլիզացված Զինված ուժերի զգալի ներուժի պատճառով: Իհարկե, ներխուժման դեպքում Շվեյցարիան դժվար թե դառնար անառիկ ամրոց, սակայն նրան նվաճելը մեծ կորուստների հետ կապված և ժամանակատար ռազմարշավ կլիներ ինչպես Կայզերական Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի, այնպես էլ Երրորդ Ռայխի և ֆաշիստական Իտալիայի համար:

[18] Տես նույն տեղում, էջ xi–xii:

[19] Տես նույն տեղում, էջ xiii:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Ֆինլանդիայի պահեստազորային համակարգը, Շվեյցարիայի «զինված բնակչության», Իսրայելի «զինված ազգ» հայեցակարգերը, ինչպես նաև Թայվանի պահեստազորային ուժերի ընդլայնված ռազմավարական դերակատարությունը ապացուցում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում որդեգրված «Ազգ–բանակ» հայեցակարգի իրագործելիությունն ու կենսունակությունը: Նման հայեցակարգի հաջող իրագործման գլխավոր նախապայմանը բացառիկ սերտ զինվորաքաղաքացիական հարաբերությունների շրջանակներում ժողովրդավարության և ռազմական անհրաժեշտության հավասարակշռումն է:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ ОСУЩЕСТВЛЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»: РАЗВИТИЕ МОБИЛИЗАЦИОННОГО РЕСУРСА

Л. Г. АЙВАЗЯН, государственный советник 1-го класса СГС,
начальник Управления оборонной политики МО РА

РЕЗЮМЕ

Международный опыт организации оборонной системы государств с ограниченными человеческими ресурсами, находящихся в конфликте с более мощными в этом отношении государствами или коалициями (Финляндия–СССР в 1940 г. и вооруженный нейтралитет в эпоху «холодной войны»; Израиль–арабский мир; Тайвань–КНР, Швейцария в периоды мировых войн), свидетельствует о жизнеспособности и осуществимости концепции «Нация–армия», заложенной в основу кардинальной реорганизации системы обороны РА на уровне философии ее формирования.

THE INTERNATIONAL EXPERIENCE OF IMPLEMENTING THE "NATION–ARMY" CONCEPT: DEVELOPING MOBILIZATION RESOURCES

L. G. AYVAZYAN, 1st Degree State Advisor, SCS,
Chief, Department of Defense Policy, MOD, RA

SUMMARY

The international experience in organizing the defense system of the states with limited human resources, being in conflict with more powerful in this respect states or coalitions (Finland vs. the USSR in 1940 and the armed neutrality in the “Cold War” age; Israel vs. the Arab world; Taiwan vs. the People’s Republic of China; and Switzerland in times of World Wars), indicates the viability and feasibility of the "Nation–Army" concept, serving as the basis for a cardinal reorganization of the RA defense system at the level of the philosophy of its formation.

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հ. Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գեներալ-մայոր, Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսար

«Ազգ–բանակ» հայեցակարգային գաղափարը[1], որը դրված է ՀՀ պաշտպանական համակարգի հիմքում[2], նպատակ ունի «հասանելի ռեսուրսներով առավելագույն արդյունքի» սկզբունքով մեծացնելու մեր պետության պաշտպանունակությունը՝ հուսալի կերպով ապահովելով նրա պաշտպանական անվտանգությունը:

Հայ ժողովրդի պատմության բազմաթիվ փաստեր վկայում են, որ «ազգ–բանակ» գաղափարը իր էությամբ նոր չէ, այլ մշտապես եղել է հայության ինքնապաշտպանական պայքարի կազմակերպագաղափարական առանցքը: Հայրենիքին սպառնացող վտանգի ժամանակ բանակին աջակցելու նպատակով բնակչությունը հոժարակամորեն ձևավորել և ներխուժած թշնամու թվապես գերազանցող հորդաների դեմ ռազմի դաշտ է դուրս բերել հերոսական աշխարհազորը: Հայկական աշխարհազորի հոգևոր ընկալման կենսունակության վկայությունն է նաև Արցախյան ազատագրական պայքարում նոր բարձունքներ նվաճած կամավորական շարժումը[3]:

Աշխարհազորի ձևավորման բազմահազարամյա ավանդույթի արդիականացված այս հայեցակարգային մեկնակերպի կարևոր իմաստներից մեկն այն է, որ անհրաժեշտության դեպքում ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պատրաստ լինի ոչ միայն զենքը ձեռքին քաջաբար պաշտպանելու իր Հայրենիքը, այլև դա անելու մեծագույն հմտությամբ, զինվորական առումով կրթված մարտիկի վարպետությամբ, այսինքն՝ լինի «ռազմականորեն դաստիարակված»[4]: Իսկ դա նշանակում է, որ զինվորա-քաղաքացիական հա-

---

[1] Տես ««Ազգ–բանակ» համակարգի կայացման ռազմավարական ուղենիշները. Հայոց աշխարհազորից դեպի ՀՀ ժողովրդավարական համազգային պաշտպանություն (կոլեկտիվ մենագրություն)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] Տես «Պաշտպանական համակարգի հիմքում դրվել է «ազգ–բանակ» գաղափարը. Վիգեն Սարգսյան»: «ARMENPRESS», 20 հոկտեմբերի 2016 (http://armenpress.am/arm/news/864687/pashtpanakan-hamakargi-himqum-drvel-e-azg-banak-gaxapary.html):

[3] *Պ. Ա. Չոբանյան,* «Ազգ–բանակ». Հայոց աշխարհազորը պատմության հոլովույթում: «Հայկական բանակ», 2016, հմ. 4:

[4] Տես *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1998, հմ. 1:

րաբերություններն ստանում են միանգամայն նոր որակ, ինչը որակապես նոր խնդիրներ է դնում նաև զինկոմիսարիատների առջև, որոնք որպես զինվորական կառավարման տարածքային մարմիններ գտնվում են անմիջականորեն հասարակություն–բանակ «շփման գծում»: Այդ խնդիրները ոչ միայն աննախադեպ կերպով հրամայաբար ընդլայնում են զինկոմիսարիատների գործունեության մասշտաբները, այլև նոր գործառույթներ առաջարկում նրանց:

Զորակոչի իրականացման, պահեստազորի համալրման, ռազմահայրենասիրական դաստիարակության և վարժական հավաքների անցկացման աշխատանքների որակյալ կատարման համար այժմ պահանջվելու է նորամուծական ստեղծագործական մոտեցումների, ամենաարդիական սոցիալ-քաղաքական ու տեղեկատվատեխնիկական տեխնոլոգիաների կիրառում[5]: Զինկոմիսարիատները պետք է խորացնեն իրենց նպատակաուղղված համագործակցությունը պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, բոլոր մակարդակների ուսումնական ու մշակութային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների հետ՝ դառնալով ժողովրդի և բանակի միասնությունն ապահովող կարևոր պատասխանատու օղակներից մեկը, ընդսմին այդ միասնությունը պետք է դառնա հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներում ազգի պաշտպանական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր-գաղափարական մոբիլիզացման կարևոր գործիք[6]:

«Ազգ–բանակ» համակարգում զինկոմիսարիատների աշխատանքը պայմանականորեն կարելի է բաժանել չորս ուղղությունների.

ա) հանրապետության մարդկային և տրանսպորտային ռեսուրսի մշտական հաշվառում, վերլուծում ու գնահատում և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակմամբ ու ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությանը ներկայացմամբ նպաստում ՀՀ պաշտպանական հզորության հարաճուն զարգացմանը, մասնակցություն այլ տեսակների (նյութատեխնիկական, հոգևոր-գաղափարական և այլն) պաշտպանական ռեսուրսների ստեղծմանը, պահպանմանը, գնահատմանն ու զարգացմանը և տեղերում տարածքային պաշտպանության համակարգի ձևավորմանը,

բ) զինվորական ծառայությանը զորակոչիկների նախապատրաստում, ըստ այդմ՝ ներգրավվում հայրենանվեր քաղաքացու կերտման գործում հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալականացման շատ ավելի վաղ շրջանում, քան արվում է այսօր, այսինքն՝ դեռ նախադպրոցական տարիքում,

---

[5] Տես *А. А. Приветкин.* Применение информационных технологий в деятельности военных комиссариатов субъектов Российской Федерации. Военный финансово-экономический университет. Дипломная работа. М., 2006 (http://bibliofond.ru/view.aspx?id=26162):

[6] Տես *Ա. Կ. Յալանուզյան,* «Ազգ–բանակը» որպես Հայոց աշխարհազորի նորամուծական հեռանկար. ազգի մոբիլիզացման տեղեկատվական-կազմակերպական ռազմավարության ուղենիշները: «ՀԲ», 2016, հմ. 4:

գ) զորակոչի կազմակերպում, այդ թվում՝ ԶՈՒ-ի ԳՇ վարչությունների ու ԶՈՒ-ի զորամասերի հետ համագործակցությամբ զորակոչիկների գրագետ բաշխման ապահովում, որպեսզի «ճիշտ մարդը ճիշտ ժամանակին հայտնվի ճիշտ տեղում»,

դ) աջակցություն պահեստազոր արձակված զինվորականների սոցիալական հարմարեցմանը, վերամասնագիտացմանը և աշխատանքի տեղավորմանը, պահեստազորի հետ հետևողական աշխատանք՝ նրան մշտական պատրաստության մեջ պահելու համար:

Փորձենք ներկայացնել այն հիմնական խնդիրները, որոնք պետք կլինի լուծել «Ազգ–բանակ» համակարգի ներդրման պայմաններում յուրաքանչյուր ուղղությամբ:

1) «Ազգ–բանակը» հասարակության մի այնպիսի վիճակ է, որում տիրող հոգեբարոյական մթնոլորտը ծայրաստիճան անհանդուրժող է օտարամոլության, ազգային արժեքների նկատմամբ քամահրական վերաբերմունքի, կեղծիքների հանդեպ, ուստի ծնողները պետք է երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակությամբ նրանց մեջ արիության, ազգային ինքնության հողի վրա կոլեկտիվիզմի վեհ գաղափարների սերմանմամբ զբաղվեն նրանց մանկությունից[7], ինչի շնորհիվ պատանիները զորակոչային տարիքի հասնելուն պես կամավոր կերպով կներկայանան զինկոմիսարիատ ոչ միայն հոգու մղումով, այլև հասարակական պարսավանքից խուսափելու համար: Դրա հետ մեկտեղ «Ազգ–բանակի» պայմաններում պետք է գործի զորակոչիկների հաշվառման կատարելագործված համակարգ, որը գործնականում բացառի զինապարտ քաղաքացիների՝ այդ համակարգից դուրս մնալու դեպքերը: Այս նպատակին հասնելու համար նպատակահարմար է միավորել պետական կառավարման բոլոր մարմինների տվյալների շտեմարանները և ստեղծել զինապարտ քաղաքացիների Հաշվառման կենտրոնացված համակարգ[*]:

Նույնպիսի համակարգ անհրաժեշտ է ստեղծել տրանսպորտային միջոցների հաշվառման համար: «Ազգ–բանակ» համակարգում զորահավաքի ենթակա տրանսպորտային միջոցի յուրաքանչյուր սեփականատեր պետք է ունենա այնքան բարձր մակարդակի քաղաքացիական գիտակցություն, որ իր տեխնիկան մշտապես պահի աշխատունակ վիճակում: Միևնույն ժամանակ, պետությունը պետք է դրանում տնտեսապես շահագրգռի նրան՝ մշակելով պետության կարիքների համար քաղաքացիների սեփական տեխնիկայի շահագործման դիմաց փոխհատուցման գործուն մեխանիզմներ:

---

[7] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը ՀՀ Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում» (29.10.2016): «ՀԲ», 2016, հմ. 4:

[*] Դրա համար անհրաժեշտ է բարձր մակարդակի համագործակցություն քաղաքացիների նախնական հաշվառում կատարող հիմնարկ-ձեռնարկությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և ոստիկանության անձնագրային բաժինների միջև:

Կարծում ենք, որ առաջնային գործառույթներից պետք է լինի հոգևոր-գաղափարական իրավիճակի արդյունավետ գնահատումը: Չէ՞ որ կարևոր է ունենալ ոչ միայն անհրաժեշտ թվաքանակով համալրում, այլև բարոյա-հոգեբանորեն պատրաստի զինվոր: Ուստի նպատակահարմար կլիներ ստեղծել մասնագիտացված կազմակերպություն, որը մշակեր համապատասխան հարցաթերթիկներ, իսկ զինկոմիսարիատները յուրաքանչյուր զինապարտի այցի ժամանակ նրան լրացնելու տային այդ հարցաթերթիկը, ապա ուղարկեին տվյալ կազմակերպությանը, որն էլ, վերլուծելով պատասխանները, որոշեր զինապարտների իրավիճակային տրամադրությունները, մշակեր հասցեական հանձնարարականներ ըստ տարածքների (մարզերի, շրջանների, բնակավայրերի, համայնքների) և տարիքային խմբերի:

2) «Ազգ–բանակ» համակարգում զինկոմիսարիատները պետք է է՛լ ավելի մոտ լինեն հասարակությանը, քան այսօր են: Նրանք չեն կարողանա արդյունավետ կերպով լուծել իրենց առջև դրված խնդիրները, եթե հիմնական գործառույթների հետ մեկտեղ չվարեն նաև քարոզչական, բանակի դրական կերպարի կերտմանն ուղղված հետևողական ու նպատակասլաց աշխատանք, ինչի հաջողությունը մեծապես պայմանավորված կլինի արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների լայնամասշտաբ և հմուտ կիրառման աստիճանից: Մասնավորապես՝ զինկոմիսարիատների աշխատողները պետք է ակտիվ գործունեություն ծավալեն սոցիալական ցանցերում՝ ներկայացնելով ու լուսաբանելով զինկոմիսարիատների աշխատանքը, պատասխանելով հասարակությանը հուզող հարցերին, նպաստելով երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությանը, օգնելով նրանց ռազմամասնագիտական կողմնորոշման հարցերում, ընդսմին դա անեն ինչպես խմբային, այնպես էլ անհատական շփումների մեթոդով[8]: Զինկոմիսարիատների աշխատողները պետք է վստահելի խորհրդատուներ լինեն ծնողների, ավագ ընկերներ՝ ապագա զորակոչիկ պատանիների համար: Այս խնդիրների լուծման համար ապագայում նպատակահարմար կլինի զինկոմիսարիատների կազմում ստեղծել հասարակայնության հետ կապերի առանձին ստորաբաժանումներ:

Քանի որ զինվորական ծառայությանը քաղաքացիների պատրաստման հիմնական գործոններից են երիտասարդների առողջական վիճակը (ֆիզիկական պատրաստության մակարդակը) և ռազմական բնագավառի նրանց գիտելիքները, ապա զինկոմիսարիատները պետական այլ գերատեսչությունների հետ համատեղ պետք է մասնակցեն նաև այն աշխատանքներին, որոնք ուղղված են քաղաքացիների և հատկապես երիտասարդների շրջանում առողջ կենսակերպի արմատավորմանը և դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման (ծրագրերի ու մեթոդիկայի) մակարդակի բարձրացմանը:

[8] Տես *В. И. Астанин*. Военкоматы: миссия выполнима. «Независимое военное обозрение», 18.12.2015 (http://nvo.ng.ru/forces/2015-12-18/10_voenkomat.html):

Հայտնի է, որ հայրենասիրությունը դաստիարակվում է վաղ մանկությունից: Ուստի կարծում ենք, որ պետք է մշակվի նախադպրոցական հիմնարկներում երեխաների հայրենասիրական դաստիարակության չափանիշների ու ստանդարտների համակարգ, ընդսմին այդ աշխատանքներին որպես դրա արդյունքներին անմիջականորեն առնչվող հաստատություն պետք է մասնակցեն նաև զինկոմիսարիատները: Ըստ այդմ նպատակահարմար է ազգային հիմքերի վրա ստեղծել մանկապատանեկան կազմակերպություն, որի բջիջը լինի դասարանը: Դա հնարավորություն կտա համախմբելու երեխաներին, նրանց որոշակիորեն պաշտպանելու փողոցային բարքերի ապականիչ ազդեցություններից, նրանց մեջ սերմանելու կարգասիրություն, վաղ շրջանում հայտնաբերելու ձևական միկրոխմբային առաջնորդների և նրանց վրա գործադրվող կշռադատված հոգեբանական ներգործության միջոցով առողջացնելու դպրոցներում ու փողոցներում տիրող մթնոլորտը և դաստիարակելու ազգին անհրաժեշտ հատկություններով ու կողմնորոշումներով ապագա առաջավարների:

3) Նշված խնդիրների լուծումը (մարդկային ռեսուրսների հաշվառում և քաղաքացիների նախապատրաստում զինվորական ծառայությանը) լուրջ նախադրյալներ կստեղծի զորակոչը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Կարծում ենք, որ «Ազգ–բանակ» համակարգում զորակոչի հիմնական սկզբունքները պետք է լինեն օրինականությունը, կամավորությունը, արդարությունը և թափանցիկությունը: Այս նպատակին հասնելու համար պետք է կատարելագործել բժշկական հանձնաժողովների, զինակոչիկների հոգեբանական և մասնագիտական ընտրազատման աշխատանքները և ապահովել հասարակության հետ հակադարձ կապը՝ ստեղծելով քաղաքացիների դիմումներին, բողոքներին և առաջարկություններին արագ արձագանքման արդյունավետ համակարգ[9]:

4) Այսօր ՀՀ զինկոմիսարիատներն զբաղվում են նաև ՊՆ համակարգից զորացրվածների թոշակավորման հարցերով: Կարծում ենք, որ «Ազգ–բանակ» համակարգում զինկոմիսարիատները զինվորական կենսաթոշակառուների համար պետք է անեն ավելին՝ օգնելով նրանց վերամասնագիտանալու, աշխատանք գտնելու, մասնակցելու երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործին և շարունակելու իրենց գիտելիքներն ու փորձը ծառայեցնել հասարակության ու պետության շահերին: Այս խնդրի լուծման նպատակով զինկոմիսարիատները պետք է համագործակցեն պետական այլ գերատեսչությունների, զբաղվածության կենտրոնների, հասարակական կազմակերպությունների հետ: Զինկոմիսարիատները պետք է նաև ունենան թափուր աշխատատեղերի և վերամասնագիտացման դասընթացների վերաբերյալ տվյալների իրենց շտեմարանը[10]:

[9] Տես, օրինակ, «Юридическая помощь призывникам и военнослужащим». «Реальная армия» (http://realarmy.org/category/legal–assistance/prizyv/):

[10] Տես *Venelin Terziev, Sevdalina Dimitrova.* A new view of social adaptation of the military,

«Ազգ–բանակ» համակարգի ներդրման դեպքում որակապես փոխվում են նաև զորահավաքի հետ կապված գործառույթները և դրանց ծավալները՝ պայմանավորված զորահավաքի կարգախմբով (լրիվ, մասնակի և այլն): Այսօրվա պատերազմը զորահավաքային մարմիններին ժամանակ չի տալիս խաղաղ պայմաններից անցնելու պատերազմական իրադրության[11]: Իսկ դա նշանակում է, որ և՛ զինկոմիսարիատները, և՛ զորակոչվող թվակազմը, և՛ զորամասերը պետք է պատրաստվեն վաղօրոք: Ուստի անհրաժեշտ է այդ դերակատարների միջև ապահովել փոխգործելիություն ու ներդաշնակություն, ինչը պահանջում է համատեղ գործողությունների մեծ փորձ: Կարծում ենք, որ նպատակահարմար է ուսումնասիրել և տեղայնացնել այս տեսակետից առաջատար պետությունների, մասնավորապես՝ Իսրայելի, Շվեյցարիայի, Ֆինլանդիայի փորձը[12], որտեղ ստեղծված է և հուսալի կերպով գործում է պահեստազորի ձևավորման, ուսումնավարժեցման, կցագրման, իրազեկման և զորամասերում ընդունման գործուն մեխանիզմ, որով ապահովվում է համալրումը՝ իրենց տրվող առաջադրանքները, պարտականությունները, հանձնարարությունները արագ, ճշգրիտ ու վարպետորեն կատարող զինծառայողներով[13]: Այսպես. Շվեյցարիայի Զինված ուժերի թվաքանակը կարող է 22 հազարից 2–4 ժամում հասցվել 650 հազարի, իսկ 2 օրում՝ 1700 հազարի[14]: Ընդսմին պետք է նկատի ունենալ, որ պահեստազորայիններն իրենց զենքը պահում են տանը, ինչը մեր իրողության մեջ առայժմ անհնար է: Այդուհանդերձ, փորձն անհրաժեշտ է ուսումնասիրել և հարմարեցնել մեր ներկայիս պայմաններին, որովհետև, ինչպես վերը նշվեց, ռազմական գործողությունների սկսվելուց հետո հունի մեջ մտնելու ժամանակ չի լինի:

Իսկ դա նշանակում է, որ այն միջոցառումները, որոնք սովորաբար կիրառվում էին 20-րդ դարի երկրորդ կեսի զորահավաքների ժամանակ՝ պատերազմն սկսվելուց հետո, և ըստ էության մնացել են անփոփոխ, պետք է կիրառվեն նախապես և առանձնակի թափ ու նպատակամղվածություն ստանան սպառնալից շրջանում՝ որքան էլ, որ այն կարճ լինի: Այդ միջոցառումների շարքում էին կառավարության լայնածավալ քարոզարշավները՝ քարոզչական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների, սահման-

discharged from military service in Bulgaria. “European Scientific Journal”, November 2014, Vol. 2 (www.eujournal.org/index.php/es/article/download/47792/4608):

[11] Տես, օրինակ, *С. А. Богданов.* Начальный период войны: история и современность. «Военная мысль», 2004, N 11:

[12] Տես *Nick Squires.* Finland tells 900,000 reservists their roles 'in the event of war'. “The Telegraph”, 21 May 2015 (http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/finland/11621512/Finland-tells-900000-reservists-their-roles-in-the-event-of-war.html); «ЦАХАЛ – Армия Обороны Израиля» (http://www.jewniverse.ru/biher/AShulman/54.htm):

[13] Տես, օրինակ, *М. Гацко.* Способы комплектования военнослужащими вооруженных сил иностранных государств. «Зарубежное военное обозрение», 2009, № 1 (http://pentagonus.ru/publ/19-1-0-1002):

[14] Տես *И. Берлин.* Самая милитаризованная страна. «Военное обозрение», 09.02.2013 (http://topwar.ru579-samaya-militarizovannaya-strana.html):

ված հասարակական նորմերն ու որոշակի կարծիքներ ներկայացնող առաջավարների, կրթական համակարգի ներգրավմամբ: Այդ քարոզարշավներն ուղղված էին պատերազմի նպատակներին համապատասխանող միասնականության (հանրային համերաշխության) հաստատմանը և անհրաժեշտ ազգային-ազգայնական արժեքների ձևավորմանը կամ շեշտադրմանը, վտանգի պատկերի և ազգի նպատակների ուրվագծմանը[15], համընդհանուր ջանքերի անհրաժեշտ աստիճանի սահմանմանը: Այս եղանակով տարածվող գաղափարը կարծես թե խարսխվում է իրական սպառնալիքների վրա, մինչդեռ շեշտը գաղափարախոսական շարժառիթավորման ու նպատակների վրա է[16]: Այս տեսակետից մեր դեպքում գործը «հեշտանում» է այն պատճառով, որ յուրաքանչյուր հայի հայտնի է Ադրբեջանի սանձազերծած պատերազմի իրական հայատեցական նպատակը:

Ակնհայտ է, որ բոլոր ուղղություններում ներառված վերը նշված խնդիրներով չի սպառվում զինկոմիսարիատների գործունեությունը, սակայն անգամ դրանց լուծումը ամենախիստ պահանջներն է ներկայացնում զինկոմիսարիատների անձնակազմին, որը, բացի մասնագիտական գիտելիքներ ունենալուց, պետք է օժտված լինի նաև բարձր բարոյական հատկություններով, մարդկանց հետ շփվելու հմտություններով: «Ազգ–բանակ» համակարգում զինկոմիսարիատի աշխատողը պետք է լինի ոչ միայն զինվորական, այլև հոգեբան, իրավաբան, մանկավարժ, հասարակայնության հետ կապերի գծով մասնագետ և քաջածանոթ լինի տեղեկատվական տեխնոլոգիաներին: Զինկոմիսարիատում աշխատելու համար պահանջվելու է զորահավաքի և զորակոչի կազմակերպման մասնագիտական հատուկ պատրաստություն: Ըստ այդմ՝ կարելի է ենթադրել, որ ապագայում հարկ կլինի մշակել զինկոմիսարիատի աշխատողների համար հատուկ մասնագիտական դասընթաց, որն ավարտելուց հետո միայն հնարավոր կլինի աշխատանքի անցնելու «Ազգ–բանակ» համակարգի զինկոմիսարիատում:

Այսպիսով՝ «Ազգ–բանակ» համակարգում որակապես փոխվելու և էապես ընդլայնվելու են զինկոմիսարիատների գործառույթները՝ ներառելով հասարակայնության հետ կապերի և սոցիալ-հոգեբանական աշխատանքների բնագավառները: Դրանով պայմանավորված՝ հարկ կլինի նաև վերանայել զինկոմիսարիատներում կադրային աշխատանքի սկզբունքները և կատարել կառուցվածքային փոփոխություններ:

---

[15] Թե որքան կարևոր է այս վերջին հանգամանքը տես *Ն. Ն. Գոլովին,* Նշ. աշխ.: «ՀԲ», 1997, հմ. 1–2:

[16] Տես *Karen S. Wilhelm.* Mobilizing for War in the 21st Century: an American Perspective. Georgetown University. Washington, 2012 (https://repository.library.georgetown.edu/bitstream/handle/10822/557641/Wilhelm_georgetown_0076D_11564.pdf?sequence=1&isAllowed=y):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РЕОРГАНИЗАЦИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ВОЕНКОМАТОВ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

Г. К. МУРАДЯН, генерал-майор, Военный комиссар Республики Армения

РЕЗЮМЕ

Исторические факты свидетельствуют, что идея «нации–армии» являлась организационно-идейным стержнем национально-освободительной борьбы армянского народа на протяжении тысячелетий. Подтверждением жизнестойкости духовного восприятия феномена армянского народного ополчения является достигшее новых вершин в период Арцахской освободительной борьбы добровольческое движение. С учетом данных национальных традиций суть концепции «Нация–армия» можно интерпретировать как готовность каждого гражданина к защите Родины, причем – на высоком профессиональном уровне.

Этот подход диктует необходимость пересмотра принципов и содержания деятельности военкоматов, реализующих свои функции органов территориального военного управления на стыке общество–армия.

В связи с этим представляется целесообразным построение видения деятельности военкоматов в условиях системы «Нация–армия» в следующих основных направлениях: системный учет оборонного ресурса; подготовка призывников к службе в армии; организация мобилизации; адаптация демобилизованных и подготовка резерва. Все эти работы должны осуществляться на базе современных информационных технологий со значительным расширением масштабов существующих и качественно новых задач, обусловленных особенностями системы «Нация–армия». К числу таких задач относятся: участие в организации военно-патриотического воспитания юного поколения на более ранних этапах социализации; создание единой общегосударственной базы данных по призывникам и лицам допризывного возраста; контроль за морально-психологическим состоянием призывного, допризывного и резервного контингентов; организация адаптации уволенных в запас военнослужащих и их трудоустройства с созданием базы данных по вакантным должностям в масштабах республики; создание на национальной основе добровольной организации подростков с классной ячейкой в целях воспитания в них патриотизма, коллективизма, а также выявления неформальных лидеров и их целенаправленного воспитания на роль будущих общественных лидеров с заданными качествами, и т. д.

SOME ISSUES OF REORGANIZING THE MILITARY COMMISSARIATS' ACTIVITY IN TERMS OF THE "NATION–ARMY" CONCEPT IMPLEMENTATION

H. K. MURADYAN, Major General, the RA Military Commissar

SUMMARY

Historical evidences prove that the "Nation–Army" idea has been the organizational-ideological axis of the national-liberation struggle of the Armenian nation throughout ages. The proof of the viability of the spiritual perception of the Armenian militia's phenomenon is the voluntary movement which reached new heights at the Artsakh liberation struggle. In view of the given national traditions, the essence of the "Nation–Army" concept may be interpreted as every citizen's willingness to protect his Motherland, and at a highly professional level at that.

That approach does dictate the necessity of reviewing the principles and the content of the military commissariats' activity, which perform their functions of the bodies of territorial military administration at the society–army junction.

In this sense it appears reasonable to create the vision of the military commissariats' activity in terms of the "Nation–Army" system in the following main directions: defense resource systemic registration, the conscripts' preparation for the military service, organization of mobilization, adaptation of the demobilized and the training of the reserve. All these works should be implemented based on modern information technologies with a significant expansion of scales of the existing and qualitatively new tasks conditioned by the peculiarities of the "Nation–Army" system. Among these tasks are: participation in the organization of military-patriotic education of the younger generation in the earlier stages of socialization; creation of an integrated nation-wide database on conscripts and people of pre-conscription age; control over the moral and psychological state of the draft, pre-conscription and reserve contingents; organization of adaptation of the retired servicemen and their employment with the creation of a database on vacancies on the republic's scales; nation-based building of voluntary organization of teenagers with a class cell in order to educate them in patriotism, collectivism, as well as to identify informal leaders and their committed education for the role of future social leaders with designated qualities, etc.

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՉԱՓԱՆԻՇԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնի պետ

ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը որպես ՀՀ պաշտպանունակության մակարդակի էական բարձրացման, պետության պաշտպանական համակարգի հզորացման, ՀՀ ռազմական արդյունաբերության զարգացման հիմնարար գաղափար առաջ է քաշել «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման հարցը[1]: Այս համազգային նախագիծը ներդրվում է մի իրավիճակում, երբ հարևան պետությունը փորձում է Հայաստանին և Արցախին ներքաշել լայնամասշտաբ պատերազմական գործողությունների մեջ, երբ հայկական պետությունները գտնվում են հյուծիչ տրանսպորտատնտեսական շրջափակման մեջ, որը նվազեցնում է մեր պետությունների առանց այդ էլ սուղ ռեսուրսները: Նման պայմաններում ծագում է գրագետ պլանավորմամբ դրանք օպտիմալ կերպով օգտագործելու անհրաժեշտություն[2]:

Ուստի հույժ կարևոր է դառնում «Ազգ–բանակ» հայեցակարգի նման համընդգրկուն նորամուծական նախագծերի իրագործման համատեքստում ժամանակակից տեխնոլոգիաների հիմքի վրա ռեսուրսների ու ռիսկերի կառավարման սկզբունքների, մեխանիզմների ու եղանակների իմացությունը:

Ռեսուրսների կառավարում: Արդի ժամանակաշրջանին բնորոշ բարձր մակարդակի անորոշության և արագորեն փոփոխվող բիզնես պայմաններում ցանկացած կազմակերպության (այդ թվում՝ պետության) համար կարևորվում է ռեսուրսների ռազմավարական կառավարման խնդիրը: Ռեսուրսների կառավարումը դրանց արդյունավետ ու արդյունարար զարգացումն է և ռազմավարական նախագծերի իրագործման համար կիրառումը: Ռեսուրսների կառավարման՝ որպես նախագծերի կառավարման հիմնական բաղադրիչներից մեկի գերնպատակը նախագծի հաջող իրագործման համար ֆինանսական ու մարդկային, պահուստային ու արտադրական ռեսուրսների,

---

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, «Ազգ–բանակ» ռազմավարական համակարգը ՀՀ կիբեռթվային պաշտպանական-քաղաքական-տնտեսական-սոցիալական հեռանկարում: «ՀԲ», 2016, հմ. 4:

տեխնոլոգիաների ու ժամանակի ճիշտ օգտագործումն է[3]: Մասնավորապես՝ «Ազգ–բանակ» համակարգի ներդրման դեպքում հիմնական պետք է համարել մարդկային, հասարակական-կազմակերպական, նյութական, մշակութային ռեսուրսները[4]:

Ռեսուրսների կառավարման հիմնական տարրերն են[5].

ռեսուրսների պլանը (Resorce Plan)՝ մի փաստաթուղթ, որը նկարագրում է մարդկանց, շինություններին, սարքավորանքին, նյութերին, ենթակառուցվածքին և գործիքներին՝ որպես ռեսուրսների ներկայացվող պահանջների կատարման եղանակը: Ռեսուրսների լավ պլանը մի ցուցակ է, որում պարունակվում է նախագծի յուրաքանչյուր խնդրի կատարման համար անհրաժեշտ տեսակների ռեսուրսների վերաբերյալ հնարավորինս մանրամասն տեղեկույթ,

ռեսուրսների աստիճանակարգային կառուցվածքը (Resource Breakdown Structure), որն ըստ կարգախմբերի ու տեսակների բաշխված ռեսուրսների կառուցվածքային բաղադրազատվածքն է և օգտագործվում է կարգացուցակում ռեսուրսների հավասարաբաշխման ժամանակ, ինչպես նաև սահմանափակ ռեսուրսներով կարգացուցակների մշակման համար: Պարունակում է տեղեկույթ առնվազն այն մարդկային ռեսուրսների մասին, որոնք անհրաժեշտ են նախագծի հաջող կատարման համար, և նախընտրելի է, որ պարունակի տվյալներ այն բոլոր ռեսուրսների մասին, որոնց վրա ծախսվելու են նախագծի ֆինանսական միջոցները (տվյալ կառուցվածքում դրամը՝ որպես ռեսուրսների ձեռքբերման միջոց, չի ներառվում),

պատասխանատվության մատրիցը (Responsibility Assignment Matrix), որը սահմանում է նախագծի առանձին փուլերի և խնդիրների կատարման համար նախագծային թիմի յուրաքանչյուր անդամի դերն ու պատասխանատվության աստիճանը,

ռեսուրսների ավելցուկային օգտագործումը (Resource Overallocation), որը տեղի է ունենում, երբ առաջադրված խնդիրներն ավելի ծավալուն են, քան եղած ռեսուրսներով հնարավոր է կատարել ստանդարտ աշխատանքային շաբաթվա (40-ժամյա) ընթացքում: Ռեսուրսների սղության և այլ ծրագրերում ներգրավվածության պարագայում մեծ թվով ծրագրերի առկայության դեպքում տվյալ գործոնը կազմակերպության համար դառնում է հույժ ռիսկային,

ռեսուրսով փոխկախվածությունը (Resource Dependency), որն առաջ է գալիս այն դեպքում, երբ նախագծի իրագործման մի քանի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է լինում օգտվել միևնույն ռեսուրսից,

---

[3] Տես “A Guide to the Project Management Body of Knowledge (PMBOK® Guide)”. Project Management Institute, 2013:

[4] Տես *Ա. Կ. Յալանուզյան*, «Ազգ–բանակը» որպես հայոց աշխարհազորի նորամուծական հեռանկար. Ազգի մոբիլիզացման տեղեկատվական-կազմակերպական ռազմավարության ուղենիշները, «ՀԲ», 2016, հմ. 4:

[5] Տես նույն տեղում:

ռեսուրսների հավասարաբաշխումը (Resource Leveling), որը ռեսուրսների վերաբաշխման ձևով ձեռնարկվում է ռեսուրսների ավելորդ ծախսումից խուսափելու, ռեսուրսների և աշխատանքների միջև հավասարակշռություն ապահովելու համար ու հնարավորություն է տալիս զերծ մնալու աշխատողների գերծանրաբեռնվածությունից:

Քանի որ ռեսուրսների ռազմավարական կառավարումը կատարվում է բարձր մակարդակի անորոշությամբ պայմանավորված տարբեր տեսակի ռիսկերի (տեխնոլոգիական, արտադրական, շուկայական, ֆինանսական, ներդրումային, քաղաքական, «հետազոտություն և մշակում»-ից բխող ռիսկեր և այլն) միջավայրում, ապա ռեսուրսների գնահատման և կառավարման վերաբերյալ համապատասխան որոշումներ ընդունելու համար նպատակահարմար է կիրառել նորամուծական մեթոդներ, որովհետև նման պայմաններում ավանդական մեթոդները արդյունավետ չեն[6]:



Նկ. 1. Ռեսուրսների կառավարման տարրերը

Ռիսկի և անորոշության գործոն: Նորամուծական նախագծերի կառավարումը կատարվում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին միջավայրից բխող տարբեր տեսակի ռիսկերի և անորոշությունների պայմաններում: Այսպես. թվային տեխնոլոգիաներից հասարակական կյանքի բոլոր ոլորտների կախվածության աստիճանական աճման հետևանքով պետությունների աշխարհագրական սահմանները հետզհետե կորցնում են իրենց երբեմնի նշանակությունը, իսկ դրան զուգահեռաբար՝ միջազգային հակամարտությունները ու պատերազմները, որոնք նախկինում գերազանցապես ռազմական բնույթի էին, ձեռք են բերում նոր՝ բարձր տեխնոլոգիաներով հագեցած, ձև ու բովանդակություն[7]: Այլ կերպ ասած՝ «Ազգ–բանակ» համակարգի արտաքին միջավայրում քաղաքական-դիվանագիտական, տեղեկատվա-

[6] Տես *П. Л. Виленский, В. Н. Лившиц, С. А. Смоляк.* Оценка эффективности инвестиционных проектов: Теория и практика. М., 2008; *В. П. Васильев.* Управление инновациями. М., 2011:

[7] Տես *Ա. Հ. Գրիգորյան, Կ. Ա. Գալոյան*, «Ազգ–բանակ» ռազմավարության կիբեռկազմակերպական հեռանկարը. ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի միջազգային և միջգերատեսչական համագործակցությամբ ՀՀ կիբեռկարողությունների ծավալման ռազմավարության մշակումը որպես «Ազգ–բանակ» համակարգի հեռամետ զարգացման ուղենիշ: «ՀԲ», 2016, հմ. 4:

կան տեխնոլոգիաների տարածման հետևանքով ի հայտ են գալիս զգալի ռիսկեր ու անորոշություններ:

Միևնույն ժամանակ, ինտենսիվորեն զարգացող թվային տեխնոլոգիաները տանում են դեպի «Ազգ–բանակ» համակարգում թվային ժողովրդավարության հաստատում[8]: Թվային ժողովրդավարությունը նորամուծական տեխնոլոգիաների կիրառմամբ պետություն–քաղաքացի հարաբերությունների ամրապնդմանը, կառավարման գործընթացին քաղաքացիների մասնակցության աստիճանի մեծացմանը, պետության գործունեության նկատմամբ քաղաքացիների վերահսկողության լրացուցիչ հնարավորությունների ապահովմանը միտված քաղաքացիների հասարակական-քաղաքական ակտիվության ձև է[9]: Այդ ակտիվությունն անխուսափելիորեն հանգեցնելու է ռիսկերի ու անորոշության մեծացմանը նաև «Ազգ–բանակ» համակարգի ներքին միջավայրում: Դա էապես դժվարացնելու է նախագծերի արդյունավետության գնահատման ավանդական մեթոդների կիրառումը[10]: Նման արդյունավետության գնահատման օբյեկտիվության մակարդակը բարձրացնելու համար պետք է ճիշտ գնահատել նախագծի վրա ռիսկերի և անորոշությունների գործած ազդեցությունը: Այդ նպատակով ներկայումս լայնորեն կիրառվող տեսական և գործնական մեթոդներից են՝ իրական օպցիոնների վերլուծությունը, զգայունության վերլուծությունը, Մոնտե-Կառլոյի մեթոդը և սցենարային վերլուծությունը[11]:

Բազմաչափանիշության գործոն: Ռեսուրսների սահմանափակության և մեծ անորոշությունների պայմաններում որոշումների ընդունման արդյունավետ մոդելների մշակումը բավական բարդ գործ է: Խնդիրն այն է, որ նախագծերի կառավարման ժամանակ այլընտրանքների վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել միայն մեկ չափանիշի հիման վրա, քանի որ նախագծերի գնահատման և այլընտրանքներից լավագույնի ընտրության խնդիրը բազմաչափանիշային է: Արդյունավետ որոշումների ընդունման համար հատկապես կարևոր է որակական և քանակական վերլուծությունների զուգադրումը, ինչն ավելի է բարդանում քանակական և որակական չափանիշների միջև եղած մեծ տարբերությունների պատճառով: Օրինակ՝ ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման հիմքում դրված գիտատեխնոլոգիական և նո-

[8] Տես *Հ. Քոթանջյան*, Նշ. աշխ.:

[9] Տես "What is E-Democracy" IGI Global (Idea Group, Inc.) [US] (https://www.igi–global.com/dictionary/e-democracy/8674):

[10] Տես *Պ. Լ. Վիլենսկի, Վ. Ն. Լիվշից, Ս. Ա. Սմոլյակ,* Նշ. աշխ.:

[11] Տես *T. Copeland, V. Antikarov.* Real Options: A Practitioner's Guide. New York, 2003; *L. Trigeorgis.* Real Options: Managerial Flexibility and Strategy in Resource Allocation. Cambridge, 2000; *R. G. McGrath.* A Real Options Logic for Initiating Technology Positioning Investments. "Academy of Management Review", 1997, Vol. 22, № 4; *А. Дамодаран.* Инвестиционная оценка. Инструменты и методы оценки любых активов. М., 2006; *M. Amram, N. Kulatilaka.* Real Options: Managing Strategic Investment in an Uncertain World. Boston, 1999; *R. G. McGrath, I. C. McMillan.* Assessing Technology Projects Using Real Options Reasoning. "Research Technology Management", 2000, Vol. 43, Issue 4:

րամուծական համակարգը մի շարք փոխկապված գործոնների համակցություն է: Այս գործոնները՝ մակրոտնտեսական և կարգավորիչ միջավայրը, հեռահաղորդակցային ենթակառուցվածքները, շուկայական գործոնները, պետության նորամուծական կարողությունները, ապրանքների շուկայի գործոնները, կրթական համակարգը[12], հենց այն չափանիշներն են, որոնք պետք է հաշվի առնել «Ազգ–բանակ» համակարգում ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման պետական նպատակային ծրագրերի մշակման և իրագործման վերաբերյալ որոշումներ ընդունելիս:

Որոշումների ընդունման համակարգը նպատակների, չափանիշների և այլընտրանքների համակցված կիրառումն է: Որոշումների ընդունման մոդելի հիմքն են նպատակները, որոնց հասնելու համար օգտագործվում են մի շարք այլընտրանքներ: Այդ այլընտրանքների ընտրությունը կատարվում է տարբեր չափանիշների հիման վրա՝ առաջնայնության հարաբերակցության կիրառմամբ:

Անորոշության պայմաններում նախագծերի և ռեսուրսների ռազմավարական կառավարման գործում բազմաչափանիշային որոշումների ընդունման ու փորձագիտական գնահատականի քվանտայնացման համար արդի ժամանակներում լայնորեն կիրառվում է աստիճանակարգությունների վերլուծության մեթոդը[13]:

Ռիսկերի կառավարում: Ռազմավարական ներդրումային նախագծերում ռիսկի դիտարկումը շատ կարևոր է, քանի որ դրանից են կախված նախագծի հաջող ընթացքը և ավարտը: Ռիսկը արտաքին և ներքին գործոններով պայմանավորված մի անորոշ պայման է, որը կարող է նախագծի վերջնական արդյունքի վրա ունենալ դրական կամ բացասական ազդեցություն: Ռիսկն ունենում է մեկ կամ ավելի պատճառներ: Պատճառները կարող են լինել հայտնի, այսինքն՝ պատճառներ, որոնք պարզվել և վերլուծվել են նախորդ նախագծերի իրագործման ժամանակ, և անհայտ, այսինքն՝ պատճառներ, որոնք դեռ չեն պարզվել և չեն վերլուծվել: Վերջին տեսակի ռիսկերը հիմնականում հնարավոր չէ վերահսկել, սակայն կարելի է ուսումնասիրել դրանց առաջացման պատճառները և մշակել դրանց բացասական ազդեցությունները նվազեցնելու միջոցներ: Յուրաքանչյուր նախագծի համար անհրաժեշտ է մշակել ռիսկի կառավարման նկատմամբ համապատասխան մոտեցում՝ ըստ նախագծի պահանջների, արտաքին և ներքին գործոնների, կազմակերպության պահանջների և այլ գործոնների[14]:

---

[12] Տես *Ա. Գ. Դավթյան, Ա. Պ. Պետրոսյան, Մ. Ա. Փարվանյան*, «Ազգ–բանակ» համակարգի ձևավորման գործում պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը որպես ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման խթանիչ գործոն. ՀՀ-ում ռազմավարական-պաշտպանական պատվերի նորամուծական հեռանկարը, «ՀԲ», 2016, հմ. 4:

[13] Տես *T. L. Saaty.* The Analytic Hierarchy Process. New York, 1980; *նույնի՝* Принятие решений. Метод анализа иерархий. М., 1993; *նույնի՝* Multicriteria Decision Making: The Analytic Hierarchy Process. Pittsburgh, 1996; *նույնի՝* Fundamentals of Decision Making and Priority Theory with the Analytic Hierarchy Process. Pittsburgh, 2000:

[14] Տես *J. Hua.* Investment Risks Evaluation on High-tech Projects Based on Analytic

Նախագծի ռիսկի կառավարումը շարունակական գործընթաց է: Այն կարող է փոփոխվել՝ կախված նախագծի իրագործման ընթացքում առաջացող արտաքին և ներքին ազդեցություններից, նախագծի պահանջներից և փոփոխվող բիզնես պայմաններից: Ռիսկի բացահայտումը ռիսկի կառավարման առաջին փուլն է, երբ որոշվում են ռիսկի հնարավոր աղբյուրները և անորոշության պայմանները, արտաքին ու ներքին անորոշ ազդեցությունները և դրանց առանձնահատկությունները: Այդ ժամանակ կատարվում է՝ նախագծի ռեսուրսների գնահատում, փաստաթղթերի վերլուծություն, ռիսկերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկույթի հավաքում, հնարավոր վարկածների դիտարկում, ռիսկերի սկզբնապատճառների պարզում և անհրաժեշտ տրամագիրների ու ցուցակների կազմում: Ռիսկի բացահայտումը շարունակական գործընթաց է, քանի որ նախագծի իրագործման ընթացքում կարող են առաջանալ նոր ռիսկեր: Այնուհետև կատարվում է ռիսկի գնահատում: Բացահայտված ռիսկերի և անորոշության տարրերի հիման վրա կազմվում են առաջնայնության հարաբերակցություններ, որոնք հնարավորություն են տալիս կատարելու որակական և քանակական վերլուծություններ[15]:



Նկ. 2. Ռիսկի գնահատումը Մոնտե-Կառլոյի մեթոդով

Ռիսկի վերահսկումը ներառում է նախագծի նոր ռիսկերի բացահայտում, պլանավորում, բացահայտված ռիսկերի վերանայում: Ռիսկի վերահսկման նպատակն է նախագծի իրագործման ընթացքում նվազեցնել բացասական ազդեցությունների հավանականությունը: Ինչպես ռիսկի կառավարման այլ փուլեր, ռիսկի վերահսկումը ևս շարունակական բնույթի է և կատարվում է նախագծի իրագործման ամբողջ ընթացքում: Ռիսկի վերահսկումը ենթադրում է այլընտրանքային ռազմավարությունների ընտրություն, ռիսկի վերագնահատում, շտկում, անհրաժեշտության դեպքում՝ կառավարման պլանի փոփոխում և կանխում[16]:

Hierarchy Process and BP Neural Network. "International Colloquium on Computing, Communication, Control, and Management (CCCM 2009)", 2009, PP. 305–309; *J. Mun.* Modeling Risk: Applying Monte Carlo Risk Simulation, Strategic Real Options, Stochastic Forecasting, and Portfolio Optimization. Hoboken, 2006:

[15] Տես նույն տեղում:

[16] Տես նույն տեղում:

Իրական օպցիոնների վերլուծության մեթոդ: Իրական օպցիոնը* ոչ թե պարտականություն է, այլ որևէ կառավարչական որոշում կայացնելու իրավունք: Ի տարբերություն ֆինանսական օպցիոններից՝ իրական օպցիոնները կիրառվում են իրական ակտիվներում[17]: Իրական օպցիոնների կիրառումը հնարավորություն է տալիս նախագծերի իրագործման ժամանակ կիրառելու ֆինանսական մաթեմատիկայի մեթոդներ: Նորամուծական նախագծերի իրագործման գրեթե բոլոր փուլերում դրանց առանձնահատկություններով ստեղծվող տարատեսակ ռիսկերի և անորոշությունների գոյության պայմաններում էապես կարևորվում է նախագծերի կառավարման դինամիկ ու ճկուն մեթոդների կիրառումը: Նախագծերի իրագործման համատեքստում ներկայացնենք որոշ իրական օպցիոններ[18]:

Ընդհատման օպցիոն. նախագծերի մշակման և իրագործման ժամանակ կարող են առաջանալ կրիտիկական իրադրություններ, որոնց դեպքում նպատակահարմար է ընդհատել աշխատանքը:

Հետաձգման օպցիոն. նախագծի հաջող իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներ չլինելու և պահանջների թերի վերլուծության պատճառով նախագծի մշակումը կարող է հետաձգվել:

Ընդլայնման օպցիոն. նախագծերի մշակման և իրագործման հաջող ընթացքի դեպքում կարելի է ընդլայնել նախագծի ծավալները, գործառութային հատկությունները, ֆինանսական աղբյուրները և այլն:

Անցման օպցիոն. նախագծերի մշակման և իրագործման ժամանակ տվյալ օպցիոնը մեկնաբանվում է որպես անցում մի վիճակից մյուսին, օրինակ՝ տեխնոլոգիաների, շուկայի փոփոխություն և այլն:

Նախագծերի իրագործման ժամանակ ռիսկերի կառավարման և կառավարչական ճկունության ապահովման համար կարևոր է իրական օպցիոնների վերլուծության կիրառումը *(Real Options Analysis – ROA):* Տվյալ մեթոդի հիմնական առավելություններից մեկն այն է, որ դրանում կառավարչական ճկունությունը դիտվում է որպես իրական օպցիոն, ինչը հնարավորություն է տալիս առկա անորոշությունների հաշվառմամբ ճկուն կերպով փոփոխելու նախագծի իրագործման համար կատարվող ներդրումների պարամետրները (ժամանակ, մասշտաբ և այլն)[19]: Ավանդական մեթոդների համեմատությամբ տվյալ մեթոդը ապահովում է նախագծերի ավելի ճշգրիտ գնահատական: Ի տարբերություն որոշումների ծառի վերլուծությունից *(Decision Tree Analysis – DTA)*, այն հնարավորություն է տալիս առանձին հաշվելու ներդրված (բարդ) օպցիոնի արժեքը, որը կառավարչական ճկունությունն է, և այդ ար-

* Օպցիոնը ֆինանսական պայմանագիր է, որը գնորդին իրավունք է տալիս բազային ակտիվը (ապրանք, ինդեքս, արժույթ և այլն) նախորոշված գնով *(strike)* և որոշակի ժամկետում (օպցիոնի մարման ժամկետ) գնելու կամ վաճառելու:

[17] Տես *Տ. Քոուպլենդ, Վ. Անտիկարով,* Նշ. աշխ.:

[18] Տես նույն տեղում:

[19] Տես *Լ. Թրիգորգիս,* Նշ. աշխ.:

ժեքը ներառելու նախագծի զուտ ընթացիկ արժեքի մեջ *(Net Present Value - NPV):*

Որոշ դեպքերում իրական օպցիոնների վերլուծության և որոշումների ծառի վերլուծության արդյունքները լինում են համարժեք, սակայն անորոշության մակարդակի բարձրացմանը զուգընթաց որոշումների ծառի վերլուծությունը շեղվում է իրական գնահատականից: Բացի այդ, իրական օպցիոնների մեթոդը հնարավորություն է տալիս նախագծում ներդրում կատարելիս արդյունավետ կերպով մոդելավորելու ռիսկի գործոնները, ինչը որոշումների ծառի վերլուծության դեպքում առաջ է բերում որոշումների ծառի էական ընդլայնում[20]:

Վերը նշվածի հաշվառմամբ նախագծերի, մասնավորապես՝ նորամուծական նախագծերի գնահատման համար իրական օպցիոնների վերլուծությունն արդյունավետ և հեռանկարային է: Այն հատկապես արդյունավետ է ռազմավարական նախագծերի կառավարման գործում: Տվյալ մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս հաշվի առնելու նախագծի ռազմավարական արժեքը, որը, ի լրացումն տնտեսականի, ներառում է նաև նոր հնարավորությունների և մրցակցության գործոնները, ինչպես նաև նախագծի ազդեցությունը կազմակերպական ռազմավարությունների իրագործման վրա: Նախագծի կառավարման գործում ճկունության, նախագծի ռազմավարական արժեքի և իրագործման համար անհրաժեշտ գիտելիքների, նախագծի իրագործման հնարավորությունների բազմազանության հաշվառմամբ տվյալ մեթոդի կիրառումը նոր տեղեկույթի ի հայտ գալու դեպքում ապահովում է որոշումները փոխելու կարողություն: Ի դեպ, նախագծի իրագործման հետագա փուլերում կայացված որոշումներում կատարվելիք փոփոխությունները քանակապես գնահատվում են հենց վերլուծության ժամանակ[21]:

Գնահատման ավանդական մեթոդների կիրառման դեպքում նախագիծը կարող է համարվել արդյունավետ, սակայն շուկայական փոփոխությունների և անորոշությունների հետևանքով հնարավոր է նախագծի արդյունավետության մակարդակի բարձրացում կամ նվազում: Այս տեսանկյունից նախագծի գնահատման ճկունության և դինամիկության ապահովման համար իրական օպցիոնների օգտագործումն ունի մեծ կիրառական նշանակություն: Ուստի որոշում կայացնողը, կիրառելով տարբեր տեսակի իրական օպցիոններ, կարող է արդյունավետ կերպով արձագանքել հետագա փոփոխություններին՝ մեծացնելով նախագծի արժեքը:

Աստիճանակարգությունների վերլուծության մեթոդ: Տվյալ մեթոդը որոշումների ընդունման բարդ իրավիճակների վերլուծության և կառուցման համար 1970-ական թթ. սկզբում մշակել է Թ. Լ. Սաատին: Դրա կիրառման

[20] Տես նույն տեղում:

[21] Տես *Լ. Թրիգորգիս,* Նշ. աշխ., *I. C. MacMillan, A. B. van Putten, R. G. McGrath, J. D. Thompson.* Using Real Options Discipline for Highly Uncertain Technology Investments. "Research-Technology Management", 2006, Vol. 49, Issue 1; *Ռ. Գ. Մակ-Գրեթ,* Նշ. աշխ.:

կարևոր ոլորտն է բազմաչափանիշային խնդիրների լուծումը: Աստիճանակարգությունների վերլուծության մեթոդի (ԱՎ-մեթոդ) ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ հնարավորություն է տալիս խնդիրը մասնատելու առանձին բաղադրիչների՝ դրանով իսկ հեշտացնելով լուծումը[22]:

Յուրաքանչյուր խնդրի համար կազմվում է աստիճանակարգություն, որը պարունակում է տարբեր նպատակներ և/կամ միջոցառումների մակարդակներ: Բազմանպատակային խնդիրների դեպքում կատարվում է հիմնական նպատակի առանձնացում: Աստիճանակարգության ստորին մակարդակներում հաշվի են առնվում այն այլընտրանքները, որոնք ենթակա են գնահատման:

Տվյալ մեթոդը գտնվում է որակական և քանակական վերլուծության մեթոդների միջև: Իր էությամբ լինելով որակական՝ այն հնարավորություն է տալիս քանակապես գնահատելու այլընտրանքների, կամ աստիճանակարգության տարրի, առաջնայնությունը: Յուրաքանչյուր ավելի բարձր մակարդակում գտնվող տարրի համար տարբեր չափանիշների հարաբերական նշանակալիությունը որոշվում է առանձին՝ զույգերի առադրման միջոցով: Նույն ձևով մոդելի մեջ ինտեգրվում է միջոցառումների շահավետության գործոնը: Այնուհետև կարելի է որոշել ընդհանուր ցուցանիշը այնպիսի մասնակի նպատակների համար, ինչպիսիք են այլընտրանքները: Այդ ցուցանիշն արտացոլում է ընդհանուր նպատակների աստիճանակարգության և հիմնական նպատակի նկատմամբ այլընտրանքների շահավետությունը կամ հարաբերական նշանակալիությունը[23]:

ԱՎ-մեթոդի կիրառմամբ բազմաչափանիշային որոշումների ընդունման համար դիտարկենք անհրաժեշտ գործողությունների հերթականությունը: Նախ. անհրաժեշտ է կազմել բոլոր գոյություն ունեցող այլընտրանքների ցուցակը: Այնուհետև անհրաժեշտ է այլընտրանքների համար որոշել շեմային պահանջները, այսինքն՝ այն նվազագույն պահանջները, որոնք ներկայացվում են ներդրումային այլընտրանքներին: Այդ պահանջների որոշումից հետո բոլոր գոյություն ունեցող այլընտրանքներն ստուգվում են որոշված պահանջների բավարարման տեսակետից: Նշված պայմաններին չբավարարող այլընտրանքներն անտեսվում են[24]:

Այլընտրանքների որոշումից հետո սահմանվում են նաև այլընտրանքների գնահատման չափանիշները: Այսինքն՝ որոշման ընդունման խնդիրը տվյալ նախագծի առանձնահատկությունների հաշվառմամբ բաժանվում է բաղադրիչ մասերի, որոնք ներկայացվում են չափանիշների աստիճանակարգության տեսքով: Այստեղ հարկ է լինում տարբեր չափանիշների և այլ-

[22] Տես *T. L. Saaty*. The Analytic Hierarchy Process; *նույնի՝* Принятие решений. Метод анализа иерархий; *նույնի՝* Multicriteria Decision Making: ...; *նույնի՝* The Analytic Hierarchy Process: Planning, Priority Setting, Resource Allocation. Pittsburgh, 1988:

[23] Տես նույն տեղում:

[24] Տես նույն տեղում:

ընտրանքների միջև կատարել հստակ սահմանազատում: Չափանիշների և նպատակների աստիճանակարգության համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ փոխադարձ կապերը գոյություն ունեն միայն մեկը մյուսին հետևող մակարդակների տարրերի միջև: Այս պայմանը պահանջում է նաև, որ մի մակարդակում գտնվող տարրերի միջև չլինի ոչ մի կապ կամ այդ կապը լինի աննշան: Անհրաժեշտ է նաև ապահովել այն բանը, որ ստացված գնահատականները, անկախ այլ գնահատականներից, գործեն ինչպես տվյալ, այնպես էլ այլ մակարդակներում:

Այլընտրանքների գնահատման չափանիշների որոշումից հետո սկսվում է խնդրի լուծման աստիճանակարգության մշակումը: Աստիճանակարգությունը կազմվում է երեք հիմնական՝ նպատակների, չափանիշների և այլընտրանքների մակարդակներից (նկ. 3):



Նկ. 3. Որոշումների ընդունման խնդրի համար կազմված աստիճանակարգություն

Լրիվ աստիճանակարգության կազմումից և չափանիշների ու այլընտրանքների որոշումից հետո կատարվում է չափանիշների զույգ-զույգ համեմատություն: Աստիճանակարգության բոլոր տարրերի համար որոշվում են չափանիշների առաջնայնությունները և կազմվում է չափանիշների համեմատման մատրից: Նշանակալիությունը կարելի է մեկնաբանել որպես հիմնական նպատակին հասնելու համար չափանիշների կարևորության աստիճան[25]:

ԱՎ-մեթոդի կիրառման դեպքում զույգերի համեմատության անհրաժեշտ պայման է այն, որ որոշում ընդունող անձը կարող է միևնույն մակարդակի տարրերի A բազմությունից վերցված i և k զույգերին (այլընտրանքներ կամ չափանիշներ) վերագրել հարաբերական ցուցանիշների սանդղակում եղած որևէ v արժեք, որը ցույց է տալիս, թե որքանով է i-ն k-ից նշանակալի կամ կարևոր՝ հաջորդ ավելի բարձր մակարդակում գտնվող որոշված տարրի համեմատությամբ: Դա պետք է կրկնել բոլոր մակարդակների տարրերի համար: Դրա հետ մեկտեղ պետք է գործի k-ի և i-ի հակադարձ համեմատականության սկզբունքը: Հաջորդ ավելի բարձր մակարդակի տարրերի նկատմամբ գործում է հետևյալ օրենքը.

$$v_{ik} = \frac{1}{v_{ki}}, \text{ երբ } i,k \in A: \qquad (1)$$

[25] Տես *T. L. Saaty.* The Analytic Hierarchy Process: Planning, ...:

ԱՎ-մեթոդում կիրառվող բոլոր մատրիցները դրական, հակադարձ համաչափական և չբերվող են:

Զույգերի համեմատության համար կարելի է կիրառել Սաատիի 9 բալանոց սանդղակը (տես աղյուսակը): Տվյալ սանդղակի կիրառման դեպքում համեմատությունները կարող են կատարվել 1-ից 9-ը արժեքների սահմանում, ինչպես նաև դրանց հակադարձ մեծություններով[26]:

Ավելի բարձր մակարդակի տարրերի զույգերի համեմատության արդյունքները նույնպես կարող են ներկայացվել V մատրիցի տեսքով: K տարրերի համար կազմվում է համեմատության արժեքներով KxK մատրիցը: Այս զույգերի համեմատության մատրիցի հիմնական անկյունագծերի արժեքները հավասար են 1-ի:

Աղյուսակ

ՍԱԱՏԻԻ ՍԱՆԴՂԱԿ

Հարաբերական նշանակալիություն	Սահմանումը
1	Միևնույն նշանակալիություն
3	Փոքր-ինչ մեծ նշանակալիություն
5	Ավելի մեծ նշանակալիություն
7	Շատ մեծ նշանակալիություն
9	Բացարձակապես գերակշռող նշանակալիություն
2, 4, 6, 8	Միջանկյալ արժեքներ

Մոդելում ներառված բոլոր զույգերի համեմատության գնահատականը հավաստի է, եթե V_{ik} մատրիցի բոլոր տարրերի համար գործում է հետևյալ պայմանը.

$$v_{ik} = v_{ij} \cdot v_{jk} : \qquad (2)$$

Չափանիշների զույգ-զույգ համեմատությանը հաջորդում է այլընտրանքների նույնակերպ համեմատությունը, ինչից հետո և կազմվում է այլընտրանքների համեմատության մատրիցը:

Այլընտրանքների զույգ-զույգ համեմատությունից հետո կատարվում է չափանիշների առաջնայնության տեղային (լոկալ) վեկտորների հաշվարկում: Տվյալ վեկտորի յուրաքանչյուր բաղադրիչ ցույց է տալիս, թե ամեն մի տարր ինչ նշանակալիություն ունի ավելի բարձր մակարդակի դիտարկվող տարրի համեմատությամբ:

Նպատակային չափանիշների առաջնայնության տեղային վեկտորների հաշվարկումից հետո նման կերպով կատարվում է նաև այլընտրանքների առաջնայնության տեղային վեկտորի հաշվարկում, ինչին հաջորդում է նպատակների աստիճանակարգության համար միջոցառումների և նպատակների առաջնայնությունների որոշումը:

[26] Տես նույն տեղում:

Վերը ասվածի հաշվառմամբ անհրաժեշտ է բոլոր (վերին և հաջորդող) մակարդակներում գտնվող տարրերի համար ընդհանրացնել կշռելիության վեկտորները: Այս գործընթացի հաջորդական կատարմամբ այլընտրանքների համար որոշվում են համընդհանուր առաջնայնությունները, որոնք մասնակի առաջնայնությունների գումարներն են:

Առաջնայնությունների ոչ ճիշտ գնահատման դեպքում վերը նշված փուլերից շատերը անհրաժեշտ է որոշակի իրավիճակներում կատարել մի քանի անգամ:

ԱՎ-մեթոդով այլընտրանքների բացարձակ նշանակալիության գնահատումը նպատակահարմար չէ, քանի որ մի այլընտրանքին վերագրվող կշիռը կախված է մյուս այլընտրանքների զույգերի միջև կատարվող համեմատությունից[27]:

Մեթոդի հեղինակն առաջարկել է կիրառել 9 բալանոց սանդղակ, սակայն գործնական խնդիրների լուծման ժամանակ դրա կիրառումը առաջ է բերում որոշակի դժվարություններ: Նախ. նշված 9 բալանոց սանդղակում չկա զրոյական նշանը, ինչը զույգերի համեմատության ժամանակ որոշումներ ընդունելիս կարող է հանգեցնել սխալների: Վիճելի է նաև այն, թե որոշում ընդունող անձը ի՛նչ աստիճանի տարբերություն կարող է կատարել 9 բալանոց սանդղակի այնպիսի գնահատականների միջև, ինչպիսիք են «ավելի բարձր նշանակալիությունը» (ըստ Սաատիի սանդղակի՝ 5 բալ) և «շատ բարձր նշանակալիությունը» (ըստ այդ սանդղակի՝ 7 բալ), և դրա հետ մեկտեղ մոդելի մեջ մտցնել միջին արժեքներ: Սա առաջին հերթին վերաբերում է այն խնդիրներին, որոնցում առկա են մեծ թվով չափանիշներ և այլընտրանքներ[28]:

Տվյալ մեթոդի կիրառման համատեքստում գնահատման մոդելում կարելի է ներառել անորոշության գործոնը, ինչը ենթադրում է, որ աստիճանակարգության մեջ հաշվի առնվեն անորոշությունից բխող չափանիշներն ու հնարավոր այլընտրանքները: Իսկ զույգերի համեմատության հետևանքով ի հայտ եկած անորոշությունը, որը պայմանավորված է առաջնայնություններով, կարող է հետազոտվել զգայունության վերլուծության *(sensitivity analysis)* միջոցով:

Ռիսկերի կառավարման և անորոշությունների պայմաններում որոշումների կայացման նկատմամբ ինտեգրային մոտեցում: Նշված մեթոդների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անորոշության և ռիսկի պայմաններում նորամուծական նախագծերի գնահատման ժամանակ իրական օպցիոնների վերլուծության և աստիճանակարգությունների վերլուծության մեթոդի կիրառումը արդյունավետ է: Սակայն հարկ է նշել, որ իրական օպցիոնների մոդելները խիստ քանակական են, մինչդեռ նորամուծական նախագծերը

[27] Տես *T. L. Saaty.* Fundamentals of Decision Making and ...; *նույնի՝* Принятие решений. Метод анализа иерархий:

[28] Տես *S. Kumar.* AHP-based formal system for R&D project evaluation. “Journal of Scientific & Industrial Research”, November 2004, Vol. 63; *L. M. Meade, A. Presley.* R&D Project Selection Using the Analytic Network Process. “IEEE Transactions on Engineering Management”, 2002, Vol. 49, Issue 1:

բնութագրվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական չափանիշներով[29]: Թեև աստիճանակարգությունների վերլուծության մեթոդը գտնվում է քանակական և որակական մեթոդների միջև, ինչը անորոշության պայմաններում բազմաչափանիշային որոշումների կայացման տեսանկյունից մեծ առավելություն է, սակայն նպատակահարմար չէ այն կիրառել ռիսկերի կառավարման առնչությամբ:

Այսպիսով՝ անհրաժեշտ է մշակել ռիսկերի կառավարման և բազմաչափանիշային որոշումների ընդունման նկատմամբ ինտեգրային (համալիր) մոտեցում, որի միջոցով հնարավոր լինի միասնական կերպով գնահատել նախագծի արդյունավետությունը և դրա վրա տարատեսակ ռիսկերի ու անորոշությունների ազդեցությունները[30]:

Ստորև ներկայացվում է ռիսկերի կառավարման և նորամուծական նախագծերի արդյունավետության գնահատմանն ուղղված ինտեգրային մոտեցումը, որը, բացի ավանդական մեթոդներից, ներառում է նաև աստիճանակարգությունների վերլուծության մեթոդը և իրական օպցիոնների վերլուծությունը (նկ. 4):



Նկ. 4. Նախագծերի արդյունավետության գնահատման ինտեգրային մեթոդ

Նախագծերի կառավարման նպատակով վերը քննարկված մեթոդների համակցություն ներկայացնող ինտեգրային մոտեցման կիրառումը կապահովի մեծ անորոշությունների պայմաններում ռիսկերի կառավարման հնարավորությունը: Դա հատկապես կարևոր է այնպիսի մեծամասշտաբ ռազմավարական նորամուծական նախագծերի իրագործման ժամանակ, ինչպիսին է «Ազգ–բանակ» հայեցակարգը:

[29] Տես նույն տեղում:

[30] Տես *Э. В. Карслян, А. Г. Григорян, Н. Ю. Симонянц.* Интегрированный подход к разработке автоматизированной системы поддержки принятия инвестиционных решений по реализации инновационных проектов. «Информационные Технологии и Управление», 2012, № 7:

УПРАВЛЕНИЕ РИСКАМИ И ПРИНЯТИЕ МНОГОКРИТЕРИАЛЬНЫХ РЕШЕНИЙ В УСЛОВИЯХ НЕОПРЕДЕЛЕННОСТИ В КОНТЕКСТЕ УПРАВЛЕНИЯ СТРАТЕГИЧЕСКИМИ ПРОЕКТАМИ

А. Г. ГРИГОРЯН, начальник Центра политики национальной безопасности и информационно-коммуникационных технологий ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

В условиях существования реальных военных угроз со стороны Азербайджана по развязыванию новой войны против Армении и Арцаха реализация общегосударственного инновационного проекта «Нация–армия» связана с определенными рисками. В условиях высокого уровня неопределенностей, характерного для безопасностных процессов в современном мире и, в особенности, в нашем регионе, а также ограниченности ресурсов РА (как человеческих, так и материальных) для обеспечения успешного внедрения концепции «Нация–армия» одной из насущных задач становится искусное управление рисками и ресурсами с использованием современных технологий. В этом аспекте предполагается применение анализа реальных опционов и метода анализа иерархий.

Отмечается, что для обеспечения совместной оценки эффективности проекта и воздействия на него разнообразных рисков и неопределенностей наиболее оптимальным является интегрированный (комплексный) подход к управлению рисками и принятию многокритериальных решений, объединяющий два указанных метода.

RISK MANAGEMENT AND MULTICRITERIA DECISION-MAKING IN TERMS OF UNCERTAINTY IN THE CONTEXT OF STRATEGIC PROJECT MANAGEMENT

A. H. GRIGORYAN, Head, Center for National Security Policy and Information-Communication Technologies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Under the existence of real war threats from Azerbaijan to unleash a new war against Armenia and Artsakh, the implementation of the state-wide innovative project “Nation–Army” is associated with certain risks. In a high level of uncertainties, typical for the security processes in the contemporary world and our region, in particular, as well as due to the limited resources of the RA (both human and material), a skillful risk and resource management via modern technologies becomes one of the vital tasks in order to provide for the successful implementation of the “Nation–Army” concept. In this sense, the real options analysis and the method of hierarchical analysis are recommended to implement.

It is mentioned that to ensure the project efficiency joint assessment and affect of diverse risks and uncertainties on the project, the integral (complex) approach to the risk management and the multicriteria decision-making, which combines these two methods, is the most optimal.

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ռազմավարական խաղերի
և մոդելավորման խմբի պետ



Տղան ինչ գիտություն սորվի նէ,
անոր գործնականն ալ մեկ տեղ ըլլա:
Սերվիչեն (Ս. Վիչենյան)

Համապետական նշանակություն ունեցող ցանկացած նոր գաղափարի ներդրում պահանջում է համակարգային մոտեցում և իր հետ բերում է որոշակի սոցիալական ոլորտներում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Առանց նման համընդգրկուն և նորամուծական վերափոխումների անհնար է դառնում մեծ հասարակական կարևորություն ունեցող ռազմավարական ծրագրերի իրականացումը:

2016 թ. հոկտեմբերի 29-ին Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը նշել է, որ «Ազգ–բանակ» հայեցակարգը ենթադրում է բանակի լիարժեք ինտեգրում հասարակությանը և ըստ այդմ ակտիվ ներգրավում տնտեսության, մշակույթի, *կրթության* և գիտության, բնապահպանության, սպորտի բնագավառներում ծավալվող զարգացումներում[1]:

Պետության զարգացման գործում կրթության դերի կարևորությունը հայտնի է: Չկա որևէ առաջատար պետություն, որը չունենար արդիական կրթական համակարգ: Եվ պատահական չէ, որ «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրմանը նվիրված «Ազգ–բանակ-2017» համաժողովում (2017 թ. ապրիլի 20) առաջին հերթին կարևորվել է կրթությունը և քննարկվել են ռազմակրթական ոլորտի խնդիրները:

Այսպես. Նախագահ Ս. Սարգսյանը շեշտել է մտավորական սպաներ կրթելու և Զինված ուժերի հետ երիտասարդության կապն ամրապնդելու անհրաժեշտությունը[2]: Իսկ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանն իր առաջարկած «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը ներկայացնելիս նշել է, որ դրանց արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է բարձրացնել բանակի

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում (29.10.2016)»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է «Ազգ–բանակ-2017» համաժողովին», 20.04.2017 (http://www.president.am/hy/press-release/item/2017/04/20/President-Serzh-Sargsyan-attended-Nation-Army-2017-congress/):

վերաբերյալ հասարակության իրազեկվածության աստիճանը, ինչին պետք է էապես նպաստի նաև դպրոցը: Նախարարի կարծիքով՝ կա դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) դասընթացի խորքային վերանայման անհրաժեշտություն: ՆԶՊ-ն պետք է դուրս գա լսարաններից և, տեսական գիտելիքներ հաղորդելուց բացի, ծառայի ռազմահայրենասիրական ու ռազմամարզական խաղերի միջոցով աշակերտների մեջ կիրառական արժեք ներկայացնող հմտությունների ձևավորման նպատակին[3]: Վ. Սարգսյանը շեշտում է նոր կրթական ծրագրերի մշակման անհրաժեշտությունը, ծրագրերի, որոնք քաղաքացիական և ռազմական ուսումնական հաստատությունների միջև կդնեն որակապես նոր համագործակցության սկիզբ:

Փաստորեն, «Ազգ–բանակ» հայեցակարգի անկյունաքարային գաղափարի իրականացման՝ հասարակության և Զինված ուժերի միջև փոխադարձ սերտ կապի հաստատման գործում կարևորվում է ոչ միայն ռազմակրթական հաստատություններում որակյալ սպաների պատրաստումը, այլև հանրակրթական և մասնագիտական կրթություն ապահովող այլ ուսումնական հաստատություններում ռազմական պատրաստման գործում նորամուծական մոտեցումների ներդրումը:

Այս հանգամանքն ավելի է կարևորվում այն պատճառով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հանրապետության կրթական համակարգը շարունակաբար անկում է ապրում, և նման պայմաններում մեր պետությունը դժվար թե կարողանա որևէ նորամուծական հայեցակարգի ներդրման գործում ապահովել շոշափելի արդյունքներ, եթե Բոլոնյան գործընթացի շրջանակում կատարվող կրթական բարեփոխումները չզուգակցվեն էական փոփոխություններով՝ առաջատար պետությունների կրթական համակարգերում տեղի ունեցող փոփոխությունների հաշվառմամբ:

Կարծում ենք, որ տվյալ փոփոխություններից առավել առաջնահերթը այն է, որ պասիվ ուսուցումը փոխարինվում է ակտիվ ուսուցմամբ: Ուսումնառության ընթացքում շեշտն առավելապես դրվում է կիրառական հմտությունների և կարողությունների զարգացման վրա: Այս համատեքստում կրթության արդյունքը ոչ միայն որևէ ոլորտում մասնագիտանալն է, այլև գործնական իրավիճակներում ճկուն կերպով կողմնորոշվող, որոշումների կայացման հմտություններով օժտված ակտիվ քաղաքացու դաստիարակությունը: Առաջին պլան է մղվում ուսանողի մեջ հաշվետվողականության զգացումի ձևավորումը և պատասխանատվության մեծացումը, ինքնուրույն կերպով գործելու հմտությունների զարգացումը:

Անգամ ավանդաբար տեսական հենք ունեցող սոցիալական գիտություններում ավելի մեծ թափ է առնում գիտակիրառական ուղղվածությունը: Կարծում ենք՝ տվյալ փոփոխությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ սոցիալական գիտելիքն այժմ գերազանցապես դիտվում է ոչ թե

[3] Տես «Քննարկվել են ռազմակրթական ոլորտի հիմնախնդիրները», 20.04.2017 (http://www.mil.am/hy/news/472):

իր փիլիսոփայական իմացաբանական շրջանակում, այլ զուտ որպես սոցիալական բարիք ստեղծելու կոնկրետ գործիք[4]:

Ըստ այդմ ներդրվում է այսպես կոչված պրոբլեմահեն ուսուցումը *(problem based learning, проблемное обучение)*՝ խարսխված գործնական գիտելիքներ ձեռք բերելու *(practice based education; образование, основанное на практике)* հրամայականի վրա[5]: Այն անվանում են նաև գործնական-փորձառական ուսուցում *(experiential learning, эмпирическое обучение)*, որի էությունը գործողության, փորձի և այդ փորձի մասին ռեֆլեքսիայի միջոցով սովորելն է[6]: Կրթական գործընթացի մասնակիցը միաժամանակ ձեռք է բերում և՛ գիտելիքներ, և՛ հմտություններ ու կարողություններ:

Օրինակ՝ Ֆինլանդիայում, որը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Աշակերտների գնահատման միջազգային ծրագրի 2015 թ. միջինացված տվյալների համաձայն հանրակրթության ոլորտում բարձր արդյունքներ ունեցող (5-րդ տեղ) պետություններից մեկն է[7], հազվադեպ կարելի է հանդիպել ամբողջ դասաժամի ընթացքում գրատախտակի մոտ կանգնած դաս բացատրող ուսուցիչների: Դպրոցական տարիներից սկսած մեծ ուշադրություն է դարձվում ակտիվ ուսուցմանը, որտեղ համակարգայնորեն մշակվում են այսպես կոչված «մտածողությունը զարգացնող ուսումնական ծրագրեր» *(thinking curriculum)*: Աշակերտներին նորամուծական ուսումնական մեթոդների միջոցով սովորեցնում են ինքնու-

[4] Տես *А. П. Булкин*. Социокультурная динамика образования. Исторический опыт России. Изд. 2. Дубна, 2005: Կարող ենք նկատել, որ այստեղ առաջ է գալիս ձևարկված և ռեալ (նյութական) կրթության հարցը: Ռեալ ուսուցման հարացույցում կրթության մեջ շեշտը դրվում է առավելապես կիրառական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման վրա: Տվյալ հարացույցը որդեգրած հասարակություններում աճում է մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը: Ձևարկված կրթության դեպքում շեշտը դրվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանցի ընդլայնման վրա, որտեղ կրթությունը և դաստիարակությունն ուղղված են ուսանողների մեջ հոգևոր և մտավոր ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ըստ ռուս փիլիսոփա է. Իլիենկովի՝ «Կողմնորոշվելով դեպի յուրացումային մոտեցում՝ կրթության սուբյեկտը իր ջանքերն ուղղում է կրթության կիրառական դրսևորման վրա և ուսումնառության ու գիտելիքների ձեռքբերման առաջ դնում է պրագմատիկ, օգտապաշտական խնդիրներ. իսկ լինելությանն ուղղված կողմնորոշման մեջ ջանքերն ուղղված են սովորել կարողանալուն, ունակությունները զարգացնելուն, մտածելու ունակությանը»: Այլ խոսքով՝ հաշվի է առնվում կրթության ոչ միայն տնտեսական, այլև կրթական կողմը: Արևմուտքում այս մոտեցումն արտացոլվում է «անընդհատ ուսուցման», կամ «ցկյանս կրթության», տեսությունում:

[5] Տես *Amanda Davies*. A Leap of Faith: Embedding e-Simulation in an Associate Degree in Policing. *Claus Nygaard, Nigel Courtney, Elyssebeth Leigh.* Simulations, Games and Role Play in University Education. Libri Publishing, 2012, PP. 223–238:

[6] Տես *Robert W. Clark, Mark D. Threeton, John C. Ewing*. The Potential of Experiential Learning Models and Practices In Career and Technical Education & Career and Technical Teacher Education. “Journal of Career and Technical Education”, Winter 2010, Vol. 25, N 2 (https://ejournals.lib.vt.edu/JCTE/article/view/479/657):

[7] Տես “PISA 2015 Results in Focus”. OECD, 2016 (http://www.oecd.org/pisa/pisa-2015-results-in-focus.pdf):

րույնաբար ու ստեղծագործորեն մոտենալ ուսումնական գործընթացին և իրենց ուժերով կառավարել ուսուցումը: Սրանով նրանք ձեռք են բերում խնդիրներ ձևակերպելու և դրանք լուծելու գործնական հմտություններ, իրենց սխալները վերլուծելու և գնահատելու ունակություններ: Կիրառվում են այնպիսի ուսումնական մեթոդներ, որոնք ենթադրում են գիտելիքի ստացման պլանավորում (հետազոտական աշխատանքի բաղադրիչ), գործողություն (սովորել՝ անելով) և ռեֆլեքսիա (իր գործողության հետհայաց վերլուծություն)[8]:

Սակայն պետք է նշել, որ ակտիվ ուսուցումը չի բացառում դասախոսությունը, քանի որ հաշվի են առնվում դրա դրական կողմերը, այն է՝ պլանավորելի, վերահսկելի լինելը, մեծաթիվ լսարանին տեղեկույթ փոխանցելու հնարավորությունը, ծախսատար օժանդակ միջոցների միանգամյա կիրառման լայն հնարավորությունները և այլն: Օրինակ՝ անգլոսաքսոնական ավանդույթների կրողներ բրիտանական համալսարաններում ավանդույթի ուժով դեռ ամուր հիմքերի վրա է ակադեմիականությունը, երբ գիտելիքի փոխանցման առաջնային միջոցը դասախոսությունն է: Այդուհանդերձ, սրա հետևանքով գործնական մասը տուժում է: Իրավիճակը որոշակի առումով շտկվում է այսպես կոչված «սանդվիչ (շերտընդմեջ) դասընթացների» (ուսում-աշխատանք-ուսում) միջոցով, որոնց դեպքում փուլային ակադեմիական դասընթացին հաջորդում է արտադրական պրակտիկան[9]: Այդուհանդերձ, Մեծ Բրիտանիայում պոլիտեխնիկական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատություններում նման համակարգն ավելի տարածված է, քան համալսարաններում:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ում, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանում, մեծ կարևորություն էր տրվում աշխատանքային դաստիարակության և ընդհանուր կրթության զուգակցմանը[10]: Սա որոշակի առումով կարելի է համարել գործնականի և տեսականի կապն ապահովելու օգտակար փորձ, ինչը ԽՍՀՄ փլուզումից հետո գրեթե վերացավ՝ պայմանավորված արդյունաբերության անկմամբ և դրանից բխող սոցիալական խնդիրներով: Ուստի, կարծում ենք, առաջատար արևմտյան մոտեցումներն ուսումնասիրելիս ու տեղայնացնելիս հարկավոր է չմոռանալ նաև մեր ավանդույթները:

Մեր կարծիքով՝ ուսումնասիրության և ընդօրինակման տեսակետից ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում ակտիվ ուսուցման մեթոդները: Հաճախ նշվում է, որ դրանք պետք է հնարավորինս ուղեկցվեն իրավիճակային խնդիրների դիտարկմամբ: Դասավանդմանը կարող է տրվել որոշակի

[8] Տես *Linda Darling-Hammond.* What we can learn from Finland's successful school reform. "National Education Association" (http://www.nea.org/home/40991.htm):

[9] Տես "Sandwich Courses" (https://www.wlv.ac.uk/study-here/undergraduate-study/sandwich-courses/):

[10] Տես *Ց. Սիմոնյան,* Հայ մանկավարժության պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը): Ե., 2006, էջ 211:

թատերականացված բնույթ, երբ ուսանողները, ստանձնելով դերեր, հետապնդում են կոնկրետ շահեր և պետք է բախվեն որոշակի խնդիրների ու հակամարտային իրավիճակների, որոնց լուծումը պահանջում է ստեղծագործական մոտեցում:

Հարկ է նշել, որ թեև ՀՀ-ում Բոլոնյան գործընթացի շրջանակներում շարունակում են իրականացվել որոշակի կրթական բարեփոխումներ, այդուհանդերձ ակտիվ ուսուցման առումով անելիքներ դեռ շատ կան: Հայրենական ուսումնական կենտրոններում իներցիայի ուժով դասավանդումը մեծ մասամբ կատարվում է դասախոսությունների ձևով, իսկ դրանց հաջորդում է գիտելիքների յուրացվածության ստուգումը բանավոր կամ գրավոր ավանդական քննությունների միջոցով: Ակտիվ ուսուցման զարգացմանը խոչընդոտում են նաև ֆինանսական խնդիրները, որոնց պարագայում անհնար է դառնում այս մոտեցման դեպքում կիրառվող մեթոդների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծումը:

Այդուհանդերձ, խնդրի լուծման համար նպաստավոր է ՀՀ միջազգային համագործակցությունը առաջատար կրթական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ թեև դանդաղ, սակայն նկատելի կերպով տեղի են ունենում որոշակի դրական փոփոխություններ:

Հատկանշական է, օրինակ, պաշտպանական կրթության ոլորտում ՀՀ կրթական կարիքներին օժանդակելու համար ՆԱՏՕ-ում ձևավորված «Պաշտպանական կրթության զարգացման ծրագրի» (ՊԿԶԾ, *Defense Education Enhancement Program*) կատարած աշխատանքը: Այդ ծրագրում ընդգրկված են ՆԱՏՕ-ի Կենտրոնակայանի, Կանադայի, Չեխիայի և Լիտվայի ռազմաուսումնական հաստատությունների առաջատար փորձագետներ: ՊԿԶԾ նպատակներից են ուսումնական ծրագրերի վերանայումը՝ ժամանակակից պահանջներին դրանց համապատասխանեցմամբ, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումը, պաշտպանական կրթության բարեփոխումներին միտված օրենսդրական նախաձեռնությունների մշակումը, բարձրագույն ռազմական կրթության համաեվրոպական Բոլոնյան գործընթացի դրույթներին վերաբերող խնդիրների պարզաբանումը, ինչպես նաև ռազմակրթական հաստատություններում դասավանդման նոր մեթոդների ներդրումը[11]:

Առիթ ունենալով ՀՀ ՊՆ ռազմակրթական հաստատությունների ներկայացուցիչների հետ մի քանի անգամ մասնակցելու տվյալ ծրագրի շրջանակներում կազմակերպված մեթոդաբանական դասընթացներին՝ նկատել եմ, որ դասավանդման մեթոդների առումով մեր գործընկերները շեշտը դնում են դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ակտիվ ուսուցման վրա:

[11] Տես *H. Kotanjian.* Managing Strategic Changes through DEEP Reforms: A View from the Perspective of U.S.– Armenia “Smart Power” Cooperation. “Connections”. The Quarterly Journal, Fall 2012, Vol. XI, N 4:

Խոսելով ուսումնական պրոցեսում ժամանակակից տեխնոլոգիաների ուսումնական (դիդակտիկ) նշանակության մասին՝ հարկ ենք համարում նշել այն կարևոր հանգամանքը, որ ներկայումս հնարավոր է դառնում գիտելիք ձեռք բերել արդիական տեղեկատվական տեխնոլոգիաներով՝ ոչ միայն տեքստային, այլև բազմապիսի պատկերային ու ձայնային աղբյուրներից: Պատկերներից ստացված գիտելիքն ավելի լավ է յուրացվում: Ընդսմին համացանցը հնարավորություն է տալիս ջնջելու տարածության սահմանները՝ էապես հեշտացնելով տեղեկույթի ձեռքբերումը[12]:

Ակտիվ կիրառական ուսուցում ենթադրող, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում ապահովող կրթական մեթոդներից է ռազմավարական նմանարկումային խաղը: Լայնորեն կիրառվելով ինչպես փոքրահասակների, այնպես էլ մեծահասակների *(andragogy, андрагогика)* կրթության մեջ՝ այն նաև ակտիվորեն օգտագործվում է ռազմավարական հետազոտություններում:

Ռազմավարական խաղը որոշումների ընդունմանն ուղղված վարժություն է՝ նախատեսված սցենարների շրջանակում իրական կամ մտացածին հակամարտային իրավիճակի նմանարկման համար: Նման խաղերում մասնակիցներին, որոնք հիմնականում ունենում են բախվող շահեր, ներկայացվում է որևէ խնդիր, որի լուծման համար նրանք պետք է համագործակցեն: Խաղի ընթացքում խաղացողները պարզում են իրենց ուժեղ և թույլ կողմերը, դիտարկում են այլընտրանքներ, առաջարկում են լուծումներ: Այս ամենը կատարվում է ըստ համապատասխան կոնկրետ կանոնների, տեղեկույթի և գործընթացների[13]:

2017 թվականի փետրվարի 2–5-ը Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի ֆինանսավորմամբ Կովկասի ինստիտուտը կազմակերպել էր տարբեր բուհերի ուսանողների մասնակցությամբ նմանարկումային խաղ: Խաղի ավարտից հետո 16 ուսանողների հետ անցկացված հարցման արդյունքներով պարզվեց, որ տվյալ բուհերի ուսումնական ծրագրերում նման խաղեր ներառված չեն: Իսկ այն հարցին, թե ուսումնական տեսանկյունից ինչ գնահատական կտաք խաղի արդյունավետությանը, հարցված 16 ուսանողներից 8-ը պատասխանել են՝ «գերազանց», 6-ը՝ «լավ», իսկ 2-ը՝ «բավարար»:

Ռազմավարական խաղերի կիրառման տեսակետից առաջատար երկրներից են ԱՄՆ-ը, Նիդեռլանդները, Ճապոնիան: Խաղերը մեծ տեղ են զբաղեցնում ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի կրթական և հետա-

[12] Համակարգչային հեռահաղորդակցային միջոցների ուսումնական գործառույթների մասին հանգամանորեն տես «Новые педагогические и информационные технологии в системе образования». Под ред. Е. С. Полат. М., 2008, сс. 193–198:

[13] Տես *Francis J. McHugh.* Fundamentals of War Gaming. Newport: Naval War College (US), 2010, P. 2:

զոտական գործունեությունում, դրանք ակտիվորեն կիրառվում են նաև ԱՄՆ-ի Ռազմական ծովային քոլեջում, Հարվարդի և այլ համալսարաններում, «ՌԷՆԴ» կորպորացիայում և այլ ուսումնական հաստատություններում: Առավելապես ռազմական ուղղվածության խաղեր կազմակերպվում են ԱՄՆ-ի Բանակի ռազմական քոլեջում, Ծովային ուժերի համալսարանում, Ավիացիոն համալսարանում:

Տվյալ գործիքի հետազոտական օգտակարության վկայությունն է ռազմավարական նպատակների իրագործման համար ռազմավարական խաղերի կիրառմամբ ակտիվացված ջանքեր գործադրելու կոչը, որը հրապարակված էր Պաշտպանական նորամուծությունների նախաձեռնության վերաբերյալ *(Defense Innovative Initiative)* 2014 թ. նոյեմբերի 15-ին ԱՄՆ-ի Պաշտպանության նախարար Չակ Հեյգլի ստորագրած հուշագրում[14]:

Ռազմավարական խաղերը գրականության մեջ հաճախ դասակարգվում են ըստ իրենց նպատակի, տեսական կամ կիրառական շեշտադրման: Թեև խաղերում գիտելիքի, կարողությունների և հմտությունների միաժամանակյա ստացումն ուղղակի անխուսափելի է, այդուհանդերձ, տեսական շեշտադրում ունեցող խաղերը կոչվում են սոցիալական համակարգի նմանարկումներ *(social-system simulations):* Օրինակ՝ եթե ցանկանում ենք խաղացողներին տալ բանակի մասին գիտելիք, ապա պետք է մոդելավորենք բանակը, դրանում տեղի ունեցող գործընթացները և կատարենք դերաբաշխում ըստ զինվորականների աստիճանակարգության: Կիրառական ուղղվածություն ունեցող խաղերը կոչվում են մարտավարական որոշումային նմանարկումներ *(tactical decision simulations)*[15]: Սրա տիպային օրինակ կարող է լինել որևէ օպերատիվ կամ մարտավարական տրամաչափի ռազմական խնդրի խաղարկումը:

Ռազմավարական խաղերը դասակարգվում են նաև այլ հիմքերով: Այսպես. դերի շեշտման հիմքի վրա կառուցված խաղերում կարևորվում է հաղորդակցումը, այսինքն՝ դրանք կրում են առավելապես գործընթացային բնույթ *(social process/interaction simulation)*: Ռազմական ուղղվածություն ունեցող նմանատիպ խաղում կարող են խաղարկվել զինվոր–հրամանատար հարաբերությունները կամ որևէ բանակցային գործընթաց:

Կան նաև կոնկրետ կանոնների վրա հիմնված խաղեր, որոնք կոչվում են տեղեկույթի կառավարման մոդելավորումներ *(data management simulations)*: Սրանք լուծում են կոնկրետ խնդիրներ: Մասնավորապես՝ ռազմական բժշկության ոլորտում կարող է լինել համակարգչային խաղ, որում առաջարկվում է վիրավորին ցուցաբերել որոշակի բուժօգնություն:

---

[14] Տես *Edie Williams, Alan R. Shaffer.* The Defense Innovation Initiative: The Importance of Capability Prototyping. “Joint Force Quarterly”, April 2015, N 77 (http://ndupress.ndu.edu/Portals/68/Documents/jfq/jfq-77/jfq-77_34-43_Williams-Shaffer.pdf):

[15] Տես, օրինակ, *B. A. Starkey, E. L. Blake.* Simulation in International Relations Education. “Simulation & Gaming”, December 2001, Vol. 32, N 4:

Մեթոդի կրթական և հետազոտական նշանակության գիտակցմամբ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի մոդելի տեղայնացման շրջանակներում ստեղծվել է Ռազմավարական խաղերի և մոդելավորման խումբ, որի նպատակն է գիտական ուսումնասիրություններում և կրթական պրոցեսում կիրառական հետազոտական մեթոդների օգտագործման ապահովումը: ՀՀ-ում ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ն առաջին պետական հաստատությունն է, որը պետության ռազմաքաղաքական ղեկավարությանն է ներկայացրել ռազմավարական խաղերի գործիքարանի կիրառմամբ կատարված հետազոտությունների արդյունքները: ՊԱՀՀ-ը մշտապես հարստացնում է խաղերի և այլ կիրառական հետազոտական ու կրթական մեթոդների վերաբերյալ գիտական նյութերի շտեմարանը և ՀՀ-ում այն միակ կենտրոնն է, որի մասնագիտական գործունեության հիմնական ուղղություններից է ռազմավարական գիտակրթական մեթոդների ուսումնասիրությունը:

Հարկ է նշել, որ ռազմավարական խաղերի նախատիպը բուն ռազմական, կամ պատերազմական, խաղերն են: Դրանք պատերազմական իրավիճակներ մոդելավորող վարժանքներ են, որոնք կազմակերպվում են ինչպես ռազմավարությունների ուսումնասիրության և ստուգման, այնպես էլ օպերատիվ ու մարտավարական գործողությունների փորձարկման և կատարելագործման նպատակով: Սկզբում պատերազմական խաղերը կիրառվում էին պրոֆեսիոնալ զինվորականներին ուսուցանելու նպատակով, իսկ հետագայում լայն տարածում ստացան նաև քաղաքացիների շրջանում՝ որպես ժամանց[16]:

Նման խաղերի համեմատական դյուրինության և կազմակերպման ծախսերի մատչելիության հաշվառմամբ դրանց կիրառումը կարելի է սկսել ավագ դպրոցում, օրինակ, Նախարարի շեշտած ՆԶՊ դասընթացների շրջանակներում: Կարծում ենք, որ հանրակրթական հաստատություններում ռազմական խաղերի կիրառումը աշակերտներին հնարավորություն կտա ավելի լավ պատկերացնելու ռազմական գործը: Ուսուցման խաղային բնույթը և մրցակցությունը կհեշտացնեն յուրացումը, ինչը պայմանավորված կլինի նրանց մեջ հետաքրքրության առաջացմամբ: Այսպիսով՝ մինչ բանակ զորակոչվելը ապագա զինվորները ձեռք կբերեն ռազմական գործի և ռազմարվեստի վերաբերյալ որոշակի գիտելիքներ:

Բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում ռազմական խաղերի կիրառմանը զուգահեռաբար կարող է լուծվել համեմատաբար ոչ ծախսատար միջոցներով ուսանողներին օպերատիվ և մարտավարական գի-

[16] Տես, օրինակ, *Մ. Ս. Ավետիսյան,* Ռազմավարական խաղերի էությունը և կազմակերպումը: «ՀԲ», 2014, հմ. 3–4: Ռազմական խաղերում ստվարաթղթի վրա, տեղագրական քարտեզի նմանությամբ, պատկերվում էր իրական (անցյալի կամ ներկայի) կամ հորինված ռազմադաշտ: Վեցանկյունների բաժանված քարտեզի վրա տեղակայվում էին յուրային և հակառակորդի զորքն ու սպառազինությունը ներկայացնող ֆիգուրները: Խաղացողները հերթով, ըստ կանոնների, տեղաշարժում էին ֆիգուրները՝ փորձելով հասնել գերազանցության և հաղթել հակառակորդին:

տելիքների փոխանցումը: Բանակում իրական զորավարժությունների միջոցով նրանք հնարավորություն կստանան արդեն ունեցած գիտելիքների հիմքի վրա ավելի հեշտ կերպով զարգացնելու իրենց կարողություններն ու հմտությունները:

Ռազմավարական խաղերի կիրառմամբ ուսուցում կազմակերպելու դեպքում գիտելիքի յուրացումը կատարվում է ավարտուն փուլաշրջանով: Փորձով զուգակցված ուսուցման պայմաններում տեղեկույթը ավելի հեշտ է հիշվում և վերածվում մնայուն գիտելիքի, քանի որ այն փաստորեն «վերապրվում» է: Խաղի ընթացքում պահանջվում է գիտելիքի կիրառում, ինչի շնորհիվ եղած գիտելիքն ավելի է ամրապնդվում և անգամ կարող է ձևավորվել նորը: Խաղի ամբողջ ընթացքում ենթարկվելով խաղի սցենարի պահանջներին և գործ ունենալով մյուս խաղացողների զանազան նպատակների ու շահերի հետ՝ մասնակիցը կատարում է անընդհատ վերլուծություն: Առադրելով ու համադրելով ստացվող տեղեկութային հոսքերը՝ նա ընդհանուր համակարգի մեջ ճիշտ գործելու տեսակետից գնահատում է իրավիճակը, իր գիտելիքի մակարդակը և հանդես է գալիս որոշակի առաջարկությամբ, որն էլ, ըստ Բլումի տաքսոնոմիայի, կարելի է համարել ամենավերջին՝ ստեղծման փուլը[17]:

Հատկանշական է, որ ռազմավարական խաղերին մասնակցությունը կարող է նաև օգտակար լինել ինչպես ռազմակրթական հաստատություններում, այնպես էլ քաղաքացիական բուհերում և վերապատրաստման ժամանակ կառավարչական հմտություններ ձևավորելու առումով: Պրակտիկան ցույց է տալիս, որ արդյունավետ կերպով գործելու համար կառավարիչը պետք է ճանաչի իրեն (հասկանալով խաղում իր ունեցած դերը), հասկանա իրավիճակը (պատկերացնելով խաղի սցենարը), ունակ լինի ընտրելու կառավարման ոճը (գտնելով խաղընկերների հետ արդյունավետորեն հարաբերվելու եղանակները), հաշվի առնի խմբի պահանջները (ուշադիր լինելով այլ խաղացողների շահերի նկատմամբ), հաշվի առնի իրավիճակը և անհատների կարիքները (կարողանալով սցենարի փոփոխման դեպքում ճիշտ կողմնորոշվել շահերի փոփոխությունների ասպարեզում)[18]:

Ռազմավարական խաղերը կարող են էական դեր ունենալ լրացուցիչ կրթության միջոցով պետական ծառայողների պահանջվող գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման գործում: Նման խաղերի համար որպես սցենարային ապահովման հիմք կարող են ծառայել տվյալ մասնագիտության վերաբերյալ կազմված մասնագիտագրով սահմանվող հատկությունների ձևավորումն ու զարգացումը[19]:

---

[17] Տես *Patricia Armstrong.* Bloom's Taxonomy (https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/blooms-taxonomy/):

[18] Կառավարման որակի ցուցիչների մասին հանգամանորեն տես *С. В. Воробьева.* Основы управления образовательными системами. М., 2008, сс. 119–120:

[19] Տես *А. К. Маркова.* Профессиограмма как ориентир подготовки государственных служащих. «Подготовка кадров государственной службы». М., 2005, сс. 25–38:

Ռազմավարական մակարդակում խաղերը հնարավորություն են տալիս բարդ կառավարային խնդիրներ քննարկելու համար մեկ հարկի տակ հավաքելու ազգային անվտանգության հարցերով զբաղվող պաշտոնյաների և փորձագետների, ինչն էլ իր հերթին նպաստում է միջգերատեսչական համախմբմանը: Բացի այդ, խաղերը, իրենց բնույթով լինելով կա՛մ իրականության նկատմամբ այլընտրանքային հակադրափաստական դատողություններ *(counterfactual, контрфактическое рассуждение)* կիրառող, կա՛մ զուտ կանխատեսումային վերլուծության մեթոդ[20], այսինքն՝ պատասխանելով «ինչ կլիներ, եթե» հարցին, ինչպես նաև ներառելով տեղեկույթի վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաներ և գիտական մեթոդներ, ապահովում են այնպիսի եզրահանգումներ, որոնք անհրաժեշտ են որոշումների ընդունման համար: Այսպիսով՝ ՀՀ-ում ռազմավարական մակարդակում նման խաղերի կիրառումը կարող է առաջ բերել ավելի մասնակցային կառավարում և նպաստել հանրային կառավարման զարգացմանն ընդհանրապես:

Ամփոփելով՝ նշենք, որ ռազմակրթական համակարգի մեջ ուսումնական խաղերի ներմուծման դեպքում ակնկալվում են մի շարք դրական փոփոխություններ: Այսպես. ՆԶՊ ժամանակ ռազմական խաղերի անցկացումը, քաղաքագիտական ու պաշտպանական-անվտանգային կրթություն ապահովող բուհերում ռազմաքաղաքական բնույթի և այլ կառավարային հարցերի խաղարկումը էապես կնպաստեն ունկնդիրների «մնացուկային» գիտելիքների ծավալի մեծացմանն ու այդ գիտելիքները հմտորեն կիրառելու կարողության ձևավորմանը, հասարակության համար բանակի ընկալելիության մակարդակի բարձրացմանը և «Ազգ–բանակ» հայեցակարգի գաղափարին համահունչ նրանց միջև փոխադարձ կապի սերտացմանը:

[20] Տես *N. Hendrickson.* Counterfactual Reasoning: A Basic Guide for Analysts, Strategists, and Decision Makers. “The Proteus Monograph Series”, 2008, Vol. 2, Issue 5:

ОБ ИННОВАЦИОННЫХ ОРИЕНТИРАХ РЕФОРМИРОВАНИЯ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

М. С. АВЕТИСЯН, кандидат политических наук, руководитель Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Министр обороны РА В. Саргсян подчеркнул, что концепция «Нация–армия» предусматривает полную интеграцию армии с обществом и, следовательно, ее активное вовлечение в процессы, происходящие в сферах экономики, культуры, образования и науки, экологии и спорта. При этом следует учесть, что реализация любой стратегической инициативы должна базироваться на соответствующем образовательном фундаменте. В отношении концепции «Нация–армия» Президент РА С. Саргсян отметил, что

для установления тесного взаимодействия между Вооруженными силами и обществом большое значение имеют не только подготовка высокообразованных офицерских кадров в военно-учебных заведениях, но и применение инновационных подходов, обеспечивающих военную подготовку в других общеобразовательных и профессиональных учебных заведениях.

Одной из основных тенденций развития системы образования в ведущих странах мира является замена пассивного обучения активным, при котором основное внимание уделяется развитию у обучаемых практических навыков применения своих знаний и умения быстро ориентироваться в сложной обстановке и принимать правильные решения.

В этих целях в учебный процесс все шире включаются имитационные ролевые игры, значение которых возросло не только в педагогике, но и в образовании взрослых (андрагогике) и даже в стратегических исследованиях.

Включение военных игр в Армении в учебные программы военно-образовательных учреждений и в рамках НВП в школах, а также сценарного моделирования для изучения различных оборонно-политических, чисто военных и иных управленческих вопросов в вузах, обеспечивающих образование в сфере национальной безопасности, позволит значительно повысить объемы остаточных знаний у студентов и слушателей как в сфере высшего, так и дополнительного и послевузовского образования, а также умения и навыков по применению этих знаний, повысить уровень взаимопонимания и взаимного доверия армии и общества, что неизбежно послужит интересам укрепления взаимной связи между армией и обществом в соответствии с базовой идеей концепции «Нация–армия».

ON THE INNOVATIVE GUIDELINES OF REFORMING THE MILITARY EDUCATION IN THE CONTEXT OF THE “NATION–ARMY” CONCEPT’S IMPLEMENTATION

M. S. AVETISYAN, PhD in Political Science, Head, Strategic Gaming and Modeling Group, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

The Minister of Defense of the RA V. Sargsyan stressed that the “Nation–Army” concept envisages full integration of the army with the society and, consequently, its active involvement in the processes occurring in the fields of economy, culture, education and science, environment and sport. At the same time, it should be noted that the implementation of any strategic initiative should be based on relevant educational foundations. Regarding the “Nation–Army” concept, the President of the RA S. Sargsyan noted that for the establishment of close cooperation between the Armed Forces and the society not only is the

training of highly educated officers in military schools, but also the use of innovative approaches of military training in other general education institutions and professional schools very important.

One of the main trends in the development of the world leading countries' education systems is the replacement of passive learning with active one that focuses on the development of students' practical skills in applying their knowledge and the ability to quickly navigate in difficult situations and make right decisions.

To this end, simulation role-playing games are increasingly included in the educational process, the value of which has raised not only in pedagogy, but also in andragogy and even in strategic studies.

The inclusion of military wargames in the curricula of military education institutions and primary schools (within the framework of basic military training) in Armenia, as well as scenario modeling for studying various defense political, purely military and other managerial issues in the universities, providing education in the field of national security, will significantly increase the volume of students' residual knowledge in the spheres of both higher and executive and postgraduate education, as well as the ability and skills in applying that knowledge; will raise the level of mutual understanding and trust between the army and the society, which will inevitably serve the interests of strengthening the interconnectedness between them in accordance with the basic idea of the "Nation – Army" concept.

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ ՍՊԱՆԵՐԻ ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ

Վ. Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, մանկավարժության մագիստրոս, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմավարական պաշտպանական-անվտանգային կրթության ազգային ինստիտուտի Գիտաուսումնական կենտրոնի որակի ապահովման մասնագետ

«Ազգ–բանակ» համակարգը առնչվում է հայոց պետության և հայ հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներին[1]: Նման համընդգրկուն գաղափարների ներդրման դեպքում անհրաժեշտ է լինում համակարգված վերափոխումներ իրագործել բոլոր բնագավառներում և առաջին հերթին՝ կրթության: Դրա հետ մեկտեղ, «ռազմական արվեստը նոր մակարդակի պահանջներ է ներկայացնում և՛ զինվորներին, և՛ սպաներին, իսկ մասնագիտական ռազմական կրթությունը ժամանակակից մարտի արագ փոփոխվող պայմաններում տարբեր առաջադրանքներ կատարելու ունակ որակյալ կադրեր պատրաստելու կարևոր եղանակներից է»[2]:

ՀՀ «Ռազմական դոկտրինում» որպես պաշտպանության համակարգի բարեփոխումների և հետագա զարգացման կարևոր գործոն նշվում են ռազմական կրթության և սպայական կադրերի պատրաստման համակարգերի կատարելագործումը և զարգացումը՝ միջազգային առաջավոր փորձի օգտագործմամբ[3]: «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգում» ռազմական կրթության համակարգի զարգացման նոր նպատակների ու խնդիրների առաջադրման հետ մեկտեղ սահմանվել են ռազմական կրթության փուլերի շարունակականության և ներդաշնակության ապահովման առաջնահերթությունները[4], ինչը նշանակում է ՀՀ ԶՈՒ-ում սպայական կադրերի բազմաստիճան պատրաստման միասնական համակարգի ներդրում:

---

[1] Տես ««Ազգ–բանակ» համակարգի կայացման ռազմավարական ուղենիշները. Հայոց աշխարհազորից դեպի ՀՀ ժողովրդավարական համազգային պաշտպանություն»: «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] *Հ. Ս. Քոթանջյան,* Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից: «Աշխատանքային տետրեր», 2012, հմ. 4:

[3] Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «ԱՏ», 2007, հմ. 4, էջ 54:

[4] Տես «ՀՀ ռազմական կրթության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 7-ի հմ. 9 արձանագրային որոշման հավելված հմ. 1 (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf):

Այս տեսակետից հատկանշական է ՌԴ, ԱՄՆ-ի, ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի գործընկերների հետ ՀՀ ՊՆ ձեռնարկած բազմագործոն և ընդգրկուն համագործակցությունը[5]: Տվյալ ձեռնարկումների շարքում իր կարևորությամբ առանձնանում են անվտանգության ոլորտում աշխարհի առաջատար գիտակրթական հաստատություններից մեկի՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի գիտական ու մեթոդաբանական խորհրդատվությամբ որպես ազգային անվտանգության ապահովման «խելացի ուժի» մտավոր ռազմավարական գործիքներ նախագծված և հիմնադրված ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ն ու նրա փուլային կերպափոխմամբ ստեղծված ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ը[6]:

ՀՀ անվտանգային-պաշտպանական ոլորտում կրթական համակարգի կատարելագործման տեսակետից առավել ուսանելի պետք է համարել աշխարհի առաջավար պետություններից մեկի՝ ԱՄՆ-ի[7] սպաների ռազմամասնագիտական կրթության և սպայական կադրերի պատրաստման կազմակերպվածքը:

Ներկայումս ԱՄՆ-ի ԶՈՒ-ի սպայական կադրերի բազմաստիճան պատրաստումը կատարվում է հինգ մակարդակով: Սպաներ պատրաստող հիմնական հաստատությունները ռազմական ուսումնարաններն են, ինչպես նաև տարբեր զորատեսակների դպրոցները և հրամանատարաշտաբային քոլեջները, կենտրոնները, որոնք իրենց կառուցվածքով ու մակարդակով բավարարում են «ինստիտուտ», «ակադեմիա», «համալսարան» հաստատություններին ներկայացվող արդիական միջազգային պահանջներին[8]:

Առաջին մակարդակը ուսուցումն է Վեստ-Փոյնտի ռազմական ակադեմիայում[9]: Ակադեմիան մրցութային ընդունելության կարգով համալրվում է այն 17–22 տարեկան քաղաքացիական երիտասարդներով, պահեստազորի և բանակում ծառայող շարքային ու սերժանտական կազմի ներկայացուցիչներով, որոնք հաջողությամբ հանձնել են քննություններ անգլերեն, մաթեմատիկա և հասարակագիտական առարկաներից: Շրջանավարտներին շնորհվում է առաջին զինվորական կոչում՝ (լեյտենանտ՝ *second lieutenant)* և բա-

[5] Տես *Ժ. Հ. Ամիրխանյան,* Միջազգային համագործակցության դերը ՀՀ ռազմակրթական և ԶՈՒ-ի անձնակազմի կառավարման համակարգերի բարեփոխումներում: «ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները (փորձագիտական-ուսումնական ձեռնարկ)», մաս 1: Ե., 2013, էջ 396–402:

[6] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* ԱՄՆ-ի և ՌԴ առաջատար ուղեղային կենտրոնների հետ համագործակցությամբ ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կերպափոխումը ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի: «ԱՏ», 2015, հմ. 3:

[7] Տես "Countries Ranked by Military Strength (2017)" (http://www.globalfirepower.com/countries-listing.asp):

[8] Տես "Personal-General, Commissioned Officer Professional Development and Career Management". Headquarters Department of the Army. Washington, 2010, PP. 24–33 (http://dopma-ropma.rand.org/pdf/DA-PAM-600-3.pdf):

[9] Տես "United States Military Academy. West Point" (http://www.westpoint.edu/SitePages/Home.aspx):

կալավրի աստիճան: Ուսուցման նպատակն է հետագա ծառայության համար սպաների իմացական հիմքերի ստեղծումը, մտավոր ու գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Այստեղ դասավանդվում են ընդհանուր և բուն մասնագիտական առարկաներ:

Ընդհանուր մասնագիտական առարկաների թվում են հումանիտար և անվտանգային բնագավառի դասընթացները, իսկ բուն մասնագիտական առարկաները, կախված մասնագիտությունից, հիմնականում ինժեներատեխնիկական և կիրառական գիտությունների ոլորտից են[10]: Սպաների պատրաստման կրթական ծրագիրն ուսուցանվում է երկու փուլով. առաջին փուլը երկամյա սկզբնական պատրաստումն է, որին հաջորդում է ուսումնական կենտրոնում կազմակերպվող չորսամյա կրթությունը: Կուրսանտներին առաջին տարում ուսուցանում են ինժեներական և զրահատանկային տեխնիկա, հրաձգահրետանային սպառազինություն և կապի միջոցներ: Նրանք ստորաբաժանումների կազմով անցնում են մարտավարություն: Երկրորդ տարվա վերջում կուրսանտները ցամաքային զորքերի տեղակայման վայրերում իրենց զորային ստաժավորմանը զուգահեռաբար, ըստ ցանկության, ձեռք են բերում ուղղաթիռի կառավարման հմտություններ կամ ստանում են պարաշյուտադեսանտային պատրաստություն:

Երկրորդ և *երրորդ մակարդակներում* սպաներն անցնում են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, ինչը նրանց հնարավորություն է տալիս ծառայելու մինչև կապիտանի զինվորական կոչում:

Չորրորդ մակարդակը 10-15 տարվա զինվորական ծառայություն անցած և մայորի կամ փոխգնդապետի կոչում ունեցող հրամանատարաշտաբային սպաների պատրաստումն է: Այստեղ ուշադրություն է դարձվում զորքերի օպերատիվ կառավարման կարողությունների զարգացման վրա: Դասընթացների տևողությունը առկա ուսուցման ձևով տասն ամիս է, իսկ հեռակա՝ երեք տարի:

Հինգերորդ մակարդակում նախատեսվում է հրամանատարաշտաբային մասնագիտությամբ ավագ և բարձրագույն սպաների կրթություն, որը կազմակերպվում է տվյալ ոլորտում աշխարհի առաջատար գիտակրթական հաստատությունում՝ Պաշտպանական ազգային համալսարանում: Այս ԲՈՌՀ-ի կազմում ընդգրկված են պաշտպանական-անվտանգային և ռազմական-ռազմավարական ոլորտների գերակա ուղղություններով հետազոտություններ կատարող և համապատասխան կրթություն տվող մեկ տասնյակից ավելի քոլեջներ և կենտրոններ[11]: Առկա կրթության ձևով 42-շաբաթյա և հեռակա

[10] Տես "Academic Program Class of 2017. Curriculum and Course Descriptions". Office of The Dean. United States Military Academy. West Point. New York, 2017 (http://www.westpoint.edu/curriculum/siteassets/sitepages/course%20catalog/redbook_gy2017_20150501.pdf):

[11] Տես "National Defense University" պաշտոնական կայքը (http://www.ndu.edu/); "Colleges & Centers" (http://www.ndu.edu/Academics/Colleges-Centers/):

2-ամյա կրթական ծրագրերով սովորող սպաները ուսումնասիրում են ներքին և արտաքին քաղաքականության, ռազմական ռազմավարական պլանավորման, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ուժերի ռազմավարության և այլ հարցեր:

ԱՄՆ-ի ՊԱՀ-ի քոլեջներն ու կենտրոններն ապահովում են օպերատիվ-ռազմավարական մակարդակի ռազմաքաղաքագիտական կրթություն՝ ազգային և միջազգային անվտանգության, հակահաբեկչության և անվտանգային այլ ուղղություններով պատրաստելով և վերապատրաստելով ԱՄՆ-ի ԶՈՒ-ի ավագ ու բարձրագույն սպայական կազմի և ՊՆ կենտրոնական ապարատում աշխատող քաղաքացիական ծառայողների ներկայացուցիչների, ինչպես նաև միջգերատեսչական ձևաչափով՝ բարձրաստիճան քաղաքացիական պաշտոնյաների: Հարկ է նշել, որ դասախոսական կազմում ընդգրկված են ՊԱՀ-ի հետազոտողները, ինչի շնորհիվ ապահովվում է արդի գիտակրթական պահանջներին համապատասխան դասավանդում: Այստեղ ուսանում, գիտական ստաժավորում են անցնում նաև արտասահմանյան բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք, լինելով իրենց պետությունների պաշտպանական-անվտանգային համակարգի որևէ տիրույթի համար պատասխանատու, հանդես են գալիս նաև որպես առանձին հարցերով փորձագետ-դասախոս:

ԱՄՆ-ի ՊԱՀ-ի քոլեջների շարքում իր ուրույն դերն ունի Տեղեկատվության և կիբեռտարածության քոլեջը, որը, լինելով տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռանվտանգության բնագավառներում ԱՄՆ-ի պետական գերազանցության կենտրոն, պատրաստում է կիբեռտարածությունում տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների արդյունավետ կառավարման և անվտանգության ապահովման գծով սպաներ և քաղաքացիական ծառայողներ:

ԱՄՆ-ի պաշտպանական-անվտանգային կրթության կարևոր ուղղություններից է խաղաղ և պատերազմական ժամանակ բյուջեի նախագծման, պլանավորման և ծրագրման, ինչպես նաև ռազմաարդյունաբերական արտադրության կազմակերպման վերաբերյալ գիտելիքների փոխանցումը և կարողությունների ձևավորումը, որոնք կատարվում են Դ. էյզենհաուերի անվան ազգային անվտանգության և ռեսուրսների ռազմավարության դպրոցում կազմակերպվող 10-ամսյա դասընթացներում: Այստեղ կրթական ծրագրերը ներառում են այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք են ԱՄՆ-ի և այլ պետությունների պետական կառավարման, ռազմական դրության ժամանակ տնտեսության կերպափոխման, ինչպես նաև մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման խնդիրները[12]:

[12] Դ. էյզենհաուերի անվան ազգային անվտանգության և ռեսուրսների ռազմավարության դպրոցի կրթական ծրագրերի համառոտ նկարագրությունը տես “Curriculum” (http://es.ndu.edu/About/Curriulum.aspx):

ԱՄՆ-ի ռազմական կրթության համակարգում հատուկ տեղ ունի նաև պահեստազորի սպաների պատրաստումը: Դրան մասնակցելու համար քաղաքացիական բուհերի ուսանողները կամավոր կերպով ներկայացնում են հայտեր, որոնց հիման վրա նրանց քաղաքացիական մասնագիտացմանը զուգահեռաբար կազմակերպվում է երկփուլանի ռազմական կրթություն: Առաջին փուլում նախատեսվում է երկու տարվա ներածական ռազմական կրթություն, իսկ երկրորդ փուլում՝ արդեն երկամյա վերապատրաստում: Դասընթացները հաջողությամբ ավարտածներին շնորհվում է «պահեստազորի երկրորդ լեյտենանտի» զինվորական կոչում[13]:

Առաջավոր փորձի օգտագործման տեսանկյունից՝ «Ազգ–բանակ» հայեցակարգի կենսագործման պայմաններում, ՀՀ ռազմական կրթության առաջնահերթությունների և կարիքների հաշվառմամբ մեզ համար առավել օգտակար են թվում ԱՄՆ-ի սպաների պատրաստման համակարգի առաջին և հինգերորդ մակարդակները:

ԱՄՆ-ի ռազմական կրթության համակարգի վերլուծությունը վկայում է, որ սպաների ռազմամասնագիտական կրթության որակի ապահովման կարևոր երաշխիքներն են նրանց ամբողջ պատրաստման համակարգվածությունը, ըստ շնորհվող որակավորումների և կրթական մակարդակների չափանիշային հստակությունն ու շաղկապվածությունը, ինչպես նաև այդ համակարգի որակի նկատմամբ սահմանված խիստ հսկողությունը:

ԱՄՆ-ի ռազմակրթական ծրագրերի առանցքային առանձնահատկությունը դրանց հումանիտար բնույթն է, ուստի և սպաների պատրաստման գործում էական դեր է վերապահված սոցիալ-հումանիտար կրթաբլոկին, որին բաժին է հասնում ուսումնական ժամաքանակի կեսից ավելին: Հայտնի ամերիկյան մանկավարժ-փիլիսոփա Ջոն Դյուիի կարծիքով՝ կրթական ծրագրերում պետք է հնարավորինս կարևոր տեղ հատկացվի հումանիտար-մարդասիրական բաղադրիչին, քանի որ այն ուսումնառուների մեջ զարգացնում է կայուն արժեքակողմնորոշումային հատկություններ, ձևավորում է քաղաքացիական պատասխանատվություն և նպաստում, որ նրանք մասնակցեն հասարակական բարեկեցության ապահովման ընդհանուր գործին[14]:

Մինչդեռ ՀՀ ռազմակրթական ծրագրերում համեմատականորեն մեծ տեղ է հատկացված տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական, ռազմամասնագիտական (որոնք ևս հիմնականում տեխնիկական, ֆիզիկամաթեմատիկական բնույթի են) առարկաներին: Անկասկած, այս առարկաների դասավանդումը շատ կարևոր է, առավել ևս, որ ՀՀ ԲՈՒՀ-ներում պատրաստվող

[13] Տես *А. А. Матвеенко.* Система высшего образования в США. “ART of WAR” (http://artofwar.ru/k/kamenew_anatolij_iwanowich/sshasistemawoennogoobrazowanijanachalo21weka.shtml); «Army ROTC teaches you to lead» (http://www.goarmy.com/rotc.html):

[14] Տես *John Dewey.* Democracy and Education: An Introduction to the Philosophy of Education. New York, 1916, PP. 143, 173–175 (https://s3.amazonaws.com/arena-attachments/190319/2a5836b93124f200790476e08ecc4232.pdf):

սպայական կադրերի մեծ մասին շնորհվում է «Ճարտարագիտության բակալավրի» քաղաքացիական որակավորում: Այնուամենայնիվ, բարձրագույն կրթության զարգացման արդի միտումներն ստիպում են լուրջ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում հումանիտար և մյուս կրթաբլոկների համամասնության պահպանմանը: Առանց մասնագիտության առանձնահատկությունները խախտելու պետք է հիմք ընդունել պետական կրթական չափորոշիչներով և որակավորումների ազգային շրջանակով «բակալավրի» համար նախատեսված չափանիշներն ու պահանջները: Մասնավորապես՝ ՀՀ ԲՈՒՀ-ների կուրսանտների վերլուծական-տրամաբանական, հաղորդակցային, միջմշակութային կոմպետենցիաների* մեծացումը ապագայում արդյունավետ կերպով կնպաստի սպաների վերլուծական, տրամաբանական, քննադատական, համակարգային, ստեղծագործական մտածողության զարգացմանը: Ռազմակրթական ծրագրերում սոցիալ-հումանիտար կրթաբլոկի ուժեղացումը կարող է միջառարկայական կապի ապահովման շնորհիվ կատարվել արդեն դասավանդվող առարկաների թեմաների վերանայմամբ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, նոր, այդ թվում՝ կամընտրական (ֆակուլտատիվ), դասընթացների ներմուծմամբ, ինչը ուսումնական պլանում կարող է հաջողությամբ ձեռնարկվել ի հաշիվ մնացած կրթաբլոկների բովանդակային վերանայման և հաշվեկշռման:

Մեզանում այդ խնդիրն ունի կարևոր նշանակություն, քանի որ զորքերում սպան իրականացնում է իր ենթակա ստորաբաժանման հետ անընդհատ ուսուցման գործառույթ, ինչի համար նա պետք է ունենա հոգեբանամանկավարժական գիտելիքների պաշար և դրանք կիրառելու հմտություն: Նման հմտություններով և որակներով սպայական կադրերի պատրաստումն ստեղծում է հուսալի նախադրյալ, որ նրանց մի մասը, զորքերում ծառայելու համար նախատեսված ժամկետից հետո, կարող է արդեն որպես ԲՈՒՀ-ների զինվորական դասախոս հաջողությամբ ներգրավվել դասավանդման գործում: Ռազմական կրթության ոլորտում մանկավարժական վարպետութ-

* Կոմպետենցիա՝ ««Կոմպետենտություն» - (լատ. պատշաճ, ընդունակ), իրազեկություն, ձեռնահասություն, …: 1. Որոշակի սոցիալ-մասնագիտական կարգավիճակ ունեցող անձանց գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձի համապատասխանության չափն է նրանց կողմից կատարվող աշխատանքի և հիմնահարցերի լուծման բարդության իրական մակարդակին: 2. Կառավարման մարմնի, պատասխանատու անձի իրավասության ոլորտն է, հարցերի շրջանակը, որոնց գծով նրանք օժտված են որոշումներ ընդունելու իրավասությամբ» (*Հ. Հ. Պետրոսյան,* Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսումնական ձեռնարկ: Ե., 2012, էջ 550): Ժամանակակից կրթական ծրագրերում տարբերում են բուն մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաները, որոնք նախատեսում են շրջանավարտի նախաձեռնողականությունը, համագործակցությունը, խմբում աշխատելու և հաղորդակցվելու ունակությունը, սովորելու, գնահատելու կարողությունը, տրամաբանական, քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողությունը, տեղեկույթ ընտրելու և օգտագործելու կարողությունը և այլն (տես *Ա. Ս. Բուդաղյան, Ս. Բ. Կարաբեկյան,* Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց: Ե., 2010, էջ 7):

յամբ, բարոյահոգեբանական ու դաստիարակչական բարձր որակներով օժտված, դասավանդման ժամանակակից մեթոդիկային և կրթության տեխնոլոգիաներին տիրապետող զինվորական դասախոսների ներգրավումը հույժ կարևոր խնդիր է: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Ազգ–բանակ» համակարգը ենթադրում է հասարակության համախմբում որոշակի արժեքային առանցքի շուրջ, իսկ դրա ապահովումը պայմանավորված է նաև այնպիսի սոցիալ-հասարակագիտական առարկաների դասավանդմամբ, ինչպիսիք են պատմությունը, քաղաքագիտությունը (այդ թվում՝ անվտանգային դասընթացները), սոցիոլոգիան, հոգեբանությունը, մանկավարժությունը, փիլիսոփայությունը, մշակութաբանությունը և այլն:

ԱՄՆ-ի կրթության բովանդակության և սպաների պատրաստման որակի ապահովման կարևոր մեխանիզմներից է շրջանավարտ սպաներից հետադարձ կապով ստացվող կարծիքների վերլուծությունը և ըստ այդմ՝ կրթական ծրագրերի փուլաշրջանային վերանայումը: ՀՀ ռազմակրթական ծրագրերի նման վերանայումների ժամանակ պետք է հաշվի առնել այս օրինակելի փորձը ևս և առաջնորդվել ոչ միայն պատվիրատուի՝ ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ համապատասխան վարչության նկատառումներով, այլև զորամասերում ծառայող նախկին շրջանավարտ սպաների կարծիքներով:

Ամերիկյան ռազմակրթական համակարգի դիդակտիկական ապահովման հենքը դասախոս–ուսումնառու մանկավարժական համագործակցության սկզբունքի կիրառումն է: Ըստ այդմ՝ տվյալ հաստատության ուսանողության համար դասավանդողը առաջին հերթին ավագ ընկեր է, որն ունի գիտելիքների գերազանց պաշար, համակողմանիորեն զարգացած կարողություններ, տիրապետում է հոգեբանամանկավարժական և մասնագիտական անհրաժեշտ հմտություններին: ՀՀ ԲՈՌՒՀ-ներում դասավանդող դասախոսական կազմի հիմնական մասը զինվորականներ են, որոնք իրենց ռազմամասնագիտական պատրաստականության, զորքերում ծառայելու փորձի և հմտությունների տեսակետից անփոխարինելի են, բայց զգացվում է նրանց մանկավարժամեթոդական պատրաստության և արդի կրթական տեխնոլոգիաների իմացության որոշակի պակաս, ուստի այդ ուղղությամբ անհրաժեշտ է տանել նպատակամղված արդյունավետ աշխատանք:

ԱՄՆ-ում ռազմակրթական ծրագրերի հիմնական պահանջն սպայի օժտումն է կառավարչաառաջավարական հմտություններով, որոնք էլ հենց նրա պաշտոնեական առաջխաղացման նախապայմանն են: Այդ են վկայում նաև ամերիկյան հեղինակները, որոնք նշում են, թե տվյալ որակները նույնքան կարևոր են, որքան գերազանց մտավոր կարողությունների զարգացումը և անընդհատ կատարելագործումը[15]: Ուստի նպատակահարմար է ՀՀ ԲՈՌՒՀ-

[15] Տես, օրինակ, *Joan Johnson-Freese.* Educating America's Military. London and New York, 2013; *Bernard D. Rostker.* Reforming the American Military Officer Personnel System. The RAND Corporation, 2015 (http://www.rand.org/content/dam/rand/pubs/testimonies/CT400/CT446/RAND_CT446.pdf):

ների ռազմակրթական ծրագրերում ներառել այնպիսի դասընթացներ ու դասավանդման և ուսուցման մեթոդներ, որոնք բխում են ՀՀ ԶՈՒ-ի զարգացման խնդիրներից ու նպատակներից և ընդհանուր կրթական բարեփոխումների տրամաբանությունից: Հետևաբար, կարծում ենք, անհրաժեշտ է ԲՈՈՒՀ-ների կուրսանտների կառավարչաառաջավարական հմտությունները ապահովելու, կրթական ծրագրերի որակը բարելավելու, կրթական հնարավորություններն ընդլայնելու, ակադեմիական ազատություններն ապահովելու և ուսման շարժառիթավորումն ակտիվացնելու նպատակով դասավանդման համար հրավիրել նաև քաղաքացիական պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների՝ կուրսանտներին հնարավորություն տալով ըստ իրենց կրթական կարիքների ու պահանջմունքների ունկնդրել բարձր որակավորում ունեցող դասախոսների:

Վերը նշված սկզբունքների, ինչպես նաև ՀՀ-ի համար ռազմական ռազմավարական-քաղաքագիտական կրթության դերի և կարևորության հաշվառմամբ՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմավարական պաշտպանական-անվտանգային կրթության ազգային ինստիտուտը, առաջնորդվելով ռազմական կրթության շարունակականությունը և սպայական կրթության փուլաշրջանն ամբողջությամբ ապահովելու, պետության ռազմաքաղաքական ղեկավարությանը ռազմավարական կառավարման ոլորտի գիտելիքներով և ղեկավարման վարպետությամբ օժտելու նպատակով, նշված քոլեջների հետ սերտ համագործակցությամբ մշակել է «Ռազմավարական անվտանգություն» մագիստրոսական ծրագիրը[16], որի մեկնարկային փուլում նախատեսվում է իրականացնել օպերատիվ-ռազմավարական մակարդակի գերատեսչական և միջգերատեսչական վերապատրաստման ծրագրեր: Ընդսմին ՀՀ ՊՆ ԱՈՀԻ-ն ՊԱՀՀ-ի կերպափոխելու նախապատրաստական փուլում որպես գիտաուսումնական գործընթացի կազմակերպման հիմք կատարվել են հետևյալ մշակումները.

1. ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ օպերատիվ և ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչությունների հետ համագործակցությամբ պաշտպանության ռազմավարության վերանայման շրջանակում կատարվել են պաշտպանական բարեփոխումների ոլորտային հետազոտություններ, որոնց արդյունքները հրապարակվել են «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 20 համարներում և ամփոփվել են փորձագիտական ուսումնական ձեռնարկում[17],
2. ԱՈՀԻ-ի կատարած տարածաշրջանային ու ֆունկցիոնալ հետազոտությունները հրապարակվել են ռազմավարական հետազոտությունների «Աշխատանքային տետրեր» հանդեսում, իսկ դրանց մի մասը գաղտ-

[16] Տես *Վ. Հ. Մարգարյան, Ա. Վ. Աթանեսյան,* Ռազմավարական պաշտպանական-անվտանգային կրթության ազգային ինստիտուտը՝ որպես ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտակրթական բաղադրիչ: «ԱՏ», 2015, հմ. 3:

[17] Տես «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները», փորձագիտական-ուսումնական ձեռնարկ: Մաս 1-2, Ե., 2013:

նազերծվել և ամփոփվել է «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ» մատենաշարում[18]:

Հաշվի առնելով աշխարհում թվային տեխնոլոգիաների ուղղության հարաճուն զարգացումը և ժամանակակից պաշտպանական-անվտանգային համակարգերում դրանց աճող դերն ու նշանակությունը՝ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնը (ԱԱՔՏՀՏ կենտրոն) տվյալ ոլորտում մշակել և ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեղեկատվության և կիբեռտարածության քոլեջի հետ սերտ համագործակցությամբ փորձաքննել է մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող նախագծեր: Այս տեսանկյունից ՀՀ ռազմակրթական համակարգում ռազմավարական առաջավարների պատրաստման համար կարևոր նշանակություն կարող է ունենալ ԱԱՔՏՀՏ կենտրոնում մշակվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագրի ներդրումը[19]:

Պատերազմի էկոնոմիկայի կարևորությունը մեզանում ևս չափազանց պահանջված և արդիական է: Այդ գերակա ոլորտը զարգացնելու համար անհրաժեշտ է այն դարձնել նաև ռազմական կրթության կարևոր ուղղություն և ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում մշակվող գիտահետազոտական հենքի վրա նախատեսել դրա ներառումը ռազմավարական ռազմակրթական ծրագրերում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք որպես ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխումների կենսագործման և «Ազգ–բանակ» հայեցակարգի հաջող ներդրման գլխավոր երաշխիքներից մեկը դիտել առանցքային դրույթների տեղայնացումը ՀՀ ռազմական կրթության համակարգում: Կարծում ենք՝ հենց ռազմակրթական համակարգը պետք է լինի «Ազգ–բանակ» գաղափարի կենսունակության գրավականը և ԶՈՒ-ի արդիականացման լոկոմոտիվը: Ուստի ԲՈՈՒՀ-ների կուրսանտների մեջ պետք է սերմանել բարեփոխումների ամբողջ փիլիսոփայությունը, որպեսզի նրանք, դառնալով պաշտպանական-անվտանգային համակարգի առանցքը, իրենց վրա վերցնեն վերափոխումների հաջող կենսագործման համար պատասխանատվությունը:

Ըստ այդմ առաջարկում ենք:

1. Վերակառուցել ռազմակրթական ծրագրերը ժամանակակից «կոմպետենցիոն ընթացքի»* պահանջներին և չափանիշներին համապատասխան,

[18] Տես «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, գիտափորձագիտական մատենաշար», հատոր 1-4: Ե., 2014:

[19] Տես *Բ. Պ. Պողոսյան, Մ. Ս. Ավետիսյան, Ա. Հ. Գրիգորյան,* Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը՝ որպես ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հետազոտական բաղադրիչ: «ԱՏ», 2015, հմ. 3:

* Վերջին տարիներին բարձրագույն կրթության ոլորտում որպես ծրագրային քաղաքականություն անցում է կատարվել «կոմպետենցիոն ընթացքին», որը «կոմպետեն-

ինչը նշանակում է ավելի նպատակային կրթություն՝ միտված կուրսանտի համակողմանի զարգացմանն ըստ սահմանված չափանիշային բաղադրիչների: Ընդսմին «Ազգ–բանակ» համակարգի յուրահատկությունների հաշվառմամբ անհրաժեշտ է ռազմակրթական ծրագրերը վերանայել ընդհանուր ու մասնագիտական կրթաբլոկների համամասնությունների պահպանման և շնորհվող որակավորումներին ու մասնագիտությունների բնութագրերին դրանց համապատասխանության տեսանկյունից: Դա հնարավորություն կտա ձևավորելու ինչպես ներկայիս ռազմական սպառնալիքներին դիմակայելու պատրաստ սպայի, այնպես էլ առաջավարական ունակություններով օժտված դատողական քաղաքացու և, միևնույն ժամանակ, ապագայի մարտահրավերները կանխատեսող սպայի՝ *«ապագայի սպայի»*: Ուստի ռազմակրթական ծրագրերը պետք է լինեն ճկուն և ապահովեն սպաների կոմպետենցիաների այնպիսի համալիր շրջանակ, որ նրանք ունակ լինեն անմիջապես հարմարվելու սրընթաց փոփոխություններին, հեշտությամբ կողմնորոշվելու դինամիկ իրադրություններում, անորոշ իրավիճակներում խորապես ըմբռնելու վերադասի մտադրությունները: Պետք է սպային պատրաստել որպես և՛ իրականացնող, և՛ հետազոտող ու առաջարկություններով հանդես եկող ռազմագետի: Փաստենք, որ սույն պահանջը լիովին բխում է ՀՀ ԶՈՒ-ում աստիճանաբար ներդրվող «Առաջադրանքային կառավարում»[20] *(Auftragstaktik, Mission command)* հայեցակարգի տրամաբանությունից: Դա կհանգեցնի մեծ դատողականությամբ օժտված զինվորական ընտրախավի ձևավորմանը, մի ընտրախավի, որն իրավամբ կստանձնի ազգի առաջավարությունը, և որի հրամայականը փաստորեն ձևակերպել են ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը և Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը[21]:

2. Ըստ վերը նշված նպատակների և վերջնական արդյունքների՝ ռազմական կրթության ոլորտում կա նոր տեսակի ուսումնական պարապմունքների, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների (օրինակ՝ «Գործնական և դերային խաղ», «Ռազմավարական խաղ», «Պրոբլեմային հանձնարարություն», «Ուղղորդված բանավեճ, քննարկում», «Աշխատանք խմբերով», «Դեպքի ուսումնասիրություն» և այլն) ներդրման անհրաժեշտություն, ինչի շնորհիվ կապահովվի ուսանողակենտրոն կրթական միջավայր:

ցիայի» և «կոմպետենտության» ամբողջությունն է (տես *И. П. Мединцева.* Компетентностный подход в образовании. «Педагогическое мастерство (II)». Материалы междунар. заоч. науч. конф. (г. Москва, декабрь 2012 г.). М., 2012, сс. 215–217 (https://moluch.ru/conf/ped/archive/65/3148/)):

[20] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 290:

[21] Տես «Նախագահը մասնակցել է ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի և ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական միջոցառմանը», 02.08.2015 (http://www.president.am/hy/press-release/item/2015/08/02/President-Serzh-Sargsyan-graduation-of-military-educational-institutions-alumni):

3. Վերը նշված վերափոխումների իրագործման համար նպատակահարմար է ՀՀ ՊՆ-ում ստեղծել Ռազմական կրթության որակի կառավարման կենտրոն, որը ռազմական կրթության մասնագետ-փորձագետների ներգրավմամբ կհամակարգի և կվերահսկի ռազմակրթական բարեփոխումները, կապահովի համակարգում որակի մշակույթի արմատավորումը, կկատարի համալիր ոլորտային հետազոտություններ, շահառուների հարցումներ, կըմշակի համակարգի արդիականացման վերաբերյալ առաջարկություններ, կաջակցի ՀՀ ՊՆ ԲՈՈՒՀ-ներում գործող որակի ապահովման ստորաբաժանումներին, կհամակարգի ԲՈՈՒՀ-ների լիցենզավորման և հավատարմագրման գործընթացները, կմշակի կրթության բնագավառի քաղաքականություն, ուղեցույց փաստաթղթեր, ընթացակարգեր, մասնավորապես՝

- ռազմական կրթության զարգացման ռազմավարական ծրագիր,
- ռազմական կրթության որակի կառավարման հայեցակարգ, և այլն:

Կարևոր է նաև ներպետական և միջազգային գործընկերների հետ Կենտրոնի համակողմանի արդյունավետ համագործակցությունը՝ միտված ՀՀ և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) ՊՆ ԲՈՈՒՀ-ների արագ և լիարժեք ինտեգրմանը:

ВОЗМОЖНЫЕ ПУТИ МОДЕРНИЗАЦИИ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ "НАЦИЯ–АРМИЯ" С УЧЕТОМ ПЕРЕДОВОГО ОПЫТА МНОГОСТУПЕНЧАТОЙ ПОДГОТОВКИ ОФИЦЕРОВ

В. В. МЕЛКОНЯН, магистр педагогики, специалист по обеспечению качества Научно-учебного центра Института национального стратегического оборонно-безопасностного образования НИУО МО РА

РЕЗЮМЕ

Внедрение системы «Нация–армия» затрагивает все сферы жизнедеятельности армянского государства и армянской общественности. При внедрении подобных идей глобального охвата возникает необходимость системного реформирования всех сфер и, в первую очередь, сферы образования. Причем данные реформы должны служить интересам не только успешного внедрения системы «Нация–армия», но и полной интеграции системы военного образования РА в единое европейское пространство высшего образования. В связи с этим становится насущным приведение национальных стандартов и критериев высшего образования в соответствие с лучшими мировыми образцами. В этом плане анализируется опыт организации многоступенчатой подготовки офицерских кадров и гражданских служащих оборонной сферы в США. На основе данного анализа разработан ряд предложений по модернизации системы образования РА.

POSSIBLE WAYS OF MODERNIZING THE MILITARY EDUCATION IN TERMS OF IMPLEMENTING THE "NATION–ARMY" SYSTEM IN VIEW OF THE ADVANCED EXPERIENCE OF THE OFFICERS' MULTISTAGE TRAINING

V. V. MELKONYAN, MA in Pedagogy, Quality Assurance Expert, Academic-Teaching Center, Institute for National Strategic Defense Security Education, NDRU, MOD, RA

SUMMARY

The introduction of the "Nation–Army" system refers to all the spheres of activity of the Armenian state and the Armenian public. When implementing such global-scale ideas, there emerges a need for the systemic reformation of all the spheres, and, first and foremost, the educational sphere. And the aforementioned reforms at that should serve not only the interests of the successful implementation of the "Nation–Army" system, but also the full integration of the RA military education into the common European higher education area. In connection with this, bringing the national standards and criteria of higher education in line with the world best examples becomes urgent. Comparably, the practice of organizing the officers' personnel and defense sphere civilian employees' multistage training in the US is analyzed. On the basis of the above analysis a number of recommendations on modernizing the educational system in the RA are made.

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐՐ

Կ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ, Հ. Ս. ՊԱՌԱՇՅԱՆ, լեյտենանտ, ՀՀ ՊՆ «Զինուժ ստուդիա» պետական հիմնարկի հեռուստալրագրող

«Ազգ–բանակը» մի սոցիալական համակարգ է, որտեղ «բանակը լիարժեքորեն ինտեգրված է տնտեսությանը» և ոչ միայն տնտեսության համար բեռ չէ, այլև «տնտեսությունն աճում և ամրապնդվում է իր բանակի պատվերներով, ներդրումներով»[1]: Այդ համակարգում «գործարարը բանակին ծառայություն մատուցելը համարում է պատիվ և պատասխանատվություն», շահույթի հետ մեկտեղ որպես գերակա նպատակ են դիտվում զինծառայողի առողջությունը և պետության հզորացումը[2]:

Ուստի հնարավոր է, որ «Ազգ–բանակ» համակարգում աճեն պետության ռազմական ծախսերը: Տնտեսագիտությունը միանշանակ պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչպես է նման աճումն ազդում պետության տնտեսական զարգացման վրա:

Այսպես. տնտեսագիտության նոր դասական մոտեցման համաձայն՝ պետությունը դիտվում է որպես բանականորեն գործող անձ, որը փորձում է օպտիմալ կերպով հավասարակշռել ծախսերն ու անվտանգային շահերը՝ հետապնդելով հստակ կերպով սահմանված ազգային նպատակ (որպես կանոն՝ սոցիալական բարեկեցությունը): Այս մոտեցման հետևորդները ռազմական ծախսերը դիտում են որպես արտադրության վրա ազդող կարևոր գործոն, որը հանգեցնում է դրական արդյունքի:

Քեյնսականության հետևորդների կարծիքով՝ ռազմական ծախսերը տնտեսության կարգավորման մի գործիք են, որը կարող է նպաստել արտադրական հզորությունների լիարժեք օգտագործմանը, եկամուտների մեծացմանը, ներդրումների ավելացմանը և, որպես արդյունք՝ տնտեսական աճին:

---

[1] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը ՀՀ Պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում» (29.10.2016): «ՀԲ», 2016, հմ. 4:

[2] Տես նույն տեղում:

Ծայրահեղ ազատական հաստատութենական մոտեցման համաձայն՝ ռազմական ծախսերի աճումը բացասաբար է ազդում ժողովրդական տնտեսության արդյունավետության վրա և նպաստում է ազդեցիկ շահագրգիռ խմբերի առաջացմանը: Այս խմբերը ճնշում են գործադրում պետական ապարատի վրա՝ ստիպելով նրան ավելացնել ռազմական ծախսերը նույնիսկ այն դեպքում, երբ անվտանգության համար ռեալ սպառնալիք չկա:

Մարքսիստական մոտեցման հետևորդները կարծում են, որ տնտեսության համար ռազմական ծախսերը կարող են խաղալ ինչպես դրական, այնպես էլ բացասական դեր: Մասնավորապես՝ ռազմական ծախսերը բերում են իրացման ճգնաժամների հաղթահարմանը՝ կլանելով ավելցուկային արտադրանքն առանց աշխատավարձերի բարձրացման և, հետևաբար, պահպանելով եկամտաբերությունը: Ոչ մի ուրիշ պետական ծախս չի կարող խաղալ նման դեր: Այս մոտեցմամբ հետազոտված են հիմնականում զարգացած պետությունների տնտեսությունները[3]:

Այսպիսով՝ խնդրի ընդհանուր և համապիտանի լուծում գոյություն չունի: Պարզապես ռազմական ծախսերի ավելացումը կարող է հնարավորություն տալ ապահովելու անվտանգություն, նպաստելու օտարերկրյա ներդրումների ավելացմանը, արտաքին առևտրի զարգացմանը, ներդրումների ծավալների մեծացմանը, աշխատանքային կարգապահության ապահովմանը, ներքին հակամարտությունների հաղթահարմանը, քաղաքացիական ոլորտի համար որակավոր կադրերի պատրաստմանը, գիտության զարգացմանը[4]:

Տնտեսական աճման վրա ռազմական ծախսերի մեծացման ազդեցությունը վերլուծելու համար պետք է քննության առնել դրանց ներգործությունը նյութական ռեսուրսների կառավարման, արտադրության կազմակերպման, հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքի և արտաքին հարաբերությունների վրա[5]: Սույն հոդվածում քննության կառնենք միայն նյութական ռեսուրսների կառավարման խնդիրները:

Նյութական ռեսուրսների կառավարումը հասարակական արտադրանքի նյութական հոսքերի՝ ըստ տեսականու, որակի, քանակի, ժամկետների և տեղի փոխհամաձայնեցմանը նպատակամիտված գործունեություն է[6]: Նյութական ռեսուրսների կառավարման (նյութատեխնիկական ապահովման) խնդիրներն ուսումնասիրում է նյութական ապահովման համակարգի տեսությունը, որը տարածության ու ժամանակի մեջ նյութական, տեղեկութային, ֆինանսական և ծառայությունների հոսքերի ընթացքը սկզբնաղբյուրից (ար-

[3] Բերված տնտեսագիտական ուղղությունների բնութագրումների մասին հանգամանորեն տես *Дж. Пол Данн*. Вопросы регулирования военных расходов в развивающихся странах (http://vasilievaa.narod.ru/7_3_99.htm):

[4] Տես նույն տեղում:

[5] Տես նույն տեղում:

[6] Տես *С. Н. Третьяк*. Коммерческая деятельность. Ч. I. Основы теории и организации. Хабаровск, 1999 (http://www.aup.ru/books/m164/3_3.htm):

տադրողից) մինչև վերջնական սպառող պլանավորելու, կազմակերպելու, կառավարելու ու վերահսկելու մասին գիտելիքների համակարգ է[7]:

Ընդսմին նյութական հոսքը նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումներն են արտադրողից մինչև սպառող, ծառայությունների հոսքը սպառողին մատուցվող ծառայությունների ամբողջությունն է, տեղեկութային հոսքը սպառողական պահանջարկի մասին տեղեկույթն է, որն ուղեկցում է նյութական և ծառայությունների հոսքերին, իսկ ֆինանսական հոսքը նախորդ հոսքերին ուղեկցող ֆինանսական ռեսուրսների շարժն է: Նյութական, տեղեկութային, ֆինանսական, ինչպես նաև ծառայությունների հոսքերի համախումբն անվանում են տնտեսական հոսք: Նյութական կառավարման ժամանակակից մեթոդները կիրառելի են ինչպես տնտեսության միկրոմակարդակում (մասնավոր ձեռնարկություն), այնպես էլ միջին (տնտեսության ճյուղի) և մակրո (ամբողջ ժողովրդական տնտեսության) մակարդակներում[8]:

Նյութական ռեսուրսների կառավարման համակարգը պետք է ապահովի՝

- ռիսկերի կառավարման նկատմամբ համալիր մոտեցում,
- կառավարչական գործունեության համար համապատասխան տեղեկույթ,
- հաշվետվողականության հստակ համակարգի ստեղծում և որոշումների ընդունման բանելակարգի հաստատում կազմակերպական ռեսուրսների և հնարավորությունների հաշվառմամբ,
- աջակցություն նյութական հոսքերի վերաբերյալ հիմնավորված կառավարային որոշումների պատեհաժամ ընդունմանն ու կատարմանը և ռազմավարական նպատակների իրականացմանը միտված գերատեսչական ծրագրերի իրագործմանը[9]:

Նյութական ռեսուրսների կառավարման փուլերն են.

ա) *տնտեսական հոսքի բնութագրիչների (պարամետրերի) պլանավորումը,* այդ բնութագրիչներն են՝ պահանջվող նյութական ռեսուրսների անվանումը (տեսականին), որակական բնութագրերը, քանակը, ապրանքի խմբաքանակի մեծությունը, մատակարարման ժամկետներն ու պարբերականությունը, ինչպես նաև մատակարարները,

բ) *նյութական ռեսուրսների ձեռքբերման կազմակերպումը,* որը ներառում է բուն նյութական ռեսուրսների և դրանց հետ կապված ծառայությունների համար վճարումը: Այս փուլում նյութական ռեսուրսներն սկսում են իրենց շարժը ապրանքաշրջանառության ուղիներով,

[7] Տես *М. А. Баринов*. Конспект лекций по дисциплине «Логистика». Владимир, 2010:

[8] Տես նույն տեղում:

[9] Տես "Guide to Management of Materiel". Government of Canada, 2008 (https://www.tbs-sct.gc.ca/pol-cont/doc/14671-eng.pdf):

գ) *տնտեսական հոսքի բնութագրիչների կարգավորումը,* որը ներառում է մատակարարման ժամկետների, վճարման ձևերի և այլ պարամետրերի ճշգրտում: Տնտեսական հոսքի պլանավորված արժեքներից իրական բնութագրիչների շեղումը կարող է կատարվել ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ պատճառներով,

դ) *նյութական ռեսուրսների կառավարման վերահսկումը*, այսինքն՝ տնտեսական հոսքի բնութագրիչների մշտազննումը[10]:

«Ազգ–բանակ» համակարգում այս փուլերից յուրաքանչյուրում պետք է լուծվեն մի շարք առաջնահերթ խնդիրներ:

1) «Ազգ–բանակ» համակարգում տնտեսական հոսքի բնութագրիչները պլանավորելու համար պետք է առաջին հերթին հստակեցնել «Ազգ–բանակի» տնտեսական նպատակները: Դրանք կարող են լինել՝

– տնտեսական աճը,
– տնտեսական արդյունավետության մեծացումը,
– աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածության ապահովումը,
– եկամուտների արդար բաշխումը, և այլն:

Նյութական ռեսուրսների կառավարման նպատակների համակարգը կարող է կառուցվել «նպատակների ծառի» մեթոդով. «Ազգ–բանակ» համակարգի ամենաընդհանուր նպատակը դիտվում է որպես ծառի արմատ (զրոյական մակարդակ): Հաջորդ մակարդակներում նպատակն աստիճանաբար ավելի ու ավելի է կոնկրետացվում՝ հետազոտության առարկային մոտենալուն զուգընթաց, ընդսմին ավելի բարձր մակարդակի նպատակները նախորդ մակարդակի նպատակների իրագործման պայմաններն (միջոցները) են: Ծառի մակարդակների թիվը բնութագրելու համար գործածվում է «ծառի լայնույթ» տերմինը: Ենթադրվում է, որ «Ազգ–բանակ» համակարգի նյութատեխնիկական ապահովման նպատակների ծառի լայնույթը կարող է գերազանցել մեկ-երկու տասնյակ մակարդակներ:

Նյութական ռեսուրսների կառավարման ընդհանուր նպատակն է արտադրել պահանջվող տեսակի, որակի ու քանակի արտադրանք և կազմակերպել պահանջվող ժամկետում, տեղում ու գնով դրա առբերումը գնորդին[11]: Ընդսմին այս նպատակը պետք է բխի «Ազգ–բանակի» ընդհանուր տնտեսական նպատակներից: Սխալ ձևակերպված նպատակի դեպքում նյութական ռեսուրսների կառավարումը կորցնում է իր տնտեսական իմաստը:

«Ազգ–բանակ» համակարգում նյութական ռեսուրսների կառավարման նպատակների ծառը կարող է ներառել ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման գործում պետական նպատակային ծրագրերը (ՊՆԾ): ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման վրա

[10] Տես *Ս. Ն. Տրետյակ*, Նշ. աշխ.:

[11] Տես *С. Карнаухов*. Логистика как управленческая теория и система управления материальным потоком. «Ресурсы, информация, снабжение, конкуренция», 2006, № 2:

ՊՆԾ ազդեցությունը պայմանավորված է փոքր և միջին ձեռնարկությունների ակտիվ գործունեությամբ, տեխնոլոգիական բազայի և նորամուծական ձեռքբերումների առևտրայնացման արդյունավետ մեխանիզմների գոյությամբ: «ՊՆԾ խթանիչ ազդեցությունը պայմանավորված է նաև ռազմաարդյունաբերական արտադրանքի պահանջարկի խթանման համակարգված քաղաքականությամբ, ծրագրային բյուջեավորման և թղթապանակային (պորտֆելային) կառավարման մեխանիզմների ամբողջական ներդրմամբ, ինչպես նաև գիտատեխնիկական ոլորտում կորպորատիվ պատասխանատվության օրենսդրական սահմանմամբ»[12]:

2) «Ազգ–բանակ» համակարգում նյութական ռեսուրսների ձեռքբերումը կազմակերպելու գործում պետք է հաշվի առնել, որ պետության ռազմական ծախսերի և ռազմական պետպատվերի ծավալի մեծացման պայմաններում բազմաթիվ ձեռնարկություններ և մասնավոր ընկերություններ կփոխկապվեն «Ազգ–բանակի» ընդհանուր տնտեսական, մասնավորապես՝ ապահովումային նպատակներով: Այսինքն՝ «Ազգ–բանակ» համակարգում նյութական ռեսուրսների կառավարումը ենթադրում է ոչ թե սոսկ տվյալ արտադրողի կամ ծառայություն մատուցողի, այլ մատակարարման շղթայի բոլոր օղակներում եղած արտադրողների ու ծառայություններ մատուցողների գործունեության փոխհամաձայնեցում (օպտիմալացում): Որպես արդյունք՝ բոլոր այդ արտադրողների ու ծառայություններ մատուցողների շահույթները դառնում են փոխպայմանավորված, և մեկի արդյունավետ (անարդյունավետ) գործունեությունը հանգեցնում է մյուսի շահույթի մեծացմանը (փոքրացմանը): Այլ կերպ ասած՝ «Ազգ–բանակ» համակարգում առավել ցայտունորեն պետք է դրսևորվի արդեն այսօր աշխարհում նկատելի այն ձեռնարկատիրական (առևտրային) մոտեցումը, ըստ որի՝ շահույթը ձևավորվում է որպես բոլոր գործընկերների համատեղ ջանքերի արդյունք, և գործարարության ղեկավար սկզբունք է դառնում «Իմ շահույթը նաև բոլորի շահույթն է» կարգախոսը: Կարծում ենք, որ այն պետք է դառնա որպես «Ազգ–բանակ» հանդես եկող հայկական պետության մեջ տնտեսական գործունեության գլխավոր գաղափարներից մեկը: Այստեղից միանշանակ կերպով հետևում է նաև այն հանրահայտ պահանջը, որ գնումների ամբողջ ընթացքը պետք է լինի լիովին թափանցիկ՝ բոլոր մասնակիցների համար միևնույն մեկնարկային պայմանների ապահովմամբ:

Տվյալ համատեքստում ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի (ՆՏԱԴ) գործունեության նպատակներից մեկը պետք է լինի այն, որ մատակարար կազմակերպությունների մեջ սերմանվի հետևյալ գաղափարը. յուրաքանչյուրն այդ հայեցակարգի անմիջական կրողն է. Այսինքն՝ բանակին

[12] Տես *Ա. Գ. Դավթյան, Ա. Պ. Պետրոսյան, Մ. Ա. Փարվանյան*, «Ազգ–բանակ» համակարգի ձևավորման գործում պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը որպես ՀՀ գիտատեխնիկական-տնտեսական համալիր զարգացման խթանիչ գործոն. ՀՀ-ում ռազմավարական-պաշտպանական պատվերի նորամուծական հեռանկարը: «ՀԲ», 2016, հմ. 4:

ապրանք կամ ծառայություն առաջարկողը չպետք է սահմանափակվի զուտ շահույթի հետապնդմամբ, փաստաթղթային ու ֆինանսական գործընթացներով: Մատակարար կազմակերպության ներկայացուցիչը պետք է օժանդակի «ազգ–բանակ» գաղափարախոսության կյանքի կոչմանը: Իհարկե, գնումների գործընթացը, գնային քաղաքականությունը ունեն իրենց հստակ օրենքներն ու պահանջները, սակայն «Ազգ–բանակ» համակարգում մատակարարները պետք է բանակը դիտեն որպես մի առանձնահատուկ ոլորտի, ինչում զգալի դեր պետք է խաղա ՊՆ ՆՏԱԴ-ը: Դիպուկ է ասված, թե չես ուզում կերակրել հակառակորդի բանակը, կերակրիր քոնը:

«Ազգ–բանակ» համակարգում բոլոր հնարավոր մատակարարները պետք է տեղեկացված լինեն հետևյալ հարցերի պատասխաններին.

– տնտեսության ի՞նչ ճյուղի է պատկանում գնորդ-կազմակերպությունը (ի՞նչ տեսակի ձեռնարկություն է),
– ի՞նչ տեսակի գնումներ կարող է կատարել,
– կազմակերպության անունից ո՞վ է որոշում կայացնում գնումների մասին,
– ինչպե՞ս է կայացվում գնման մասին որոշումը[13]:

Գոյություն ունի մատակարար ընտրելու երկու հիմնական եղանակ: Առաջին. շուկայի ուսումնասիրությամբ և մեծաքանակ տեղեկույթի համակարգչային վերլուծությամբ ընտրվում է այն մատակարարը, որը բավարարում է տրված չափանիշներին: Երկրորդ. մատակարարները հատուկ ընթացակարգի միջոցով իրազեկվում են այն մասին, որ գնորդը փնտրում է տվյալ տեսակի ապրանք կամ ծառայություն[14]: Գործարք կնքելու համար մրցակցության ընթացքում յուրաքանչյուր մատակարար ինքն է գնորդին առաջարկում պայմանագրերի տարբերակներ և հիմնավորում այն օգուտները, որոնք գնորդը կստանա, եթե ռեսուրսներն իրենից ձեռք բերվեն: Որպես արդյունք՝ ի հայտ է գալիս գնումների ամենաշահավետ տարբերակը[15]:

«Ազգ–բանակ» համակարգում սպասվում է մատակարարների թվի մեծացում, ուստի նպատակահարմար կլինի համադրել այս երկու մոտեցումները: Ընդսմին ՊՆ ՆՏԱԴ-ի գործունեության հիմնական սկզբունքը, այն է՝ միջնորդ կազմակերպությունների առկայության բացառումը, պետք է պահպանվի: Այսինքն՝ «Ազգ–բանակ» համակարգում բանակի մատակարարը պետք է լինի տվյալ ապրանքի արտադրողը կամ ներկրողը: Միևնույն ժամանակ, պետք է կատարելագործվեն այն ընթացակարգերը (էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ), որոնք անհնար են դարձնում մրցույթների և գնումների կազմակերպման գործում որևէ կոռուպցիոն ռիսկի առաջացումը: «Ազգ–բանակի» նյութատեխնիկական ապահովման արդյունավետության գրավականը գնորդի (պետության) և մատակարարների միջև լիակատար փոխադարձ վստահությունն է:

[13] Տես *Ս. Ն. Տրետյակ*, Նշ. աշխ.:

[14] Տես «Գնումների մասին» ՀՀ 2016 թ. դեկտեմբերի 16-ի հմ. ՀՕ-21-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110820):

[15] Տես *Ս. Ն. Տրետյակ*, Նշ. աշխ.:

Նշված խնդիրների լուծման համար հարկ կլինի նաև փոփոխություններ կատարել ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ներկայիս կառուցվածքում, մասնավորապես՝ ստեղծել մատակարարներին իրավական խորհրդատվություն ապահովող իրավապայմանագրային, ինչպես նաև մատակարարվող արտադրանքի ու ծառայությունների որակի հսկման ստորաբաժանումներ:

3) «Ազգ–բանակ» համակարգում տնտեսական հոսքի բնութագրիչների կարգավորումը հնարավոր է միայն նյութական ռեսուրսների ավտոմատ կառավարման համակարգի միջոցով, ընդսմին մատակարարումների շղթաների կառավարման ընթացքում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները.

– *նյութական ռեսուրսների օպտիմալ բաշխում*՝ ստորաբաժանումների գերակայության և ռեսուրսների կարևորության հաշվառմամբ,
– *պաշարների կառավարման օպտիմալացում*՝ պատվերների կազմակերպման և պահեստներում պահպանման ծախսերի նվազարկման հաշվառմամբ,
– *նյութական ռեսուրսների առբերման օպտիմալ պլանի որոշում,*
– *փոխադրամիջոցների կշռադատված օգտագործում և բեռնահոսքերի օպտիմալացում:*

Այս խնդիրները լուծվում են ձևարկման համապատասխան մեթոդների կիրառմամբ և մատակարարումների շղթաների գործունեության մոդելավորմամբ[16]:

4) «Ազգ–բանակ» համակարգում տնտեսական հոսքի բնութագրիչների մշտազննման համար ևս անհրաժեշտ է կառավարման ավտոմատացված համակարգ:

Այս ամենը ենթադրում է նյութական ռեսուրսների կառավարման նկատմամբ գիտական մոտեցում, տվյալ գործառույթները կատարող անձնակազմի անընդհատ ուսուցում, նրա կազմակերպական հմտությունների կատարելագործում և տվյալ ոլորտի տեղեկատվական համակարգերի զարգացում:

Այսպիսով՝ ենթադրվում է, որ «Ազգ–բանակ» համակարգում կմեծանան պետության ռազմական ծախսերը: Այդ պայմաններում նյութական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է հստակեցնել «Ազգ–բանակի» տնտեսական նպատակները, գործարարության սկզբունք դարձնել «Իմ շահույթը նաև բոլորի շահույթն է» գաղափարը, համադրել մատակարարների ընտրության երկու հիմնական եղանակները և ներդրել նյութական ռեսուրսների ավտոմատ կառավարման համակարգ:

---

[16] Տես *Д. И. Евстрат*. Имитационная модель управления цепочками поставок в системе ресурсного обеспечения подразделений силовых структур. «Системи обробки інформації» (Харьков), 2012, т. 2, вып. 3 (101):

ПРОБЛЕМЫ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ КАК ВАЖНЫЙ ЭЛЕМЕНТ УПРАВЛЕНИЯ РЕСУРСАМИ В УСЛОВИЯХ ВНЕДРЕНИЯ КОНЦЕПЦИИ «НАЦИЯ–АРМИЯ»

К. А. КАРАПЕТЯН, начальник Департамента материально-технического обеспечения МО РА, О. С. ПАРАШЯН, лейтенант, тележурналист государственного учреждения «Зинуж-студия» МО РА

РЕЗЮМЕ

Внедрение системы «Нация–армия» нацелено на кардинальное повышение обороноспособности государства. При этом не исключается возможность повышения уровня военных расходов. В подобных условиях существенно возрастает значение рациональной организации логистики, что подразумевает уяснение и уточнение экономических целей внедрения данной концепции, реализацию в сфере деловых отношений принципа «Моя прибыль является и общей прибылью», создание автоматизированной системы управления материальными ресурсами и использование комбинированного метода выбора поставщиков, включающего компьютерный анализ информации о состоянии рынка и данном поставщике для определения его соответствия наперед установленным критериям и использование специальных процедур для широкого оповещения потенциальных поставщиков о том, что потребитель ищет данную продукцию или услугу.

THE PROBLEMS OF MATERIAL-TECHNICAL SUPPORT AS AN IMPORTANT ELEMENT OF RESOURCE MANAGEMENT IN TERMS OF THE "NATION–ARMY" CONCEPT IMPLEMENTATION

K. A. KARAPETYAN, Head, Department of Material-Technical Support, MOD, RA, H. S. PARASHYAN, Lieutenant, TV journalist, "Zinuj Studio" Public Office, MOD, RA

SUMMARY

The "Nation–Army" system implementation is targeted at radically increasing the national defense capacity. At the same time, the possibility of increasing the level of military expenditures is not ruled out. In such circumstances, the value of the rational organization of the logistics significantly increases, and that implies the clarification and specification of economic purposes of this concept implementation; the expansion of "My profit is a common profit as well" principle in the sphere of business relations; the creation of an automated system of material resource management and the use of the combined method of the vendor selection, including the computer analysis of market information and that of the supplier to determine his adequacy with the criteria established in advance, and the use of special procedures for the potential suppliers' wide notification that the consumer is looking for a given product or service.

ԵՐԿԱԿԻ ՆԱԽԱՆՇԱՆԱԿՄԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ «ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Բ. Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, բ/ծ պաշտոնաթող գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ Բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ Պաշտպանության նախարարի ռազմաբժշկական հարցերի գծով խորհրդական

ՀՀ բարձրագույն ղեկավարությունը մշակել է քաղաքացիական հասարակության զարգացման ու պետության պաշտպանունակության մեծացման ռազմավարություն և այն ներկայացրել «ազգ–բանակ» ընդգրկուն նշանաբանով: Այդ ռազմավարությունը, արժանանալով հանրապետության լայն հասարակայնության խոր ըմբռնմանն ու հավանությանը և ստանալով մեծ միջազգային արձագանք, ժամանակակից ազգային միաբանության կոչ է, որի նպատակն է ծավալվող համընդհանրացման, քաղաքական ու տնտեսական անկայունության, տարածաշրջանային հակամարտությունների ու տեղային պատերազմների հետևանքով աճող այժմեական մարտահրավերներին արդյունավետ դիմակայության ապահովումը:

Ժողովրդի և բանակի միասնությունն ու համախմբվածությունը, որոնք, էութենապես բնորոշ լինելով հայ ժողովրդին, դարերով ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ և հատկապես վառ են դրսևորվում ազգային անվտանգության համար մեծ սպառնալիք ներկայացնող իրավիճակներում, պատմականորեն կերտվել ու ամրապնդվել են իր հավատքի, հոգևոր արժեքների, ազգային ինքնության, պետականության և անկախության պահպանման համար հազարամյակներով հայ ազգի մղած պայքարի բովում:

Այսպես. համաձայն հին հռոմեական աղբյուրների՝ Տիգրան Մեծի հայոց բանակը, որի բազմաթիվ փայլուն հաղթանակները հանգեցրին Մեծ Հայքի հիմքի վրա ստեղծված կայսրության կազմում Կիլիկիայի, Միջագետքի և մի շարք այլ շրջանների ներգրավմանը, ի սկզբանե կազմված էր ազգային աշխարհազորայիններից և մարզերի կառավարիչների ոչ մեծ հեծյալ ջոկատներից[1]: 451 թ. Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ Ավարայրի դաշտում պարսից զորքի դեմ հայոց բանակի տված վճռորոշ ճակատամար-

[1] Տես *Плутарх.* Лукулл, XXVI. «Сравнительные жизнеописания», т. II. Издание подготовили М. Е. Грабарь-Пассек и С. П. Маркиш. М., 1963, с. 194:

տի մասին հաղորդած տեղեկությունները ևս վկայում են, որ դրան նախորդել էր համաժողովրդական զինված ապստամբությունը[2]:

Հայ ժողովրդի և բանակի միասնության օրինակ են 1918 թ. մայիսի Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերը, որոնցում հայոց կանոնավոր զորամասերը աշխարհազորայինների հետ ջախջախեցին և դուրս շպրտեցին Հայաստանի տարածք ներխուժած թուրքական զորքերին:

Միասնականության և համախմբվածության վառ օրինակ է հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ Ղարաբաղյան ազգային-ազատագրական պատերազմը, որն սկսվեց ի պատասխան զինված ագրեսիայի՝ անկախության համար կամավորական ջոկատների մղած պայքարով, իսկ շուտով վերածվեց լայնամասշտաբ հայրենական պատերազմի, որը Հայաստանի Հանրապետության նորաստեղծ Զինված ուժերի կանոնավոր զորամասերի և ազգային աշխարհազորայինների սերտ համագործակցության շնորհիվ ավարտվեց փայլուն հաղթանակով:

Հատկանշական է, որ այդ հաղթանակներում զգալի ներդրում են ունեցել բժիշկները: Հին Հայաստանի բժիշկներին ծանոթ էին վիրաբուժության տարրերը, որոնք նրանք լայնորեն կիրառում էին ինչպես խաղաղ կյանքի պայմաններում, այնպես էլ մարտի դաշտում. հեռացնում էին նետերը, կարում վերքերը, կանգնեցնում արնահոսությունը, ինչի վկայությունն են նշտարների, պինցետների, մկրատների և այլ ժամանակակից վիրաբուժական գործիքների նախատիպերը, որոնք հայտնաբերվել են հնագիտական պեղումների ժամանակ: Վիրաբուժական օպերացիաների ժամանակ նրանք օգտագործում էին ցավազրկող միջոցներ՝ ափիոն, կանեփ և այլն: Թեև շատ գիտելիքներ մոռացվեցին ու կորան, այդուհանդերձ այդ շրջանի բժիշկների սերունդների միջև ժառանգորդական կապը ապահովել է բուժգործի շարունակականությունը, ինչի շնորհիվ էլ այն իր ծաղկմանն է հասել Միջնադարյան Հայաստանում: Բավական է նշել, որ արդեն Կիլիկիայի Հայկական Պետությունում (11–14-րդ դդ.) բժշկությունն ու առողջապահությունը համարվում էին պետական կարևորություն ունեցող գործ:

Հայկական վանական դպրոցներում (Անի, Սանահին, Հաղպատ) դասավանդվում էին ոչ միայն աստվածաբանություն, փիլիսոփայություն, այլև բժշկություն: Կուտակված փորձը հետագայում իր արտացոլումն ստացավ հայազգի ճանաչված բժիշկների՝ Հերացու (12-րդ դ.), Գրիգորիսի (12-րդ դ.), Ամիրդովլաթ Ամասիացու (15-րդ դ.) աշխատություններում: Նրանք նկարագրել են մեծ թվով հիվանդությունների կլինիկական պատկերը, առաջացման պատճառները և բուժման մեթոդները, շարադրել են այդ ժամանակվա համար զարմանալիորեն հարուստ գիտելիքներ, իսկ հայ բժշկի վարքականոնում ներառված էին վսեմ մարդասիրական պահանջներ:

[2] Տես *Եղիշե,* Վարդանի և հայոց պատերազմի մասին. Ե դար: Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Երվանդ Տեր-Մինասյանի: Ե., 1994:

Այսօր բավական տարողունակ «ազգ–բանակ» հասկացությունը ձեռք է բերում որակապես նոր իմաստ, բովանդակություն, նպատակ և գերակայություններ, ընդ որում, այդ գաղափարի իրականացման ռազմավարությունն ու մեխանիզմները հարկ է դիտարկել նշված փոխկապվածության առանձնահատկությունների լույսով ինչպես խաղաղ ժամանակ՝ ռեալ արտաքին սպառնալիքների առկայությամբ, այնպես էլ ռազմական գործողությունների պայմաններում, ազգային անվտանգության ռազմավարության և, առաջին հերթին, ռազմական դոկտրինի շրջանակներում, փաստաթղթերի, որոնք մշակվել են միջազգային չափանիշների ու փորձի, ազգային շահերի ու տարածաշրջանային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ստեղծված տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակում «ազգ–բանակ» ռազմավարության իրականացման շրջանակներում ազգային անվտանգության ապահովման հիմքն են հասարակության համախմբվածությունն ու միասնականությունը, ընդհանուր ազգային գաղափարներին և հոգևոր արժեքներին հավատարմությունը, ազգային և քաղաքացիական պարտքի բարձր մակարդակով գիտակցումը, մեկուսախմբային ու կուսակցական հակասությունների, հավակնությունների, առճակատման բացառումը, հանդուրժողությունը, իր երկրի զարգացման ու ծաղկման, նրա պաշտպանունակության մեծացման գործում իր ուժերի ներածի չափով ներդրում կատարելու յուրաքանչյուրի վճռականությունը, հայրենասիրությունն ու ցանկացած սպառնալիքի դեպքում հայրենիքին պաշտպան կանգնելու վճռականությունը: Պահանջվում են եղած բոլոր ռեսուրսների մոբիլիզացում, հանրապետությունում ժամանակակից գիտահենք արտադրության և ընդհանուր առմամբ երկակի նախանշանակման տնտեսության զարգացմանն ուղղված ընդհանուր ջանքերի միավորում, հանրապետությունում գոյություն ունեցող պետական հաստատությունների, հոգևորականության և տարբեր հասարակական կազմակերպությունների ներուժի առավել արդյունավետ օգտագործում՝ ուղղված սոցիալ-տնտեսական զարգացման գերակա խնդիրների լուծմանը և ազգային անվտանգության ապահովմանը, ինչի հաջող իրագործման գրավականն է ազգային գաղափարների ու արժեքների շուրջ հանրապետության բնակչության համախմբվածությունը և, ընդհանուր առմամբ, հասուն քաղաքացիական հասարակության ձևավորումը:

Պետության միջազգային վարկանիշն ընդհանուր առմամբ որոշվում է ըստ նրա տնտեսության և պաշտպանունակության զարգացման արդյունավետության, որի ապահովման հիմնական պայմանն ու երաշխիքը այդ պետությունում ժամանակակից միջազգային չափանիշներին գիտության ու կրթության զարգացման մակարդակի համապատասխանության աստիճանն է: Գիտության և բարձրագույն կրթության ինտեգրումը պետք է դիտվի որպես այդ ոլորտների կարևոր գերակայություն և, միևնույն ժամանակ, դրանցից յուրաքանչյուրի գործունեության արդյունավետության ու մրցունակության մեծացման գրավական: Շարունակական կրթության արդիականացման գաղափարախոսության հիմքում պետք է դրված լինեն ուսուցանվողի անձնա-

յին-անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ ուսուցումը դեպի ինքնազարգացող անձ կողմնորոշելու, գիտելիքների ձեռքբերման ուղիների և միջոցների ընտրության իրավունք նրան տալու սկզբունքները: Այսօր բարձրագույն կրթության կատարելագործման նպատակն ու արդյունքը բարձր որակավորմամբ երիտասարդ մասնագետների ինտեգրումն է հանրապետության գիտատար տնտեսության մեջ:

Ներկայումս գերճշգրիտ մահաբեր զենքի և զանգվածային խոցման միջոցների հարուստ զինանոցի գոյությունը, ինչպես նաև կենսաբանական զենքի կիրառման հնարավորությունը և այլ հանգամանքներ ենթադրում են հատկապես համակցված վիրավորումների, խոցումների բազմատեսակություն ու ծանրություն և սանիտարական կորուստների զանգվածայնություն, ինչը բուժծառայության առջև դնում է բարդ և ծավալուն խնդիրներ, որոնք արդյունավետ կերպով լուծելու համար նա պետք է լինի շարժունակ, օպերատիվ, կառավարելի, մասնագիտացված և խնայողական:

Ղարաբաղյան ազգային-ազատագրական պատերազմի փորձը, որը հաստատում է որպես տարածաշրջանային հոսպիտալային բազա սահմանամերձ շրջանների քաղաքացիական բուժհիմնարկների օգտագործման մեծ արդյունավետությունը, վկայում է, որ անհրաժեշտ է միավորել քաղաքացիական ու ռազմական նախանշանակման բուժծառայությունների ուժերի և միջոցների ներուժը, ինչը նաև կխթանի ինչպես տարածաշրջանային, այնպես էլ Երևանի կլինիկաների մասնագիտացված բուժծառայությունների զարգացումն ու գործունեության խնայողականությունը:

Այս առումով նախատիպ կարող է ծառայել երկակի նախանշանակման առողջապահության համապետական համակարգի իսրայելական մոդելը, որում չկան ստացիոնար զինվորական հոսպիտալներ և տվյալ խնդիրը լուծում են քաղաքացիական բուժհիմնարկները: Իսրայելի փորձը ակնառու կերպով ցույց է տալիս, որ ռազմաբժշկական ծառայության կազմակերպման նման մոդելը ոչ միայն արդյունավետորեն գործում է մարտական գործողությունների իրադրությունում, այլև նպաստում է բժշկական ապահովման համակարգի ինքնազարգացմանն ու կատարելագործմանը:

Իսրայելի Զինված ուժերի բուժծառայության զորային օղակի գործառույթն է վիրավորներին ու խոցվածներին բուժօգնության ցուցաբերումը՝ խոշոր բժշկական կենտրոններ հետագա արագ տարահանմամբ, և ըստ այդմ նրա ենթակառուցվածքում ներառված են առաջին օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ արդիական բուժտեխնիկայով, հատուկ փոխադրամիջոցներով ու կապի միջոցներով հագեցված տարբեր մակարդակների շարժունակ ստորաբաժանումներ:

Քանի որ ՀՀ ՊՆ բուժծառայությունը, ինչպես նաև հանրապետության առողջապահության համակարգը լիովին կողմնորոշված են դեպի խնդիրների լուծում ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ ժամանակ, ապա անհրաժեշտ է «ազգ–բանակ» ռազմավարության շրջանակներում ձեռնարկել

բուժծառայության կառուցվածքային բարեփոխումներ և կատարելագործում սկզբունքորեն նոր մոտեցման հիման վրա: Այդ մոտեցմամբ պետք է ձևավորվի երկակի նախանշանակման բուժծառայության միասնական համապետական խոր մասնագիտացված ու խնայողական համակարգը՝ քաղաքացիական նախանշանակման տարածքային բժշկական հիմնարկների ինտեգրմամբ, և ստեղծվեն հանրապետության առաջատար բարձրատեխնոլոգիական մասնագիտացված բժշկական կենտրոնների հիմքի վրա այրվածքաբանական, նյարդավիրաբուժական, բազմա- ու համակցված վնասվածքների և այլ կենտրոններ:

Դա հնարավորություն կտա ստեղծելու բուժծառայության միասնական, կառավարելի, դինամիկորեն զարգացող և տնտեսապես շահավետ համակարգ, բացառելու ստացիոնար բուժհիմնարկների կրկնորդումը, բանակի, ուժային կառույցների, քաղաքացիական ավիացիայի և այլ նմանատիպ կառույցների մասնագիտացված բուժծառայությունների մակարդակը որակապես բարձրացնելու հանրապետությունում առկա ներուժի միավորման, ժամանակակից թանկարժեք բժշկական սարքավորանքի և բարձրատեխնոլոգիական բուժախտորոշումային մեթոդների խելացի կիրառման միջոցով:

Այսպիսով՝ խոսքը ամենևին էլ նոր բազայի ստեղծման մասին չէ, այլ վերաբերում է տարածաշրջանային բուժծառայությունների ինտեգրմանը և սկզբնական փուլում Երևանի մեծ կլինիկաների հիմքի վրա երկակի նախանշանակման մասնագիտացված (մոտ 50-60 մահճակալով) կենտրոնների կազմավորմանը, ժամանակակից բուժախտորոշիչ սարքավորանքով դրանց հագեցմանը, բժշկական անձնակազմին աշխատանքի յուրահատկությունների ուսուցանմանը և նրա պատրաստմանը, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, զինված հակամարտությունների ժամանակ ու պատերազմական պայմաններում կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, նշված կենտրոնները, համալրված լինելով բարձր որակավորում ունեցող մասնագետներով և իրենց ղեկավարության կազմում ունենալով հանրապետության ՊՆ լիազոր ներկայացուցչի, կկարողանան արդյունավետ կերպով լուծել խնդիրներ ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ զինված հակամարտությունների ու ռազմական գործողությունների դեպքում, արտակարգ և համատարած մոբիլիզացիոն իրավիճակներում: Միևնույն ժամանակ, երկակի նախանշանակման բուժկենտրոնները կարող են ծառայել որպես քաղաքացիական ու զինվորական բժիշկների ուսումնավարժեցման, կատարելագործման ու նեղ մասնագիտացման, գիտական հետազոտությունների կատարման ու որակյալ գիտական կադրերի պատրաստման համար գիտաուսումնական բազաներ:

Բանակ պահելու տնտեսական բեռը նվազեցնելու տեսակետից ուշադրության է արժանի Իսրայելի բանակի թիկունքային ապահովման համակարգում իրագործված բարեփոխումներից մեկը, ըստ որի՝ զորքերում կատարվում է աուտսորսինգի աստիճանական ներդրում, այսինքն՝ քաղաքացիական ծառայություններին հանձնվում են թիկունքային ապահովման մի շարք գոր-

ծառայթներ, որոնք նախկինում կատարում էին զորային ստորաբաժանումները: Դա ՀՀ տեղական պայմաններին հարմարեցման դեպքում կարող է կիրառվել մարտական գործողությունների վարման շրջանների վարչակազմի վրա զորամասերի պարենամթերային ու որոշ տեսակների նյութատեխնիկական ապահովման համար հստակ պարտավորություններ դնելու ձևով:

Առողջապահության ոլորտում անհրաժեշտ է ապահովել ռազմական և քաղաքացիական բուժծառայությունների ավելի սերտ փոխգործությունը՝ դրա բազմապիսի ձևերով, ներառյալ՝ հավաքների ու զորավարժությունների, զորահավաքային ռեզերվի պրոֆիլային ուսուցման կանոնավոր կազմակերպումը, այդ ռեզերվի հասցեականության հստակ որոշումը՝ ներկայանալու համար նշանակված կետերի ճշգրիտ հրահանգմամբ, և, ընդհանուր առմամբ, ռեզերվի անհրաժեշտ պրոֆիլային կողմնորոշման և զորահավաքային պատրաստության ապահովումը:

Երկակի նախանշանակման բուժծառայության բարձր մասնագիտացվածությամբ համապետական համակարգը հնարավորություն կտա մեծացնելու Զինված ուժերի բուժծառայության զորային օղակի՝ իր նախանշանակման և լուծվելիք խնդիրների բնույթին համապատասխան կատարվող գործունեության արդյունավետությունը, հատկապես՝ ռազմական գործողությունների իրադրությունում: Ուստի պետք է ձեռնարկել որակական բարեփոխումներ՝ նպատակաուղղված անհրաժեշտ բարձրատեխնոլոգիական բուժսարքավորանքով և հատուկ փոխադրամիջոցներով ապահովված, ժամանակակից պատերազմի փոփոխվող պայմաններին ճկունորեն արձագանքող շարժունակ կազմակերպական ենթակառուցվածքի (ջոկատներ, խմբեր) և բուժծառայության կառավարման այնպիսի համակարգի ստեղծմանը, որն ունակ լինի օպերատիվ կերպով լուծելու զորային օղակի բժշկական ապահովման հարցերն ըստ տարբեր մակարդակների ու նախանշանակման օղակների զորային ստորաբաժանումների կոնկրետ խնդիրների՝ սկսած առաջին բուժօգնության ցուցաբերումից մինչև վիրավորների ու խոցվածների տարահանում երկրի բարձր աստիճանի մասնագիտացված բժշկական կենտրոններ:

Այսպիսով՝ «ազգ–բանակ» ռազմավարության իրականացման գործում, հատկապես ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակում և մարտահրավերների գոյության պարագայում, հիմնարար պայման են համազգային գաղափարի շուրջ համախմբումն ու հասուն քաղաքացիական հասարակության ձևավորումը, այդ թվում՝ գիտահենք ռազմական արդյունաբերությամբ սնուցվող մարտունակ ու մշտապես պատրաստ Զինված ուժերի ստեղծումը: Ընդսմին արմատական բարեփոխումներից մեկը պետք է համարել երկակի նախանշանակման առողջապահության միասնական համապետական համակարգի ստեղծումը, մի համակարգի, որը կարողանար արդյունավետ կերպով լուծել իր խնդիրները ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական գործողությունների և արտակարգ իրավիճակների պայմաններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բ. Ն. Հարությունյան,* Առողջապահության ճգնաժամը և վերածնունդը: Կոսմետիկ մանիպուլյացիաներից անցում հիմնարար վերափոխումների: «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ», 2014 (http://fizecomed.com/hy/page.php?id=91):
2. *Բ. Ն. Հարությունյան,* Կառավարման համակարգի, կառուցվածքի և համագործակցության արդիականացումը՝ որպես ՀՀ Զինված ուժերի ռազմաբժշկական ծառայության արդյունավետության մեծացման կարևորագույն միջոց և պայման: «ՀԲ», 2013, հմ. 3–4:
3. *Բ. Ն. Հարությունյան,* Նոր մոտեցումներ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի բժշկական ապահովման գործում: «ՀԲ», 1995, հմ. 2–3:
4. *Բ. Ն. Հարությունյան,* Ռազմաբժշկական կրթության համակարգի կատարելագործումը՝ որպես հայկական բանակի բժշկական ապահովման արդիականացման հիմք: «ՀԲ», 2012, հմ. 3:
5. *Բ. Ն. Հարությունյան,* Ռազմական բժշկություն. անցած ուղին, ներկան և ապագան: «Զինվորական բժիշկ», 2014, հմ. 1:
6. *Б. Н. Арутюнян.* Анализ ситуации в системе здравоохранения Республики Армения. «Medinform» News Agency Journal, 2005, N 4.
7. *Б. Н. Арутюнян.* Модернизация системы медицинского образования как кардинальное условие ее успешного развития, международной интеграции и решения задач практического здравоохранения. «Вопросы теоретической и клинической медицины», 2013, т. 16, № 1.
8. *Б. Н. Арутюнян.* Персонализированная медицина: качественный прорыв в здравоохранении XXI века. «Материалы Международной конференции «Образование и наука в эпоху глобализации», посвященной 15-летию деятельности Университета «Месроп Маштоц» МОН НКР». Степанакерт, 2012, сс. 472–474.
9. *В. Л. Макаров, А. И. Агеев, В. А. Зеленский, Е. Л. Логинов.* Системные основы решения управленческих задач взаимодействия фундаментальной и прикладной науки с производственным сектором как основной фактор новой индустриализации России. «Экономические стратегии», 2013, № 2.
10. *А. И. Ракитов, А. Н. Райков, Е. А. Ковчуго.* Наука, образование, инновации: стратегическое управление. М., 2007.
11. *Н. Д. Эриашвили, Е. Л. Логинов, А. Н. Райков.* Формирование и развитие образовательной системы поддержки компетенций функциональных и управленческих кадров в госорганах и наукоемких отраслях на основе кластерно-сетевых форм интеграции образовательных, научных, производственных структур. «Вестник Московского университета МВД», 2014, № 3.
12. *I. S. Chan, G. S. Ginsburg.* Personalized Medicine: Progress and Promise. “Annual Review of Genomics and Human Genetics”, 2011, Vol. 12, PP. 217–244.
13. *D. E. Pritchard, F. Moeckel, M. S. Villa, L. T. Housman, C. A McCarty and H. L. McLeod.* Strategies for integrating personalized medicine into healthcare practice. “Personalized Medicine”, March 2017, Vol. 4, N 2.

СОЗДАНИЕ ЕДИНОЙ ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЫ ЗДРАВООХРАНЕНИЯ ДВОЙНОГО НАЗНАЧЕНИЯ В РАМКАХ РЕАЛИЗАЦИИ СТРАТЕГИИ «НАЦИЯ–АРМИЯ»

Б. Н. АРУТЮНЯН, полковник м/с в отставке, доктор медицинских наук, профессор, действительный член Российской академии медико-технических наук, советник Министра Обороны РА по военно-медицинским вопросам

РЕЗЮМЕ

В рамках стратегии «нация–армия» целесообразно осуществить реорганизацию системы медицинского обеспечения как в мирное время, так и в условиях ведения боевых действий. С учетом опыта Карабахской национально-освободительной войны и ведущих государств, в частности, Израиля, представляется эффективным формирование единой государственной системы здравоохранения двойного назначения путем объединения потенциалов сил и средств гражданской и военной медицинских служб. Это предполагает создание на базе ведущих гражданских высокотехнологичных специализированных медицинских учреждений таких специализированных медицинских центров двойного назначения, как ожоговый, нейрохирургический, поли- и комбинированных травм и т. д.

При этом данная система здравоохранения должна быть мобильной, управляемой, экономичной и оказывать узкоспециализированную и своевременную медицинскую помощь, что даст возможность повысить эффективность деятельности войскового звена медслужбы Вооруженных сил как во время военных действий, так и при чрезвычайных ситуациях. В основу создания подобной системы необходимо заложить реформирование системы образования на основе новейших научных достижений при условии соответствия уровней науки и образования высшим международным критериям и стандартам.

BUILDING A DUAL-USE INTEGRATED STATE HEALTH CARE SYSTEM IN THE FRAMEWORK OF THE “NATION–ARMY” STRATEGY IMPLEMENTATION

B. N. HARUTYUNYAN, Colonel of Medical Service (Ret.), Doctor of Medicine, Professor, Full Member, Russian Academy of Medical and Technical Sciences, Advisor to the RA Minister of Defense on Military Medical Issues

SUMMARY

In the framework of the “Nation–Army” strategy it is advisable to restructure the medical support system both in peacetime and at the state of hostilities. In view of the experience of the Karabakh National-Liberation War and that of the leading states, in particular, Israel, building a dual-use integrated state health care system via incorporation of the potentials of forces and assets of civil and

military medical services seems to be efficient. This implies the creation of such dual-use specialized medical centers as burn clinics, neurosurgical, combined and polytrauma and other centers, on the basis of leading civil high-technology specialized medical institutions.

Herewith, this kind of health care system should be mobile, controlled, cost-effective, and render highly specialized and timely medical aid, which will enable the improvement of the efficiency of the army units of the Armed Forces medical service both during military operations and at emergency situations. It is necessary to lay down the reformation of the educational system into the given system in terms of the latest scientific achievements provided that the levels of science and education conform to the highest international criteria and standards.

ԱՄՆ-Ի ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՕՐՈՔ ԱՄՆ–ՌԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Գ. Վ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, Լոնդոնի համալսարանական քոլեջի մագիստրոս, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ասպիրանտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան

Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ-ի միջև հարաբերությունները էական ազդեցություն են գործում միջազգային անվտանգության ապահովման համընդհանուր համակարգի վրա: Միևնույն ժամանակ, և՛ Ռուսաստանը, և՛ ԱՄՆ-ը Հարավային Կովկասի տարածաշրջանում առավել հզոր և ազդեցիկ դերակատարներ են: Նրանց միջև հարաբերություններն առանձնակի կարևորություն ունեն Հայաստանի Հանրապետության համար, որը ՌԴ ռազմավարական դաշնակիցն է և ԱՄՆ-ի տարածաշրջանային գործընկերը[1]: Դրանց շոշափելի վատացումը չի կարող չազդել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կողմնորոշիչների վրա, քանի որ ՀՀ-ն իր անկախացումից ի վեր վարում է հաշվեկշռված արտաքին քաղաքականություն և շնորհիվ դրա ու իր կանխատեսելիության միջազգային ասպարեզում վայելում է հուսալի գործընկերոջ համբավ[2]:

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և, մասնավորապես, Ռուսաստանի հետ հարաբերություններն զգալի փոփոխությունների ենթարկվեցին այն բանից հետո, երբ Նախագահ դարձավ Դոնալդ Թրամպը: Ընդսմին այդ կտրուկ փոփոխությունները շարունակվեցին նաև նրա պաշտոնավարման ընթացքում: Այս ամենը դժվարկանխատեսելի է դարձնում ԱՄՆ–ՌԴ հարաբերությունների հետագա զարգացման ընթացքը և հետազոտողին պարտադրում է գործածել մեծ անորոշությունների պայմաններում կիրառելի ժամանակակից վերլուծական մեթոդներ[3]:

Ըստ այդմ ԱՄՆ-ի նոր վարչակազմի օրոք ԱՄՆ–ՌԴ հարաբերությունների ուսումնասիրությունների համար[*] առանձնացրել ենք հետևյալ երեք առանց-

---

[1] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 37–39:

[2] Տես «Նախագահ Սարգսյանի խոսքը ԱԳՆ կենտրոնական ապարատի և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների ղեկավարների հավաքին», 01.09.2009 (http://www.president.am/hy/press-release/item/2009/09/01/news-679/):

[3] Տես *А. С. Ахременко.* Политический анализ и прогнозирование. М., 2006:

[*] Հեղինակը շնորհակալություն է հայտնում ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի ռազմավարական խա-

քային պրոբլեմները՝ ՆԱՏՕ–Ռուսաստան առճակատումը Արևելյան Եվրոպայում (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Լեհաստան), Սևծովյան ավազանում (Ուկրաինական ճգնաժամը) և Մերձավորարևելյան տարածաշրջանում (Սիրիական ճգնաժամը):

ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի Նախագահ դարձավ Դոնալդ Թրամպը, ԱՄՆ–ՌԴ հարաբերություններում ի հայտ եկան բարելավման միտումներ, սակայն աստիճանաբար ԱՄՆ-ի նոր վարչակազմը կոշտացրեց իր ռուսական քաղաքականությունը, և երկկողմ հարաբերությունները կրկին լարվեցին: ԱՄՆ–ՌԴ հարաբերություններում այժմ կան երեք թեժ կետեր՝ Ուկրաինա, Սիրիա և Բալթյան երկրներ, որոնց առնչությամբ այդ երկու պետությունների դիրքորոշումները միմյանց էապես հակասում են:

Ուկրաինա: Ռուսաստանին Ղրիմի միացման և Արևելյան Ուկրաինայում տեղի ունեցող միջնորդավորված պատերազմի* հարցում ԱՄՆ-ի նախորդ վարչակազմը որդեգրել էր բավական կոշտ քաղաքականություն[4], որը ներառում էր Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառում[5]:

Ուկրաինական ճգնաժամի հետևանքով ԱՄՆ–ՌԴ հարաբերություններում ստեղծվեց բավական բարձր մակարդակի լարվածություն: 2014 թ. սեպտեմբերի մեկին Ուկրաինան, Ռուսաստանը և ԵԱՀԿ-ն կնքեցին Մինսկի համաձայնագիրը[6], որի շնորհիվ հաստատվեց հարաբերական անդորր, սակայն հակամարտության կողմերը պարբերաբար խախտում էին համաձայնագրի շրջանակում ձեռք բերված պայմանավորվածությունները: Արևելյան Ուկրաինայում գտնվող Լուգանսկի և Դոնեցկի հանրապետությունների և Ուկրաինայի կենտրոնական իշխանության միջև սկսված բախումները

ղերի և մոդելավորման խմբի պետ, քաղաքական գիտությունների թեկնածու *Մ. Ս. Ավետիսյանին* մեթոդաբանական աջակցության համար:

* Միջնորդավորված պատերազմ *(опосредованная война, война по доверенности, война чужими руками, proxy war)*՝ երկու պետությունների միջև ծագած միջազգային հակամարտություն, որի ժամանակ նրանք փորձում են իրենց նպատակներին հասնել երրորդ պետության տարածքում ու նրա ռեսուրսների օգտագործմամբ տեղի ունեցող ռազմական գործողությունների միջոցով, որոնք քողարկվում են այդ երրորդ պետությունում եղած ներքին հակամարտությունը լուծելու ձգտմամբ (տես *Andrew Mumford.* Proxy warfare. Wiley and Sons, 2013, P. 13): – *Խմբ.*:

[4] Տես "Transcript of Obama's Remarks on Ukraine". "The New York Times", 28.02.2014 (https://www.nytimes.com/2014/03/01/us/politics/transcript-of-obamas-remarks-on-ukraine.html?_r=0):

[5] Տես "Ukraine and Russia Sanctions" (https://www.state.gov/e/eb/tfs/spi/ukrainerussia); "U.S. Treasury Hits Russia With More Sanctions Over Ukraine". "Foreign Policy", 1 September 2016 (http://foreignpolicy.com/2016/09/01/u-s-treasury-hits-russia-with-more-sanctions-over-ukraine):

[6] Տես "PROTOCOL on the results of consultations of the Trilateral Contact Group". Minsk, 05.09.2014 (http://mfa.gov.ua/en/news-feeds/foreign-offices-news/27596-protocolon-the-results-of-consultations-of-the-trilateral-contact-group-minsk-05092014):

ԱՄՆ–ՌԴ հարաբերությունները հասցրին նոր մակարդակի լարվածության: 2015 թ. փետրվարի 12-ին Ռուսաստանը, Ուկրաինան, Ֆրանսիան և Գերմանիան ստորագրեցին Մինսկ-2 համաձայնագիրը[7], որի առաջնային նպատակը զինադադարի հաստատումն էր:

Դոնալդ Թրամպը դեռ նախընտրական շրջանում, ինչպես նաև Նախագահ դառնալուց անմիջապես հետո միաժամանակ հանդես էր գալիս Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման օգտին և, ի տարբերություն ԱՄՆ-ի նախորդ ղեկավարից, Ռուսաստանի հանդեպ կոշտ քաղաքականության կողմնակից չէր: ԱՄՆ-ում տեղի ունեցած նախագահական ընտրություններում Թրամպին աջակցելու համար Ռուսաստանի ձեռնարկած կիբեռհարձակումների մասին լուրերը[8] և Պուտինի ու նրա մերձավոր շրջապատի հետ ԱՄՆ-ի նոր վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաների ունեցած կապերի վերաբերյալ տեղեկությունները[9] այն տեսանելի պատճառներից էին, որոնք ազդեցություն ունեցան Թրամպի ռուսական քաղաքականության վրա: ԱՄՆ-ի Նախագահն սկսեց աստիճանաբար վերանայել և կոշտացնել իր դեռևս ոչ հստակորեն ձևավորված ռուսական քաղաքականությունը, ինչի հետևանքով, թեկուզ և կարճաժամկետ հեռանկարով, ձևավորվեց Թրամպի սկզբնական ռուսական քաղաքականության համեմատությամբ ավելի կոշտ քաղաքականությունը. նա հայտարարեց, թե Ղրիմը պետք է վերադարձվի Ուկրաինային[10] և նախորդ Նախագահ Բարակ Օբամային մեղադրեց Ռուսաստանի նկատմամբ մեղմ քաղաքականություն վարելու մեջ: Պուտինին վերաբերող գնահատականներն էլ սկսեցին դառնալ հակասական[11]:

Արևելյան Եվրոպա: 2016 թ. հոկտեմբերին ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Ստոլտենբերգը հայտարարեց[12], որ Ռուսաստանը երեք անգամ մեծացրել է իր ռազմական ծախսերը և Դաշինքի անդամ պետությունների սահմանների մոտ ձեռնարկում է լայնամասշտաբ զորավարժություններ, և որ իրենք կարծում են, թե Ռուսաստանը կարող է իր հարևանների նկատմամբ ուժ գործադրել, ինչպես դա արեց Վրաստանի և Ուկրաինայի դեպքում: Հաշվի առ-

[7] Տես "Ukraine ceasefire: New Minsk agreement key points". "BBC", 12 February 2015 (http://www.bbc.com/news/world-europe-31436513):

[8] Տես "Assessing Russian Activities and Intentions in Recent US Elections". Intelligence Community Assessment, 6 January 2017 (https://assets.documentcloud.org/documents/3254237/Russia-Hack-Report.pdf):

[9] Տես "The ultimate guide to Donald Trump's Russia connections" (https://qz.com/923065/the-ultimate-guide-to-donald-trumps-russia-connections):

[10] Տես "Crimea was TAKEN by Russia during the Obama Administration. Was Obama too soft on Russia?", 15.02.2017 (https://twitter.com/realdonaldtrump/status/831846101179314177?lang=en):

[11] Տես *Michael Crowley*. Trump takes tougher tone against Putin. "POLITICO", 01.11.2017 (http://www.politico.com/story/2017/01/donald-trump-vladimir-putin-russia-233510):

[12] Տես "Doorstep statement by NATO Secretary General Jens Stoltenberg at the start of the meetings of NATO Defence Ministers", 27.10.2016 (http://www.nato.int/cps/en/natohq/opinions_136579.htm?selectedLocale=en):

նելով այս հանգամանքը՝ ՆԱՏՕ-ի անդամներ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան Բալթյան պետություններ զորք ուղարկեցին[13]: Ի պատասխան ՆԱՏՕ-ի այս քայլին՝ Ռուսաստանը Լիտվայի և Լեհաստանի միջև գտնվող Կալինինգրադի մարզում տեղակայեց միջուկային մարտագլխիկներ կրելու հնարավորությամբ օժտված հրթիռներ[14]: Ռուսաստանի այս քայլը արժանացավ ՆԱՏՕ-ի խիստ քննադատությանը[15], մասնավորապես՝ նա Ռուսաստանին մեղադրեց իրավիճակը սրելու մեջ: ԱՄՆ-ի պետքարտուղարության խոսնակը Ռուսաստանի այս քայլը որակեց որպես Եվրոպական անվտանգության համար սպառնալիք[16]:

Նախագահի ընտրվելուց առաջ՝ քարոզարշավի ընթացքում, Դոնալդ Թրամպը հանդես էր գալիս ՆԱՏՕ-ի հասցեին քննադատական հայտարարություններով՝ նշելով, որ եթե Հյուսիսատլանտյան դաշինքը ցանկանում է ստանալ ԱՄՆ-ի անվերապահ աջակցությունը, ապա Դաշինքի անդամ բոլոր պետությունները, որոնց թվում, ըստ Թրամպի, կան ԵՄ-ի անդամ հարուստ պետություններ, պետք է հավասարապես կիսեն ռազմական ծախսերի բեռը[17]: Նախագահի ընտրվելուց հետո էլ Թրամպը ԵՄ-ի և միևնույն ժամանակ ՆԱՏՕ-ի անդամ պետությունների ղեկավարների հետ ունեցած հանդիպումներում արտահայտում էր իր այս մտահոգությունը[18]: ԱՄՆ-ի նորընտիր Նախագահը որպես դրական քայլ է դիտել ԵՄ-ի կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալը, մի պետության, որը ԱՄՆ-ի հետ պահպանում է ռազմավարական նշանակություն ունեցող հարաբերություններ և վերջինիս ռազմավարական դաշնակիցն է: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ Թրամպը Սպիտակ տուն տեղափոխվելուց ժամեր անց հայտնի բրիտանացի քանդակագործ Զեյկոբ էպշտեյնի քանդակը փոխարինել է Ուինստոն Չերչիլի կիսանդրիով[19]: Երդման արարողությունից առաջ բրիտանական «Թայմս» *(“The Times of London”)* պարբերականին տված հարցազրույցում Դոնալդ

[13] Տես “Warsaw Summit Communiqué Issued by the Heads of State and Government participating in the meeting of the North Atlantic Council in Warsaw 8-9 July 2016”, 09.07.2016 (http://www.nato.int/cps/en/natohq/official_texts_133169.htm):

[14] Տես *James Rothwell.* Russia to move nuclear-capable missiles closer to Europe as Vladimir Putin claims NATO expansion is threat. “The Telegraph”, 21 November 2016 (http://www.telegraph.co.uk/news/2016/11/21/putin-moves-nuclear-capable-missiles-closer-europe-claims-nato):

[15] Տես “Doorstep statement by NATO Secretary General Jens Stoltenberg...”:

[16] Տես “John Kirby Spokesperson Daily Press Briefing”. Washington, 21 November 2016 (http://usgov.info/2016/11/21/daily-press-briefings-daily-press-briefing-november-21-2016/):

[17] Տես “Transcript: Donald Trump on NATO, Turkey’s Coup Attempt and the World”. “The New York Times”, 21 July 2016 (https://www.nytimes.com/2016/07/22/us/politics/donald-trump-foreign-policy-interview.html):

[18] Տես “Trump: Allies must pay fair share for NATO”, 17.03.2017 (https://www.youtube.com/watch?v=5zZbKn0XJVI):

[19] Տես “Churchill bust in Oval Office again as Donald Trump settles in”. “The Guardian”, 21 January 2017 (https://www.theguardian.com/world/2017/jan/21/churchill-bust-returns-to-oval-office-as-donald-trump-settles-in):

Թրամպը ԵՄ-ի կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալը որակել է որպես խելացի քայլ և հայտարարել, որ ԵՄ-ն ղեկավարում է Գերմանիան, որը կործանման եզրին է[20]: Թրամպն ավելացրել է նաև, որ անմիջապես կստորագրի Մեծ Բրիտանիայի հետ առևտրային համաձայնագիր, եթե նա վերջնականապես դուրս գա ԵՄ-ից:

ԱՄՆ-ի Նախագահի նմանօրինակ հայտարարությունները և Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու պատրաստակամությունը անհանգստության ալիք բարձրացրին Արևելյան Եվրոպայի պետություններում, մասնավորապես՝ Լեհաստանում, Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում, որոնց համար անվտանգության խնդիրը մղվեց առաջնային պլան: Եվրոպայում անվտանգության հետ կապված անհանգստությունները բավական սուր էին, ընդհուպ մինչև ԵՄ-ում իր բանակն ունենալու հարցի քննարկումները: 2017 թ. փետրվարի 17–19-ը Գերմանիայի Մյունխեն քաղաքում կայացած Անվտանգության մյունխենյան խորհրդաժողովում[21] առաջին անգամ բարձր մակարդակով և պաշտոնապես տրվեց Թրամպի սկզբնական ռուսական քաղաքականությանը հակառակ կոշտ քաղաքականության մեկնարկը: Համաժողովում ԱՄՆ-ը ներկայացնող փոխնախագահ Մայք Փենսն իր ելույթում բազմաթիվ անգամ շեշտեց Դոնալդ Թրամպի անունը՝ նպատակ ունենալով Եվրոպային ցույց տալ, որ իր ելույթում Եվրոպային սատարելու և հնարավոր ռուսաստանյան ագրեսիայից պաշտպանելու հարցում ԱՄՆ-ի պատրաստակամության վերաբերյալ ուղերձները Դոնալդ Թրամպինն են[22]: Անվտանգության մյունխենյան խորհրդաժողովը արձանագրեց Թրամպի վարչակազմի հակառուսական քաղաքականություն որդեգրելու միտումները:

Դոնալդ Թրամպի նախագահության առաջին հարյուր օրվա ընթացքում ԱՄՆ-ը Բուլղարիա ուղարկեց զորք և ռազմական տեխնիկա՝ որպես Արևելյան Եվրոպայում ռուսական հնարավոր ագրեսիան կանխելու նպատակով ՆԱՏՕ-ի ձեռնարկած միջոցների մաս:

Սիրիա: Սիրիական ճգնաժամը այն կետն է, որտեղ ներկայումս ԱՄՆ–ՌԴ հարաբերությունները ռազմավարական մակարդակում գտնվում են էական հակասության մեջ: ԱՄՆ-ի դիրքորոշման և քաղաքականության առանցքն է իշխանությունից Ասադի հեռացումը, իսկ Ռուսաստանը համարում է, որ Ասադը պետք է մնա իշխանության ղեկին, և որ հետագա իշխանության ձևավորման գործում Ասադի ներգրավումը անխուսափելի է[23]: Թրամպի վարչա-

[20] Տես "Full transcript of interview with Donald Trump", 16 January 2017 (http://www.thetimes.co.uk/article/full-transcript-of-interview-with-donald-trump-5d39sr09d):

[21] Տես "Munich Security Conference", 17–19 February 2017 (https://www.securityconference.de/en):

[22] Տես "Remarks by the Vice President at the Munich Security Conference", 18 February 2017 (https://www.whitehouse.gov/the-press-office/2017/02/18/remarks-vice-president-munich-security-conference):

[23] Տես "Peskov: Syria's future needs dialogue with Assad". "BBC", 26 October 2015 (http://www.bbc.com/news/av/world-europe-34615198/peskov-dialogue-with-assad-needed):

կազմի որդեգրած հակառուսական քաղաքականությունը բոլորովին վերջերս վերածվեց կոնկրետ գործողությունների: Նախագահ Դոնալդ Թրամպի հրամանով հրթիռակոծվեց այն սիրիական ավիազորակայանը, որտեղից ենթադրաբար Սիրիայի Նախագահ Բաշար ալ Ասադի կարգադրությամբ քիմիական զենքով հարվածներ են հասցվել կառավարությանն ընդդիմադիր ուժերին[24]: Ռուսաստանը խստագույնս դատապարտեց ԱՄՆ-ի նման գործողությունները[25]:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ

Ուսումնասիրվող խնդիրների բնույթը նպատակահարմար է դարձնում մեծ անորոշությունների հետազոտության համար նախատեսված սցենարային պլանավորման մեթոդի ընտրությունը[26]: Այս մեթոդը հնարավորություն է տալիս անորոշության պայմաններում ապագայի կանխատեսման մի քանի մշակված սցենարների միջոցով դյուրինացնել առավել հավանական զարգացումների կանխատեսումը՝ ճիշտ կողմնորոշվելու և հիմնավոր որոշումներ կայացնելու համար:

Սցենարների կառուցման մեթոդը ենթադրում է հետևյալ հաջորդական քայլերի կատարում.

1. սահմանել ուսումնասիրվող խնդրի ժամանակային և տարածական շրջանակները,
2. որոշել հիմնական դերակատարներին,
3. ցույց տալ հիմնական միտումները,
4. առանձնացնել հիմնական անորոշությունները,
5. կառուցել նախնական սցենարային կաղապարները,
6. ստուգել հավանականության և հակասականության աստիճանները,
7. շարադրել սցենարները,
8. համաձայն սցենարների՝ շարադրել քաղաքական որոշումների տարբերակները:

Ժամանակային շրջանակ է ընտրվել ԱՄՆ-ի նորընտիր Նախագահ Դոնալդ Թրամպի պաշտոնավարումը՝ 2017 թ. հունվարից մինչև հունիս ժամանակահատվածը, իսկ **տարածական շրջանակը** ներառում է՝ Եվրաատլանտյան տարածքը, Ռուսաստանը և Մերձավոր Արևելքը:

Հիմնական դերակատարներն են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, ՆԱՏՕ-ն, ԵՄ-ը, Բալթյան պետությունները, Ուկրաինան, Սիրիան:

---

[24] Տես *Jim Garamone.* Trump Orders Missile Attack in Retaliation for Syrian Chemical Strikes, 6 April 2017 (https://www.defense.gov/News/Article/Article/1144601/trump-orders-missile-attack-in-retaliation-for-syrian-chemical-strikes):

[25] Տես «Заявление МИД России в связи с вооруженной акцией США в Сирии 7 апреля 2017 года», 07.04.2017 (http://www.mid.ru/ru/press_service/spokesman/official_statement/-/asset_publisher/t2GCdmD8RNIr/content/id/2717798):

[26] Տես *Paul J. H. Schoemaker.* Scenario planning: a tool for strategic thinking (http://www.ftms.edu.my/images/Document/MOD001074%20-%20Strategic%20Management%20Analysis/WK4_SR_MOD001074_Schoemaker_1995.pdf):

Հիմնական միտումները: Ուկրաինական ճգնաժամում կարճաժամկետ հեռանկարում հիմնական միտումը ստատուս-քվոյի պահպանումն է: Սիրիական ճգնաժամում առկա է լարվածության աճման միտում: Արևելյան Եվրոպայում նկատվում է ստատուս-քվոյի պահպանման միտում:

Հիմնական անորոշությունները: *Ուկրաինական ճգնաժամի* հարցում ԱՄՆ–ՌԴ հարաբերություններում անորոշությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև առավել հավանական է ստատուս-քվոյի պահպանումը, այդուհանդերձ չի բացառվում լարվածության փոփոխություն, ընդսմին ավելի հավանական է ուժգնացումը: Այն կարող է հանգեցնել առաջագծում փոխհրաձգության ինտենսիվացմանը, դեպի առաջագիծ ծանր ռազմական տեխնիկայի տեղափոխմանը, Դոնբասում և Լուգանսկում Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հարցով հանրաքվեի հնարավոր անցկացմանը և այլ իրադարձությունների: Դիվանագիտական ճակատում հնարավոր է, որ Ուկրաինայի կենտրոնական իշխանությունը և Դոնբասն ու Լուգանսկը հրաժարվեն Մինսկ-1 և Մինսկ-2 համաձայնագրերի պայմանների կատարումից:

Արևելյան Եվրոպայի հարցում ևս անորոշությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև առավել հավանական է ստատուս-քվոյի պահպանումը, այդուհանդերձ չի բացառվում լարվածության փոփոխություն, ընդսմին ավելի հավանական է դրա աճումը: Հնարավոր է, որ դա արտահայտվի ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև շփման գծի մոտակայքում նոր ռազմական տեխնիկայի և զորքերի տեղակայմամբ, ինչը կարող է ապակայունացնել իրավիճակը: Չի բացառվում նաև ոչ կանոնավոր կամ հիբրիդային պատերազմի սանձազերծումը[27]:

Սիրիական ճգնաժամը երկկողմ հարաբերություններում կարճաժամկետ հեռանկարում կմնա որպես «տաք» կետ: Կպահպանվի առկա լարվածության մակարդակը: Հաշվի առնելով սիրիական ավիազորակայանին վերջերս ԱՄՆ-ի հասցրած ավիահարվածները՝ կարող ենք կանխատեսել նաև լարվածության որոշակի աճում: Սիրիան այն չեզոք գոտին է, որտեղ ԱՄՆ-ն և Ռուսաստանը պայքարում են միմյանց դեմ զգուշավորությամբ՝ խուսափելով անմիջական առճակատումից: ԱՄՆ-ի և Ռուսաստանի համար ավելի մեծ նշանակություն ունեն, համապատասխանաբար, Արևելյան Եվրոպան և Ուկրաինան, ուստի երկու պետություններն էլ ձգտում են, Մերձավոր Արևելքում ռազմավարական շահերն առաջ մղելուն զուգահեռաբար Սիրիայում պարպելով իրենց փոխհարաբերություններում եղած լարվածությունը, խուսափելու Արևելյան Եվրոպայում և Ուկրաինայում լարվածության էական աճումից և անմիջական բախումից, որոնք կարող են հղի լինել անկանխատեսելի հետևանքներով:

Քննարկված երեք պրոբլեմներից Սիրիան և Արևելյան Եվրոպան առնչվում են ավելի մեծ թվով դերակատարների շահերի հետ: Ուկրաինական ճգնաժամը

[27] Տես *Andrew Radin.* Hybrid Warfare in the Baltics. Threats and Potential Responses. “RAND”, 2017 (https://www.rand.org/pubs/research_reports/RR1577.html):

ԱՄՆ-ի շահերի տեսանկյունից զիջում է իր կարևորությամբ, որովհետև Արևելյան Եվրոպայի պետությունները ՆԱՏՕ-ի ու ԵՄ-ի անդամներ են և ԱՄՆ-ի համար ունեն ռազմավարական նշանակություն՝ անկախ վարչակազմերի փոփոխությունից: Սիրիան կարևոր է Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ռազմավարական շահերի տեսանկյունից:

Ռուսաստանի համար Ուկրաինան և Արևելյան Եվրոպան ունեն կենսական նշանակություն, թեև Սիրիան նույնպես չի զիջում իր կարևորությամբ:

Այսպիսով՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի շահերի առաջադրմամբ կարող ենք պնդել, որ ԱՄՆ–ՌԴ հարաբերությունների համար դիտարկված պրոբլեմներից առավել կարևոր նշանակություն ունեն Արևելյան Եվրոպան և Սիրիան:

Ուստի **սցենարային կաղապարների** կառուցման համար մենք կդիտարկենք Սիրիայի և Արևելյան Եվրոպայի հիմնախնդիրներում առկա անորոշությունները (տես աղ.):

Աղյուսակ

ԱՄՆ–ՌԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ ՄԱՏՐԻՑ

Արևելյան Եվրոպա	**Սիրիական ճգնաժամ**	
Լարվածության ուժգնացում	Լարվածության պահպանում	Լարվածության ուժգնացում
	Սցենար 1. անհավանական	*Սցենար 2. քիչ հավանական*
Ստատուս-քվոյի պահպանում	*Սցենար 3. հավանական*	*Սցենար 4. ամենահավանական*

Առաջին սցենարը ենթադրում է Արևելյան Եվրոպայում լարվածության ուժգնացում և Սիրիական ճգնաժամում լարվածության պահպանում: Այս սցենարը թվում է անհավանական: Իրադարձությունների նման զուգընթացությունը տրամաբանորեն անընդունելի է: Արևելյան Եվրոպայում լարվածության ուժգնացումը ապակայունացնող գործոն է ԱՄՆ–ՌԴ հարաբերությունների բոլոր բաղադրիչների համար, այդ թվում՝ նաև Սիրիական ճգնաժամի համար, ուստի Արևելյան Եվրոպայում լարվածության աճումը չի կարող չհանգեցնել լարվածության աճման նաև Սիրիայում: Այս պատճառով տվյալ սցենարը չենք դիտարկի:

Երկրորդ սցենարը ենթադրում է ինչպես Արևելյան Եվրոպայում, այնպես էլ Սիրիական ճգնաժամում լարվածության ուժգնացում: Սա *քիչ հավանական* սցենար է: Արևելյան Եվրոպայում լարվածության ուժգնացումը կարող է բխել վերջերս Արևելյան Եվրոպայում ԱՄՆ-ի՝ որպես ՆԱՏՕ-ի կարևորագույն անդամ պետության զորքերի և զինտեխնիկայի տեղակայումից[28], ինչը կարելի է դիտարկել նաև ԱՄՆ-ի նոր վարչակազմի՝ Անվտանգության մյունխենյան խորհրդաժողովում Եվրոպական անվտանգությանն աջակցելու խոստման կատարում: Սիրիական ճգնաժամում լարվածության ուժգնացումը կարող է

[28] Տես "US troops, hardware depart for NATO sites in Eastern Europe build-up", 30.03.2017 (https://www.rt.com/news/382877-nato-poland-us-russia):

հետևանք լինել ԱՄՆ-ի իրականացրած հրթիռակոծության, բոլորովին վերջերս Սիրիայի տարածքում անվտանգության գոտիներ սահմանելու մասին Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի որոշման[29], ինչպես նաև այն տեղեկությունների, թե Ռուսաստանը Սիրիա է ուղարկել չեչեններից և ինգուշներից կազմված հատուկ զորախումբ[30]: Ի պատասխան անվտանգության գոտիների ստեղծման մասին հայտարարության՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության պաշտոնյաներից մեկը նշել է, որ անկախ դրանից ԱՄՆ-ը շարունակելու է հարվածներ հասցնել Իսլամական Պետությանը[31]:

Երրորդ սցենարը ենթադրում է, որ Արևելյան Եվրոպայում կպահպանվի ստատուս-քվոն, իսկ Սիրիական ճգնաժամում՝ լարվածությունը: Այս սցենարը *հավանական* սցենար է: Արևելյան Եվրոպայում ստատուս-քվոն կպահպանվի, որովհետև ռազմավարական նշանակություն ունեցող այդ տարածաշրջանում լարվածության ուժգնացումը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների, մի կողմից, ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի և, մյուս կողմից, Ռուսաստանի միջև, ինչն էլ իր հերթին ենթադրում է երաշխավորված կործանում: Սիրիական ճգնաժամում լարվածության պահպանման հավանականությունը հիմնավորված է երկրորդ սցենարի վերլուծության մեջ:

Չորրորդ սցենարը ենթադրում է Արևելյան Եվրոպայում ստատուս-քվոյի պահպանում և Սիրիական ճգնաժամում լարվածության ուժգնացում:Այս սցենարը *ամենահավանականն* է: Դրա վարկածների հիմնավորումները բերված են, համապատասխանաբար, երրորդ և երկրորդ սցենարներում:

ՀՀ-Ի ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԸՍՏ ՍՑԵՆԱՐՆԵՐԻ

Ներկայացված սցենարները ենթադրում են անվտանգության որոշակի միջավայրերի ձևավորում: Հայաստանը Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցն է և տարածաշրջանում ԱՄՆ-ի գործընկերը: Ու թեև ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև հարաբերությունների փոփոխությունները միջնորդավորված կերպով ազդում են Հայաստանի վրա, այնուամենայնիվ Հայաստանը ռուս-ամերիկյան հարաբերությունների տարբեր կերպափոխումների դեպքում պահպանում է իր հավասարակշռված դիրքորոշումը՝ կշռադատված կերպով արձագանքելով այդ փոփոխություններին: Ըստ այդմ փորձենք վերլուծության արգասիքների հիման վրա առաջարկել համապատասխան քաղաքական որոշումներ:

[29] Տես *Dmitry Lee, Galiaskar Seitzhan.* Latest Astana process talks establish de-escalation zones in war-torn Syria. “The Astana Times”, 7 May 2017 (http://astanatimes.com/2017/05/latest-astana-process-talks-establish-de-escalation-zones-in-war-torn-syria):

[30] Տես “Putin Has a New Secret Weapon in Syria: Chechens”. “Foreign Policy”, 4 May 2017 (http:// foreignpolicy.com /2017/05/04/putin-has-a-new-secret-weapon-in-syria-chechens/?utm_content = buffer19e95&utm_medium =social& utm_source = facebook.com & utm_campaign= buffer):

[31] Տես *Thomas Grove, Felicia Schwartz.* U.S. Dismisses Russia’s Ban on Aircraft Over Syrian Safe Zones. “The Wall Street Journal”, 5 May 2017 (https://www.wsj.com/articles/russia-u-s-aircraft-barred-from-syria-safe-zones-1493983021):

Երկրորդ սցենարով Արևելյան Եվրոպայում և Սիրիական ճգնաժամում լարվածության ուժգնացումը երկարաժամկետ հեռանկարում անկանխատեսելի կդարձնի ԱՄՆ–ՌԴ հարաբերությունները, կհանգեցնի տարածաշրջանում ապակայունացման և կողմերի միջև ռազմական բախման դեպքում Հայաստանը՝ որպես ՀԱՊԿ-ի անդամ, ստիպված կլինի ներքաշվել այդ բախման մեջ, ինչը բավական վտանգավոր է:

Երրորդ սցենարի պայմաններում Արևելյան Եվրոպայում ստատուս-քվոյի և Սիրիական ճգնաժամում լարվածության պահպանումը դյուրին են դարձնում Հայաստանի կողմնորոշումը: Այս դեպքում անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել ներկայիս արտաքին քաղաքական ուղեգիծը:

Չորրորդ՝ ամենահավանական, սցենարի դեպքում Հայաստանի վրա անմիջական ազդեցություն չի լինի: Արևելյան Եվրոպայում ստատուս-քվոյի պահպանումը թեև կարճաժամկետ հեռանկարում, այնուամենայնիվ, Հայաստանի համար չի ստեղծի լրացուցիչ կողմնորոշման խնդիրներ, և այս ճակատում ռուս-ամերիկյան հարաբերությունների ստատուս-քվոյի պահպանումը ձեռնտու է Հայաստանին: Սիրիական ճգնաժամում լարվածության ուժգնացումը ԱՄՆ–ՌԴ հարաբերությունների համատեքստում ՀՀ-ի վրա էապես չի անդրադառնա:

ԻՐԱՆ–ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ Վ. ՊՈՒՏԻՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Տ. Մ. ԱՆՏՈՆՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահետազոտական կենտրոնի պատասխանատու քարտուղար

Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության համար կարևոր նշանակություն ունի Ռուսաստանի՝ որպես Հայաստանի ռազմավարական դաշնակցի և Իրանի՝ որպես Հարավային Կովկասում կարևոր դերակատարի հետ հարաբերությունների դինամիկայի ուսումնասիրումը: Իրանի և Ռուսաստանի միջև հարաբերությունները պատմականորեն եղել են մրցակցային, փոխադարձաբար անվստահական, սակայն ներկայումս միջազգային և տարածաշրջանային մակարդակներում նրանց ունեցած շահերի ընդհանրության շնորհիվ դրանք կարելի է բնութագրել որպես «զգուշավոր համագործակցային»: Սկզբնական շրջանում Ռուսաստանի Դաշնության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններում որոշ ժամանակ համապարփակ զարգացում տեղի չէր ունենում: Դա պայմանավորված էր մի շարք պատճառներով, որոնցից են՝ ՌԴ արտաքին քաղաքականությունում եվրաատլանտականության գերակայությունը, ՌԴ-ում տիրող վարչական քաոսը,

երբ առանձին նախարարություններ գործում էին առանց Կրեմլի հետ համաձայնեցման: Ի տարբերություն Ռուսաստանից, Իրանը, փորձելով հաղթահարել իր «ռազմավարական միայնությունը», ձգտում էր Ռուսաստանի հետ կնքելու ռազմավարական դաշինք:

Ռուս-իրանական հարաբերությունների դինամիկան կտրուկ կերպով փոխվեց, երբ 2000 թ. մարտի 26-ին ՌԴ Նախագահ դարձավ Վ. Պուտինը: Այդ ժամանակ Ռուսաստանն ուներ լուրջ ներքին և արտաքին անվտանգային մարտահրավերներ, ինչպիսիք էին տնտեսության ծանր վիճակը, ռուբլու անկումը, չեչենական անջատողականների զինված պայքարը, Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում շարունակվող էթնիկական հակամարտությունները, ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արևելք[1] և այլն: Վ. Պուտինը ձեռնամուխ եղավ միջազգային ասպարեզում Ռուսաստանի՝ որպես ուժեղ պետության կարգավիճակի վերականգնմանը: Նախ նա ազատվեց այն բոլոր ինքնուրույն, արդեն օլիգարխ դարձած նախարարներից, որոնք, լինելով ռուսական կառավարությունում, միևնույն ժամանակ գործում էին Կրեմլի վերահսկողությունից դուրս, իսկ երբեմն նաև՝ պետության շահերին հակառակ: Նման մարդկանց Պուտինը համարում էր պետականության թշնամի: Կոռումպացված և Կրեմլից անկախ գործող չինովնիկներին հեռացնելով պաշտոնից՝ Պուտինը ամրապնդեց պետական համակարգը[2]:

Վ. Պուտինը ակտիվացրեց նաև ՌԴ արտաքին քաղաքականությունը: Այդ համատեքստում նոր հեռանկարներ բացվեցին նաև Իրան–Ռուսաստան հարաբերությունների ասպարեզում: Նախագահ դառնալուն պես Պուտինը հեռախոսային զրույցներ և հանդիպումներ ունեցավ ԻԻՀ բարձրագույն ղեկավարության հետ, իսկ 2000 թ. դեկտեմբերի 1-ին նա դենոնսացրեց Գոռ–Չեռնոմիրդին համաձայնագիրը[3], համաձայնվեց զենք վաճառել Իրանին՝ միայն իրավական հիմունքներով, ինչպես նաև վերսկսել աշխատանքները Բուշերի ատոմակայանում:

Դեռ 2000 թ. հունվարի 14-ին ՌԴ նորանշանակ Պաշտպանության նախարար Իգոր Սերգեևը Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Հասան Ռոհանիի հետ բանակցություններից հետո հայտարարեց, որ «Իրանը և Ռուսաստանը մտադիր են զարգացնելու հարաբերությունները բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ռազմական և ռազմատեխնիկական, և երրորդ պետություններին թույլ չեն տալու միջամտել»[4]: Մինչդեռ Ելցինի

[1] Տես *Andrei P. Tsygankov.* Russia's Foreign Policy: Change and Continuity in National Identity. Ed. 3. Rowman & Littlefield publishers, 2013, PP. 95–96:

[2] Տես *Andrew Jack.* Inside Putin's Russia. Oxford, 2004, PP. 174–215:

[3] Տես *Дмитрий Горностаев, Игорь Коротченко.* Кремль отказался не от сделки Гор-Черномырдин, а от продолжения ельцинской внешней политики. «Независимая газета», 24.11.2000 (http://www.ng.ru/politics/2000-11-24/1_denies.html):

[4] Տես «Маршал Сергеев нарушил протокол». «Коммерсант», 15.01.2000, № 003 (http://www.kommersant.ru/doc/137082):

օրոք Ռուսաստանը շեշտում էր, որ Իրանի հետ իր ունեցած հարաբերությունները ուղղված չեն Միացյալ Նահանգների դեմ:

Իրանի և Ռուսաստանի նախագահների առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2001 թ. մարտի 11-ին, երբ Իրանի Նախագահ Մ. Խաթամին պաշտոնական այցով ժամանեց Մոսկվա[5]: Այցի ընթացքում ստորագրվեցին երկու փաստաթղթեր՝ Ռուսաստանի և Իրանի միջև փոխհարաբերությունների հիմունքների և համագործակցության սկզբունքների մասին պայմանագիրը[6] ու Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ համատեղ հայտարարությունը[7]: Իրանի և Ռուսաստանի նախագահները նաև նշեցին, որ քաղաքական, տնտեսական, առևտրային, մշակութային և այլ ոլորտներում Իրանի և Ռուսաստանի համագործակցությունը բխում է երկու պետությունների ազգային շահերից և նպաստում է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանմանը: Կողմերը շեշտեցին, որ թե՛ Իրանը, թե՛ Ռուսաստանը չեն ընդունում աշխարհի միաբևեռությունը, հանդես են գալիս հօգուտ միջազգային իրավունքի գերակայության, միջազգային հարաբերություններում ուժի կիրառման դեմ: Մոհամմադ Խաթամիի հետ բանակցությունների ժամանակ Վլադիմիր Պուտինը շեշտեց, որ Ռուսաստանը Իրանին դիտում է որպես ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական գործընկերոջ[8]:

Պուտին–Խաթամի հանդիպումը իրանա-ռուսաստանյան հարաբերություններում մինչ այդ տեղի ունեցած ամենակարևոր իրադարձություններից էր: Այս ամենով հանդերձ, սխալ են այն փորձագետները, որոնք ռուս-իրանական հարաբերությունները բնութագրում են որպես ռազմավարական[9]: Ռազմավարական բնույթի որևէ համաձայնագիր կամ պայմանագիր կողմերը առ այսօր չեն ստորագրել և հաշվի առնելով նրանց հարաբերություններում առկա որոշակի անվստահությունը՝ մոտ հեռանկարում ռազմավարական բնույթի հարաբերությունների մասին խոսելը սխալ է. Ռուսաստանը ձգտում էր ռազմավարական բնույթի հարաբերություններ հաստատելու ԱՄՆ-ի հետ:

2001 թ. հունիսի 16-ին Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայում տեղի ունե-

---

[5] Տես «Владимир Путин встретился с Президентом Ирана Сейедом Мохаммадом Хатами», 12 марта 2001 (http://kremlin.ru/events/president/news/40766):

[6] Տես «Договор об основах взаимоотношений и принципах сотрудничества между Российской Федерацией и Исламской Республикой Иран», 12.03.2001 (http://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-2/46488?_storageviewer_WAR_storageviewerportlet_advancedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=%D0%B8%D1%80%D0%B0%D0%BD&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1):

[7] Տես «Пресс-конференция по итогам переговоров с Президентом Ирана Сейедом Мохаммадом Хатами», 12 марта 2001 (http://kremlin.ru/events/president/transcripts/21205):

[8] Տես նույն տեղում:

[9] Տես, օրինակ, *Антон Евстратов.* Стратегический союз России и Ирана: предпосылки и расхождения. «EurAsia Daily», 28 февраля 2017 (https://eadaily.com/ru/news/2017/02/28/strategicheskiy-soyuz-rossii-i-irana-predposylki-i-rashozhdeniya):

ցավ ՌԴ Նախագահ Վ. Պուտինի և ԱՄՆ-ի Նախագահ Ջ. Բուշի առաջին հանդիպումը, որին հաջորդած ասուլիսի ժամանակ նախագահները հայտնեցին Իրանի հետ կապված իրենց մտահոգությունները[10]: 2002 թ. մայիսի 24-ին Մոսկվայում[11] կայացած Ջ. Բուշ–Վ. Պուտին հանդիպման ժամանակ ստորագրվեցին ռազմավարական հարձակողական ներուժի կրճատման մասին պայմանագիրը[12], ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև ռազմավարական բնույթի հարաբերությունների մասին համատեղ հայտարարությունը[13], ձեռք բերվեց ՆԱՏՕ–Ռուսաստան խորհրդի հաստատման մասին համաձայնություն: Ինչպես այդ ժամանակ Մոսկվայում, այնպես էլ նույն թվականի հունիսի 26–27-ը Կանադայի Կանանասկիս քաղաքում տեղի ունեցած Մեծ ութնյակի պետությունների հանդիպման շրջանակում Ջ. Բուշը և Վ. Պուտինը Իրանի միջուկային ծրագրերի առնչությամբ հայտնեցին իրենց մտահոգությունը[14]: Իրանական մամուլում երևան եկան Ռուսաստանին քննադատող որոշ հրապարակումներ, որոնցից մեկում նույնիսկ ասվում էր, որ Պուտինը օգնում է Բուշին նոր աշխարհաքաղաքական կարգեր հաստատելու գործում[15]:

Մինչ Մոսկվայի կարևոր հանդիպումը՝ 2002 թ. հունվարին, ԱՄՆ-ը Իրանին Իրաքի և Հյուսիսային Կորեայի հետ ներառել էր «չարի առանցքը» կազմող պետությունների շարքում: Տվյալ հանգամանքը, իհարկե, Մոսկվայում առանձնապես մեծ արձագանք չստացավ: Սակայն ռուս-ամերիկյան հարաբերությունները որոշակիորեն սառեցին, երբ 2003 թ. մարտի 19-ի գիշերը, առանց ՄԱԿ-ի ԱԽ-ի թույլտվության, մի կազմակերպության, որտեղ Ռուսաստանն ունի վետոյի իրավունք, ԱՄՆ-ի գլխավորած դաշնադրության զորքերը հարձակվեցին Իրաքի վրա[16]: Ռուս-ամերիկյան հարաբերությունների ռազմավա-

[10] Տես "Press Conference by President Bush and Russian Federation President Putin", 16 June 2001 (https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2001/06/2001 0618.html):

[11] Տես "Text: Bush and Putin's joint declaration". "The Guardian»", 24 May 2002 (https://www.theguardian.com/world/2002/may/24/usa.russia):

[12] Տես «Договор между Российской Федерацией и Соединенными Штатами Америки о сокращении стратегических наступательных потенциалов», 24.05.2002 (http://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/2_contract/-/storage-viewer/bilateral/page-23 / 46374?_storageviewer_WAR_storageviewerportlet_advanceedSearch=false&_storageviewer_WAR_storageviewerportlet_keywords=%D0%A1%D0%A8%D0%90&_storageviewer_WAR_storageviewerportlet_fromPage=search&_storageviewer_WAR_storageviewerportlet_andOperator=1):

[13] Տես «В Кремле состоялись переговоры Владимира Путина и Президента США Джорджа Буша», 24 мая 2002 (http://kremlin.ru/events/president/news/27054):

[14] Տես "U.S., Russia Continue Joint Efforts to Fight Terrorism", 27, June 2002 (https://georgewbush-whitehouse.archives.gov/news/releases/2002/06/text/20020627-3.html):

[15] Տես «Պուտինի մասնակցությունը ՆԱՏՕ-ի վերջերս կայացած գագաթնաժողովում» (պրսկ.) (http://www.mehrnews.com/news/658099/):

[16] Տես "Bush makes historic speech abroad". "CNN", 2 May 2003 (http://edition.cnn.com/2003/US/05/01/bush.transcript/):

րական և դաշնակցային բնույթը վերջնականապես անհետացավ Ուկրաինայում, Վրաստանում, Ղրղզստանում տեղի ունեցող «գունավոր հեղափոխությունների», ԱՄՆ-ի միաբևեռայնության քաղաքականության պատճառներով, որոնք Վ. Պուտինը և ՌԴ քաղաքական վերնախավը ընկալում էին որպես Ռուսաստանի անվտանգային շահերի համար սպառնալիք: Ըստ քաղաքագետ Քենետ Ուոլցի՝ միաբևեռայնությունն է նպաստում պատերազմների առաջացմանը, քանի որ հակակշռող ուժեր չլինելու հետևանքով գերտերությունն սկսում է իրեն վերապահել պատերազմներ սանձահարելու իրավունք[17]: Արևմուտքի նկատմամբ Պուտինի վարած պրագմատիկ քաղաքականությունը դարձավ ավելի կոշտ և հաստատուն, քան երբևէ եղել էր Բ. Ելցինի կառավարման տարիներին:

Արևմուտքի նկատմամբ Պուտինի այս կոշտ քաղաքականությունը կարելի է բացատրել *պետութենակենտրոնության (statism, государствоцентричность)* գաղափարախոսությամբ, որի համաձայն պետությունը կենտրոնացված կերպով վերահսկում է երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտները: Պետութենակենտրոնության գաղափարախոսությունը իր արտացոլումն ստացավ նաև ՌԴ արտաքին քաղաքականությունում: Դեռ 1999 թ. դեկտեմբերի 30-ին լույս տեսավ Պուտինի «Ռուսաստանը հազարամյակների սահմանագծում» վերնագրով զեկուցումը[18], որում ուրվագծված էին արտաքին քաղաքականության նպատակները և ուղղվածությունը: Զեկուցման մեջ նշվում էր, որ ռուսները Խորհրդային Միության փլուզումից հետո կորցրել են իրենց ինքնությունը և մեծապես ընդունել են արևմտյան արժեհամակարգը՝ մոռանալով այն, ինչ բնորոշ է ռուսին՝ ազգասիրությունը, կոլեկտիվիզմը, համերաշխությունը և վեհապետականությունը (*державность*): Ըստ Պուտինի՝ Ռուսաստանը կարող է հզոր ուժ դառնալ միայն այս սկզբունքները հասարակության մեջ ներմուծելու պարագայում:

Պուտինը հզոր պետականության *անհրաժեշտ, բայց ոչ բավարար* պայման է համարում ազգային արժանապատվությունը: Ըստ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերով փորձագետ Ցիգանկովի՝ ՌԴ արտաքին հարաբերությունները հնարավոր է ընկալել և հասկանալ ազգային արժանապատվության հասկացության միջոցով: Ցիգանկովը այդ հասկացությունը սահմանում է որպես «բարդ հասկացություն, որը զարգացել է արտաքին և ներքին գործոնների բախման հետևանքով»[19]:

Արևմուտքի հետ հարաբերություններում Ցիգանկովը առանձնացնում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության երեք բաղադրիչ՝ համագործակցային, պաշտպանողական և հաստատակամային, կամ պարտադրող:

---

[17] Տես *Kenneth N. Waltz*. Realist Thought and Neorealist Theory. “Journal of International Affairs”, Spring/Summer 1990, Vol. 44, N 1:

[18] Տես *Владимир Путин*. Россия на рубеже тысячелетий. «Независимая газета», 30.12.1999 (http://www.ng.ru/politics/1999-12-30/4_millenium.html):

[19] Տես *Andrey P. Tsygankov*. Russia and the West from Alexander to Putin: Honor in International Relations. Cambridge University Press, 2012, PP. 22–24, 32–36, 237–251, 264–266:

Եթե արևմտյան պետությունները ճանաչում են Ռուսաստանի շահերը, ապա ՌԴ արտաքին քաղաքականությունը դառնում է համագործակցային, եթե չկա ճանաչում և ներքաղաքական վստահությունը բարձր է, ապա պարտադրող է: Օրինակ՝ Վրաստանի պատերազմի ժամանակ ՌԴ-ն պատրաստ էր պատերազմելու, քանի որ Արևմուտքը և Վրաստանը չհարգեցին տարածաշրջանում ՌԴ հատուկ կարգավիճակը և ազգային արժանապատվությունը:



Նկ. ՌԴ արտաքին քաղաքականության կախումը արժանապատվությունից

Միևնույն ժամանակ, տնտեսագիտական վերլուծությունները փաստում են, որ ՌԴ բնակչության կենսամակարդակը մինչև 2008 թ. բարձրանում էր, և պետության նկատմամբ կար մեծ վստահություն:

Ազգային արժանապատվությունը կարևոր նշանակություն ունի նաև Իրանի արտաքին քաղաքականությունում: Եթե ԱՄՆ-ը կարողանար հարգել Իրանի և Ռուսաստանի ազգային արժանապատվությունները, նրանց շահերը, ապա Իրան–Ռուսաստան քաղաքական հարաբերությունները չէին լինի այնքան բարձր մակարդակի վրա, որքան հիմա են:

ԱՄՆ-ի միաբևեռայնության քաղաքականության դեմ պայքարը այն հիմնական գործոնն է, որի հետևանքով խորանում են Ռուսաստան–Իրան հարաբերությունները: Դա հատկապես ցայտունորեն դրսևորվեց այն ժամանակ, երբ Իրանում Նախագահ ընտրվեց պահպանողական հայացքների տեր Մ. Ահմադինեժադը, որի արտաքին քաղաքականությունը հենվում էր «դիմակայության» գաղափարի վրա: Այդ գաղափարի հիման վրա Մ. Ահմադինեժադը կիրառում էր երկու ռազմավարություն՝ «Հայացք դեպի Արևելք» և «Հարավ–Հարավ դաշինքներ»: Համաձայն առաջին ռազմավարության՝ Իրանը պետք է սերտ հարաբերություններ կառուցի այսպես կոչված Արևելյան ուժերի, հատկապես՝ Չինաստանի և Ռուսաստանի հետ, որոնց համագործակցությամբ կարող է ստեղծվել Ասիայում ամերիկյան հեգեմոնիստական ձգտումներին հակազդող հզոր ուժ: Իսկ «Հարավ–Հարավ դաշինքների» ռազմավարության համաձայն՝ Իրանը պետք է ամրապնդի իր հարաբերությունները ինչպես Չմիավորման շարժման անդամների, այնպես էլ լատինաամերիկյան պետությունների, մասնավորապես՝ Վենեսուելայի, Նիկարագուայի, Բոլիվիայի հետ, որոնք նույնպես ձգտում են պայքարելու «իմպերիալիզմի» դեմ:

«Հայացք դեպի Արևելք» ռազմավարության համատեքստում զարգացնելով Ռուսաստանի հետ իր հարաբերությունները՝ Իրանը պարբերաբար նրան

առաջարկում էր տարբեր ձևաչափերով համագործակցություն: 2007 թ. հունվարին ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովը ԻԻՀ Հոգևոր առաջնորդ Ալի Խամենեիի հրավերով ժամանեց Իրան: Համաձայն ռուսաստանյան աղբյուրների՝ Ալի Խամենեին Ռուսաստանին առաջարկեց ընդհանուր հակառակորդի դեմ պայքարում Իրանի հետ ստեղծել ռազմավարական դաշինք, ինչպես նաև կիսել Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների ապագայի համար քաղաքական պատասխանատվությունը[20]: Խամենեիի անձնական ներկայացուցիչ Ալի Աքբար Վելայաթին Խամենեիի առաջարկությունը ավելի հանգամանորեն ներկայացրեց ՌԴ Արտաքին գործերի նախարար Ս. Լավրովին և Վ. Պուտինին 2007 թ. փետրվարին Մոսկվայում: Այս առաջարկությունն ամբողջությամբ չի հրապարակվել, բայց որոշ հետազոտողներ «Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների ապագայի նկատմամբ քաղաքական պատասխանատվության կիսում» ռազմավարական գաղափարը մեկնաբանում են որպես Իրանի և Ռուսաստանի միջև նշված տարածաշրջանների բաժանում իրենց ազդեցության ոլորտների և հրաժարում այդ տարածաշրջաններում գերիշխող դիրք ունենալու համար մրցակցությունից[21]: Բայց այդպես էլ հայտնի չդարձավ, թե Ռուսաստանն ինչպես արձագանքեց տվյալ առաջարկությանը:

Ռուս-իրանական հարաբերություններում բեկումնային փուլ էր 2007 թ. հոկտեմբերի 16-ը, երբ Նախագահ Պուտինը աշխատանքային այցով ժամանեց Թեհրան[22]: Դա 1943 թվականից ի վեր Կրեմլի առաջնորդի առաջին այցն էր Իրան: Վ. Պուտինը Թեհրանում մասնակցեց Երկրորդ կասպյան գագաթնաժողովին, ինչպես նաև հանդիպեց Իրանի Հոգևոր առաջնորդ Խամենեիի և Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ: Երկու պետությունների առաջնորդները ելույթներում կարևորեցին համընդհանուր և տարածաշրջանային անվտանգության ապահովմանն ու համակողմանի զարգացմանը միտված արդար և ժողովրդավարական աշխարհակարգի ստեղծմանը նպատակաուղղված իրենց համագործակցությունը:

Թեև Ահմադինեժադի նախագահության շրջանում Իրանն ու Ռուսաստանը ակտիվորեն պայքարում էին ԱՄՆ-ի միաբևեռայնության քաղաքականության դեմ, սակայն ԻԻՀ Նախագահի հակաարևմտյան հռետորաբանությունը, աշխարհի քարտեզից ԱՄՆ-ի դաշնակից Իսրայելին ջնջելու մասին հայտարարությունները, միջուկային ծրագրին նոր թափ հաղորդելու քաղաքականությունը Ռուսաստանի համար դժվարացնում էին «իրանական քարտով» տարաշարժման հնարավորությունները: Ռուսաստանը կողմ քվեարկեց ինչպես 2006 թ. հուլիսին Իրանի միջուկային ծրագիրը Ատոմային էներգետի-

[20] Տես *Mikhail Zygar.* Iran Counsels Russia on Security Matters. “Kommersant”, 9 February 2007, P. 9:

[21] Տես *Mark Katz.* Russian-Iranian Relations in the Ahmadinejad Era. “Middle East Journal”, spring 2008, Vol. 62, N 2 (http://digilib.gmu.edu/jspui/bitstream/handle/1920/3013/Russia%20Iran%20MEJ%202008.pdf?sequence=1):

[22] Տես «Владимир Путин встретился с духовным лидером Ирана аятоллой Сейедом Али Хаменеи», 16 октября 2007 (http://kremlin.ru/events/president/news/43005):

կայի միջազգային գործակալությունից (ՄԱԳԱՏԷ) ՄԱԿ-ի ԱԽ-ի օրակարգ տեղափոխելուն, այնպես էլ հետագայում Իրանի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած բանաձևերին: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Ռուսաստանի համար ԱԽ-ն շատ ավելի վերահսկելի էր, և որ նա փորձում էր պատժամիջոցներով կանխել Իրանի նկատմամբ ռազմական հարված հասցնելու սցենարների իրագործումը, ինչի հնարավորությունն ավելի էր մեծանում Իրանի ագրեսիվ պահվածքի պատճառով: Ինչպես նշում է ռուս փորձագետ Դմիտրի Տրենինը, «Ռուսաստանի համար ավելի ընդունելի էր, որ Իրանը բավարարի իր միջուկային ձգտումները, քան այդ միջուկային ձգտումները սաստելու համար ԱՄՆ-ը գործադրի ռազմական ուժ»[23]:

Հարկ է նշել, որ Իրանի նկատմամբ պատժամիջոցների ընդունմանը Ռուսաստանի աջակցությունը Իրանում ժամանակ առ ժամանակ բարձրացնում էր բուռն դժգոհության ալիք[24]: Մեջլիսում տեղի ունեցան քննարկումներ Ռուսաստանին վստահելի գործընկեր համարելու հարցով: Մեջլիսի փոխնախագահ Մուրէդդին Փիր-Մոազենը հայտարարեց, որ Ռուսաստանը վարում է «երկդիմի քաղաքականություն», և որ Իրանը պետք է անմիջականորեն բանակցի ԱՄՆ-ի հետ[*], քանի որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Եվրոպան փորձում են օգուտ քաղել Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակից[25]: Իրանի սահմաններից դուրս միջուկային վառելիքը հարստացնելու ռուսաստանյան ծրագիրը Իրանի Մեջլիսում ևս բարձրացրեց դժգոհության ալիք: Պատգամավոր Ձավադ Ձահանգիրզադեհը այն համարեց ավելի վնասաբեր, քան Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը[26]:

---

[23] Տես *Dmitri Trenin, Alexei Malashenko.* Iran– a view from Moscow. Carnegie Endowment for International Peace, 2010 (http://carnegieendowment.org/files/iran_view_moscow.pdf):

[24] Տես *Shireen T. Hunter*. Iran's Foreign Policy in the Post-Soviet Era: Resisting the New International Order. Praeger, 2010, P. 29:

[*] Անմիջականորեն ԱՄՆ-ի հետ բանակցելու և հարաբերությունները վերականգնելու առաջարկություններ Իրանում հնչել էին դեռ 2003 թ. ապրիլին՝ Իրաքի գրավումից հետո: Իրանում Շվեյցարիայի դեսպանի միջոցով, որը ներկայացնում է ԱՄՆ-ի շահերը, Վաշինգտոնին փոխանցվեց 2 էջանոց փաստաթուղթ, որով Իրանի իշխանություններն ԱՄՆ-ին առաջարկում էին սկսել հարաբերությունների վերականգնման հարցով բանակցություններ՝ խոստանալով լիակատար համագործակցություն Իրանի միջուկային ծրագրի, Իսրայելի Պետության ճանաչման և Պաղեստինի ռազմական խմբավորումներին աջակցությունը դադարեցնելու հարցերում: Նամակի հեղինակը Իրանի Արտաքին գործերի նախարար Քամալ Խարազիի զարմիկն էր՝ Ֆրանսիայում ԻԻՀ դեսպան Սադեղ Խարազին, որը վայելում էր ԻԻՀ Հոգևոր առաջնորդ Խամենեիի և ԻԻՀ Նախագահ Մ. Խաթամիի վստահությունը: Սակայն Ջ. Բուշի վարչակազմը, համարելով, որ ԻԻՀ վարչակարգը շուտով տապալվելու է, մերժեց Իրանի առաջարկությունը: Իրանը դա համարեց իր արժանապատվության ոտնահարում և դադարեցրեց հետսադամյան Իրաքի խնդրով 2003 թ. մայիսի 3-ին ժնևում սկսված ԱՄՆ–Իրան 3-րդ բանակցությունները (ավելի հանգամանորեն տես *Glenn Kessler.* In 2003, U.S. Spurned Iran's Offer of Dialogue, 18 June 2006 (http://www.washingtonpost.com/wpdyn/content/article/2006/06/17/AR2006061700727.html)):

[25] Տես «ԲիԲիՍի-ի հարցազրույցը Նուրէդդին Փիր Մոազենի հետ» (պրսկ.) (http://www.fardanews.com/fa/news/50303/):

[26] Տես *Vahid Sepehri.* Iran: Consensus that Russia and the West are no friends of Tehran, 28 February 2006 (http://www.rferl.org/a/1066244.html):

Այս դժգոհությունը շարունակվեց, երբ 2008 թ. մարտին ՌԴ Նախագահ ընտրվեց Դ. Մեդվեդևը, որը Արևմուտքի հետ հարաբերություններում զգուշավոր արդիականացման իր տեսլականով փորձեց մեղմել Պուտինի արմատական պետութենակենտրոնությունը և կոշտ արտաքին քաղաքականությունը: 2008 թ. հունիսին Բեռլինում Մեդվեդևն առաջարկեց համաեվրոպական նոր պայմանագրի կնքում՝ նոր անվտանգային ճարտարապետության նախագծով[27]: Հետաքրքրականն այն է, որ քաղաքագետ Ցիգանկովի կարծիքով, դրա հիմնավորման առումով Մեդվեդևի համար նոր հնարավորություն ստեղծեց 2008 թ. վրաց-ռուսական պատերազմում ՆԱՏՕ-ի անգործությունը[28]: ԱՄՆ-ի Նախագահ Բ. Օբաման 2009 թ. հուլիսին Մոսկվա կատարած իր այցի ժամանակ Դ. Մեդվեդևի հետ համատեղ հայտարարեց ռուս-ամերիկյան հարաբերությունների վերագործարկման *(reset)* մասին: Նրանք ստորագրեցին նոր՝ Ռազմավարական սպառազինության կրճատման պայմանագիր[29]: Դ. Մեդվեդևի նախագահության օրոք Ռուսաստանը 2012 թ. դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ:

Ռուս-ամերիկյան հարաբերությունների ջերմացման միտումները Իրանի վարչակազմի շրջանում առաջ բերեցին որոշակի մտահոգություն, հատկապես, որ Իրանում այդ ջերմացման հետ էին կապում ՄԱԿ-ի ԱԽ-ում 2010 թ. Իրանի դեմ ընդունված 1929 բանաձևին ՌԴ կողմ քվեարկելը և Իրանին հակաօդային պաշտպանության Ս-300 համալիրների վաճառքից Ռուսաստանի հրաժարումը: 2010 թ. հուլիսի 26-ին Իրանի Նախագահ Մ. Ահմադինեժադը ՌԴ Նախագահ Դ. Մեդվեդևին մեղադրեց «ԱՄՆ-ի դուդուկի տակ պարելու մեջ», իսկ ՌԴ ԱԳՆ-ն այդ հայտարարությունները համարեց անընդունելի[30]:

Ռուս-իրանական հարաբերություններում սառույցը սկսեց հալել 2012 թ., երբ Վ. Պուտինը կրկին ընտրվեց ՌԴ Նախագահ: Թեև 2011 թ. Ռուսաստանը Լիբիային ռազմական հարված հասցնելու գործում աջակցեց Արևմուտքին, սակայն հետագա զարգացումները՝ 2011–2012 թթ. Ռուսաստանում Պուտինի դեմ ուղղված հասարակական բողոքներին Արևմուտքի աջակցությունը, Սիրիական հակամարտությունը, Ուկրաինական ճգնաժամը, փոխեցին ԱՄՆ–Ռուսաստան հարաբերությունների դինամիկան: Արևմուտքի և ՌԴ-ի միջև նման լարվածությունը «Սառը պատերազմի» ավարտից հետո աննախադեպ էր: Այս լարվածությունը դարձավ Իրանի հետ հարաբերությունները ամրապնդելու ևս մեկ պատճառ: Իրանա-ռուսաստանյան հարաբերությունների ակտիվացմանը նպաստեցին նաև Իրանի միջուկային ծրագրի հարցով վերսկսված՝ 5+1 ձևաչափով բանակցությունները, հետագայում ձեռք բեր-

[27] Տես *Yury Fedorov.* Medvedev's Initiative: A Trap for Europe? (http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/d-ru/dv/d_ru_20100916_27_/d_ru_20100916_27_en.pdf):

[28] Տես *Andrei P. Tsygankov.* Russia's Foreign Policy:..., P. 215:

[29] Տես "New START". "U.S. Department of State" (https://www.state.gov/t/avc/newstart/):

[30] Տես *Graeme Gill, James Young.* Routledge Handbook of Russian Politics and Society. New York, 2012, P. 46:

ված պայմանավորվածությունները, ՌԴ–Իրան բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումները: ՌԴ նախագահական ընտրություններից երկու ամիս անց Պուտինը 2012 թ. հունիսի 7-ին Համագործակցության Շանհայի կազմակերպության (ՀՇԿ) գագաթնաժողովի ժամանակ հանդիպեց Մ. Ահմադինեժադի հետ և հայտարարեց, որ Ռուսաստանը հետաքրքրված է Իրանի հետ հարաբերությունների հետագա զարգացմամբ: Ընդսմին, նա Իրանն անվանեց «հին ավանդական գործընկեր»:

Ռուսաստանն սկսեց որոշակիորեն մտահոգվել, երբ Իրանում 2013 թ. հունիսի 14-ին Նախագահ ընտրվեց բարեփոխական Հասան Ռոհանին, քանի որ Արևմուտքի հետ հարաբերությունների որոշակի բարելավմանն ուղղված նրա արտաքին քաղաքականությունը նվազեցնում էր իրանական հարցում Ռուսաստանի տարաշարժման հնարավորությունները: Ռոհանիի կառավարման սկզբնական փուլում ռուսաստանյան իշխանությունները Թեհրանից ստացան որոշակի ազդակներ, թե հարաբերությունների խորացման համար հնարավորության պատուհանը կարող է փակվել, եթե Կրեմլը չակտիվացնի Իրանի հետ կապերը բարելավելու իր ջանքերը:

2013 թ. օգոստոսի կեսին ռուսաստանյան դիվանագետներին չհաջողվեց կազմակերպել Պուտինի այցը Իրան, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Իրանը չէր ընդունել այցի՝ Կրեմլի առաջարկած ձևաչափը: Այդ առաջարկությունը չէր համապատասխանում Թեհրանի ակնկալիքներին, քանի որ իրանցիները ձգտում էին կազմակերպելու ՌԴ Նախագահի ավելի բարձր մակարդակի այցելություն, մինչդեռ ռուսները այն սահմանափակում էին որպես այց Կասպից ծովի մերձափնյա ավազանի երկրներ, այդ թվում և Իրան: Այցի այդ ձևաչափի մերժումը զարմացրեց ռուսաստանյան իշխանություններին, որոնք վարժվել էին ՌԴ և Իրանի նախագահների հետ հանդիպումները կազմակերպելիս հանդես գալ գերազանցապես թելադրողի դերում: Ի տարբերություն Ահմադինեժադից, որը յուրաքանչյուր առիթի դեպքում համաձայնվում էր հանդիպել ՌԴ պաշտոնյաների հետ և չէր կարողանում Արևմուտքի հետ երկխոսել, Ռոհանին վարում էր ավելի ճկուն դիվանագիտական քաղաքականություն:

2015 թ. հուլիսին Իրանի միջուկային ծրագրի հարցով բանակցությունները, որոնք ավարտվեցին Իրանի և 5+1 խմբի միջև Գործողությունների համընդգրկուն համատեղ պլանի ստորագրմամբ, Ռուսաստանին Ղրիմի միանալուց հետո Արևմուտքի հետ ՌԴ առաջին լուրջ համագործակցությունն էր:

ԱՄՆ-ի միջազգային հեգեմոնիստական ձգտումների սահմանափակման համատեքստում Իրանի և Ռուսաստանի հարաբերություններն ակտիվացան հատկապես Սիրիական հակամարտության առնչությամբ: Թեև Սիրիայում նրանք ունեն տարբեր երկարաժամկետ աշխարահաքաղաքական շահեր, ինչի բերումով երկու պետությունների միջև տարածաշրջանային ռազմավարական դաշինքի ստեղծման հեռանկարն անորոշ է, սակայն տվյալ հարցն էր, որ հիմքեր ստեղծեց Իրան–Ռուսաստան հարաբերություններում ռազմական և քաղաքական համագործակցության ընդլայնման համար:

Եվ այսպես. թեև Իրան–Ռուսաստան հարաբերությունները ներկայումս ակտիվորեն զարգանում են, սակայն հավանաբար չեն դառնա ռազմավարական, քանի որ Իրանի հետ հարաբերությունների հետագա խորացումը գերազանցապես կախված է Ռուսաստան–ԱՄՆ հարաբերությունների դինամիկայից: Ըստ ամենայնի, ԱՄՆ–Ռուսաստան սառը հարաբերությունները Դ. Թրամպի նախագահության ժամանակ նույնպես կշարունակվեն, քանի որ, ինչպես նշում է Ս. Հանտինգտոնը, Արևմուտքն իր մշակութային արժեքների պահպանման հարցում Ռուսաստանին՝ նրա «անձնիշխանական (ավտորիտար)» անցյալով և անկայուն քաղաքական ներկայով հանդերձ, ավելի շատ դիտում է որպես սպառնալիքի, քան «ռազմավարական գործընկերոջ»[31]:

[31] Տես *Samuel P. Huntington.* The Clash of Civilizations and the Remaking of World Order. Simon and Schuster, 2011:

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

АНАЛИЗ ДИНАМИКИ ОТНОШЕНИЙ США–РФ ПРИ НОВОЙ АДМИНИСТРАЦИИ США И ПРОГНОЗ ИХ РАЗВИТИЯ

Г. В. АГАДЖАНЯН, магистр Университетского колледжа Лондона, аспирант НИУО МО РА, ученый-аналитик Центра региональных стратегических анализов ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Отношения США–РФ при новой администрации США анализируются на базе трех ключевых проблем: конфронтация НАТО–РФ в Восточной Европе (Латвия, Литва, Польша, Эстония), кризисы на Украине и в Сирии, в позициях по которым наблюдаются существенные расхождения. С учетом наличия высокой степени неопределенностей в эволюции данных проблем в качестве метода исследования было выбрано сценарное планирование.

В соответствии с данным методом были построены 4 сценарные модели, из которых в качестве наиболее вероятной была оценена модель сохранения статус-кво в Восточной Европе и роста напряжения в Сирийском конфликте. Дана оценка этих моделей с точки зрения безопасностных интересов Республики Армения.

ДИНАМИКА ОТНОШЕНИЙ ИРАНА И РОССИИ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ВЛАДИМИРА ПУТИНА

Т. М. АНТОНЯН, капитан, ответственный секретарь научно-публицистического центра НИУО МО РА

РЕЗЮМЕ

Отношения Исламской Республики Иран и Российской Федерации, несмотря на взаимное недоверие и соперничество в прошлом, с приходом к власти в России Владимира Путина, благодаря общим интересам в сфере

международной и региональной безопасности, могут быть охарактеризованы как «осторожное партнерство». Хотя в начале своего президенства Путин тоже стремился к установлению стратегических отношений с соперником Ирана – США, однако в этот период российско-иранские отношения начали активизироваться. После охлаждения российско-американских отношений в результате вторжения США и союзников в Ирак без санкции Совета Безопасности ООН Путин, считая неприемлемым стремление США к мировой гегемонии и установлению однополярного миропорядка, ужесточил свою внешнюю политику в целях возвращения России статуса мировой державы, заложив в ее основу идею национального достоинства граждан. Вследствие ущемления со стороны США национальных интересов России и Ирана, российско-иранские отношения стали особо тесными, поскольку понятие национального достоинства играет важную роль во внешней политике как России, так и Ирана.

Однако в долгосрочной перспективе стратегическое партнерство Москвы и Тегерана не может строиться только на базе их совместного противостояния США и полностью зависеть от динамики отношений России и США. Маловероятно, чтобы отношения Тегерана и Москвы переросли в стратегический союз, поскольку у иранской стороны существует дефицит доверия к России из-за заморозившего военно-техническое сотрудничество России и Ирана соглашения «Гор-Черномырдин» 1995 года, поддержки Россией антииранских санкций в Совете Безопасности ООН (2006–2010 гг.), отказа от контракта по поставке в Иран ЗРК С-300 и раздела Каспия на основе соглашения между Россией, Казахстаном и Азербайджаном.

INTERNATIONAL RELATIONS

THE ANALYSIS OF THE DYNAMICS OF THE US–RF RELATIONS AT THE NEW US ADMINISTRATION AND THE FORECAST OF THEIR DEVELOPMENT

G. V. AGHAJANYAN, Master, University College of London, Graduate Student, NDRU, MOD, RA, Research Fellow, Center for Regional Strategic Analysis, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

The US–RF relations at the new US administration are analyzed upon the basis of three key problems: NATO–Russia confrontation in Eastern Europe (Estonia, Latvia, Lithuania, and Poland), crises in Ukraine and Syria, in positions on which significant divergences are observed. Scenario planning has been chosen as a research method given the high degree of uncertainties in the development of these problems.

In line with this method, four scenario models have been constructed, of which the model of the preservation of the status quo in Eastern Europe and the growth

of tension in the Syrian conflict has been assessed as the most feasible. The assessment of these models from the view of the security interests of the Republic of Armenia is given.

THE DYNAMICS OF IRAN AND RUSSIA RELATIONSHIP UNDER VLADIMIR PUTIN'S GOVERNMENT

T. M. ANTONYAN, Captain, Managing Editor, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA

SUMMARY

The relationship between the Islamic Republic of Iran and the Russian Federation, notwithstanding their mutual distrust and rivalry in the past, with Vladimir Putin's assumption of power in Russia, thanks to the common interests in the international and regional security, may be characterized as "cautious partnership". Though at the beginning of his presidency Putin also strived to establish strategic relationship with Iran's rival – the USA, however, in that period the Russian-Iranian relationship began to liven up. After the Russian-American relations froze due to the US and its partners' intervention in Iraq without the UN SC sanctions, Putin, considering the USA's strive for world hegemony and the establishment of a unipolar world order unacceptable, tightened his foreign policy with the aim of returning Russia's status of the world power, underlying the idea of the national dignity of its citizens. In consequence to the infringement of Russia and Iran's national interests by the US, the Russian-Iranian relationship became in particular close, since the concept of national dignity does play an important role both in Russia's and Iran's foreign policies.

However, in the long-range perspective, the strategic partnership between Moscow and Tehran cannot be built upon only their cooperative confrontation with the US, neither entirely depend on the dynamic of the relationship between Russia and the US. The relationship between Tehran and Moscow is unlikely to grow into a strategic partnership, as long as on the Iranian part there exists some lack of trust towards Russia due to the frozen Russian-Iranian military-technical collaboration of the "Gore-Chernomyrdin" Deal of 1995, Russia's support of anti-Iranian sanctions in the UN SC (2006-2010), withdrawal from the contract of delivering S-300 Air-Defense Systems to Iran and the division of the Caspian sea on the basis of the agreement among Russia, Kazakhstan and Azerbaijan.

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՍՏՈԽԱՍՏԻԿ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ

Ս. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ և ավտոմատացում» ամբիոնի վարիչ,
Գ. Գ. ԱՍՐՅԱՆ, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի գիտության
և կրթության որակի ապահովման բաժնի պետ,
Հ. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, մայոր, տեղեկատվական տեխնոլոգիաների
մագիստրոս, ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու վարչության
ավտոմատացված կառավարման համակարգերի կիրառման խմբի պետ

Սույն հետազոտության նպատակներն են.

– Հրետանու պատրաստման դասընթացի ՀՊԴ-2012 2ա խնդրի (շարժվող նշանակետերին ուղիղ նշանառությամբ հրաձգություն) ստոխաստիկ պրոցեսների մաթեմատիկական մոդելավորումը [1],

– նշանակետերի ոչնչացման հավանականության մաթեմատիկական գնահատումը,

– ժամանակակից տանկի կրակային խոցման մաթեմատիկական մոդելավորումը:

Աշխատանքի գիտական նորույթներն են.

– ՀՊԴ-2012 դասընթացի 2ա խնդրի մաթեմատիկական մոդելի մշակումը,

– փողային հրետանու հակատանկային համակարգերից (ՀՏՀ) հրաձգության խնդրի մաթեմատիկական նկարագրությունում զանգվածային սպասարկման տեսության մեթոդների, մասնավորապես՝ մարկովյան շղթաների և Կոլմոգորովի դիֆերենցիալ հավասարումների կիրառումը:

Համապատասխան մաթեմատիկական մոդելի կառուցմամբ փորձ է արվում կատարելու երկու այնպիսի նշանակետերի ոչնչացման իրադարձությունների հոսքի դինամիկան բնութագրող համակարգի վերլուծություն, որոնց կենսունակությունը և ՀՏՀ-ներից ուղղված գրոհների հոսքը կարելի է մոդելավորել մարկովյան շղթաների կիրառմամբ:

Քանի որ համակարգի անցումը S_i վիճակից (նշանակետը անվնաս է) մեկ այլ վիճակի՝ S_j (նշանակետը ոչնչացված է), պատահական պրոցես է՝ դիսկրետ

վիճակով և անընդհատ ժամանակով, ապա այն Մարկովի անընդհատ շղթա է: Այդպիսի շղթան բնութագրվում է անցման P_{ij} հավանականությամբ և անցման հավանականության λ_{ij} խտությամբ, այսինքն՝ համակարգը մի վիճակից մեկ այլ վիճակի տեղափոխող իրադարձությունների հոսքի ինտենսիվությամբ, ընդ որում, քանի որ ժամանակը ֆիքսված է, ապա իրադարձությունների հոսքը (մեր դեպքում՝ նշանակետին ուղղված կրակոցները) դիտում ենք որպես պարզագույն՝ բաշխված ըստ Պուասոնի օրենքի [2, 3].

$$P_t(k) = \frac{a^k}{k!}e^{-a}, \qquad (1)$$

որտեղ $P_t(k)$-ն t ժամանակում խոցումների (k) հավանականային թիվն է, a-ն՝ բաշխման պարամետրը, որը պատահական մեծության և՛ մաթեմատիկական սպասումն է, և՛ ցրումը:

Դիտարկենք երկու նշանակետից բաղկացած համակարգ: S_0-ով նշագրենք համակարգի այն վիճակը, երբ նշանակետերը անվնաս են, S_1-ով՝ այն վիճակը, երբ դրանցից մեկը ոչնչացված է, S_2-ով՝ այն վիճակը, երբ ոչնչացված են երկու նշանակետերը: Վիճակների հավանականությունները որպես ֆունկցիաներ t ժամանակից նշանակենք՝ $P_0(t)$, $P_1(t)$, $P_2(t)$: Քանի որ մարտի ժամանակ նշանակետերի անցումը աշխատունակ վիճակի (նորոգումը) քիչ հավանական է, ապա համապատասխան կողմնորոշված գրաֆի կողերը կլինեն միակողմանի ուղղված (նկ. 1):



Նկ. 1. Երկու նշանակետերի համակարգի վիճակների գրաֆը

Օգտագործելով Կոլմոգորովի դիֆերենցիալ հավասարումները [4]՝ կարող ենք ցանկացած t ժամանակի համար գրել երկու նշանակետերից բաղկացած համակարգի վիճակների հավանականությունների հետևյալ համակարգը.

$$\begin{cases} \dot{P}_0(t) = -\lambda_{01}P_0(t), \\ \dot{P}_1(t) = \lambda_{01}P_0(t) - \lambda_{12}P_1(t), \\ \dot{P}_2(t) = \lambda_{12}P_1(t), \end{cases} \qquad (2)$$

որտեղ՝ λ_{ij}-ն, $i=\overline{0,1}$-ն և $j=\overline{1,2}$-ն գրոհների հոսքերի ինտենսիվություններն են:

Քանի որ սկզբնական պահին $(t=0)$ նշանակետերը անվնաս են, ապա (2) դիֆերենցիալ հավասարումների համակարգի համար սկզբնական պայմաններ կլինեն՝

$$P_0(0)=1,\ P_1(0)=P_2(0)=0: \qquad (3)$$

Նշենք, որ առաջին կարգի ավտոնոմ գծային դիֆերենցիալ հավասարում-

ների (2) համակարգերը ճշմարիտ են ինչպե՛ս գրոհների հոսքերի հաստատուն ինտենսիվությունների (λ_{ij}=const), այնպես էլ փոփոխական ինտենսիվությունների ($\lambda_{ij}(t)$) դեպքում [4]:

(2) հավասարումների համակարգի լուծումը հանգեցվում է հաստատուն գործակիցներով գծային դիֆերենցիալ հավասարումների տառային կամ թվային լուծմանը: Մասնավորապես՝ եթե ընդունենք, որ գրոհների հոսքերի ինտենսիվությունները հաստատուն մեծություններ են, այսինքն՝ $\lambda_{01}=\lambda_{12}=\lambda=const$, ապա անհրաժեշտ կլինի լուծել Կոշիի հետևյալ ավտոնոմ խնդիրը.

$$\begin{pmatrix}\dot{P}_0(t)\\ \dot{P}_1(t)\\ \dot{P}_2(t)\end{pmatrix}=\lambda\cdot\begin{bmatrix}-1 & 0 & 0\\ 1 & -1 & 0\\ 0 & 1 & 0\end{bmatrix}\cdot\begin{pmatrix}P_0(t)\\ P_1(t)\\ P_2(t)\end{pmatrix},\ \begin{matrix}P_0(0)=1,\\ P_1(0)=0,\\ P_2(0)=0,\end{matrix} \qquad (4)$$

Այս դեպքում, բնականաբար, t ժամանակի ցանկացած պահի համար վիճակների հավանականությունների գումարը պետք է բավարարի հավանականությունների հավասարության լրիվությանը, այսինքն՝

$$\sum_{i=0}^{2}P_i(t)=1: \qquad (5)$$

Այժմ ինտեգրելով հավասարումների (4) համակարգը՝ կարող ենք գտնել դրա անալիտիկ լուծումը՝ $P_0(t)=e^{-\lambda t}$, $P_1(t)=\lambda te^{-\lambda t}$ և $P_2(t)=1-e^{-\lambda t}-\lambda te^{-\lambda t}$ որոնվող ֆունկցիաները, որոնց գրաֆիկները, կառուցված *SciDAVis 2.0.4* մաթեմատիկական փաթեթում $\lambda=\overline{1,4}$ դեպքում, բերված են 2–4-րդ նկարներում:



Նկ. 2. $P_0(t)=e^{-\lambda t}$ ֆունկցիայի գրաֆիկը

2-րդ նկարում պատկերված կորերի ընտանիքից կարելի է եզրակացնել, որ այն վիճակի հավանականությունը, որի դեպքում երկու նշանակետերը անվնաս են, սահուն կերպով նվազում է էքսպոնենցիալ օրենքով և 4 րոպեից պակաս ժամանակում հասնում է զրոյի:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 3-րդ նկարում բերված կորերի ընտանիքը: Երևում է, որ $P_1(t)=\lambda te^{-\lambda t}$ ֆունկցիայի գրաֆիկները $\lambda=\overline{1,4}$ դեպքում ունեն մաքսիմումի կետեր, որոնք գտնելու համար անհրաժեշտ է

որոշել էքստրեմումները: Բացի այդ, տվյալ ֆունկցիաները որոշված և ածանցելի են ամբողջ թվային առանցքի վրա, ինչպես նաև՝ $\dot{P}_1(t) = \lambda e^{-\lambda t}(1-\lambda t)$, $\ddot{P}_1(t) = \lambda^2 e^{-\lambda t}(-2+\lambda t)$:



Նկ. 3. $P_1(t) = \lambda t e^{-\lambda t}$ ֆունկցիայի գրաֆիկը

Հաշվարկումների արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակում, որից հետևում է, որ այն բանի առավելագույն հավանականությունը, որ նշանակետերից մեկը կոչնչացվի հրածգության առաջին իսկ րոպեի ընթացքում, կախված չէ կրակոցների հոսքի ինտենսիվությունից և էքստրեմումի կետում հավասար է 0,37-ի:

Աղյուսակ

λ	էքստրեմումի կետի աբսցիս (t^*)	Շրջման կետի աբսցիս (t^{**})	$P_1(t^*)$	$\ddot{P}_1(t^*)$
1	1,0	2,0	$e^{-1}=0{,}37$	$-e^{-1}=-0{,}37<0$
2	0,5	1,0	$e^{-1}=0{,}37$	$-4e^{-1}=-1{,}47<0$
3	0,3(3)	0,6(6)	$e^{-1}=0{,}37$	$-9e^{-1}=-3{,}31<0$
4	0,25	0,5	$e^{-1}=0{,}37$	$-16e^{-1}=-5{,}89<0$



Նկ. 4. $P_2(t) = 1 - e^{-\lambda t} - \lambda t e^{-\lambda t}$ ֆունկցիայի գրաֆիկը

4-րդ նկարում բերված կորերի ընտանիքից երևում է, որ երեք րոպեի ընթացքում երկու նշանակետերն էլ կոչնչացվեն 1-ին մոտ հավանականությամբ: Եվ միայն հրածգության հոսքի λ=1 կրակոց/րոպե ինտենսիվության

դեպքում նշանակետերը կոչնչացվեն հրածգության մեկնարկի պահից սկսած վեց րոպեի ընթացքում:

Ստացված (նկարներ 2 և 4) ժամանակահավանականային բնութագրերը լիովին համապատասխանում են ուղիղ նշանառությամբ հրածգության դեպքում ՀՊԴ-2012 դասընթացում տրված՝ նշանակետերի խոցման ժամանակային նորմացույցներին:

Մենք դիտարկեցինք վիճակի պարզեցված մոդելը, որը թեև համապատասխանում է ՀՊԴ-2012-ին [1], սակայն հաշվի չի առնում տարբեր գործոններ: Իսկ հիմա մոդելավորենք ժամանակակից տանկի կրակային խոցումը:

Ժամանակակից տանկի խոցման հավանականությունը որոշվում է որպես տարբեր գործոնների հավանականությունների արտադրյալ: Այդ գործոններն են՝ ճշգրիտ նշանառությամբ կրակոցը (P_1), արկով կամ հակատանկային կառավարվող հրթիռով (ՀՏԿՀ) տանկի օպտիկաէլեկտրոնային ճնշման համակարգի (ՕԷՃՀ) հաղթահարումը (P_2), ակտիվ պաշտպանության համակարգի (ԱՊՀ) հաղթահարումը (P_3), դինամիկ պաշտպանության (ԴՊ) թիթեղներով անցումը (P_4), զրահի ծակումը (P_5) և հետզրահային տարածությունում հանգույցների ու անձնակազմի խոցումը (P_6) [5, 6], այսինքն՝

$$P = \prod_{i=1}^{6} P_i : \qquad (6)$$

S_1, S_2 ... S_6-ով նշագրենք համակարգի հետևյալ վիճակները. S_1՝ նշանակետին արկի (կամ ՀՏԿՀ) թռիչքամոտեցման վիճակը, S_2 և S_3՝ համապատասխանաբար, ՕԷՃՀ և ԱՊՀ ակտիվացման վիճակները, S_4՝ ԴՊ-ին արկի (կամ ՀՏԿՀ) դիպչելու վիճակը, S_5՝ զրահին արկի (կամ ՀՏԿՀ) դիպչելու վիճակը, S_6՝ տանկի խոցման վիճակը:

Մոդելում տեղի ունեցող պրոցեսները համարելով պատահական ու ժամանակից կախված և տանկին ուղղված կրակոցների հոսքը դիտարկելով որպես պարզագույն՝ կարող ենք մոդելի համապատասխան վիճակները նկարագրել 5-րդ նկարում բերված գրաֆի միջոցով:



Նկ. 5. Ժամանակակից տանկի կրակային խոցման մոդելի գրաֆը

Ընդսմին պաշտպանության և կենսապահովման համակարգերից բխող $\mu = const$ ինտենսիվությամբ պարզագույն հոսքերը աշխատում են չեզոքացնել սպառնալիքը և համակարգը վերադարձնել ելակետային վիճակ: Ուստի վիճակների հավանականությունների դիֆերենցիալ հավասարումների համակարգը մատրիցավեկտորային տեսքով [7] կարելի է ներկայացնել որպես՝

$$\begin{pmatrix} \dot{P}_1(t) \\ \dot{P}_2(t) \\ \dot{P}_3(t) \\ \dot{P}_4(t) \\ \dot{P}_5(t) \\ \dot{P}_6(t) \end{pmatrix} = \begin{bmatrix} (-\lambda_{12}-\lambda_{13}-\lambda_{14}-\lambda_{15}) & \mu_{21} & \mu_{31} & \mu_{41} & \mu_{51} & 0 \\ \lambda_{12} & (-\mu_{21}-\lambda_{23}-\lambda_{25}) & 0 & 0 & 0 & 0 \\ \lambda_{13} & \lambda_{23} & (-\mu_{31}-\lambda_{34}-\lambda_{35}) & 0 & 0 & 0 \\ \lambda_{14} & 0 & \lambda_{34} & (-\mu_{41}-\lambda_{45}) & 0 & 0 \\ \lambda_{15} & \lambda_{25} & \lambda_{35} & \lambda_{45} & (-\mu_{51}-\lambda_{56}) & 0 \\ 0 & 0 & 0 & 0 & \lambda_{56} & 0 \end{bmatrix} \cdot \begin{pmatrix} P_1(t) \\ P_2(t) \\ P_3(t) \\ P_4(t) \\ P_5(t) \\ P_6(t) \end{pmatrix}; \quad (7)$$

Ակնհայտ է, որ տանկի կենսունակությունը կսպառվի S_6 վիճակին անցնելուց հետո, որի ժամանակային և հավանականային բնութագրերը կարելի է մոդելավորել և գտնել վերը նշված մեթոդներով: Բացառություն է կազմում շարժման համար պատասխանատու և ԴՊ-ով չպաշտպանված հանգույցների (թրթուրի կամ տանող անիվի) վնասման պատճառով տանկի կենսունակության կորուստը (զրահի ոչ պարտադիր խոցումով), ինչից հետո անշարժացած տանկը դառնում է հեշտ խոցվող թիրախ: Այդ դեպքում տանկի կենսունակության կորստի հավանականությունը մեկ անգամ խոցվելու դեպքում կարելի է հաշվարկել հետևյալ հարաբերության միջոցով [8].

$$P = \frac{S_d}{S}, \qquad (8)$$

որտեղ՝ S_d-ն արկի (կամ ՀՏԿՀ) թռիչքի ուղղության վեկտորին ուղղահայաց հարթության վրա ԴՊ-ով չպաշտպանված տանկի տեղամասի պրոյեկցիայի մակերեսն է, S-ը՝ նույն հարթության վրա տանկի ուրվագծի պրոյեկցիայի մակերեսը:

Այդ դեպքում 5-րդ նկարում պատկերված գրաֆը կընդունի հետևյալ տեսքը (նկ. 6), որտեղ S_4-ը՝ թրթուրին կամ տանող անիվին արկի (կամ ՀՏԿՀ) դիպչելու վիճակն է.



Նկ. 6. Ժամանակակից տանկի թրթուրի կամ տանող անիվի վնասման դեպքում կենսունակության կորստի մոդելի գրաֆը

Տվյալ դեպքում վիճակների հավանականությունների դիֆերենցիալ հավասարումների համակարգը կլինի՝

$$\begin{pmatrix} \dot{P}_1(t) \\ \dot{P}_2(t) \\ \dot{P}_3(t) \\ \dot{P}_4(t) \end{pmatrix} = \begin{bmatrix} (-\lambda_{12}-\lambda_{13}-\lambda_{14}) & \mu_{21} & \mu_{31} & \mu_{41} \\ \lambda_{12} & (-\mu_{21}-\lambda_{23}) & 0 & 0 \\ \lambda_{13} & \lambda_{23} & (-\mu_{31}-\lambda_{34}) & 0 \\ \lambda_{14} & 0 & \lambda_{34} & -\mu_{41} \end{bmatrix} \cdot \begin{pmatrix} P_1(t) \\ P_2(t) \\ P_3(t) \\ P_4(t) \end{pmatrix}: \qquad (9)$$

Այսպիսով՝ մուտքային պարամետրների որոշակի պարզեցման դեպքում մարկովյան շղթաների հիման վրա մշակված մաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս ընդունելի ճշտությամբ ստանալու տարբեր համակարգերի ժամանակահավանականային բնութագրերը, այդ թվում նաև երկու նշանակետից կազմված համակարգի համար: Նախագծված մաթեմատիկական մոդելի նույնականությունը համապատասխանում է ուղիղ նշանառությամբ հրաձգության վարժասարքով ստացված պրակտիկ տվյալներին [9]:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հրետանու պատրաստության դասընթաց» (ՀՊԴ-2012): Մաս II. «Դիվիզիոն, մարտկոց, դասակ, հրանոթ»: Հրատ. 2: Ե., 2013:
2. *Н. И. Костяев, В. Н. Кучаров, А. Ю. Греков.* Опознавание объектов в единой системе управления. «Армейский сборник», научный, практико-методический журнал Министерства обороны РФ, 2011, № 9 (208) (http://sc.mil.ru/files/morf/military/archive/09.2011.pdf).
3. *И. Н. Бронштейн, К. А. Семендяев.* Справочник по математике для инженеров и учащихся втузов. Изд. 13. М., 1986.
4. *Е. С. Вентцель.* Исследование операций. М., 2000.
5. *М. М. Растопшин.* Хорошо замаскирован, но мало опасен. «Независимое военное обозрение», 04.02.2011 (http://nvo.ng.ru/armament/2011-02-04/8_ptur.html).
6. *М. М. Растопшин.* Русский «Корнет» против американского «Генерала Абрамса». «Независимое военное обозрение», 27.06.2014 (http://nvo.ng.ru/armament/2014-06-27/8_ kornet.html).
7. *Е. С. Вентцель, Л. А. Овчаров.* Теория случайных процессов и ее инженерные приложения. Изд. 2. М., 2000.
8. *Ю. В. Чуев.* Основы исследования операций в военной технике. М., 1965.
9. *Հ. Գ. Խաչատրյան, Ռ. Ս. Գասպարյան, Վ. Ե. Խանոյան,* Ուղիղ նշանառությամբ հրաձգության հրետանային վարժասարք: «ՀԲ», 2012, հմ. 3:

АРТИЛЛЕРИЯ И РАКЕТНАЯ ТЕХНИКА

МАТЕМАТИЧЕСКОЕ МОДЕЛИРОВАНИЕ СТОХАСТИЧЕСКИХ ПРОЦЕССОВ СТРЕЛЬБЫ

С. О. СИМОНЯН, доктор технических наук, профессор, заведующий кафедрой «Информационные технологии и автоматизация» Национального политехнического университета Армении, Г. Г. АСРЯН, полковник, кандидат военных наук, начальник отдела науки и обеспечения качества образования Военного университета имени В. Саргсяна МО РА, Г. Г. ХАЧАТРЯН, майор, магистр информационных технологий, начальник группы применения автоматизированных систем управления Управления ракетных войск и артиллерии ВС РА

РЕЗЮМЕ

Научная новизна работы заключается в применении в математическом описании задачи по стрельбе из противотанковых систем ствольной артиллерии методов теории массового обслуживания, в частности, марковских

цепей и дифференциальных уравнений Колмогорова. В статье предложена математическая модель для определения вероятностей огневого поражения двух целей при стрельбе прямой наводкой из противотанковых систем. Приведено аналитическое решение системы дифференциальных уравнений Колмогорова, описывающей модель, на основании которого получены вероятностно-временные характеристики поражения целей, непротиворечащие нормативам из курса КПА-2012 при стрельбе прямой наводкой. Построены кривые решений дифференциальных уравнений с использованием математического пакета *SciDAVis*. Предложена математическая модель огневого поражения современного танка.

ARTILLERY AND ROCKETRY

MATHEMATICAL MODELING OF THE STOCHASTIC PROCESSES OF FIRING

S. H. SIMONYAN, Doctor of Technical Sciences, Professor, Head, Chair of "Information Technologies and Automation", National Polytechnic University of Armenia,
G. G. ASRYAN, Colonel, PhD in Military Sciences, Head, Science and Education Quality Assurance Department, V. Sargsyan Military University, MOD, RA,
H. G. KHACHATRYAN, Major, Master of Information Technologies, Head of the Application Group of Automated Command and Control Systems, Department of Missile Forces and Artillery, RA Armed Forces

SUMMARY

The scientific novelty of this article consists in the application of the methods of queuing theory, particularly the Markov chains and Kolmogorov differential equations, in the mathematical description of the task of firing from antitank systems of tube artillery. This article brings forward a mathematical model of defining the probabilities of fire for effect of two targets at the direct fire from antitank systems. The analytical solution of the system of Kolmogorov differential equations, describing the model on the basis of which the probabilistic-temporal characteristics of target destruction, which do not contradict the norms from the ATC-212 (Artillery Training Courses) at the direct fire, have been obtained. The curves of the solutions of differential equations have been plotted with the use of SciDAVis mathematical package. A mathematical model of fire for effect of a modern tank is put forward.

ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ա. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՔՀՃ 2-րդ դասի պետական խորհրդական, ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Շինարարական արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման ամբիոնի հայցորդ

2016 թ. ապրիլյան ռազմական գործողությունների ժամանակ հրակոծման ենթարկված զինավանների, շենք-շինությունների և այլ կառույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ զինավաններում վնասվել են բարդ ռելիեֆով տեղամասերի սանդղավորումն ապահովող բազմաֆունկցիոնալ հենապատերը: Ընդսմին որոշ հենապատեր վնասվել են հրետակոծության ժամանակ անմիջականորեն արկերով խոցման, ինչպես նաև ռմբակոծության հետևանքով լանջերի գրունտի տեղաշարժի հետևանքով:

Հենապատերով սանդղավորված լանջերին կառուցված և ռազմական գործողությունների հետևանքով վնասված շենք-շինությունները և այլ կառույցներ սեղմ ժամկետում և որակով վերականգնելու համար էական նշանակություն ունի հենապատերի արագ վերականգնումը (վերակառուցումը) և ուժեղացումը (ամրացումը):

Ըստ այդմ կարծում ենք, որ նպատակահարմար կլինի, որպեսզի ոչ միայն զինվորական շինարարները այլև տարբեր մակարդակների հրամանատարներն ու սպաները պատկերացում ունենան հենապատերի կառուցման ու ամրացման ժամանակակից նյութերի ու տեխնոլոգիաների մասին:

Հենապատերը կարևոր բազմաֆունկցիոնալ ճարտարապետական տարրեր են, որոնք սովորաբար կիրառվում են բարդ ռելիեֆային տեղամասերում էական թեքությունների դեպքում: Հենապատերի գլխավոր խնդիրն է կասեցնել գրունտի տեղաշարժը, որը կարող է սկսվել հիմնականում լանջի թեքության, ջրերի ազդեցությամբ կատարվող սողանքների, ինչպես նաև ռազմական գործողությունների ժամանակ ռմբակոծության ու հրետակոծության հետևանքով:

Յուրաքանչյուր հենապատ կազմված է *հիմքից, իրանից* (կառուցվածքի ուղղահայաց մասը) և ջրահեռացման համար նախատեսված *ցամաքուրդային համակարգից* [1]:

Հենապատերը դասակարգվում են ըստ նախանշանակման, աշխատանքների կատարման բնույթի, կառուցատարրերի, բարձրության, նյութի և կառուցման եղանակի:

Ներկայումս վերակառուցման և ուժեղացման ավանդական նյութերի ու եղանակների հետ մեկտեղ մի շարք պետություններում՝ ԱՄՆ, Բելգիա, Գերմանիա, Ճապոնիա, ՌԴ, լայն տարածում են ստացել ցանցարկղային (գաբիոնային), երկրամանածագործվածքով (գեոտեքստիլ) ամրանավորված, երկրավանդակացանցով, մետաղական և պոլիէթիլենային երկրասինթետիկ ցանցերով ագուցավոր, ինչպես նաև երեսպատված հավաքովի երկաթբետոնե բլոկներով երկրագրունտային հենապատերը.

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հենապատերը վերակառուցելու և ուժեղացնելու դեպքում կիրառվող ավանդական եղանակներն են.

- կառուցատարրերի կրողունակության և շահագործական ունակությունների վերականգնում ճաքերի լցմամբ, երկաթբետոնե տարրերի պաշտպանիչ շերտի և ցանցարկղային կառուցատարրերի վնասված ցանցի վերականգնմամբ և այլն,
- քարե հենապատերի իրանի ուժեղացում ներարկման միջոցով (կիրառվում է կառուցատարրերի ոչ մեծ մասի քանդման դեպքում՝ շաղախի քանդում-հանում, առանձին քարերի դուրսհանում և այլն, կամ բեռնվածքների աննշան ավելացման դեպքում),
- տարբեր տեսակի գոտեկապերի կամ պահունակների կառուցում՝ հիմքի ներբանի ավելացմամբ կամ առանց ավելացման,
- լիրքապնդիչների և որմնահեծերի կառուցում (շինությունների կայունությունը մեծացնելու համար),
- հիմնային մասի ուժեղացում և բեռնաթափող հրապարակների կառուցում,
- տարատեսակ լրացուցիչ խարիսխների և հենացցերի կառուցում (կառույցի վրա փաստացի բեռնվածքների ավելացման և զգալի խորությամբ ամուր գրունտների տարածման դեպքում),
- հիմնատակի գրունտների ամրության ավելացում՝ ներարկման եղանակով,
- կրող կառուցատարրերի լրիվ կամ մասնակի փոխարինում,
- ցամաքուրդային կամ ջրահեռացման համակարգերի վերականգնում [1, 2, 3]:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

ա) Ցանցարկղային հենապատեր

Ցանցարկղը (գաբիոն) գրավիտացիոն (հողի վրա կայունությունն իր ծանրության հաշվին ապահովող) կառույց է, որն ունի ամուր մետաղական ցանցից կազմված և բնական քարերով լցված տարածական ուղղանկյան կամ գլանի ձև:

Հիմնական տեսակների ցանցարկղային կառուցատարրերն են տուփաձև, դիաֆրագմայով, բարձակային և գլանաձև կառուցատարրերը:

բ) Երկրամանածագործվածքով ամրանավորված բնահողով հենապատեր

Մի շարք երկրներում մշակվել և կիրառվում է հենապատը սինթետիկ նյութերով ամրանավորված բնահողով կառուցելու տեխնոլոգիան: Արտաքին երեսպատման և պատի ամրանավորման համար օգտագործվում են երկրամանածագործվածքային կտավներ: Տեխնոլոգիան ներառում է աշխատանքներ հետևյալ հաջորդականությամբ.

– պատի շերտը շարելու համար տեղադրվում են կաղապարամած, պողպատե անկյունակներ և փայտե կանգնակներ, որոնց բարձրությունը գերազանցում է հողի շերտի հաստությունը: Կաղապարամածի տարրերի քայլն ընտրվում է 1,5 մ,
– կաղապարամածի տեղադրումից հետո դրա և հողի ներքին խտացված շերտի վրա փռվում է երկրամանածագործվածքային կտավը, որի երկարությունը որոշվում է հաշվարկներով,
– կտավի արտաքին բաց եզրը տեղափոխվում է կաղապարամածի վրա, այնուհետև փռվում է լցնովի հողի շերտ և տոփանվում,
– բացվում է երկրամանածագործվածքային կտավի ազատ եզրը և դրվում տոփանված հողի վրա: Ապա փռվում և տոփանվում է հողի մնացած շերտը: Հերթական շերտը փռվում է 2 % թեքությամբ, շինության լայնությամբ՝ դրա ամրության ապահովման համար,
– այնուհետև կաղապարամածը հանվում է և տեղափոխվում փռված շերտի վրա:

Պոլիպրոպիլենային հիմքով երկրամանածագործվածքային կտավից պատրաստված արտաքին երեսպատվածքը ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանելու համար խորհուրդ է տրվում երեսպատվածքը ծածկել ճնշածեփված բետոնով (տորկրետբետոն), բիտումային ծածկույթի շերտով, երեսպատել փայտանյութով կամ ծածկել ճիմով: Երկրամանածագործվածքային հենապատի ֆիզիկաքիմիական բնութագրերը պետք է համապատասխանեն ազդող բեռնվածքներին [4]:

Այս տեխնոլոգիայով կառուցված հենապատերը բավական ամուր են, քիչ ծախսատար, երկարակյաց և անկանոն տեղումների նկատմամբ առավել դիմացկուն:

գ) Երկրավանդակացանցով կառուցված հենապատեր

Երկրավանդակացանցը՝ երկրատեխնիկական ամրանավորող նյութ է: Այն 1,35 մմ-ից մինչև 1,8 մմ հաստությամբ և 50-ից մինչև 200 մմ բարձրությամբ թերթավոր գոտիներից բաղկացած լրակազմ է: Թերթավոր գոտիները ամբողջ խորությամբ իրար միացված են կարաններով՝ կազմելով երկրավանդակացանցի բջիջներ: Բջիջների խորությունը և չափերը ընտրվում են ըստ բեռնվածքի հաշվարկային տվյալների և լցանյութի կառուցվածքի:

Հանքային լցանյութով բեռնված երկրավանդակների կողերն ունեն լավ ֆիզիկամեխանիկական բնութագրեր և ջերմային տատանումների նկատմամբ դիմացկուն են:

Հենապատը իրար վրա տեղադրված բազմաշերտ հարկաբաժիններով երկրավանդակներից կազմված կառուցվածք է: Երկրավանդակները շարվում են մեկը մյուսից հորիզոնական շեղումով կամ առանց շեղման: Երկրավանդակները լցվում են ավազային գրունտով՝ քարերի ավելացմամբ, և ծածկվում են երկրամանածագործվածքային կտավներով:

Բջիջների լցման համար կարելի է օգտագործել տեղական գրունտներ՝ դրանց ցամաքուրդային հատկությունների հաշվառմամբ:

Եզրային ազատ բջիջների (շեղված) մեջ լցնում են բուսահող (հումուս), իսկ հետագայում ցանում են խոտի սերմ:



ա) Երկրավանդակացանց «ԵրկրաՇ»

բ) Երկրավանդակացանց «Երկրաստաբ»



գ) Երկրավանդակացանց «Սլավրոս»

դ) Երկրավանդակացանց «Պրուդոն 494»

Նկ. 1. Երկրավանդակացանցերի տեսակներ

Երկրավանդակներով կառուցված հենապատերի հիմնական առավելություններն են.

– կառուցատարրերի մեծ հուսալիությունը և երկարակեցությունը,
– նյութի փոքր ծավալը՝ քիչ ծախսատարությունը,
– շինության ցածր արժեքը:

Բոլոր տիպերի գրունտների ամրացման համար երկրավանդակներով հենապատերի կառուցման տեխնոլոգիան ներառում է հետևյալ գործողությունները.

– թեք կամ ուղղահայաց մակերևույթի նախապատրաստում,
– հենապատերի լրացուցիչ տարրերի պատրաստում երկրամանածագործվածքայինի շարի տեսքով,
– երկրավանդակների հատվածամասերի դասավորում և ճարմանդներով միմյանց ծայրակցում,
– գրունտին երկրավանդակի ամրացում մետաղական կամ պլաստիկ խարիսխներով՝ երկայնական և լայնական կայունություն ապահովելու համար,
– ծավալային բջիջների լցում տարբեր նյութերով (հող, խիճ): Բջիջներում բուսականության աճեցում (հորիզոնական շեղման ժամանակ):

Երկրավանդակներով հենապատերի սարումը չի պահանջում բարձր որակավորում և կատարվում է ձեռքով:

դ) Հենապատերի կառուցում մետաղական ցանցերով

Հենապատը կազմված է հողի մեջ մխրճված մետաղական խողովակներից, որոնք թեքված են դեպի լանջ, որոնց հետ մետաղալարով ամրանում է հակակոռոզիոն պատվածքով ամուր մետաղական ցանցը: Ցանցի և գրունտի միջև լցվում է կոպիճ, որը չափերով մեծ է բջջի չափերից:

Կառուցման տեխնոլոգիան

Հենապատի շինարարության առաջին փուլը հիմքի համար փոսորակի փորումն է: Չոր գրունտներում տեղադրում են ժապավենային հիմք, իսկ ճահճայինում՝ ցցավոր: Հիմքի հաստությունը պետք է 150-ից մինչև 200 մմ-ով գերազանցի հենապատի իրանի շարի հաստությունը: Հիմքը կառուցվում է լավ տոփանված մանրաչափ խճի շերտի վրա, որը մայր գրունտից առանձնացված է երկրատեխնիկական մանածագործվածքի շերտով: Շերտի հաստությունը 50 մմ է: Ամբողջ հիմքը կառուցվում է հողի մակերևույթից 150 մմ-ով ցածր:

Անկախ հենապատի նյութից շինարարությունն ավարտվում է ցամաքուրդային համակարգի կառուցմամբ: Համակարգը բաղկացած է լինում երկրատեխնիկական մանածագործվածքից և խոշորահատիկ ավազից կամ դրանց միջև լցված մանր կոպիճից: Կոպիճի շերտի հաստությունը 70–100 մմ է: Ցամաքուրդի շերտը կառուցվում է հողաթմբի կառուցմանը զուգահեռաբար [4, 5]:

Հենապատի հիմնատակի գրունտը ամրանավորվում է կա՛մ ճիմի շերտով, կա՛մ երկրավանդակներով: Նման հենապատերը հուսալիորեն ծառայում են երկար ժամանակ:

ե) Երկրագրունտային հենապատի կառուցում (վերակառուցում) փաթեթավորման մեթոդով

Այսօր հենապատերի ուժեղացման համար առավել կիրառելի է փաթեթավորման մեթոդը, որը հնարավորություն է տալիս մեծացնելու դրանց կայունությունը և բարելավելու շահագործական բնութագրերը:

Փաթեթավորման մեթոդով ամրացուցիչ կառուցատարրերի կառուցման տեխնոլոգիան ներառում է հետևյալ փուլերը՝

– նախօրոք նախապատրաստված մակերևույթի վրա տեղադրվում է միևնույն առանցքով կողմնորոշված պոլիէթիլենային երկրասինթետիկ ցանցը (պաստառը),

– լցվում է ամրացնող գրունտը,

– ամրացնող գրունտի վրա (շուրջը) տեղադրվում է երկրասինթետիկ պաստառի ազատ կողմը, այնուհետև գործողությունը կրկնվում է [4]:



Նկ. 2. Երկրագրունտային հենապատի կառուցվածքը

H-ը՝ պատի լրիվ բարձրությունը, d-ն՝ լցվող մասի բարձրությունը, α^0-ն՝ երեսպատման թեքության անկյունը, s-ը՝ ամրանավորման քայլը

Հենապատի կառուցման ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

– պատի բարձրությունը 90^0 անկյան տակ չպետք է գերազանցի 10 մ-ը,
– հենապատի ճակատային նիստի ֆիքսման և պաշտպանության համար օգտագործվում է ամրանային հիմնակմախք,
– հիմքի տեսակը որոշվում է ըստ հիմնատակի ինժեներաերկրաբանական տվյալների:

գ) Հավաքովի երկաթբետոնե բլոկներով երեսպատված երկրագրունտային հենապատի կառուցում (վերակառուցում)

Երկրագրունտային հենապատ կառուցելիս անհրաժեշտ է գիտենալ, որ հաճախ արտադրվող բլոկները պատրաստվում են ավազային բետոնից թրթռախտացման մեթոդով, իսկ հիմքի տեսակը որոշվում է ըստ հիմնատակի ինժեներաերկրաբանական տվյալների:



Նկ. 3. Հավաքովի երկաթբետոնե բլոկներով երեսպատված երկրագրունտային հենապատի կառուցվածքը

H-ը՝ պատի լրիվ բարձրությունը կարող է 10 մ-ից ավելի լինել, d-ն՝ հետ լցվող մասի բարձրությունը, α^0-ն՝ երեսպատման թեքության անկյունը, սովորաբար 5–70, s1-ը՝ առաջին ամրանավորման շերտի մակարդակը, s-ը՝ ամրանավորման քայլը

Այդ դեպքում պատի բարձրությունը կարող է 90^0 անկյան դեպքում լինել 10 մ-ից ավելի, իսկ երեսպատման թեքությունը հասնել $5–7^0$-ի, ամրանավորման քայլը՝ բլոկի բարձրության բազմապատիկի չափով, բայց ոչ ավելի, քան 0.6 մ: Բլոկի բարձրությունը 0.15–0.3 մ է [3]:

Գոյություն ունի ծավալային երկրացանցային հիմքով հենապատերի կառուցման 3 եղանակ.

– եթե հենապատն ունի ոչ մեծ թեքություն, ապա հենապատային կա-

ռուցվածքն ստեղծվում է ծավալային երկրասինթետիկ ցանցի մոդուլներից, որոնք տեղադրվում են մեկը մյուսի վրա և լցվում են խճով՝ ձևավորելով գրավիտացիոն հենապատային կառուցատարրերին նման համակարգ,

– ծավալային երկրավանդակացանցը կարող է դառնալ հենապատի երեսամաս: Այս դեպքում գրունտի ամրանավորումը կատարվում է պոլիէթիլենային երկրացանցերի կիրառմամբ, ընդսմին դրանց մի մասը սեղմվում է երկրավանդակացանցերի շերտերի միջև և ամուր անշարժանում է շնորհիվ խճի հետ հպման,

– երկրագրունտային պատը կառուցվում է փաթեթավորման մեթոդով՝ երկրամանածագործվածքային պաստառների կիրառմամբ, և որպես երեսպատող նյութ օգտագործվում է երկրավանդակացանցը:



Նկ. 4. Երկրացանցային հիմքով հենապատի կառուցման սխեման

է) Ագուցավոր հենապատեր

Այդ հենապատերից են պոլիվինիլքլորիդային (ՊՎՔ), բաղադրյալ, մետաղական, երկաթբետոնե և փայտե ագույցներից կառուցված հենապատերը:

Արտերկրում լայն կիրառություն են ստացել ՊՎՔ և բաղադրյալ նյութերով պատրաստված ագույցներով հենապատերը, որոնք ունեն մի շարք առավելություններ.

– տեղադրման հեշտություն և պարզություն,

– նվազ ծախսատարություն (մետաղական ագույցների համեմատությամբ խնայողությունն ստացվում է 30 %-ից ավելի),

– խնամք չեն պահանջում (նյութը կայուն է կենսաբանական կոռոզիայի, ժանգի, ճաքերի, քերծվածքների, մաշելիության և ագրեսիվ միջավայրի նկատմամբ),

– ունեն լավ մեխանիկական բնութագրեր և ամրություն (երաշխիքը՝ մինչև 50 տարի),
– բնապահպանական տեսակետից անվտանգ են (արտադրանքը պատրաստվում է մի նյութից, որն ստացվում է ՊՎՔ պլաստմասսաների վերարտադրությունից),
– ունեն հաճելի գեղագիտական տեսք,
– հեշտությամբ են ապահովվում հենապատի կորացումները (հատկապես՝ ափամերձ):

Կարծում ենք, որ բարդ ռելիեֆով տեղանքում զանազան ամրաշինական կառույցների համար լանջերի սանդղավորման, փլուզումների և սողանքների կանխման համար անհրաժեշտ հենապատերի տեսակների և կառուցման հիմնական եղանակների սույն համառոտ ներկայացումը օգտակար կլինի տարբեր մակարդակի հրամանատարների համար՝ կտրտված տեղանքի դաշտային պայմաններում զանազան պաշտպանիչ միջոցների կառուցման տեսակետից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1) *В. А. Волосухин, В. П. Дыба, С. И. Евтушенко.* Расчет и проектирование подпорных стен гидротехнических сооружений. М., 2008.
2) *И. В. Ковалев, Н. С. Несмелов.* Расчет подпорной стены. СПб., 2006.
3) *А. В. Тяпочкин.* Совершенствование конструктивно-технологических насыпей с подпорными стенами. Диссертация на соискание ученой степени кандидата технических наук. М., 2011.
4) *И. Д. Акимов-Перетц.* Геосинтетические материалы при строительстве транспортных сооружений в стесненных условиях. «Дороги», 2010, № 7.
5) «Габионные конструкции. Типы покрытий проволоки». Информационный буклет. ООО «Габионы Маккаферри СНГ». М., 2010.

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

ОРГАНИЗАЦИЯ РАБОТ ПО ВОЗВЕДЕНИЮ, РЕКОНСТРУКЦИИ И УСИЛЕНИЮ ПОДПОРНЫХ СТЕН С ПРИМЕНЕНИЕМ ТРАДИЦИОННЫХ И НОВЕЙШИХ ТЕХНОЛОГИЙ

А. Б. ГРИГОРЯН, государственный советник 2-ого класса СГС, начальник Управления капитального строительства и расквартирования войск МО РА, соискатель кафедры технологии и организации строительного производства Национального университета архитектуры и строительства Армении

РЕЗЮМЕ

При строительстве на террасированных склонах различных сооружений и военных объектов, а также их восстановлении вследствие повреждения в результате военных действий важное значение имеют быстрое и качественное усиление или восстановление подпорных стен. Знание методов и технологий реконструкции и усиления подпорных стен полезно для командиров различных уровней. В работе по возведению, реконструкции

или усилению подпорных стен применяются как традиционные, так и распространенные в ведущих государствах (США, Бельгия, Германия, Япония, РФ) новейшие технологии. К традиционным методам относятся: заполнение трещин, восстановление защитного слоя железобетонных элементов и поврежденной сетки габиона; усиление тела каменных подпорных стен путем нагнетания (впрыскивания); использование различных обойм, контрбанкетов, контрфорсов, постаментов; восстановление дренажных и водоотводных систем; и т.д.

К новейшим технологиям относятся геогрунтовые подпорные стены габионовые, армированные геотекстилем, георешетчатые, шпунтовые с металлической или полиэтиленовой геосинтетической сеткой, а также из облицованных сборных железобетонных блоков.

Для каждого вида в статье дается краткая характеристика.

MILITARY ENGINEERING

ORGANIZATION OF WORKS ON ERECTING, RECONSTRUCTING AND REINFORCING THE RETAINING WALLS VIA TRADITIONAL AND ADVANCED TECHNOLOGIES

A. B. GRIGORYAN, 2nd Degree State Advisor, SCS, Chief, Department of Capital Constructing and Housing, MOD, RA, Applicant, Chair of Construction Industry Technology and Management, National University of Architecture and Construction of Armenia

SUMMARY

In the construction of various installations and military facilities on terraced slopes, as well as their restoration in consequence of damage due to military operations, the fast and upscale reinforcement or restoration of the retaining walls are of great significance. Knowledge of methods and technologies of reconstruction and reinforcement of the retaining walls is useful for commanders of different levels. Both the traditional and prevailing in leading states (Belgium, Germany, Japan, the RF and the US) high technologies are applied in the works on constructing, reconstructing or reinforcing the retaining walls.

Traditional methods include crack filling, restoration of the protective layer of ferroconcrete elements and the damaged grid of the gabion; reinforcement of the body of stone retaining walls by injection; use of different clips, counterberms, counterforts, pedestals; restoration of drainage systems, etc.

Advanced technologies attribute to geosoil gabion retaining walls, which are geotextile reinforced, geolattice, tongue with metal or plastic geosynthetic reinforcement grid, as well as to the precast ferroconcrete block veneer.

Each type has a snapshot in this article.

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ*

Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՌԴ ՊՆ Ռազմական համալսարանի քրեագիտության ամբիոնի դոկտորանտ

ՀՀ Քրեական օրենսգրքում (ՔՕ) պատերազմական հանցագործությունների ցանկը խիստ սահմանափակ է, վերլուծությունն էլ ցույց է տալիս, որ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ կատարված հանցագործությունների բաժինը ևս հատվածային է և ոչ ընդգրկուն, ուստի և կա անտրամաբանության, թերիության և անբավարար համակարգայնության վերացման անհրաժեշտություն: Վիճակը հնարավոր կլինի շտկել, եթե պատերազմական հանցագործությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցվի ժամանակակից միջազգային պահանջներին: Եթե կայացվի Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) Ստատուտը վավերացնելու մասին որոշում, ապա անհրաժեշտ կլինի գործող օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ: Ընդսմին, մեր կարծիքով, պետք կլինի առանձնահատուկ ուշադրություն դարձնել պատերազմական հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում միջազգային սովորութային իրավունքի նորմերի իրացման հարցերի վրա: Բացի այդ, Քրեական օրենսգրքում, Քրեական դատավարության օրենսգրքում (ՔԴՕ), Քրեակատարողական (գործադիր) օրենսգրքում (ՔԿՕ), այլ օրենքներում անհրաժեշտ շտկումներ կատարելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն կստանա պատերազմական հանցագործությունների համար ինքնուրույնաբար ձեռնարկելու քրեական հետապնդումներ՝ նվազարկելով այն դեպքերի թիվը, երբ փոխլրացման սկզբունքի համաձայն գործը կարող է հանձնվել ՄՔԴ վարույթին: Փոխակերպմանը** վերաբերող ազգային օրենսդրությունը անհրաժեշտ է պայմանագրերի այն դրույթների համար, որոնք ինքնին չեն պարունակում կատարողական ուժ, ուստի կիրառված լինելու համար պահանջում են օրենսդրական ակտ:

---

* Սույն հոդվածը «Հայկական բանակ» հանդեսի 2015 թ. 3-րդ, 4-րդ, 2016 թ. 1-ին, 2-րդ, 3-րդ համարներում հրապարակված հոդվածաշարի շարունակությունն է:

** Փոխակերպում (անգլ. *«implementation»* – իրականացում, կատարում, փաստացի իրագործում)՝ միջազգային պարտավորությունների փաստացի իրագործում ներպետական մակարդակում, ինչպես նաև ազգային իրավական համակարգի մեջ միջազգային իրավական նորմերի ներառման կոնկրետ եղանակ:

Կան ազգային ՔՕ-ում ՄՔԴ իրավասությանը ենթակա հանցակազմերի ներառման* անհրաժեշտության նկատմամբ նաև այլ մոտեցումներ և տեսակետներ: Այսպես. Օ. Վեդեռնիկովայի կարծիքով՝ չկա քրեական օրենսգրքում ՄՔԴ Ստատուտի դրույթների ներառման անհրաժեշտություն, որովհետև միջազգային քրեական իրավունքի այն նորմերը, որոնք կարգավորում են առավել ծանր հանցանքների համար քրեական պատասխանատվությունը, արդեն ներառված են խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին գլխում[1]: Կան և այլ հետազոտողներ, որոնք ևս պնդում են, թե չկա քրեական օրենսդրությունում ՄՔԴ Ստատուտի դրույթները ներառելու անհրաժեշտություն, քանի որ պատերազմական հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը կանոնակարգող միջազգային քրեական իրավունքի նորմերը ամրագրված են ՔՕ-ի այլ կազմերում:

Սակայն, մեր կարծիքով, Ստատուտի նորմերը ազգային նորմերից տարբերվում են ոտնձգության առանձնահատուկ օբյեկտով, զոհերի առանձնահատուկ կարգավիճակով («անձինք, որոնք գտնվում են միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության տակ»), այդ արարքների կատարման իրավիճակով (զինված հակամարտության համատեքստում), արարքի կատարմամբ ցանկացած քաղաքացիական անձի վրա լայնամասշտաբ կամ պարբերական հարձակումների շրջանակներում և այլ հատկանիշներով, որոնց հետևանքով այդ հանցագործություններն ստանում են միջազգային նշանակություն: Մեր կարծիքով՝ այդ է պատճառը, որ տվյալ տեսակետը միանգամայն հիմնավորված կերպով չեն պաշտպանում միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի փաստացի ներառման պրոբլեմային հարցերով զբաղվող այլ հետազոտողներ[2]:

Ներկայումս ՄՔԴ Հռոմի ստատուտի փոխակերպման օրենսդրությունն ընդունել է 40 պետություն, այդ թվում՝ Ավստրալիան, Արգենտինան, Բելգիան,

---

* Լատիներեն *«incorporatio»* և ռուսերեն *«инкорпорация»* տերմինը հայերենում ունի մի քանի համարժեք. «1. *լեզվ.* ներմարմնավորում, 2. *գիտ.* ներառում, 3. *իրավ.* միավորում. ~ *законов* օրենքների միավորում, 4. *քաղ.* միացում» (տես *Ա. Ղարիբյան*, Ռուս-հայերեն բառարան: Ե., 1977, էջ 340): Ընդսմին իրավագիտության մեջ «ինկորպորացիա» տերմինը ունի երկու իմաստ. առաջինը՝ որպես գործող իրավունքի համակարգման եղանակ նորմատիվ ակտերի տարբեր տեսակի հավաքածուների ու ժողովածուների հավաքումը և հրատարակումը, երկրորդը՝ ազգային օրենսդրության մեջ միջազգային իրավական նորմերը առանց որևէ փոփոխության՝ բառացի վերարտադրումը: Քանի որ սույն հոդվածում «ինկորպորացիա» տերմինը օգտագործվել է 2-րդ իմաստով, ապա մենք նպատակահարմար ենք համարել գործածել «ներառում» տերմինը:–*Խմբ.*:

[1] Տես *О. Ведерникова.* Россия и Римский Статут Международного уголовного суда: перспективы ратификации. «Международный уголовный суд: проблемы, дискуссии, поиск решений». Под ред. Г. И. Богуша, Е. Н. Трикоз. М., 2008, сс. 115–135:

[2] Տես, օրինակ, *Е. Трикоз.* Римский Статут Международного уголовного суда в Российской Федерации: рамочная модель имплементации. «Международный уголовный суд: проблемы, дискуссии, поиск решений», сс. 144–162:

Գերմանիան, Իսպանիան, Լիտվան, Կանադան, ՀԱՀ-ը, Մալթան, Մեծ Բրիտանիան, Նիդեռլանդները, Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Պորտուգալիան, Վրաստանը, Ուրուգվայը, Ֆինլանդիան և մի շարք այլ երկրներ: ՄՔԴ Ստատուտը վավերացրած ևս մի քանի տասնյակ պետություններ մշակում և ընդունում են փոխակերպման համար անհրաժեշտ ակտեր (փաստաթղթեր): ՄՔԴ Ստատուտի մասնակից յուրաքանչյուր պետություն ազատ է իր պայմանագրային պարտավորությունների փոխակերպման ուղիների ընտրության հարցում, քանի դեռ բարեխղճորեն է գործում, և այդ գործողությունների արդյունքը վկայում է, որ նա ունակ է կատարելու ՄՔԴ Ստատուտին վերաբերող իր բոլոր պարտավորությունները: ՄՔԴ Ստատուտի փոխակերպման ժամանակ մասնակից պետություններին անհրաժեշտ է լինում լուծել ընդամենը երեք խումբ հարցեր. 1) ՄՔԴ Ստատուտի և պետության սահմանադրական ակտերի միջև գոյություն ունեցող հակասությունների վերացում, 2) ազգային քրեական օրենսդրության համապատասխանեցում ՄՔԴ Ստատուտի պահանջներին, 3) ՄՔԴ-ի հետ փոխգործության իրավական հիմքերի ստեղծում:

Ինչպես ցույց է տալիս փոխակերպման գոյություն ունեցող փորձը, վերը նշված խնդիրներից յուրաքանչյուրը կարող է լուծվել տարբեր եղանակներով՝ ըստ տվյալ երկրի իրավական ավանդույթների կամ նույնիսկ օրենսդիրի հայեցողության[3]:

Թեև Հայաստանը ՄՔԴ Հռոմի ստատուտը ստորագրել է դեռ 1999 թ. հոկտեմբերի 1-ին, սակայն մինչ օրս քաղաքական պատճառներով այն չի վավերացրել: Ներկա պահին ՄՔԴ Հռոմի ստատուտը վավերացրել է 124 պետություն, սակայն նկատվում է ՄՔԴ Հռոմի ստատուտի վավերացումից հրաժարվելու միտում, քանի որ մի շարք պետություններ համարում են, որ արդարադատության այդ միջազգային մարմինը քաղաքականացված է և պաշտպանում է բացառապես մի քանի արևմտյան պետությունների շահերը: Այսպես. առաջնորդվելով իրենց ազգային շահերով՝ ՄՔԴ Հռոմի ստատուտը հրաժարվեցին ստորագրել ՄԱԿ-ի 193 անդամ երկրներից ավելի քան 40-ը, այդ թվում՝ Չինաստանը, Իսրայելը, Հնդկաստանը, Իրանը, ևս մոտ 30 պետություն ստորագրել են այն, սակայն չեն վավերացրել[4]: 2016 թ. հոկտեմբերի 26-ին ՄՔԴ կազմից դուրս գալու մասին հայտարարել է Գամբիան, 2016 թ. հոկտեմբերի 19-ին՝ ՀԱՀ-ը, ՄՔԴ կազմից շուտով դուրս գալու մասին հայտարարեցին Բուրունդին, Քենիան, Ֆիլիպինները, իսկ 2016 թ. նոյեմբերի 16-ին ՌԴ Նախագահի հմ. 361 կարգադրությամբ Ռուսաստանը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարությանը տեղեկացրեց, որ մտադրություն ունի դադա-

[3] Տես *В. Додонов.* Модели имплементации Римского Статута Международного уголовного суда в национальных законодательствах зарубежных стран. «Международный уголовный суд: проблемы, дискуссии, поиск решений», сс. 76–84:

[4] Տես «За что судит Международный уголовный суд и кто им не доволен». «BBC Русская служба», 16 ноября 2016 (http://www.bbc.com/russian/features-38001948):

րեցնելու իր մասնակցությունը ՄՔԴ Հռոմի ստատուտին, որն ստորագրել էր 2000 թ. սեպտեմբերի 13-ին[5]:

Մեր կարծիքով՝ Հայաստանը դժվար թե մոտ ժամանակներս վավերացնի ՄՔԴ Հռոմի ստատուտը, սակայն մենք համոզված ենք, որ դա չի խոչընդոտի կոնվենցիոն օրենսդրության պահանջներին իրավունքի ազգային նորմերը համապատասխանեցնելու և պատերազմական հանցագործությունների քրեականացման գործում բացթողումները վերացնելու նպատակով ՄՔԴ դրույթների հետևողական փոխակերպմանը և Հայաստանի Քրեական օրենսգրքում նոր պատերազմական հանցակազմերի ներառմանը:

«Միջազգային իրավունքի նորմերի փոխակերպում» հասկացության առավել սպառիչ սահմանումը տվել է Վ. Բատիրը, որն այն լայն առումով մեկնաբանում է որպես պետությունների ու միջազգային կազմակերպությունների համատեղ կազմակերպահիրավական գործունեություն՝ ուղղված միջազգային մակարդակում միջազգային-իրավական նորմերի նպատակների իրագործմանը: Նեղ առումով նա այդ հասկացությունը սահմանում է որպես պետության տարածքում ներպետական իրավունքի գործողության ոլորտում միջազգային իրավունքի նորմերի իրացում ըստ որոշակի ընթացակարգի, ինչն ապահովվում է պետական մարմինների՝ պետության ստանձնած միջազգային պարտավորությունների փաստացի կատարմանը նպատակաուղղված կազմակերպահիրավական գործունեությամբ[6]: Կախված այն բանից, թե ինչ մեխանիզմով է կատարվում միջազգային պայմանագրային նորմերի ներպետական իրավական փոխարկումը, Վ. Ա. Բատիրը առանձնացնում է այն պետությունները, որտեղ ազգային օրենսդրությամբ միջազգային պայմանագրերը հայտարարվում են պետության իրավունքի մաս, այն պետությունները, որտեղ ազգային օրենսդրությունն ու դատական պրակտիկան խստիվ կերպով սահմանազատում են միջազգային և ներպետական իրավունքները, և այն պետությունները, որոնցում սահմանադրությունը միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած նորմերը հայտարարում է պետության իրավունքից բարձր, իսկ օրինապատշաճ կերպով վավերացված և պաշտոնապես հրապարակված պայմանագրի դրույթներն ստանում են ազգային իրավունքի նորմերի ուժ[7]:

Պետությունները միջազգային իրավունքի նորմերի փոխակերպումը կատարում են տարբեր ձևերով: Վ. Ա. Բատիրն ըստ իրավահրացման գործողությունների բնույթի առանձնացնում է 4 ձևի փոխակերպում՝ պահպանում*,

[5] Տես «Заявление МИД России», 16.11.2016 (http://www.mid.ru/press_service/spokesman/official_statement/-/asset_publisher/t2GCdmD8RNIr/content/id/2523566):

[6] Տես *В. А. Батырь*. Имплементация норм международного гуманитарного права в военном законодательстве Российской Федерации. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 1999. с. 98:

[7] Տես նույն տեղում, էջ 99–108:

* Պահպանումը միջազգային իրավունքի նորմերի փոխակերպման այն ձևն է, երբ իրավունքի սուբյեկտները իրենց իրավաբանական պարտականությունները իրացնում են զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնց կատարումը կնշանակեր դրանց խախտում:

կատարում*, օգտագործում** և կիրառում***: Նշված ձևերի փոխակերպումները ուղղակի են, քանի որ իրավական հանձնարարականներն իրացնում են անմիջականորեն միջազգային հասարակական հարաբերությունների մասնակիցները: Իսկ եթե տվյալ ձևերը հնարավորություն չեն տալիս ամբողջ ծավալով իրացնելու իրավական նորմերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, ապա անհրաժեշտություն է առաջանում միջազգային իրավունքը կիրառելու որպես դրա առանձնահատուկ ձևի փոխակերպում:

Միջազգային իրավունքի նորմերի փոխակերպման եղանակների թվին են դասվում ներառումը, կերպափոխումը, ինչպես նաև ընդհանուր, մասնավոր կամ կոնկրետ հղումը: Ներառման դեպքում միջազգային-իրավական նորմերը ազգային քրեական իրավունքում վերարտադրվում են բառացի՝ առանց որևէ փոփոխության: Կերպափոխումը ենթադրում է համապատասխան միջազգային նորմերի որոշակի վերամշակում, որը կատարվում է ազգային իրավական համակարգի սկզբունքների և ավանդույթների հաշվառմամբ: Ընդհանուր, մասնավոր կամ կոնկրետ հղման դեպքում միջազգային-իրավական նորմերն անմիջականորեն չեն ներառվում օրենքի տեքստում, այլ հիշատակվում են: Այսպիսով՝ հղման միջոցով փոխակերպման դեպքում ազգային իրավական նորմի կիրառումը անհնար է առանց սկզբնաղբյուրի՝ համապատասխան միջազգային պայմանագրի տեքստի անմիջական օգտագործման: Դրանց ընտրությունը բացառապես այն պետության առանձնաշնորհն է, որը կատարում է տվյալ փոխակերպումը, և դրանց կատարման համար պատասխանատու են պետությունները: Փոխակերպման հիմնական պահանջը միջազգային հաստատակարգի նպատակներին և բովանդակությանը խստորեն հետևելն է:

Այսպես. միջազգային-իրավական այն նորմերը, որոնք պատերազմական հանցագործությունների համար նախատեսում են պատասխանատվություն, փոխակերպված են Ֆրանսիայի ազգային քրեական իրավունքում՝ Ֆրանսիայի ՔՕ-ի 212-1, 212-2 պարագրաֆներում ներառման եղանակով, հղում-

* Կատարումը միջազգային իրավունքի նորմերի փոխակերպման այն ձևն է, երբ սուբյեկտները անկախ իրենց ցանկությունից պետք է կատարեն ակտիվ գործողություններ, որոնք նախատեսված են ՄՄԻ-ի նորմերով:

** Օգտագործումը միջազգային իրավունքի նորմերի փոխակերպման այն ձևն է, երբ սուբյեկտները կարող են կատարել ՄՄԻ-ի նորմերով թույլատրված գործողություններ:

*** Կիրառումը միջազգային իրավունքի նորմերի փոխակերպման այն ձևն է, երբ կոնկրետ հարցերի լուծման ժամանակ իրավաբանական նորմերի հիման վրա տեղի է ունենում իշխանական լիազորությունների կատարում: Իրավակիրառական գործունեության բովանդակությունն արտահայտվում է իրավունքի նորմերի հիմքի վրա անհատականացված իրավական հանձնարարականների (ՄՄԻ-ի կիրառման ակտերի) հրատարակման ձևով և իրագործվում է ՄՄԻ-ի սուբյեկտների փոխհարաբերություններում: Ներպետական մակարդակով ՄՄԻ-ի նորմերը կիրառվում են ոչ թե անմիջականորեն, այլ միջնորդավորված կերպով՝ հղումային նորմի միջոցով նրանց բովանդակությանը, կանոնին ներպետական իրավունքի նորմի կարգավիճակ հաղորդելով:

ների եղանակով՝ Իսպանիայի ՔՕ-ի 608-րդ հոդվածում, իսկ ԱՄՆ-ի օրենքների ժողովածուի 2441-րդ հոդվածում, Ալբանիայի, Արգենտինայի, Կանադայի, Ղազախստանի, Վրաստանի, Ուզբեկստանի և այլ երկրների ՔՕ-ում թվարկվում են կոնվենցիաների այն հոդվածները, որոնց խախտումները որակվում են որպես պատերազմական հանցագործություններ[8]: Փոխակերպման եղանակը կարող է պայմանավորված լինել իրավունքի համակարգով, ազգային սովորույթներով և ավանդույթներով, այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Այսպես. Գերմանիան, Նիդեռլանդները և Պորտուգալիան հրապարակել են միջազգային հանցագործությունների մասին հատուկ կոդիֆիկացված ակտեր՝ քրեական օրենսգրքից լրիվ հանելով համապատասխան կազմերը, ընդսմին դրանցում հաշվի են առնված նաև այլ միջազգային պայմանագրերի (1949 թ. Ժնևյան կոնվենցիաներ) դրույթներ: Այսպես. 2002 թվականից Գերմանիայում Քրեական օրենսգրքի հետ մեկտեղ գործողության մեջ է դրվել Միջազգային քրեական օրենսգիրքը *(Volkerstrafgesetzbuch (VStGB))*, որում առանձին կոդիֆիկացման շրջանակներում միավորվել են միջազգային քրեական և մարդասիրական իրավունքի նորմերը, ընդսմին այնտեղ կա անմիջական ցուցում, որ միջազգային իրավունքի նորմերը ազգային օրենսդրության նկատմամբ գերակա են, և բերված է այն անձանց ցուցակը, որոնք գտնվում են միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության ներքո:

Ինչ վերաբերում է պատերազմական հանցագործությունների կատարման համար զինծառայողներին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցին, ապա այստեղ հարկ է ընդունել Ն. Ա. Շուլեպովի այն կարծիքը, թե ներկայումս «ռազմաքրեական իրավունքը սովորաբար գտնվում է ընդհանուր քրեական իրավունքի սահմաններից դուրս և լրացնում այն: Ուստի ՄՔԴ Ստատուտի այն դրույթները, որոնք վերաբերում են զինված ուժերին, պետք է համապատասխանաբար արտացոլվեն ոչ միայն ընդհանուր քրեական նորմերում, այլև ռազմաքրեական իրավունքի այն նորմերում, որոնք անմիջականորեն ազդում են զինծառայողների գիտակցության ու վարքի վրա»[9]:

Այդ պատճառով մի շարք դեպքերում պետություններն ընդունում են կա՛մ զինծառայողների քրեական պատասխանատվության վերաբերյալ հատուկ օրենքներ՝ ռազմաքրեական օրենսգրքեր (Ավստրիա, Դանիա, Թուրքիա, Իսպանիա, Իտալիա, Կորեա, Հունաստան, Նորվեգիա, Շվեյցարիա և այլն), կա՛մ էլ զինվորական արդարադատության օրենսգրքեր (ԱՄՆ, Ավստրալիա, Կանադա, Պորտուգալիա, Ֆրանսիա և այլն)[10], որոնցում ամրագրվում է պա-

[8] Տես *Վ. Դորոնով,* Նշ. աշխ., էջ 76–84:

[9] Տես *Н. Шулепов.* Римский Статут Международного уголовного суда и национальное военно-уголовное законодательство. «Международный уголовный суд: проблемы, дискуссии, поиск решений», сс. 224–246:

[10] Տես, օրինակ, Ֆրանսիայի զինվորական արդարադատության օրենսգիրք («Code de justice militaire». Dernière modification, 01.03.2017 (http://codes.droit.org/CodV3/justice_militaire.pdf)): ԱՄՆ-ի ռազմաքրեական իրավունքի հիմքը զինվորական արդարադատության

տերազմական հանցագործություններ և միջազգային բնույթի հանցագործություններ կատարելու համար զինծառայողների քրեական պատասխանատվությունը:

Ի մի բերելով վերը ասվածը՝ մենք հանգում ենք այն եզրակացությանը, որ բավական դժվար է որոշել ՀՀ ՔՕ (2003) 13-րդ բաժնում պատերազմական հանցագործությունները փոխակերպելու կոնկրետ եղանակը: Կարծում ենք, որ տվյալ դեպքում առավել կիրառելի է Ա. Վինոկուրովի առաջարկած խառը մոտեցումը, ըստ որի՝ հեղինակը առաջարկում է ընդհանուր հղումների միջոցով քրեականացումը զուգակցել առանձին, առավել լուրջ պատերազմական հանցագործությունների հստակ քրեականացմամբ, ընդսմին ընդհանուր հղումը վերաբերում է այն հանցագործություններին, որոնք չեն արտացոլվել տվյալ քրեականացման մեջ: Ինչ վերաբերում է ազգային քրեական իրավունքում միջազգային մարդասիրական իրավունքի այն սովորութային նորմերի արտացոլման եղանակին, որոնք պատերազմական հանցագործությունների համար նախատեսում են պատասխանատվություն, ապա մենք այստեղ ևս լիովին համամիտ ենք Ա. Վինոկուրովի հետ, որը համարում է, որ ընդհանուր կերպափոխումը* սովորութային նորմերի ներառման միակ միջոցն է նաև իրավաբանական տեխնիկայի տեսակետից, քանի որ, որպես կանոն, շատ բարդ է որոշել սովորութային նորմերի առաջացման պահը: Մեր կարծիքով՝ ավելի նպատակահարմար և տրամաբանական կլինի կիրառել խառը մոտեցումը, երբ ընտրությունը, կախված այս կամ այն նորմի կառուցվածքից, կատարվում է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի, այդ թվում՝ սովորութային նորմերի, փոխակերպման բոլոր եղանակներից, ինչպիսիք են ներառումը, կերպափոխումը, ընդհանուր, մասնավոր կամ կոնկրետ հղումները: Փոխակերպման նման «հիբրիդային» եղանակի օգտագործումը, անկասկած, կհանգեցնի հայկական քրեական օրենսդրության հաստատված իրավաբանատեխնիկական ավանդույթների վերանայման, բայց դրա հետ մեկտեղ հնարավորություն կտա ՀՀ ՔՕ-ի պատերազմական հանցագործությունների հանցակազմերը համապատասխանեցնելու հանցակազմերի կառուցավորման և Հռոմի ստատուտի 8-րդ հոդվածի դրույթների հետ ներդաշնակման համաշխարհային միտումներին, ինչպես նաև ավելի ամբողջական ծավալով իրացնելու միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառմանն առնչվող միջազգային պարտավորությունները:

Քանի որ պատերազմական հանցագործությունները համարվում են ինքնուրույն հանցագործություններ, առաջարկում ենք դրանք հանել ՀՀ ՔՕ-ի 13-րդ՝

միասնական օրենսգիրքն է (1950)՝ ներառված ԱՄՆ-ի օրենքների ժողովածուում որպես 10-րդ բաժին (վերնագիրը՝ *title*) (տես *В. Н. Додонов, О. С. Капинус, С. П. Щерба.* Сравнительное уголовное право. Особенная часть. М., 2010, с. 486):

* Ընդհանուր կերպափոխում է կոչվում այն երևույթը, երբ «պետությունը իր ներքին իրավունքում սահմանում է մի ընդհանուր նորմ, որը միջազգային իրավական նորմերն օժտում է ներպետական գործողության ուժով» (տես *Е. Т. Усенко*. Соотношение и взаимодействие международного и национального права и Российская Конституция. «Московский журнал международного права», 1995, № 2):–*Խմբ.*:

«Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ», բաժնից և, դարձնելով առանձին գլուխ, շարադրել նոր խմբագրմամբ: Կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլինի նշված բաժնի հիմքում դնել հանցագործության օբյեկտի եռաստիճան բաժանումը և միջազգային հանցագործությունները սեռային օբյեկտի հաշվառմամբ միավորել ՀՀ ՔՕ-ի 13-րդ բաժնում, այնուհետև խմբավորել երկու առանձին գլուխներում ըստ տեսակային օբյեկտի՝ իրարից առանձնացնելով ըստ հանցավոր ոտնձգության անմիջական օբյեկտի: Առաջարկված խմբագրվածքի դեպքում բաժնի, երկու գլուխների և հոդվածների անվանումները հստակ կերպով կորոշարկեն հանցագործությունների սեռային, տեսակային և անմիջական օբյեկտները: Այս նպատակով տրամաբանական է թվում ՀՀ ՔՕ-ի 13-րդ բաժնում, բացի «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» 33-րդ նույնանուն գլխից, նախատեսել լրացուցիչ՝ «Պատերազմական հանցագործություններ», 34-րդ գլուխը և փոխակերպման խառը եղանակով դրանում արտացոլել պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, ինչպես նաև պատերազմական հանցագործությունների 50 տարբեր հանցակազմեր՝ ՄՔԴ Ստատուտի 8-րդ հոդվածում տրված ցուցակի հաշվառմամբ:

Այսպես. առաջարկվում է նախագծվելիք «Պատերազմական հանցագործություններ» 34-րդ գլխում ներառել ինչպես գործող, այնպես էլ զինված հակամարտության բնույթով բացարձակապես չպայմանավորված միանգամայն նոր հոդվածներ, որոնցում արծարծվող հանցագործություններն ըստ մեր դիտարկած դասակարգման կբաժանվեն 5 տեսակի:

Առաջարկվում է առաջին տեսակի հանցագործությունները, որոնց թվին դասվում են պատերազմական հանցագործությունները՝ կատարված հակառակորդի այն քաղաքացիական անձանց կամ զինծառայողների նկատմամբ, որոնք չեն մասնակցում ռազմական գործողություններին կամ դադարեցրել են անմիջական մասնակցությունը և գտնվում են հանցագործություններ կատարող անձանց իշխանության ներքո, միավորել «Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի հանցավոր խախտումներ զինված հակամարտության համատեքստում» անվամբ հոդվածում (մասամբ համընկնում է ՀՀ ՔՕ-ի նախկինում գործած 390-րդ հոդվածի հետ)՝ դրանում արտացոլելով հետևյալ հանցակազմերը.

1. ոտնձգություն մարդկային արժանապատվության նկատմամբ, մասնավորապես՝ վիրավորական և ստորացուցիչ վերաբերմունք,
2. բռնաբարություն, սեքսուալ նպատակներով ստրկացում, հարկադրական պոռնկություն, հարկադրական հղիություն*, ստիպողական ստերջացումը և ցանկացած այլ տեսակի սեքսուալ բռնություն,

* Հարկադրական հղիություն է կոչվում հարկադրաբար հղիացած որևէ կնոջ ազատությունից ապօրինի զրկումը, որը կատարվում է որևէ բնակչության էթնիկական կազմը փո-

3. քաղաքացիական անձի կամ անձանց սպանություն,
4. հակառակ կողմի զինծառայողի սպանություն կամ վիրավորում, եթե նա, զենքը ցած դնելով կամ պաշտպանության որևէ այլ միջոց չունենալով, անվերապահորեն հանձնվել է,
5. խոշտանգումներ կամ դաժանության ակտեր կամ անմարդկային վերաբերմունք, ներառյալ՝ կենսաբանական փորձերը, որոնք կատարվել են քաղաքական, ռասայական կամ կրոնական շարժառիթներով և կազմակերպվել են քաղաքացիական բնակչության որևէ խմբի նկատմամբ ի կատարումն կանխամտածված պլանի,
6. մեծ տառապանքների կամ լուրջ մարմնական վնասվածքների կամ առողջությանը վնասի կանխամտածված պատճառում,
7. հակառակ կողմի իշխանության ներքո գտնվող անձանց ֆիզիկական խեղումների պատճառը, այդ թվում՝ պատվաստման նպատակով օրգանների հեռացումը կամ նրանց նկատմամբ ցանկացած տեսակի բժշկական կամ գիտական փորձերի կատարումը, եթե դրանք արդարացված չեն տվյալ անձի բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ և չեն բխում նրա շահերից, և որոնք դառնում են այդ անձի կամ անձանց մահվան պատճառ կամ լրջորեն սպառնում են առողջությանը,
8. հակառակ կողմի զինծառայողին* (ռազմագերուն) կամ այլ պահպանվող անձի հարկադրում հակառակորդի զինված ուժերում ծառայությանը,
9. հակառակ կողմի քաղաքացիների հարկադրում մասնակցելու իրենց երկրի դեմ վարվող ռազմական գործողություններին, նույնիսկ եթե նրանք մինչև պատերազմի սկսվելը ծառայել են պատերազմող կողմի զինված ուժերում,
10. քաղաքացիական բնակչության ներգրավում հարկադիր աշխատանքներում, այդ թվում՝ հակառակորդի ռազմական օպերացիաներին անմիջականորեն նպաստող աշխատանքներում,
11. մահապատժի ենթարկում առանց բոլոր հիմնական դատական երաշխիքները տրամադրող արդար դատաքննության,
12. դատավճիռների կայացում և ի կատար ածում առանց նախնական դատաքննության, որն անցկացրել է դատարանը սահմանված կարգով՝

խելու կամ միջազգային իրավունքի այլ լուրջ խախտումներ կատարելու նպատակով: ՄՔԴ Հռոմի ստատուտը հարկադրական հղիությունը որակում է որպես մարդկայնության դեմ հանցագործություն և պատերազմական հանցագործություն և հավասարեցնում է խոշտանգումներին (տես "Rome Statute of the International Criminal Court". Rome, 1998 (http://legal.un.org/icc/statute/99_corr/cstatute.htm)): – *Խմբ.*:

* Ներքին հակամարտության իրավունքում «կոմբատանտ» տերմինն օգտագործվում է ընդհանուր իմաստով՝ նշանակելով այն անձանց, որոնք չեն օգտվում քաղաքացիական անձանց տրամադրվող պաշտպանությունից՝ նկատի չունենալով կոմբատանտի կամ ռազմագերու կարգավիճակի իրավունքը:

համընդհանուր ճանաչում ստացած բոլոր պարտադիր դատական երաշխիքների պահպանմամբ,

13. կոլեկտիվ պատիժների նշանակում և ի կատար ածում առանց անկախության կամ անաչառության հիմնական երաշխիքներն ապահովող դատարանի վճռի,
14. դատարանում հակառակ կողմի քաղաքացիների իրավունքները և հայցերը չեղյալ, դադարեցված կամ անթույլատրելի հայտարարում,
15. քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու (ծայր աստիճանի երկյուղ առաջացնող սարսափի, վախի, անհանգստության մթնոլորտ ստեղծելու և տարածելու) նպատակով բռնության ձեռնարկումների կատարում*,
16. հակառակ կողմի զինծառայողի (ռազմագերու) կամ այլ պահպանվող անձի զրկում արդար և բնականոն դատավարության իրավունքից,
17. տեղահանում կամ տեղափոխում կամ ազատությունից ապօրինի զրկում,
18. բռնազավթող տերության կողմից իր քաղաքացիական բնակչության մի մասի ուղղակի կամ անուղղակի տեղափոխում իր բռնազավթած տարածք, կամ բռնազավթված տարածքի բնակչության կամ դրա առանձին մասերի տեղահանում կամ տեղափոխում դրա սահմաններում կամ սահմաններից դուրս,
19. հակամարտության հետ կապված պատճառներով քաղաքացիական բնակչության տեղափոխման մասին հրաման տալը, եթե միայն դա չի արվում համապատասխան քաղաքացիական բնակչության անվտանգության կամ ռազմական բնույթի ծայրաստիճան անհրաժեշտության նկատառումներով,
19. հակառակ կողմի զինծառայողների (ռազմագերիների) և քաղաքացիական անձանց հայրենադարձության անհիմն ձգձգում,
20. մահացած զինծառայողների և քաղաքացիական անձանց մարմինների հայրենադարձության անհիմն ձգձգում,
21. մահացած զինծառայողների և քաղաքացիական անձանց մարմինների նկատմամբ ստորացուցիչ վերաբերմունք, անարգանք, որոնք վիրավորում են մահացածների հիշատակը և նրանց հարազատների զգացմունքները, խախտում են նրանց հուղարկավորման սովորույթները, ավանդույթները և ծեսերով սահմանված կարգը,
20. պատանդ վերցնելը:

Երկրորդ տեսակի հանցագործությունները ներառում են այն պատերազմական հանցագործությունները, որոնք հակառակորդի քաղաքացիական անձանց և զինծառայողների դեմ կատարվել են պատերազմի վարման արգելված մեթոդների կիրառման ընթացքում, ուստի առաջարկվում է դրանք

* Երբ ամեն ոք գտնվում է հնարավոր սպանության, խոշտանգումների կիրառման, այլ անմարդկային գործողությունների կատարման հետ կապված վախի ճիրաններում:

միավորել «Պատերազմի վարման արգելված մեթոդների կիրառում» հոդվածում (մասամբ համընկնում է ՀՀ ՔՕ-ի 387-րդ հոդվածի հետ): Ընդսմին այդ հոդվածում պետք է արտացոլվեն հետևյալ հանցակազմերը.

– զինված հակամարտության համատեքստում ձեռնարկվող ռազմական օպերացիաների պլանավորում, պատրաստում, սանձազերծում կամ իրագործում, երբ դրանք առաջ են բերել սույն գլխում նախատեսված հետևանքները,
– կանխամտածված հարձակումներ քաղաքացիական բնակչության կամ առանձին քաղաքացիական անձանց վրա, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին,
– կանխամտածված հարձակումներ քաղաքացիական օբյեկտների վրա, այսինքն՝ այն օբյեկտների վրա, որոնք ռազմական նշանակետեր չեն,
– ոչ ընտրողական կամ անհամաչափ բնույթի հարձակում, որը հանգեցնում է քաղաքացիական անձանց մահվան կամ վիրավորման, կամ հարձակման ձեռնարկում, երբ հայտնի է, որ դա կհանգեցնի քաղաքացիական բնակչության շրջանում չափազանց մեծ մարդկային կորուստների, քաղաքացիական անձանց վիրավորումների կամ քաղաքացիական օբյեկտների վնասման,
– հարձակման ձեռնարկում, երբ հայտնի է, որ նման հարձակումը պատճառ կդառնա քաղաքացիական անձանց պատահական մահվան կամ խեղման կամ քաղաքացիական օբյեկտներին հասցված վնասների կամ շրջապատող բնական միջավարին պատճառված տարածուն, տևական ու լուրջ վնասների, որոնք ակնհայտորեն անհամատեղելի կլինեն կոնկրետ և անմիջականորեն սպասվող ընդհանուր ռազմական գերազանցության հետ.

1. պատերազմի վարման այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք ի խախտումն միջազգային իրավունքի նորմերի առաջացնում են չափազանց մեծ վնասներ կամ ավելորդ տառապանքներ՝ այն պայմանով, եթե պատերազմի վարման նման մեթոդները արգելված են,
2. քաղաքացիական անձանց օգտագործումը որպես յուրային զորքերի կամ օբյեկտների համար պաշտպանիչ արգելապատնեշի, քաղաքացիական անձի կամ այլ պահպանվող անձի ներկայության օգտագործումը ռազմական գործողություններից որոշակի կետեր, շրջաններ կամ զինված ուժերը պաշտպանելու նպատակով,
3. բռնի գործողությունների կատարումը կամ բռնի գործողությունների կատարման սպառնալիքը՝ քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու գերակա նպատակով,
4. հարձակումը այն շենքերի վրա, որոնք անպաշտպան են և ռազմական նշանակետեր չեն, այլ նախատեսված են կրոնական ծիսակատարությունների կատարման, կրթության, արվեստի, գիտության կամ բարեգործության համար, պատմական հուշարձանների, հոսպիտալների և հիվանդների ու վիրավորների կենտրոնացման տեղերի, քաղաքների, գյուղերի,

կացարանների կամ շենքերի կամ ապառազմականացված գոտիների վրա, ինչպես նաև այն օբյեկտների և հաստատությունների վրա, որոնցում կան վտանգավոր ուժեր, կամ դրանց կրակակոծումը ցանկացած միջոցի կիրառմամբ,

5. միտումնավոր կերպով հարվածների հասցնումն այն շենքերին, որոնք նախատեսված են կրոնի, կրթության, արվեստի, գիտության կամ բարեգործության նպատակների համար, պատմական հուշարձաններին, հոսպիտալներին և հիվանդների ու վիրավորների կենտրոնացման տեղերին՝ այն պայմանով, որ դրանք ռազմական նշանակետեր չեն,
6. հակառակորդի զինծառայողների նենգ սպանությունը կամ վիրավորումը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնամոլության շարժառիթով՝ կատարված ի խախտումն ժամանակավոր զինադադարի համաձայնագրի, ինչպես նաև ռազմական գործողությունների, մարտական օպերացիաների դադարեցման համաձայնագրերի կամ տեղական համաձայնագրերի,
7. զինադադարի, ռազմական գործողությունների ընդհատման համաձայնագրերի կամ մարտի դաշտում մնացած վիրավորների ու մահացածների որոնման, դուրսբերման, փոխանակման կամ տեղափոխման նպատակով կնքված տեղական համաձայնագրերի խախտումը,
8. հայտարարությունը, թե ոչ ոքի չեն խնայելու,
9. քաղաքացիական բնակչության շրջանում առաջացած սովի օգտագործումը որպես պատերազմի վարման մեթոդի, այնպիսի օբյեկտների ոչնչացումը, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական բնակչության գոյապահպանման համար, այդ թվում՝ օգնության տրամադրման համար խոչընդոտների միտումնավոր ստեղծումը:

Երրորդ տեսակի հանցագործությունները ներառում են պատերազմի վարման արգելված միջոցների կիրառման ժամանակ հակառակորդի քաղաքացիական անձանց և զինծառայողների նկատմամբ կատարված պատերազմական հանցագործությունները, որոնք առաջարկվում է միավորել «Պատերազմի վարման արգելված միջոցների կիրառումը» հոդվածում (մասամբ համընկնում է ՀՀ ՔՕ-ի 387-րդ հոդվածի հետ)՝ հետևյալ հանցակազմերի արտացոլմամբ.

1. թույնի կամ թունավորված զենքի կիրառումը,
2. խեղդող, թունավոր կամ այլ գազերի և ցանկացած նմանատիպ հեղուկների, նյութերի կամ միջոցների կիրառումը,
3. մարդու մարմնում հեշտությամբ պայթող կամ տափակացող ընդարձակվող գնդակների, այնպիսի գնդակների կիրառումը, ինչպիսիք են թաղանթավոր գնդակները, որոնց պինդ թաղանթը չի ծածկում ամբողջ միջնաձողը կամ ունի կտրտված տեղեր,
4. իրենց բնույթով չափազանց մեծ վնասվածքներ կամ ավելորդ տառապանքներ առաջացնող զենքի և զինամթերքի, քիմիական կամ կենսա-

բանական զենքի, ռենտգենով չհայտնաբերվող բեկորներ առաջացնող զինամթերքի, կուրացնող լազերային զենքի, արգելված տեսակների հակահետևակային ականների ու ծուղակ-ականների, հրկիզանյութի և արգելված այլ հրկիզող զենքի, ինչպես նաև իր էությամբ ոչ ընտրողական այլ տեխնիկայի կիրառումը, որը կատարվում է միջազգային իրավունքի նորմերի խախտմամբ, այն պայմանով, որ նման զենքը, զինամթերքը և տեխնիկան արգելված են,

5. ի խախտումն միջազգային իրավունքի նորմերի՝ զանգվածային խոցման զենքի կիրառումը այն պայմանով, որ նման զենքը, զինամթերքը և տեխնիկան արգելված են:

Չորրորդ տեսակի հանցագործությունները, որոնք ներառում են սեփականության դեմ կատարված պատերազմական հանցագործությունները, առաջարկվում է միավորել կողոպուտին վերաբերող հոդվածում՝ դրանում հետևյալ հանցակազմերի արտացոլմամբ.

– գույքի ապօրինի, անիմաստ և մեծամասշտաբ ոչնչացումը կամ յուրացումը, երբ դա պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ,
– թշնամու գույքի ոչնչացումը կամ գրավումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման ոչնչացումը կամ գրավումը թելադրված են ռազմական անհրաժեշտությամբ կամ հակամարտության հանգամանքներով,
– քաղաքի կամ բնակավայրի կողոպտումը, նույնիսկ եթե այն գրավվել է գրոհով,
– դիակապուտությունը:

Հինգերորդ տեսակի հանցագործությունները, որոնք ներառում են առանձնակի պաշտպանված անձանց և օբյեկտների նկատմամբ կատարված պատերազմական հանցագործությունները, առաջարկվում է միավորել հետևյալ անվանումները կրող հոդվածներում՝ «Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պաշտպանությունից օգտվող անձանց կամ հիմնարկի վրա կատարված հարձակումը» (նախկինում՝ ՀՀ ՔՕ-ի 396-րդ հոդվածը), «Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով պահպանվող տարբերանշանների ապօրինի օգտագործումը» (նախկինում՝ ՀՀ ՔՕ-ի 397-րդ հոդվածը):

Բացի այդ, առաջարկվում է նշված գլխում ներառել հետևյալ հանցակազմերը. «Անգործությունը կամ հանցավոր հրամանի արձակումը զինված հակամարտության ժամանակ» (նախկինում՝ ՀՀ ՔՕ-ի 391-րդ հոդվածը) և «Վարձկանությունը» (նախկինում՝ ՀՀ ՔՕ-ի 395-րդ հոդվածը):

Սույն առաջարկությունների իրագործման դեպքում ՀՀ քրեական օրենսգիրքը պատերազմական և մարդկայնության դեմ կատարված հանցագործությունների մասով էապես կհամապատասխանեցվի տվյալ ոլորտում առկա համաշխարհային միտումներին և ՄՔԴ Հռոմի ստատուտի պահանջներին:

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

ПРОБЛЕМЫ ИМПЛЕМЕНТАЦИИ НОРМ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА О ВОЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЯХ В НАЦИОНАЛЬНОЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВО РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук, докторант кафедры криминалистики Военного университета МО РФ

РЕЗЮМЕ

Анализ УК РА по части военных преступлений показывает, что их перечень слишком ограничен, наличествуют нелогичность, незавершенность и недостаточная системность. Указанные недостатки могут быть устранены в случае приведения данного законодательства РА в соответствие с международными требованиями путем имплементации норм международного гуманитарного права, в первую очередь – обычного. Это также даст возможность РА самой осуществлять уголовное преследование за военные преступления.

Выделяются три основных способа имплементации: инкорпорация (воспроизводство международных норм в национальном уголовном праве без каких-либо изменений), трансформация (определенная переработка международных норм с учетом принципов и традиций национальной правовой системы) и общая, частная или конкретная отсылка (в тексте закона содержатся лишь упоминания международных норм без их непосредственного включения). Представляется целесообразным применение смешанного – «гибридного» – способа. В связи с этим предлагается вывести военные преступления из раздела XIII УК РА в отдельную главу и изложить в новой редакции с включением дополнительной главы 34 «Военные преступления» и отражением в ней норм обычного международного гуманитарного права, предусматривающих ответственность за военные преступления, а также 50 различных составов военных преступлений с учетом перечня, изложенного в ст. 8 Римского Статута МУС.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

THE PROBLEMS OF IMPLEMENTING THE NORMS OF INTERNATIONAL LAW CONCERNING WAR CRIMES INTO THE NATIONAL LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, PhD Student in Criminalistics, Military University, Ministry of Defense, the Russian Federation

SUMMARY

The analysis of the RA Criminal Code relating to the war crimes shows that their list is too narrow; there exist illogicality, incompleteness and insufficient systematicity. These shortcomings can be eliminated in case the given RA

legislation is brought into line with international requirements via the implementation of norms of international humanitarian law, and first and foremost – the common law. This will also enable the RA to prosecute war crimes itself.

There are three main ways of implementation: incorporation (reproduction of international norms in the national criminal law without any alterations), transformation (certain revision of international norms given the principles and traditions of the national legal system) and a general, private or specific reference (the text of the law contains only mentions of international norms without their direct inclusion). We think it is expedient to apply a mixed – the "hybrid" – method. It is therefore proposed to remove war crimes from the Section 13 of the RA Criminal Code to a separate chapter redrafting it with the inclusion of the additional Chapter 34 "War Crimes" and the reflection of the norms of common international humanitarian law in it, which provide for the responsibility for war crimes, as well as for 50 different war crimes corpus delicti based on the list of war crimes set forth in the Article 8 of the Rome Statute of the ICC.

ԿՈՏՐՎԱԾՔՆԵՐԻ ՍԵՐՏԱՃՈՒՄՆ ԱԿՏԻՎԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՐՈՄԲՈՑԻՏՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՍՏ ՊԼԱԶՄԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ա. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու,
ԵՊԲՀ ՈԲՖ ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնի ավագ դասախոս

Մարդու արյան մեջ թրոմբոցիտների կոնցենտրացիայի նորմը 150–350 հազար/մկլ է, միջինը՝ 200 հազար/մկլ: Երբ դրանց թիվը 1 մկլ-ում դառնում է 1 մլն և ավելի, ապա դա թրոմբոցիտներով հարուստ պլազմա (ԹՀՊ) է:

Արդեն ավելի քան երեք տասնամյակ ԹՀՊ-ն կիրառվում է վիրաբուժության մեջ, իմպլանտոլոգիայում և կոսմետոլոգիայում:

Ըստ գրականության տվյալների՝ ԹՀՊ-ն պարունակում է կենսաբանորեն ակտիվ նյութեր և նպաստում է վնասվածքի օջախում վերականգնողական կենսընթացների (պրոցեսների) արագացմանը:

Ոսկրային հյուսվածքի, կապանների և ջլերի վերականգնման կենսընթացների ուսումնասիրությունների շնորհիվ ստեղծվեցին տարբեր տեսակի նյութեր, որոնք հանգեցնում են կենսաբանորեն ակտիվ նյութերի գործողության խթանմանը և, ըստ այդմ, նպաստում են հյուսվածքներում վերականգնողական կենսընթացների ակտիվացմանը: Նման ներհարույց (աուտոգեն) և այլահարույց (ալոգեն) նյութերի ստեղծումը օրթոպեդիայում մեծացրեց հյուսվածքների վերականգնումը խթանելու հնարավորությունները: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այդ նյութերի մեծ մասը կլինիկական պրակտիկայում կիրառություն չստացավ, քանի որ անվտանգության տեսանկյունից դրանց մի զգալի մասը չարժանացավ դրական գնահատականի:

Նման նյութերից մեկն էլ թրոմբոցիտներով հարուստ պլազման է: Այն առաջին անգամ ստացվեց և ուսումնասիրվեց անցյալ դարի 70-ական թվականներին: Վնասված հյուսվածքների վրա ԹՀՊ վերականգնողական ազդեցության ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն պարունակում է կենսաբանորեն ակտիվ ներհարույց նյութեր՝ աճման խթանիչներ և արտազատային (սեկրետոր) սպիտակուցներ, որոնք արագացնում են վնասված հյուսվածքների՝ բջջային մակարդակով վերականգնումը: Նաև պարզվել է, որ ԹՀՊ-ն խթանում է հյուսվածքների վերականգնման կենսընթացում ներգրավված բջիջների բազմացումը (պրոլիֆերացիա) և տարբերակումը (դիֆերենցիացիա): Ինչպես արդեն նշվեց, ներկայումս ԹՀՊ-ն լայնորեն օգտագործվում է բժշկության տարբեր բնագավառներում, ընդսմին դրա կիրառման արդյունքները քննարկում են նաև հասարակության լայն շրջանները:

Հարկ է նշել, որ թեև կատարվել են ԹՀՊ կիրառման հարցով գիտական հետազոտություններ, սակայն կոտրվածքների սերտաճման վրա դրա ազդեցության մասին համակարգված գիտական պատկերացումներ դեռ չկան: ԹՀՊ կիրառումը բավական հանգամանորեն ուսումնասիրված է իմպլանտոլոգիայում, կոսմետոլոգիայում, որոշ չափով՝ սպորտային բժշկության մեջ:

Այժմ տեսնենք, թե ինչ է ԹՀՊ-ն, և ինչով է պայմանավորված վնասված հյուսվածքների վերականգնման վրա դրա խթանիչ ազդեցությունը:

Թրոմբոցիտները փոքր, կորիզ չունեցող բջիջներ են, որոնք կարևոր դեր են խաղում արյան մակարդման համակարգում: Բացի այդ, թրոմբոցիտները պարունակում են բազմաթիվ սպիտակուցներ, ցիտոկիններ և այլ կենսակտիվ տարրեր, որոնք խթանում և կարգավորում են վնասված հյուսվածքների վերականգնումը: ԹՀՊ-ն պարունակում է աճման 3–5 անգամ ավելի շատ գործոններ, քան ամբողջական արյունը:

ԹՀՊ-ն կարող է բարելավել հյուսվածքների վերականգնումը ի հաշիվ աճման տարբեր գործոնների և ցիտոկինների, որոնք առկա են թրոմբոցիտների *α*-հատիկներում: Թրոմբոցիտներում հայտնաբերված հիմնական ցիտոկիններն են՝ կերպափոխիչ աճային *β* գործոնը (TGF-β), աճման թրոմբոցիտար գործոնը *(PDGF),* աճման ինսուլինանման գործոնը *(IGF-I, IGF-II),* թելքուռուցքների (ֆիբրոբլաստներ) աճման գործոնը *(FGF),* աճման վերնամաշկային (էպիդերմալ) գործոնը *(EGF),* անոթների էնդոթելի աճման գործոնը *(VEGF)* և էնդոթելային բջիջների աճման գործոնը *(EGGF):* Այդ ցիտոկինները կարևոր դեր են կատարում բջիջների բազմացման, հեմոտաքսիսի, տարբերակման և անոթագոյացման կենսընթացներում (տես աղ. 1):

Կենսաբանորեն ակտիվ գործոններ կան նաև թրոմբոցիտների կարծր հատիկներում: Դրանք պարունակում են սերոտոնին, հիստամին, դոֆամին (դոպամին), ադենոզին և կալցիումի իոններ, որոնք թեև աճման գործոններ չեն, սակայն վերականգնողական կենսընթացներում ևս ունեն առանցքային դեր:

Աղյուսակ 1

ԱՃՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՌԿԱ ԵՆ ԹՀՊ-ՈՒՄ, ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Գործոն	Թիրախ	Ֆունկցիա
1	2	3
PD-EGF	Արյունատար անոթների բջիջներ, մաշկի արտաքին բջիջներ, թելքուռուցքներ և մի շարք այլ բջիջներ	Բջջային աճում, տարբերակում, վնասված մաշկի վերականգնում, ցիտոկինների արտազատում
PDGF A + B	Թելքուռուցքներ, հարթ մկանային բջիջներ, ոսկրաբջիջներ, աճառաբջիջներ (խոնդրոցիտ), մեզենխիմալ ցողունային բջիջներ	Ուժեղ բջջային և արյունատար անոթների աճում, հատիկավորում, աճման գործոնների արտազատում, կոլագենի և ոսկրային մատրիքսի

1	2	3
		ձևավորում ոսկրային ձևածագումնաբանական սպիտակուցների *(BMP)* մասնակցությամբ
TGF-β1	Արյունատար անոթների հյուսվածք, մաշկի արտաքին բջիջներ, թելքուռուցքներ, մոնոցիտներ, որոնք թիրախ են *TGF*-ի և *BMP*-ի համար, ոսկրաբջիջներ՝ թիրախ են *TGF-βr*-ի համար	Արյունատար անոթների աճում, կոլագենի համադրում, աճման արգելակում, ապոպտոզ, տարբերակում, ակտիվացում
IGF-I,II	Ոսկր, արյունատար անոթներ, մաշկ, թելքուռուցքներ	Բջջային աճում, տարբերակում, կոլագենի համադրում PDGF մասնակցությամբ
VEGF, EGGF	Արյունատար անոթների բջիջներ	Բջջային աճում, տարաշարժ, նոր արյունատար անոթների աճում, հակաապոպտոզ
bFGF	Արյունատար անոթներ, հարթ մկաններ, մաշկ, թելքուռուցքներ և այլն	Բջջային աճում, բջջային տարաշարժ, արյունատար անոթների աճում

Տարբերում են առողջացման 3 փուլ՝ բորբոքում, բազմացում և վերականգնում: Բորբոքման փուլն սկսվում է վնասումից անմիջապես հետո և բնութագրվում է թրոմբոցիտների ակտիվացմամբ, աճման գործոնների, ցիտոկինների ու հեմոստատիկ գործոնների միաձուլմամբ և կապազերծմամբ, ինչն անհրաժեշտ է մակարդման սկզբնական փուլերում: Թրոմբոցիտներից անջատված հիստամինը և սերոտոնինը ակտիվացնում են մակրոֆագներին և մեծացնում անոթային թափանցելիությունը: Բազմակորիզ լեյկոցիտները տեղափոխվում են բորբոքման օջախ, ինչից հետո բջիջներն սկսում են բազմանալ, իսկ թելքուռուցքներն օգնում են հիմնական նյութի ձևավորմանը: Ադենոզինային ընկալիչների ակտիվացման շնորհիվ տեղի է ունենում բորբոքման և առողջացման կենսընթացների կարգավորում (աղ. 2 և 3):

ԹՀՊ-ում եղած թրոմբոցիտները մասնակցում են թրոմբագոյացմանը, որում ներգրավված են բջջային հարակցմամբ (ադհեզիա) առաջացված մի շարք մոլեկուլներ, ներառյալ՝ ֆիբրինոնեկտինը, ֆիբրինը և վիտրոնեկտինը: Այդ մոլեկուլները կարևոր դեր են խաղում բջջային տարաշարժում և որոշակի հետաքրքրություն են ներկայացնում ԹՀՊ կենսակտիվ հատկությունների ուսումնասիրության ժամանակ: Անհրաժեշտ է նշել, որ թրոմբն ինքնին բավական մեծ դեր ունի վնասվածքների վերականգնման կենսընթացում:

Աղյուսակ 2

ԹՐՈՄԲՈՑԻՏՆԵՐԻ α-ՀԱՏԻԿՆԵՐՈՒՄ ԵՂԱԾ ԿԵՆՍԱԲԱՆՈՐԵՆ ԱԿՏԻՎ ՄՈԼԵԿՈՒԼՆԵՐԸ

Գործոնների կարգախումբ	Հատկանշական մոլեկուլներ	Կենսաբանական ազդեցությունը
1	2	3
Աճման գործոններ	կերպափոխիչ աճային β գործոն	Խթանում է մատրիքսի (հենքի) համադրումը
	աճման թրոմբոցիտային գործոն	Հեմոատրակտանտների մակերեվույթին բջիջների հարակցում, բջիջների բազմացում
	աճման ինսուլինանման գործոն	Բջիջների բազմացում, հասունացում, ոսկրային մատրիքսի համադրում
	թելքուռուցքների աճման գործոն	Անոթագոյացում, թելքուռուցքների բազմացում
	անոթների էնդոթելի աճման գործոն	Բջջային բազմացում
	աճման վերնամաշկային գործոն	Անոթագոյացում
	էնդոթելային բջիջների աճման գործոն	Էնդոթելային բջիջների բազմացում, անոթագոյացում
Հարակցային սպիտակուցներ	Ֆիբրինոգեն	Արյան մակարդման համակարգի ձևավորում (ֆիբրինային մակարդուկի առաջացում)
	Ֆիբրոնեկտին	Բջիջների մակերևույթին ինտեգրինների հետ միացում, ազդեցություն բջջային հարակցման, աճման, տարաշարժի և տարբերակման վրա
	Վիտրոնեկտին	Բջջային հարակցում, հեմոտաքսիս
	Թրոմբոսպոնդին-1	Անոթագոյացման արգելակում
Մակարդելիության գործոններ	Vգործոն, XI գործոն, S սպիտակուց, հակաթրոմբին	Բոլոր գործոնները մասնակցում են թրոմբինի ակտիվացմանը և, որպես հետևանք, ձևավորում են ֆիբրինային մակարդուկը
Ֆիբրինոլիտիկ գործոններ	Պլազմինոգեն	Պլազմինի նախորդն է, որը տրոհում է ֆիբրինը
	Ուրոկինազայի արգելակիչ	Պլազմինի առաջացման կարգավորում
	α-2 հակապլազմին	Պլազմինի ապակտիվացում
Պրոտեազներ և հակապրոտեազներ	TIMP-4 մետաղապրոտեինազի աճման գործոն	Մատրիքսի տրոհման կարգավորում
	Մետաղապրոտեինազ-4	Մատրիքսի տրոհում
	α-1 հակատրիպսին	Լայն սպեկտրով ֆերմենտների և պրոտեազների արգելակում

1	2	3
Հիմնական սպիտակուցներ	Թրոմբոցիտային գործոն 4	Անոթագոյացման արգելակում
	β-թրոմբոգլոբուլին	Թրոմբոցիտների ակտիվացում, անոթագոյացման արգելակում
	Էնդոստաններ	Էնդոթելային բջիջների տարաշարժ և անոթագոյացման արգելակում
Թաղանթային գլիկոպրոտեիններ	CD40-լիգանդ	Ինտերլեյկինների ու ինտեգրինների համադրում և համալրում, էնդոթելին թրոմբոցիտների հարակցում, ազդանշանների փոխանցում բջջային մակարդակով, ինտերլեյկինն ակտիվացնող մոլեկուլի (PECAM-1) մոդուլում լեյկոցիտներով

Աղյուսակ 3

ԹՐՈՄԲՈՑԻՏՆԵՐԻ ԿԱՐԾՐ ՀԱՏԻԿՆԵՐՈՒՄ ԵՂԱԾ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎ ՄՈԼԵԿՈՒԼՆԵՐ

Մոլեկուլներ	Կենսաբանական ազդեցությունը
Սերոտոնին	Անոթասեղմում (վազոկոնստրիկցիա), մազանոթների թափանցելիության մեծացում, մակրոֆագների ակտիվացում
Հիստամին	Մազանոթների թափանցելիության մեծացում, մակրոֆագների ակտիվացում
Դոֆամին	Նյարդամիջնորդ՝ սրտամկանի կծկման հաճախականության և արյան ճնշման կարգավորում
ADF ադենոզիներկֆոսֆատ	Թրոմբոցիտների միաձուլման մակածություն
ATF ադենոզինեռֆոսֆատ	Մասնակցում է կոլագենի հետ թրոմբոցիտների փոխազդեցության ռեակցիային
Ca2+	Թրոմբոցիտների միաձուլման և ֆիբրինի առաջացման գործոններից մեկը
Կատեխոլամիններ	Ի պատասխան ստրեսի մակերիկամների արտադրած սիմպաթոմիմետիկ հորմոններ

Թրոմբոցիտներով հարուստ պլազմա կարելի է ստանալ միայն չմակարդված արյունից: ԹՀՊ չի կարելի ստանալ արյան սիճուկից, քանի որ այդտեղ եղած թրոմբոցիտների թիվը շատ փոքր է:

ԹՀՊ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրականության մեջ նկարագրվում են ԹՀՊ ստացման բազմաթիվ մեթոդներ: Այդ մեթոդների մի մասը ֆինանսական տեսակետից բավական ծախսատար է և հիմնականում չի կիրառվում: Հետազոտություն կատարելու համար ԹՀՊ ստանալու համեմատաբար մատչելի մեթոդ է առաջարկել Ֆուկայան: Ահա այդ մեթոդի համառոտ էությունը:

Վերցվում է 64 մլ ամբողջական արյուն: Որպես հակամակարդիչ օգտագործվում է ACD-A-ն: Անհրաժեշտ է նշել, որ ամբողջական արյան և հակամակարդիչի փոխհարաբերությունը կազմում է 9:1՝ 9 մլ արյուն և 1 մլ հակամակարդիչ: Պատրաստվում են 16 հատ 5 մլ-անոց ներարկիչներ, որոնց բռնիչները կտրվում են մկրատով: Ներարկիչների անցքը փակվում է խցանով: Ամեն ներարկչի մեջ նախօրոք լցվում է 0,44 մլ ACD-A, ապա 4 մլ ամբողջական արյուն: Ներարկիչները տեղադրվում են ցենտրիֆուգի մեջ և 3 րոպե ենթարկվում են 3000 պտույտ/րոպե արագությամբ ցենտրիֆուգման: Ցենտրիֆուգման հետևանքով պլազման անջատվում է արյան կարմիր գնդիկներից: 3 րոպե հետո բոլոր ներարկիչները զգուշությամբ հեռացվում են ցենտրիֆուգից և տեղադրվում հատուկ բռնիչի վրա: Պատրաստվում են 8 հատ 5 մլ-անոց ներարկիչներ: Ամեն ներարկչի մեջ լցվում է 0,05 մլ ֆիզիոլոգիական լուծույթում լուծված մեկ միկրոգրամ PGE-1: 16 ներարկիչներից անջատված պլազման տեղափոխվում է այդ 8 ներարկիչների մեջ, որոնք ևս տեղադրվում են ցենտրիֆուգի մեջ և 15 րոպե պտտեցվում 4000 պտույտ/րոպե արագությամբ: Ամեն ներարկչում ստացվում է մոտ 0,65 մլ սուպերնատանտ: Այսինքն՝ վերցված 64 մլ ամբողջական արյունից ստացվում է մոտ 5-5,2 մլ ԹՀՊ (նկ. 1):



Նկ. 1. Ամբողջական արյունից ԹՀՊ ստացման փուլերը

Հարց է ծագում, թե ինչու է անհրաժեշտ որպես հակամակարդիչ օգտագործել ACD-A-ն, և ինչու երկրորդ անգամ ցենտրիֆուգելուց առաջ պետք է ավելացնել PGE-1-ը: Պատճառն այն է, որ մեր նպատակը աճման թրոմբոցիտար գործոնի՝ PDGF-ի առավելագույն հնարավոր կոնցենտրացիայի ստացումն է,

իսկ դա հնարավոր է միայն ACD-A-ի և PGE-1-ի կիրառման դեպքում: Ըստ հեղինակների՝ տվյալ դեպքում PDGF-BB կոնցենտրացիան եղել է 30109,4 պգ/մլ, որը ինքնին բավական բարձր ցուցանիշ է: Հնարավոր է ստանալ մի փոքր ավելի մեծ կոնցենտրացիա, եթե ավելացվի Triton X, որը վնասում է թրոմբոցիտների թաղանթը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ

Ինչպես արդեն նշվել էր, գրականության մեջ բերվում են կոտրվածքների սերտաճման վրա ԹՀՊ ազդեցության հետազոտությունների քիչ թվով նկարագրություններ: Չկա հստակ կերպով մշակված մեթոդաբանություն, որը վերաբերեր կատարվող ներարկումների քանակին և հաջորդականությանը: Նման հետազոտությունը կարելի է կատարել երկու փուլով՝ գիտափորձարարական և կլինիկական: Գիտափորձարարական փուլում նպատակահարմար է փորձ դնել կենդանիների՝ շների վրա: Պետք է հետազոտել ձախ ազդրի շրջանում կոտրվածք ունեցող 40 շուն: Նախ ձախ ազդրի շրջանում կատարվելու է կտրվածք, մերկացվելու է ազդրոսկրը, որը ոսկրային սղոցով հատվելու է թեք անկյան տակ, հետագայում կոտրվածքը ֆիքսվելու է պտուտակներով, և հյուսվածքները վերականգնվելու են շերտ առ շերտ:

Խումբը բաժանվելու է երկու մասի՝ յուրաքանչյուր խմբում 20-ական շուն.

- առաջին խմբի կենդանիներին ներարկվելու է ԹՀՊ: Ներարկումը կատարվելու է հետևյալ սխեմայով՝ վնասվածքից 10 օր հետո առաջին ներարկում, վնասվածքից 3 շաբաթ հետո երկրորդ ներարկում և վնասվածքից 5 շաբաթ հետո երրորդ ներարկում: Յուրաքանչյուր անգամ ներարկվելու է 2 մլ ԹՀՊ,
- երկրորդ խմբի 20 շներին ԹՀՊ չի ներարկվելու:

Երկու խմբերի շներն էլ կոտրվածքից 7 շաբաթ հետո կրկին վիրահատվելու են՝ կոտրվածքի շրջանից վերցվելու են փորձանմուշներ, որոնք ենթարկվելու են հյուսվածաբանական ուսումնասիրության: Գնահատվելու է երկու խմբի կենդանիների ոսկրային կոշտուկի վիճակը, կատարվելու են համապատասխան եզրահանգումներ:

Հետազոտության կլինիկական մասում աշխատանքը պետք է կատարվի կամավորների շրջանում, որոնք ունեն տարբեր տեղակայմամբ կոտրվածքներ: Ներարկումները կատարվելու են նույն սխեմայով, սակայն կախված կոտրվածքի տեղակայումից ներարկվելու է 2-ից 5 մլ ԹՀՊ: Կոտրվածքի սերտաճումը գնահատվելու է ռենտգենաբանական հետազոտության միջոցով: Հետազոտության արդյունքները գնահատելու համար պետք է մշակվի համապատասխան մեթոդիկա, որի կիրառումը ցույց կտա, թե որքանով արդյունավետ էր ԹՀՊ կիրառումը, և որքանով է արագացել կոտրվածքի սերտաճումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *I. Andia, M. Sánchez, N. Maffulli.* Joint pathology and platelet-rich plasma therapies. “Expert Opinion on Biological Therapy”, 2012, Vol. 12, Issue 1.
2. *N. S. Arora, T. Ramanayake, Y. F. Ren, G. E. Romanos.* Platelet-rich plasma: a literature review. “Implant Dentistry”, 2009, Vol. 18, N 4.
3. *P. Borrione, A. D. Gianfrancesco, M. T. Pereira, F. Pigozzi.* Platelet-rich plasma in muscle healing. “American Journal of Physical Medicine & Rehabilitation”, 2010, Vol. 89, Issue 10.
4. *D. M. Dohan Ehrenfest, L. Rasmusson, T. Albrektsson.* Classification of platelet concentrates: from pure platelet-rich plasma (P-PRP) to leucocyte- and platelet-rich fibrin (L-PRF). “Trends in Biotechnology”, 2009, Vol. 27, Issue 3.
5. *T. E. Foster, B. L. Puskas, B. R. Mandelbaum, M. B. Gerhardt, S. A. Rodeo.* Platelet-rich plasma: from basic science to clinical applications. “The American Journal of Sports Medicine”, 2009, Vol. 37, Issue 11.
6. *Mototsugu Fukaya, Asako Ito.* A New Economic Method for Preparing Platelet-rich Plasma. “Plastic and Reconstructive Surgery Global Open”, June 2014, Vol. 2, N 6.
7. *R. E. Marx.* Platelet-rich plasma: evidence to support its use. “Journal of Oral and Maxillofacial Surgery”. 2004, Vol. 62, Issue 4.
8. *A. Mishra, T. Pavelko.* Treatment of chronic elbow tendinosis with buffered platelet-rich plasma. “The American Journal of Sports Medicine”. 2006, Vol. 34, Issue 11.
9. *A. Mishra, J. Woodall, A. Vieira.* Treatment of tendon and muscle using platelet-rich plasma. “Clinics in Sports Medicine”, 2009, Vol. 28, Issue 1.
10. *W. Yu, J. Wang, J. Yin.* Platelet-Rich Plasma: A Promising Product for Treatment of Peripheral Nerve Regeneration After Nerve Injury. “International Journal of Neuroscience”. 2011, Vol. 121, Issue 4.

ВОЕННАЯ МЕДИЦИНА

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРИМЕНЕНИЯ БОГАТОЙ ТРОМБОЦИТАМИ ПЛАЗМЫ ДЛЯ АКТИВАЦИИ СРАЩИВАНИЯ ПЕРЕЛОМОВ

А. С. ГАЛСТЯН, майор м/с, кандидат медицинских наук, старший преподаватель кафедры военно-полевой хирургии ВМФ ЕГМУ

РЕЗЮМЕ

Благодаря исследованиям процессов регенерации костной ткани, связок и хрящей были созданы различные вещества, способствующие стимулированию деятельности биологически активных веществ и, как следствие, ускорению процессов заживления в тканях. Одним из таких веществ является богатая тромбоцитами кровяная плазма (БоТП). Согласно данным специальной литературы, БоТП успешно используется в хирургии, имплантологии, косметологии, спортивной медицине. БоТП содержит биологически активные аутогенные вещества: факторы роста и секреторные белки, которые ускоряют процессы регенерации поврежденных тканей на клеточном уровне.

В соответствии с этим предлагается модель эксперимента по разработке методики использования БоТП для активизации процессов регенерации тканей с определением количества и последовательности инъекций БоТП.

MILITARY MEDICINE

SOME ISSUES OF IMPLEMENTING PLATELET-RICH PLASMA IN ACTIVATION OF THE FRACTURE HEALING

A. S. GALSTYAN, Major of Medical Service, PhD in Medicine, Senior Lecturer, Chair of Field Surgery, Department of Military Medicine, YSMU

SUMMARY

Thanks to the researches conducted in the processes of regeneration of the osseous tissue, ligaments and cartilages, different agents have been invented which facilitate the stimulation of functioning of biologically active substances and, as a result, acceleration of the tissue healing processes. One of such agents is the platelet-rich plasma (PRP). According to the special literature data, PRP is successfully practiced in surgery, implantology, cosmetology, and sports medicine. PRP contains biologically active autogenous substances: growth factors and secretory proteins, which accelerate the regeneration process of the damaged tissue at the cellular level.

Pursuant to this, a simulation model is proposed according to the development of the methodology of PRP application for activating the tissue regeneration processes with determining the PRP amount and sequence injections.

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Կ. Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս, ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ

Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության լուսաբանումն անհնար է առանց այդ տարիներին Կարմիր բանակի կազմում մար-տընչած հայկական ազգային դիվիզիաների պատմության ներկայացման: Չէ՞ որ Խորհրդային Միության բանակի կազմում հայերի մի զգալի մասը կռվել է հայկական ազգային դիվիզիաներում՝ անձնազոհաբար մասնակցելով Կովկասի, Ստալինգրադի ու Կուրսկի համար մղված ճակատամարտերին, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթյան հանրապետությունների, Լեհաստանի, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի և Ավստրիայի ազատագրմանը, հաղթական մարտերով մտել Բեռլին, այնտեղ քոչարի պարել և մեսրոպյան տառերով իրենց անունները գրել Ռայխստագի պատերին: Եվ պատահական չէ, որ հայ պատմագրության մեջ մեծ կարևորություն է տրվել 76-րդ, 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաների պատմության ուսումնասիրությանը, գրվել են առանձին մենագրություններ, հուշեր, ատենախոսություններ, կազմվել են դիվիզիաների մարտական ուղիները լուսաբանող արխիվային փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, գիտական հանդեսներում և մամուլում տպագրվել են բազմաթիվ հոդվածներ:

Ամենափառապանծ 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի պատմությունը հայ պատմաբաններից առաջինն ուսումնասիրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայրենական մեծ պատերազմի մասնակից Արամայիս Նավասարդի Մնացականյանը: 1947 թ. հրատարակված «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները (1941–1945)» աշխատությունում[1] լուսաբանված է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հայկական զինվորական թերթերի, այդ թվում՝ 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթի դերը: Հեղինակը «Կարմիր զինվոր» թերթը համարել է «հերոսական սխրագործությունների հայելին»[2], թերթում տպա-

[1] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները (1941–1945): Ե., 1947:

[2] Նույն տեղում, էջ 159–203:

գրված հոդվածների միջոցով լուսաբանել է դիվիզիայի մասնակցությունը Կովկասի, Կերչի, Ղրիմի, Լեհաստանի և Բեռլինի համար մղված մարտերին:

Այնուհետև նա հրապարակել է «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941–1945)» աշխատությունը[3]: Ա. Մնացականյանը 1970 թ. ՀԽՍՀ ԳԱ-ի պատմության ինստիտուտի կազմած «Հայ ժողովրդի պատմության» 8-րդ հատորի՝ Հայրենական մեծ պատերազմին վերաբերող 1-ին և 2-րդ գլուխների հեղինակն է[4]: 1975 թ. լույս է տեսել նրա «Միասնական շարքերում» մենագրությունը[5], որտեղ հեղինակը ներկայացրել է հայկական ազգային զորամիավորումների կազմավորման պատմությունը, ինչպես նաև 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի անցած մարտական ուղին՝ Հյուսիսային Կովկաս, Թամանյան թերակղզի, Կերչ, Սևաստոպոլ, Լեհաստան, Գերմանիա՝ Բեռլին:

89-րդ Հայկական Թամանյան Կարմիր դրոշի, Կարմիր աստղի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի պատմությունը իր «Մարտական-89» աշխատության մեջ ուսումնասիրել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ղևոնդ Մեխակի Դալլաքյանը[6]: Հեղինակը Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարտնչել է այդ փառապանծ դիվիզիայի շարքերում, եղել նրա քաղբաժնի ագիտատոր, ստացել մայորի զինվորական կոչում: Ականատեսի աչքերով և համապատասխան արխիվային փաստերի ու մամուլի տվյալների հիման վրա նա հայ պատմագրության մեջ առաջին անգամ լուսաբանել է դիվիզիայի հերոսական տարեգրությունը, ուրվագծել նրա անցած փառավոր մարտական ուղին՝ Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա: Հեղինակը առանձնակի ուշադրություն է դարձրել դիվիզիայի կազմավորման, մարտական մկրտության, Ղրիմի, Լեհաստանի տարածքներում տեղի ունեցած մարտերի, Բեռլինի գրավման իրադարձություններին, դիվիզիայի հետագա ճակատագրին, բնութագրել հետպատերազմյան շրջանում միավորման հրամանատարներին, հավելվածում զետեղել «Հայ ժողովրդի նամակը ռազմաճակատում կռվող իր զավակներին»:

1969 թ. Թամանյան դիվիզիայի մասին աշխատություն է հրապարակել գնդապետ Երվանդ Կարապետյանը[7], որը 1943 թ. հունիսի 16-ից մինչև 1945 թ. հունվարի 18-ը եղել է դիվիզիայի 390-րդ հրաձգային գնդի հրամանատար, իսկ հետո՝ դիվիզիայի հրամանատարի շարային գծով տեղակալ: Մեծ հետաքրքրությամբ կարդացվող այս աշխատությունը զուտ ականատեսի վկայություն է՝ առանց արխիվային նյութերի օգտագործման:

---

[3] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941–1945): Ե., 1954:

[4] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8: Ե., 1970:

[5] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Միասնական շարքերում: Ե., 1975:

[6] Տես *Ղ. Մ. Դալլաքյան,* Մարտական-89: Ե., 1966:

[7] Տես *Ե. Ա. Կարապետյան*, Անմահության ճանապարհով: Ե., 1969:

89-րդ դիվիզիայի մարտական ուղին ուսումնասիրել է նաև պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ Գրիգորի Գրիգորյանը՝ իր «Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը (1942 թ. հուլիս–1943 թ. հոկտեմբեր)» գրքում[8]: Նա նաև լուսաբանել է դիվիզիայի գործողությունները Կովկասի ճակատամարտի պաշտպանական և հարձակողական մարտերում:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության Նախագահ Մ. Պապյանը (ձախից առաջինը) ընդունում է 89-րդ Հայկական դիվիզիայի զորամասերի զորահանդեսը ռազմաճակատ մեկնելուց առաջ.

Երևան, 1942 թ. օգոստոս

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 30-ամյակի առթիվ 1975 թ. հայկական 89-րդ և 408-րդ հրաձգային դիվիզիաների մասին աշխատություն է հրապարակել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արշավիր Մնացականի Հակոբյանը[9], որը պատերազմի առաջին շրջանում ծառայել է 408-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի շարքերում որպես «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիր, իսկ 1943–1945 թթ.՝ որպես 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի հրամանատարի՝ քաղաքական գծով տեղակալ:

89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի պատմությունը ներկայացված է նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Հակոբի Բարսեղյանի «Այսպես ապրեցին» վավերագրական-գեղարվեստական եռագրության մեջ[10]: Հեղինակը աշխատության շարադրանքին տվել է օրագրի տեսք, ինչն ավելի հետաքրքրական է դարձնում ընթերցումը:

Բոլոր նշված հեղինակներն էլ իրենց աշխատությունները շարադրելիս հնարավորություն չեն ունեցել օգտվելու ԽՍՀՄ պաշտպանության նախա-

[8] Տես *Ք. Գ. Գրիգորյան,* Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը (1942 թ. հուլիս–1943 թ. հոկտեմբեր): Ե., 1971:

[9] Տես *Ա. Մ. Հակոբյան,* Հերոսական մարտերում: Ե., 1975:

[10] Տես *Խ. Հ. Բարսեղյան,* Այսպես ապրեցին: Ե., 1985:

րարության կենտրոնական արխիվի հարուստ տվյալներից, որովհետև այն ժամանակներում այդ արխիվը ուսումնասիրողների համար փակ էր: Այս առումով 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի պատմությունն ուսումնասիրողների համար կարևոր սկզբնաղբյուր է դարձել 1985 թ. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչության և Հայկական ԽՍՀ ԳԱ-ի պատմության ինստիտուտի աշխատողների կազմած փաստաթղթերի և նյութերի ժողովածուն[11]: Այն կազմել են Արխիվային վարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պահեստի գնդապետ Աշոտ Հարությունյանը, ՀԽՍՀ ԳԱ-ի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Կլիմենտ Հարությունյանը, արխիվային վարչության ավագ գիտաշխատողներ Էմմա Սարգսյանը, Օկտյաբրինա Բալիկյանը: Ժողովածուն խմբագրել են դոկտորներ Աշոտ Հարությունյանը և Արշավիր Հակոբյանը:

Ժողովածուի մեջ զետեղված է 362 փաստաթուղթ, որոնցից 344-ը հրապարակվել են առաջին անգամ: Դրանք ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում (ք. Պոդոլսկ) որոնել և հայտնաբերել է Կլիմենտ Հարությունյանը[12]: Հրապարակված փաստաթղթերը թեմատիկ առումով բազմազան են: Դրանք մարտական գործողությունների մատյաններ են, մարտական հրամաններ, օպերատիվ հաղորդագրություններ, ամփոփագրեր, քաղաքական տեղեկագրեր, կառավարական պարգևների հրամաններ և հրամանագրեր, պարգևատրման թերթիկներ, լրագրային հոդվածներ: Ժողովածուն բաղկացած է 5 բաժիններից՝ «Դիվիզիայի կազմավորումը (1941 թ. դեկտեմբեր – 1945 թ. օգոստոս)», «Հյուսիսային Կովկասի ազատագրման մարտերում (1942 թ. սեպտեմբեր – 1943 թ. հոկտեմբեր)», «Կերչի և Ղրիմի ազատագրման մարտերում (1943 թ. նոյեմբեր – 1944 թ. մայիս)», «Լեհաստանի ազատագրման մարտերում (1941 թ. սեպտեմբեր – 1945 թ. հունվար)» և «Օդերի հենակետի պաշտպանության և Բեռլինյան գործողության մարտերում (1945 թ. հունվար–մայիս)»: Փաստաթղթերը դասավորված են ըստ ժամանակագրության: Ժողովածուում տեղ է գտել նաև 539 լուսանկար: Վերջում բերված են հավելված-աղյուսակներ, որտեղ տրված են դիվիզիայի, նրա գնդերի, առանձին ստորաբաժանումների հրամանատարների, Խորհրդային Միության հերոսների, «Փառքի» շքանշանի բոլոր ասպետների ճշտված ցուցակները: Ժողովածուն ունի ընդարձակ ներածություն, նաև անձնանունների, տեղանունների, համառոտագրությունների, օգտագործված արխիվների, դիվիզիայի վերաբերյալ լույս տեսած գրքերի և հոդվածների, ինչպես նաև հրապարակված փաստաթղթերի ցանկեր:

Պրոֆեսոր Ա. Մ. Հակոբյանը 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի պատմությանն անդրադարձել է նաև «Կովկասյան նախալեռներից մինչև

[11] Տես «89-րդ Թամանյան կարմրադրոշ, Կուտուզովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանակիր հայկական հրաձգային դիվիզիայի մարտական ուղին 1942–1945 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածու: «Բանբեր Հայաստանի արխիվների», 1985, հմ. 2–3:

[12] Տես նույն տեղում, էջ 22:

Բեռլին-Էլբա» աշխատության մեջ[13]: Աշխատությունը գրված է հիմնականում 1985 թ. «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 2-րդ և 3-րդ միացյալ համարներում հրապարակված՝ դիվիզիայի մարտական ուղին լուսաբանող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի, ինչպես նաև իր հուշերի հիման վրա:

Բեռլինի ճակատամարտին 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի մասնակցությունն է լուսաբանել դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի գումարտակի հրամանատար, գնդապետ, պատմական գիտությունների դոկտոր Գրիգոր Սարգսի Աբրահամյանը[14]: Աշխատությունը գրված է ռուսերեն լեզվով: Այնտեղ հանգամանորեն վերլուծված են դիվիզիայի գործողությունները Բեռլինի համար մղված ճակատամարտում:

2002 թ. լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանի «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.» մեծարժեք մենագրությունը[15]: Այն ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում հեղինակի բազմամյա տքնաջան աշխատանքի արդյունք էր:

Կ. Ա. Հարությունյանը հայ պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացնում է 1942 թ. սեպտեմբերի 26–30-ը Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած ծանր մարտերը, որոնցում դիվիզիան մեծ կորուստներ էր կրել, ինչի պատճառով վերադաս հրամանատարությունը փորձել էր դիվիզիան կազմացրել և ստեղծել ավելի փոքր միավորում՝ բրիգադ: Սակայն Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանի (որը նաև Անդրկովկասի ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ էր) միջամտությամբ դիվիզիան ոչ միայն չի կազմալուծվել, այլև համալրվել է և նոր մարտական առաջադրանք ստացել Գրոզնի-Մալգոբեկ շրջանում, իսկ 1943 թ. հունվարի 1-ին սկսված մարտական գործողությունների շնորհիվ ազատագրել է Մալգոբեկ քաղաքը, Նովոջիրելիևսկայա և բազմաթիվ այլ բնակավայրեր, հոկտեմբերին՝ Թամանի թերակղզին, ինչի համար դիվիզիան արժանացել է «Թամանյան» պատվավոր անվանմանը, իսկ 3 խիզախների շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Հայ պատմագրության մեջ առաջին անգամ Կ. Ա. Հարությունյանը իր հայտնաբերած արխիվային փաստերի հիման վրա մանրամասնորեն ներկայացնում է նաև 1956 թ. հուլիսին ազգային, այդ թվում՝ հայկական, դիվիզիաների կազմացրման հարցերը[16]:

Հայ պատմագրության մեջ զգալի տեղ է հատկացվել նաև Կարմիր բանակի առաջին հայկական դիվիզիայի պատմության ուսումնասիրությանը:

---

[13] Տես *Ա. Մ. Հակոբյան,* Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա: Ե., 1991:

[14] Տես *Г. С. Абрамян.* 89-я Армянская Таманская стрелковая дивизия в последней фазе Великой Отечественной войны. Е., 1994:

[15] Տես *Կ. Ա. Հարությունյան*, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.: Ե., 2002:

[16] Տես նույն տեղում, էջ 243–247:

1976 թ. Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Արխիվային վարչությունը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 3-րդ համարում տպագրեց «Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ – 51-րդ գվարդիական Վիտեբսկյան Լենինի շքանշանակիր հրածգային դիվիզիա 1920–1945 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (կազմողներ՝ Աշոտ Հարությունյան, Էմմա Սարգսյան, Օկտյաբրինա Բալիկյան, Կլիմենտ Հարությունյան): Ժողովածուում տեղ է գտել 172 փաստաթուղթ, որոնք ժամանակագրական կարգով խմբավորվել են երեք գլուխներում՝ դիվիզիայի կազմավորումը (1920 թ. դեկտեմբերի 2–1922 թ. սեպտեմբերի 5), դիվիզիան խաղաղ շինարարության տարիներին (1922 թ. հոկտեմբերի 1 – 1938 թ. մայիսի 28) և դիվիզիան Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941 թ. հունիսի 22 – 1945 թ. մայիսի 9-ը)[17]: Դիվիզիայի պատմությունը սերտորեն կապվում է Հայաստանի առաջին հանրապետության բանակի ձևավորման և նրա վերակազմավորման, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և Հայկական կարմիր բանակի ձևավորման, Հայաստանում քաղաքացիական կռիվների, խորհրդային կարգերի ամրապնդման, հայկական ազգային զինվորական կադրերի պատրաստման և, վերջապես, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի հետ: Բավական է հիշատակել, որ այդ դիվիզիայի շարքերում իրենց առաջին մարտական մկրտությունն են ստացել Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, Խորհրդային Միության հերոս, Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը, ավելի քան 50 գեներալներ, 200 գնդապետներ, միջին ու կրտսեր հրամկազմի շուրջ 1000 սպաներ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին նրանք դարձել են ռազմաճակատի, բանակի, կորպուսների, դիվիզիաների, բրիգադների, գնդերի հրամանատարներ:

76-րդ Հայկական հրածգային դիվիզիայի մարտիկները Ստալինգրադի պաշտպանության ժամանակ. 1942 թ. հուլիս

Կարմիր բանակի առաջին հայկական զորամիավորման պատմության լուսաբանման գործում զգալի ներդրում է ունեցել Կլիմենտ Հարությունյանը: Նրա՝ «51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին» աշխատությունը բաղկացած է ներածությունից և 3 գլուխներից[18]: 2002 թ. Կ. Ա. Հարությունյանի լույս ընծայած «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.»

[17] Տես «Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ – 51-րդ գվարդիական Վիտեբսկյան Լենինի շքանշանակիր հրածգային դիվիզիա 1920–1945 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածու: «Բանբեր Հայաստանի արխիվների», 1976, հմ. 3:

[18] Տես *Կ. Ա. Հարությունյան,* 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին: Ե., 1980:

աշխատության մի զգալի մասը ևս նվիրված է Կարմիր բանակի առաջին հայկական հրաձգային դիվիզիայի պատմությանը[19]:

Կովկասի ճակատամարտում 409-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի մարտական գործողությունները համառոտ կերպով լուսաբանել է Քնարիկ Գրիգորի Գրիգորյանը[20]: Նա համառոտ կերպով ներկայացրել է դիվիզիայի առաջին մարտերը Մոզդոկի շրջանում, նշել անձնակազմին կազմակերպելու, ոգևորելու և հրամանատարության շուրջը համախմբելու գործում միավորման «Մարտական դրոշ» թերթի ունեցած դերը[21]:

409-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի մի խումբ սպաներ ու զինվորներ Դնեպրի գետանցումից հետո (1943 նոյեմբեր). կենտրոնում՝ 684-րդ գնդի հրամանատարի քաղաքական մասի գծով տեղակալ մայոր Աշոտ Հարությունյան

1980 թ. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչության գիտական խորհրդի որոշմամբ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 3-րդ և 1981 թ. 1-ին համարներում լույս է տեսել «409-րդ հրաձգային Կիրովոգրադյան-Բրատիսլավյան Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր հայկական դիվիզիայի մարտական ուղին (1941–1945 թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (կազմողներ՝ Աշոտ Հարությունյան և Հրանտ Հովհաննիսյան): Ժողովածուի 1-ին մասում տեղ գտած 1–10-րդ փաստաթղթերը վերաբերում են 1941–1942 թթ. դիվիզիայի կազմավորմանը, 11–14-րդ փաստաթղթերը՝ դիվիզիայի մարտական գործողություններին Հյուսիսային Կովկասում և Ուկրաինայում, 45–109-րդ փաստաթղթերը՝ 1944 թ. ընթացքում դիվիզիայի մասնակցությանը Ուկրաինայի ազատագրման, Ռումինիայի և Հունգարիայի տարածքներում տեղի ունեցած մարտերին, իսկ վերջին բաժնում տեղ գտած 110–156-րդ փաստաթղթերը վերաբերում են դիվիզիայի մասնակցությանը 1945 թ. Հունգարիայի, Չեխոսլովակիայի և Արևելյան Ավստրիայի ազատագրմանը:

«Բանբեր Հայաստանի արխիվների» 1981 թ. թիվ 1-ում տեղ են գտել դիվիզիայի վետերանների հուշերը, ռազմաճակատային թերթերից վերցված հոդվածները, մի շարք այլ նյութեր: Հավելվածում տեղ են գտել դիվիզիայի պատմական տեղեկանքից արված քաղվածքներ, պարգևատրվածների և հրապարակվող փաստաթղթերի ցուցակներ, համառոտագրությունների, անձ-

[19] Տես *Կ. Ա. Հարությունյան,* Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 83–197:

[20] Տես *Ք. Գ. Գրիգորյան,* Նշ. աշխ.:

[21] Տես նույն տեղում, էջ 52–56:

նանունների և տեղանունների ցանկեր[22]: Սակայն ժողովածուում բերված է միայն պարգևատրման թերթիկների բովանդակությունը, զետեղված չեն պարգևատրված սպաների ու զինվորների պարգևատրման հրամանները, չկան դիվիզիայի անձնակազմի ազգային կազմի մասին փաստաթղթեր, դիվիզիան հայկական կոչելու և կազմացրելու մասին հրամանները և այլն:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դեռ չկա 409-րդ Հայկական հրածգային դիվիզիայի ամբողջական պատմության վերաբերյալ առանձին աշխատություն, ուստի հայ պատմագիրները անելիքներ ունեն այս ասպարեզում:
408-րդ Հայկական հրածգային դիվիզիայի մարտական ուղու առաջին ծավալուն նկարագրությունը «Այրվող անտառ» գրքում տվել է պատմական գիտությունների թեկնածու, դիվիզիայի քաղբաժնի պետ, գնդապետ Սիմոն Մկրտչի Սարգսյանը, ապա այդ հարցերին անդրադարձել «408-րդ Հայկական հրածգային դիվիզիան Կովկասի համար մղվող մարտերում» (ռուս.) աշխատության մեջ[23]: Դեպքերին քաջատեղյակ հեղինակը որպես ականատես նկարագրում է 1942 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Կովկասի ճակատամարտի Նովոռոսիյսկի, ապա Տուապսեի շրջանում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ տեղի ունեցած արյունահեղ մարտերում 408-րդ Հայկական հրածգային դիվիզիայի անձնակազմի սխրանքը: Դիվիզիան կրել է ծանր կորուստներ, սակայն մարտական առաջադրանքը կատարել է հաջողությամբ. թշնամին չի կարողացել մտնել Անդրկովկաս:

Դիվիզիայի մարտական ուղին համառոտակի լուսաբանել են նաև Արամայիս Մնացականյանը և Քնարիկ Գրիգորյանն իրենց աշխատություններում[24]:

408-րդ Հայկական դիվիզիայի պատմությունն ուսումնասիրել է նաև դիվիզիայի «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիր մայոր Արշավիր Մնացականի Հակոբյանը[25]: Հեղինակը գրքի առաջին մասում լուսաբանել է դիվիզիայի կազմավորման աշխատանքները, ցույց տվել այդ գործում Հայաստանի կոմկուսի կենտկոմի և կառավարության խաղացած կարևոր դերը, դիվիզիայի անձնակազմի հետ Ավետիք Իսահակյանի անմոռանալի հանդիպման մանրամասները, դիվիզիայի անձնակազմի նկատմամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանի ամենօրյա հոգատարությունը: Ա. Մ. Հակոբյանը ներկայացրել է նաև դիվիզիայի մարտական և քաղաքական պատրաստման աշխատանքները, այնուհետև լուսաբանել Նովոռոսիյսկի և Տուապսեի շրջանում միավորման մղած արյունահեղ պաշտպանական մարտերի ընթացքում հայ զինվորների ու սպաների

[22] Տես «409-րդ հրածգային Կիրովոգրադյան-Բրատիսլավյան Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր հայկական դիվիզիայի մարտական ուղին (1941–1945 թթ.)» փաստաթղթերի և նյութերի ժողովածու: «Բանբեր Հայաստանի արխիվների», 1980, հմ. 3, 1981, հմ. 1:

[23] Տես *Ս. Մ. Սարգսյան,* Այրվող անտառ: Ե., 1965, *նույնի*՝ 408-я Армянская стрелковая дивизия в битве за Кавказ. Е., 1985:

[24] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941–1945), *նույնի*՝ Միասնական շարքերում, *Ք. Գ. Գրիգորյան,* Նշ. աշխ.:

[25] Տես *Ա. Մ. Հակոբյան,* Հերոսական մարտերում:

դրսևորած անօրինակ քաջությունը, որը մեծապես նպաստել է մարտական առաջադրանքի հաջող կատարմանը:

408-րդ դիվիզիայի կազմավորման և Կովկասի ճակատամարտում տարած հաղթանակում նրա անձնակազմի ներդրած ավանդի ու անցած մարտական ուղու մասին գրել է նաև Կ. Ա. Հարությունյանը «Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.» մենագրության 216–220 և 252–257 էջերում: Նորահայտ արխիվային փաստերի հիման վրա հեղինակը ներկայացրել է ինչպես դիվիզիայի կազմավորման, այնպես էլ նրա մարտական գործողությունների ընթացքը, բացահայտել միավորման դերը Կովկասի ճակատամարտում տարած հաղթանակի գործում[26]:

408-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի մարտիկները Տուապսեի համար մղվող պաշտպանական մարտերում. 1942 թ. հոկտեմբեր

Հայ պատմագրության մեջ քիչ է ուսումնասիրված հայկական 390-րդ և 261-րդ հրաձգային դիվիզիաների պատմությունը, չկան այդ միավորումների գործունեությանը նվիրված առանձին աշխատություններ: Պատմաբաններ Արամայիս Մնացականյանը և Կլիմենտ Հարությունյանն իրենց աշխատություններում, ինչպես նաև «Հայ ժողովրդի պատմության» 8-րդ և «Հայոց պատմության» 4-րդ հատորների իրենց բաժիններում գրել են այդ դիվիզիաների պատմությունը[27]: Կլիմենտ Հարությունյանն այդ դիվիզիաների պատմությունը ներկայացրել է նաև «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ.» մենագրության 220–228, 247–252 էջերում[28]:

390-րդ Հայկական հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1942 թ. փետրվարին՝ Կերչում, մարտական գործողությունների պայմաններում: Այն գոյություն է ունեցել մինչև 1942 թ. մայիսի վերջերը և իր արժանի լուման ներդրել Կերչի հերոսական պաշտպանության գործում: 261-րդ Հայկական հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1942 թ. հոկտեմբերին Երևանում: Մինչև իր կազմացրման օրը՝ 1945 թ. ամառ, դիվիզիան ոչ միայն հաջողությամբ պաշտպանել է խորհրդա-թուրքական սահմանը, այլև պատրաստել է երթային գումարտակներ[29]:

[26] Տես *Կ. Ա. Հարությունյան,* Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 216–220 և 252–257:

[27] Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, էջ 52–55, «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1: Ե., 2010, էջ 548–549:

[28] Տես *Կ. Ա. Հարությունյան,* Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 220–228, 247–252:

[29] Տես նույն տեղում, էջ 228:

Ամփոփելով հայ պատմագրության մեջ Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կարմիր բանակի կազմում գոյություն ունեցած հայկական դիվիզիաների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ հայ պատմաբանները այդ բնագավառում կատարել են մեծ և շնորհակալ աշխատանք: Հրատարակվել են առանձին մենագրություններ, հուշագրություններ և փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, որտեղ մանրամասն կերպով լուսաբանվել են հատկապես 76-րդ, 89-րդ և 408-րդ հայկական հրաձգային դիվիզիաների պատմության բազմաթիվ հարցեր: Սակայն 261-րդ, 390-րդ և 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաների առնչությամբ հայ պատմաբանները դեռ ունեն անելիքներ: Այդ դիվիզիաների պատմության վերաբերյալ չեն գրվել առանձին մենագրական վերլուծական աշխատություններ, որոնցում վերլուծվեին և համակարգվեին պատմական փաստերը:

390-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի մի խումբ հրամանատարներ. Կերչ, 1942 թ. մայիս

Այսպիսով՝ Հայկական ազգային դիվիզիաներին նվիրված ուսումնասիրությունները արժեքավոր են ինչպես պատմագիտական, այնպես էլ ՀՀ Զինված ուժերի և Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման առումով:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОСВЕЩЕНИЯ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ УЧАСТИЯ АРМЯНСКИХ ДИВИЗИЙ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

В. А. ГАСПАРЯН, кандидат педагогических наук, преподаватель Департамента специального образования и прикладной педагогики Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, заместитель начальника Управления по управлению государственным имуществом при равительстве РА

РЕЗЮМЕ

В годы Великой Отечественной войны в состав Красной Армии входили армянские дивизии, в рядах которых сражалось более 60 тыс. армян. В армянской историографии традиционно придается особая важность изучению истории армянских национальных дивизий; изданы отдельные монографии,

диссертации, мемуары, сборники архивных материалов и документов, освещающие процессы формирования и боевые пути дивизий, в научных журналах и прессе публикуются статьи.

В историографии представлены подробные сведения относительно формирования и боевого пути 89-ой Армянской Таманской, 76-ой и 408-ой Армянских стрелковых дивизий, однако нет отдельных монографий, изучающих и систематизирующих исторические факты, связанные с 261-ой и 390-ой армянскими стрелковыми и 409-ой Армянской Кировоградско-Братиславской стрелковой дивизиями.

Исследования, посвященные армянским национальным дивизиям, ценны не только с точки зрения историографии, но и с точки зрения эффективной организации военно-патриотического воспитания личного состава Армии Обороны Республики Арцах и Вооруженных сил РА.

MILITARY HISTORY

SOME QUESTIONS OF COVERING THE PARTICIPATION OF ARMENIAN DIVISIONS IN THE GREAT PATRIOTIC WAR IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

V. A. GASPARYAN, PhD in Pedagogical Sciences, Lecturer, Chair of Professional Education and Applied Pedagogy, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Deputy Head, State Property Management Department at the RA Government

SUMMARY

During the Great Patriotic War, the Red Army included Armenian divisions, in the ranks of which more than 60 thousand Armenians fought. The Armenian historiography traditionally attributes special importance to the study of the history of Armenian national divisions; separate monographs, theses, memoirs, collected archival materials and documents, covering the formation processes and combat paths of divisions, have been published, science journals and the press release articles.

The historiography provides minute information on the formation and combat path of the Armenian 89th Taman Rifle Division, the 76th and 408th Armenian Rifle Divisions, however, there are no separate monographs on studying and systematizing the historical facts related to the 261st and 390th Armenian Rifle and the 409th Armenian Kirovograd-Bratislava Rifle Divisions.

The studies dedicated to Armenian national divisions are valuable not only from the point of historiography, but also with a view to the effective organization of military-patriotic education of the personnel of the Defense Army of the Republic of Artsakh and the Armed Forces of the Republic of Armenia as well.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,
Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազույց – 1. шпунт, 2. муфта – 1. tongue, 2. junction box
աճառաբջիջ – хондроцит – chondrocyte
այլահարույց նյութ – аллогенный материал – allogenic material
անհրաժեշտ բազմապիսության սկզբունք – принцип необходимого разнообразия – law of requisite variety
անոթագոյացման արգելակում – ангиоингибиция – angioinhibition
անոթագոյացում – ангиогенез, развитие кровеносных сосудов – angiogenesis, angiogeny
անոթասեղմում – вазоконстрикция, сужение кровеносных сосудов – vasoconstriction
առաջադրանքային կառավարում – принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи – mission command, mission-type tactics, Auftragstaktik
առբերում – доставка – delivery
արտազատում – секреция – secretion
ափիոն – опиум, опий – opium
բաղադրազատվածք – декомпозиция – decomposition
բարձակ – консоль – cantilever
բնահող – տես *գրունտ*
բջջային հարակցում – клеточная адгезия – cell adhesion
բուսահող – гумус, растительная почва – humus, decomposed organic matter
գաղթ – տես *միգրացիա*
գոյապահպանում – выживание – survival
գոյունակություն – живучесть – survivability, viability
գոտեկապ – 1. обойма, 2. обруч – 1. hooping, 2. ferrule
գրունտ – грунт – ground, soil
– հիմնատակի գրունտ – грунт основания – foundation soil
դիակապուտություն – мародерство – marauding, pillage
երկրամանածագործվածքային պաստառ – геотекстильное полотно – geotextile fabric, geotextile blade
երկրասինթետիկ ցանց – геосинтетическая сетка – geosynthetic mesh
երկրավանդակացանց – георешетка – geolattice
ընկալիչ – рецептор – receptor
թելքուռուցք – фибробластома – fibroblastoma
թրոմբոցիտների միաձուլում – агрегация тромбоцитов – thrombocyte aggregation
իրականացում – осуществление, имплементация – implementation
իրավական հանձնարարական – правовое предписание – precept of law, enactment
լիրքապնդիչ – контрбанкет – counterberm
խարիսխ – 1. якорь, 2. постамент – 1. anchor, 2. pedestal
խճի շերտ – слой щебня – bottoming
ծրագրակազմ – программное обеспечение – software
կազմավորում – формирование – formation
կաղապարամած – опалубка – formwork
կանեփ – конопля – cannabis, hemp
կառույց – структура – structure
կառուցատարր – 1. конструктивный элемент, 2. конструкция – 1. structural component, element of construction, 2. building unit, structural member
– բարձակային կառուցատարր – консольная конструкция – cantilever
– գաբիոնային կառուցատարր – տես ***կառուցատարր՝*** *ցանցարկղային կառուցատարր*
– կառուցատարրերի կրողունակութ-

յուն – несущая способность конструкций – load bearing capacity of structures
– ներքնակային կառուցատարր – матрасная конструкция – matt structures
– տուփաձև դիաֆրագմայով կառուցատարր – конструкция с коробчатой диафрагмой – box-diaphragm structure
– ցանցարկղային կառուցատարր – габионная конструкция – mesh structure
կառուցվածք – структура, конструкция – structure
կարան – шов – joint
կարգ – порядок, строй – order
կենսապահովում – жизнеобеспечение – life support
կենսունակություն – տես *գոյունակություն*
կիբեռմատչելիություն – киберсдоступность – cyber's reach
կոպիճ – гравий – gravel
հակամակարդիչ – антикоагулянт – anticoagulant, anticoagulin
համակարգ – система – system
– երկակի նախանշանակման առողջապահական համակարգ – система здравоохранения двойного назначения – dual-use health care system
– հավաստագրման համակարգ – система сертификации – certification system
– ցամաքուրդային համակարգ – дренажная система – drainage system, groundwater control system
համակարգչային պատահար – компьютерная авария – computer breakdown, computer accident
համատեղ – совместный – joint
հաստատակարգ – установление – rule of law
հավասարաբաշխում – выравнивание – leveling
հատուկ նախանշանակման ուժեր – силы специального назначения – special forces, special operation forces
հենացիգ – свая – pile
հիմնակմախք – каркас – carcass
հիմքի ներբան – подошва фундамента – foundation bed
հրաման – приказ – order
հումուս – տես *բուսահող*
ձևարկված կրթություն – формализованное образование – formal education
ճարմանդներով ծայրակցում – соединение скобами – stapling
ճիմ – дерн – divot, sward, sod
ճնշածեփված բետոն – торкретбетон – gunite, spread compression
մանրախիճ – տես *կոպիճ*
մասնագիտագիր – профессиограмма – professiogram
մարտակարգ – боевой порядок – battle deployment, combat formation, order of battle, tactical formation
մարտաշարք – строй – formation
մարտավարական որոշումային նմանարկում – моделирование принятия тактических решений – tactical decision-making simulation
մեթոդ – метод – method
– թրթռախտացման մեթոդ – метод вибросгущения – vibro-condensation method
– հակադրափաստական դատողությունների մեթոդ – метод контрфактического рассуждения – counterfactual reasoning
մեկուսախմբային հակասություն – корпоративное противоречие – corporate contradiction
միգրացիա – миграция – migration
մոդել – модель – model
մոդելավորել* – моделировать – model, simulate
մոդելավորում – моделирование – modeling
մոդելել – моделировать – model
մոդելում – моделирование – modeling
մոտեցում – подход – approach
– «համակառավարային» մոտեցում – «всеправительственный» подход – «whole of government» approach
– «համաշխարհային հասարակութենական» մոտեցում – «глобально-социетальный» подход – «whole of global society» approach
ներհարույց նյութ – аутогенное вещество – autogenous substance
ներքին ղեկավարում – внутреннее ру-

* Սև տառատեսակով շարված տերմինների վերաբերյալ բառարաններից հետո տրվում են պարզաբանումներ:

ководство – inner guidance, Innere Führung
նյութական ապահովման համակարգի տեսություն – логистика, теория системы материального обеспечения – logistics
նյութական ռեսուրսների կառավարման համակարգ – логистика, система управления материальными ресурсами – logistics
նշտար–ланцет – lancet, bleeding pen
շարք – строй – formation
ոսկրաբջիջ – остеобласт – osteoblast
ոսկրային ձևածագումնաբանական սպիտակուց – костный морфогенетический белок – bone morphogenetic protein
որմնահեց – контрфорс – counterfort
պահունակ – 1. магазин, 2. обойма – 1. magazine, 2. clip
պատվանդան – пьедестал – pedestal
պետութենակենտրոնության գաղափարախոսություն – идеология государствоцентричности – ideology of statism
ռեզերվի հասցեականություն – адресность резерва – reserve addressness
սանդղավորում – террасирование – terracing
սարքակազմ – аппаратное обеспечение – hardware
սովորութային իրավունք – обычное право – common law, customary law
վերականգնողական կենսընթաց – регенеративный процесс – regeneration process
վերնամաշկային գործոն – эпидермальный фактор – epidermal factor
տարաշարժ – 1. маневр, 2. миграция – 1. maneuver, 2. migration
տարբերակում – дифференциация – differentiation
տոփանում – 1. трамбовка, 2. укатка – 1. tamping, 2. rolling
ցամաքուրդ – дренаж – drainage
ցցավոր հիմք – свайный фундамент – piled foundation, piled footing
ուսանողակենտրոն կրթական միջավայր – студентоцентричная образовательная среда – student-centered learning environment
փայտե կանգնակ – деревянная стойка – timber strut
փոխակերպում – 1. трансформация, 2. имплементация – 1. transformation, 2. implementation
փոսորակ – котлован – excavation pit, borrow pit
օբյեկտ – объект – object
– սեռային օբյեկտ – родовой объект – subsumer
– տեսակային օբյեկտ – видовой объект – subsumee
օղագոտի – обруч – rim

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

агрегация тромбоцитов – թրոմբոցիտների միաձուլում
адресность резерва – ռեզերվի հասցեականություն
аллогенный материал – այլահարույց նյութ
ангиогенез – անոթագոյացում
ангиоингибиция – անոթագոյացման արգելակում
антикоагулянт – հակամակարդիչ
аппаратное обеспечение – սարքակազմ
аутогенное вещество – ներհարույց նյութ
вазоконстрикция – անոթասեղմում
внутреннее руководство – ներքին ղեկավարում
выживание – գոյապահպանում
выравнивание – հավասարաբաշխում
георешетка – երկրավանդակացանց
геосинтетическая сетка – երկրասինթետիկ ցանց
геотекстильное полотно – երկրամանածագործվածքային պաստառ
гравий – կոպիճ, մանրախիճ
грунт – գրունտ, բնահող
– грунт основания – հիմնատակի գրունտ
гумус – բուսահող, հումուս
декомпозиция – բաղադրազատվածք
деревянная стойка – փայտե կանգնակ
дерн – ճիմ
дифференциация – տարբերակում
доставка – առբերում
дренаж – ցամաքուրդ

живучесть – գոյունակություն, կենսունակություն
жизнеобеспечение – կենսապահովում
идеология государствоцентричности – պետութենակենտրոնության գաղափարախոսություն
имплементация – 1. см. *осуществление*, 2. փոխակերպում
каркас – հիմնակմախք
кибердоступность – կիբեռմատչելիություն
клеточная адгезия – բջջային հարակցում
компьютерная авария – համակարգչային պատահար
конопля – կանեփ
консоль – բարձակ
конструктивный элемент – կառուցատարր
конструкция – 1. см. *структура*, 2. կառուցատարր
– габионная конструкция – ցանցարկղային կառուցատարր, գաբիոնային կառուցատարր
– консольная конструкция – բարձակային կառուցատարր
– конструкция с коробчатой диафрагмой – տուփաձև դիաֆրագմայով կառուցատարր
– матрасная конструкция – ներքնակային կառուցատարր
– несущая способность конструкций – կառուցատարրերի կրողունակություն
контрбанкет – լիրքապնդիչ
контрфорс – որմնահեց
корпоративное противоречие – մեկուսախմբային հակասություն
костный морфогенетический белок – ոսկրային ձևածագումնաբանական սպիտակուց
котлован – փոսորակ
ланцет – նշտար
логистика – 1. նյութական ռեսուրսների կառավարման համակարգ, 2. նյութական ապահովման համակարգի տեսություն
магазин – պահունակ
маневр – տարաշարժ
мародерство – դիակապուտություն
метод – մեթոդ
– метод вибросгущения – թրթռախըտացման մեթոդ
– метод контрфактического рассуждения – հակադրափաստական դատողությունների մեթոդ
миграция – 1. միգրացիա, գաղթ, 2. տարաշարժ
моделирование – 1. մոդելավորում, 2. մոդելում
– моделирование принятия тактических решений – մարտավարական որոշումային նմանարկում
моделировать – 1. մոդելավորել, 2. մոդելել
модель – մոդել
муфта – ագույց
обойма – 1. պահունակ, 2. գոտեկապ
обруч – 1. գոտեկապ, 2. օղագոտի
объект – օբյեկտ
– видовой объект–տեսակային օբյեկտ
– родовой объект – սեռային օբյեկտ
обычное право–սովորութային իրավունք
опалубка – կաղապարամած
опий – см. *опиум*
опиум – ափիոն
остеобласт – ոսկրաբջիջ
осуществление – իրականացում
подошва фундамента – հիմքի ներբան
подход – մոտեցում
– «всеправительственный» подход – «համակառավարային» մոտեցում
– «глобально-социетальный» подход – «համաշխարհային հասարակութենական» մոտեցում
порядок – կարգ
– боевой порядок – մարտակարգ
постамент – խարիսխ
правовое предписание – իրավական հանձնարարական
приказ – հրաման
принцип – սկզբունք
– принцип необходимого разнообразия – անհրաժեշտ բազմապիսության սկզբունք
– принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи – առաջադրանքային կառավարում
программное обеспечение – ծրագրակազմ
профессиограмма – մասնագիտագիր
пьедестал – պատվանդան
развитие кровеносных сосудов – см. *ангиогенез*

растительная почва – см. *гумус*
регенеративный процесс – վերականգնողական կենսընթաց
рецептор – ընկալիչ
свайный фундамент – ցցավոր հիմք
свая – հենացից
секреция – արտազատում
силы специального назначения – հատուկ նախանշանակման ուժեր
система – համակարգ
– дренажная система – ցամաքուրդային համակարգ
– система здравоохранения двойного назначения – երկակի նախանշանակման առողջապահական համակարգ
– система сертификации – հավաստագրման համակարգ
– система управления материальными ресурсами – см. *логистика 1*
– теория системы материального обеспечения – см. *логистика 2*
слой щебня – խճի շերտ
совместный – համատեղ
соединение скобами – ճարմանդներով ծայրակցում
строй – 1. մարտաշարք, 2. շարք, 3. см. *порядок*
структура – 1. կառուցվածք, 2. կառույց
студентоцентричная образовательная среда – ուսանողակենտրոն կրթական միջավայր
сужение кровеносных сосудов – см. *вазоконстрикция*
террасирование – սանդղավորում
торкретбетон – ճնշածեփված բետոն
трамбовка – տոփանում
трансформация – փոխակերպում
укатка – տոփանում
установление – հաստատակարգ
фибробластома – թելքուռուցք
формализованное образование – ձեվարկված կրթություն
формирование – կազմավորում
хондроцит – աճառաբջիջ
шов – կարան
шпунт – ագույց
эпидермальный фактор – վերնամաշկային գործոն
якорь – խարիսխ

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

allogenic material – այլահարույց նյութ
anchor – խարիսխ
angiogenesis – անոթագոյացում
angiogeny – see *angiogenesis*
angioinhibition – անոթագոյացման արգելակում
anticoagulant – հակամակարդիչ
anticoagulin – see *anticoagulant*
approach – մոտեցում
– «whole of global society» approach – «համաշխարհային հասարակութենական» մոտեցում
– «whole of government» approach – «համակառավարային» մոտեցում
Auftragstaktik – see *mission command*
autogenous substance – ներհարույց նյութ
battle deployment – մարտակարգ
bleeding pen – see *lancet*
bone morphogenetic protein – ոսկրային ձևածագումնաբանական սպիտակուց
borrow pit – see *excavation pit*
bottoming – խճի շերտ
box-diaphragm structure – տուփաձև դիաֆրագմայով կառուցատարր
building unit – կառուցատարր
cannabis – կանեփ
cantilever – 1. բարձակ, 2. բարձակային կառուցատարր
carcass – հիմնակմախք
cell adhesion – բջջային հարակցում
chondrocyte – աճառաբջիջ
clip – պահունակ
combat formation – see *battle deployment*
common law – սովորութային իրավունք
computer accident – see *computer breakdown*
computer breakdown – համակարգչային պատահար
corporate contradiction – մեկուսախմբային հակասություն
counterberm – լիրքապնդիչ
counterfactual reasoning – հակադրափաստական դատողությունների մեթոդ
counterfort – որմնահեց
customary law – see *common law*

cyber's reach – կիբեռմատչելիություն
decomposed organic matter – see *humus*
decomposition – բաղադրազատվածք
delivery – առբերում
differentiation – տարբերակում
divot – ճիմ
drainage – ցամաքուրդ
element of construction – see *structural component*
enactment – see *precept of law*
epidermal factor – վերնամաշկային գործոն
excavation pit – փոսորակ
ferrule – գոտեկապ
fibroblastoma – թելքուռուցք
formal education – ձևարկված կրթություն
formation – 1. կազմավորում, 2. մարտաշարք, 3. շարք
formwork – կաղապարամած
foundation bed – հիմքի ներբան
geolattice – երկրավանդակացանց
geosynthetic mesh – երկրասինթետիկ ցանց
geotextile blade – see *geotextile fabric*
geotextile fabric – երկրամանածագործվածքային պաստառ
gravel – կոպիճ, մանրախիճ
ground – գրունտ, բնահող
gunite – ճնշածեփված բետոն
hardware – սարքակազմ
hemp – see *cannabis*
hooping – գոտեկապ
humus – բուսահող, հումուս
ideology of statism – պետութենակենտրոնության գաղափարախոսություն
implementation – 1. իրականացում, 2. փոխակերպում
inner guidance – ներքին ղեկավարում
Innere Führung – see *inner guidance*
joint – 1. կարան, 2. համատեղ
junction box – ագույց
lancet – նշտար
law of requisite variety – անհրաժեշտ բազմապիսության սկզբունք
leveling – հավասարաբաշխում
life support – կենսապահովում
load bearing capacity of structures – կառուցատարրերի կրողունակություն
logistics – 1. նյութական ապահովման համակարգի տեսություն, 2. նյութական ռեսուրսների կառավարման համակարգ
magazine – պահունակ
maneuver – տարաշարժ
marauding – դիակապուտություն
matt structures – ներքնակային կառուցատարր
mesh structure – ցանցարկղային կառուցատարր, գաբիոնային կառուցատարր
migration – 1. միգրացիա, գաղթ, 2. տարաշարժ
mission command – առաջադրանքային կառավարում
mission-type tactics – see *mission command*
model – 1. մոդել, 2. մոդելավորել, 3. մոդելել
modeling – 1. մոդելավորում, 2. մոդելում
object – օբյեկտ
opium – ափիոն
order – 1. հրաման, 2. կարգ
– order of battle – see *battle deployment*
osteoblast – ոսկրաբջիջ
pedestal – 1. պատվանդան, 2. խարիսխ
pile – հենացից
piled footing – see *piled foundation*
piled foundation – ցցավոր հիմք
pillage – see *marauding*
precept of law – իրավական հանձնարարական
professiogram – մասնագիտագիր
receptor – ընկալիչ
regeneration process – վերականգնողական կենսընթաց
reserve addressness – ռեզերվի հասցեականություն
rim – օղագոտի
rolling – տոփանում
rule of law – հաստատակարգ
secretion – արտազատում
simulate – see *model 2*
sod – see *divot*
software – ծրագրակազմ
soil – see *ground*
– foundation soil – հիմնատակի գրունտ
special forces – հատուկ նախանշանակման ուժեր
special operation forces – see *special forces*
spread compression – see *gunite*
stapling – ճարմանդներով ծայրակցում
structural component – կառուցատարր
structural member – see *building unit*

structure – 1. կառուցվածք, 2. կառույց
student-centered learning environment – ուսանողակենտրոն կրթական միջավայր
subsumee – տեսակային օբյեկտ
subsumer – սեռային օբյեկտ
survivability – գոյունակություն, կենսունակություն
survival – գոյապահպանում
sward – see *divot*
system – համակարգ
– certification system – հավաստագրման համակարգ
– drainage system – ցամաքուրդային համակարգ
– dual-use health care system – երկակի նախանշանակման առողջապահական համակարգ
– groundwater control system – see *drainage system*
tactical decision-making simulation – մարտավարական որոշումային նմանարկում
tactical formation – see *battle deployment*
tamping – տոփանում
terracing – սանդղավորում
thrombocyte aggregation – թրոմբոցիտների միաձուլում
timber strut – փայտե կանգնակ
tongue – ագույց
transformation – փոխակերպում
vasoconstriction – անոթասեղմում
viability – see *survivability*
vibro-condensation method – թրթռախտացման մեթոդ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Մոդելել, մոդելավորել: Հայերենում, ինչպես նաև ռուսերենում ու անգլերենում, «մոդելավորել» *(моделировать; model)* բայն ունի երկու հիմնական իմաստ. «1. Կաղապարավորել: 2. (գիտ.) Որևէ երևույթի մոդելը կազմել, որևէ երևույթ՝ կառուցվածք ևն մոդելով ներկայացնել» (տես *Է. Աղայան,* Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 1023, *նաև՝ Т. Ф. Ефремова.* Новый словарь русского языка. Толково-словообразовательный. М, 2000; *A. S. Hornby.* Oxford Advanced Learners' Dictionary of Current English, Fifth Edition, Oxford University Press, 2000): Ըստ էության, այս բառն ունի երկու հակառակ գործողությունների իմաստ: Առաջինը՝ մտավոր պատկերի կառուցում, ապա դրա տեղափոխում իրականության մեջ՝ կաղապարի (փորձանմուշի կամ մանրակերտի) ձևով: Երկրորդը՝ իրականության մեջ գոյություն ունեցող որևէ երևույթի, առարկայի, պրոցեսի պարզեցված արտապատկերի ստեղծում երևակայական աշխարհում՝ այն ուսումնասիրելու համար: Դրա հետ մեկտեղ, հայերենում կա «մոդելել» բայը, որը ներկայացվում է որպես «մոդելավորել» բայի հոմանիշ (տես *Է. Աղայան,* Նշ. աշխ., էջ 1023): Միևնույն բային երկու հակառակ ուղղությամբ կատարվող գործողությունների իմաստներ վերագրելու փոխարեն մենք հանդեսում գործածում ենք «մոդելավորել» բայը իր երկրորդ՝ գիտական, իմաստով, այսինքն՝ «իրական երևույթի ևն ուսումնասիրության համար դրա պարզեցված մտավոր արտապատկերման ստեղծում», իսկ կաղապարելու իմաստով՝ «մոդելել» բայը:

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Ս. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук;
Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;
В. М. Арутюнян, академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА;
С. А. Галстян, доктор филологических наук, профессор;
С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян,* академик НАН РА; *К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук;
А. А. Манташян, академик НАН РА; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор; *Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА;
Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;
М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;
К. С. Мосоян, доктор технических наук, профессор;
Р. А. Сафрастян, академик НАН РА, *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор, *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА,
А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA; *A. H. Mantashian,* Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor; *K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA; *Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan,* Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ
«ԱԶԳ–ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանիչների խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ս. Ավետիսյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի, Ք. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի,*
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության,
ինչպես նաև ինտերնետային կայքէջերից

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2017 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 264 էջ + 8 էջ ներդիր: Պայմանական տպագրական 20,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը,
Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը
և ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը
մարտական հենակետերից մեկում.

Արցախ, 2016 թ. դեկտեմբեր

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանը
և Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը
Տավուշում մարզի ղեկավարության հետ քննարկում են անվտանգության
և կայուն զարգացման հարցեր.

Կողբ, 2017 թ. հունիս

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1–2 (91–92). 2017